# Բոցերու Երգեր

203
Z-73
1920

Չ03:284
Հ-73

# ՀՈԳԵՒՈՐ

# Ե Ր Գ Ե Ր

Երգեր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

—

1920

47
132-ԱՀ
2001
1774
47


## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հոգեւոր Երգարանի բարեփոխեալ և ճոխաց-
[եա]լ հրատարակութեան մը պէտքը շատոնց ի վեր
[զգ]ացուած էր Հայ Աւետարանական եկեղեցեաց
[կող]մանէ։ Երգարանին տասներորդ տպագրութեան
[հա]մար մեծապէս երախտապարտ ենք մեր հան-
[գու]ցեալ սիրելի եղբօր, Յակոբ Էֆէնտի Մաթթէոս-
[եա]նի, որ հովիւներու, քարոզիչներու և բարե-
[կա]մներու կարծիքը առաւ. թէ նախկին երգերէն
որո՞նք են նախասիրուածները, և ձեռք բերու-
[...]թոլիա Գոլէճի անօրէնին և ուսուցիչներէն ու-
[...]ց և այլոց ձեռնտուութիւնը՝ պահուած երգե-
[րու] բարեփոխման գործին մէջ։ Այս տպագրու-
[թե]ան մէջ հին երգերէն պահուած են 304 երգ, և
76 երգ զանց առնուած են։ Զանց եղած երգե-
[րուն] մեծագոյն մասը Սաղմոսներ են, որոնք երկար
[ժա]մանակէ հետէ կամ քիչ կը գործածուէին կամ
[...] չեն գործածուիր։ Իսկ գ[...] պահուած եր-
[գեր]ուն, հիմնական [...] եղած՝ ընել միայն
[...] բարեփոխութիւններ որ, ինչպէս կը յուսաց-
[...] հաւանութիւն պիտի գտնեն անոնցմէ որոնք
[...] հին երգերը և ի վաղուց հետէ գործածած
[...] պաշտամունքի մէջ։ Նոր Երգարանը կը

պարունակէ նաև կիրակնօրեայ դպրոցի քանի մը երգեր որոնք կը գտնուին 1884ի տպագրութեան մէջ։ Ասոնց վրայ աւելցուած են ...ւեալ բարեկամներէ յօրինուած կամ թարգմանուա... 113 նոր ... մաներգեր։ Սրտագին շնորհակալութիններ կը տուցուին բոլոր այն անձանց որոնք Նոր Երգարանին պատրաստութեանը օգնեցին երգերու շարադրութեամբ, թարգմանութեամբ կամ ինչ ինչ թելադրութիւններով։

Գրպանի այս Երգարանը կը բովանդակէ նաև Առաքելական Հանգանակը, քանի մը կցուրդներ (տՆՐՀԷՄ) և շարականներ։ Կը յուսացուի թէ ա-, նք պիտի ծառայեն աւելի սիրելի և օգտակար ...ցայնելու երկրպագութեան պաշտամունքը։ Երգերուն հեղինակներուն ու թարգմանիչներուն անունները յիշուած են, սակայն կը ցաւինք որ հին երգերէն շատերուն հեղինակներուն և կամ թարգմանիչներուն անունները դեռ մեզի ծանօթ չեն։

Երգարանի սոյն տպագրութիւնը կը հրատարակուի մասամբ՝ հանգուցեալ Մեծապատիւ Ն... գիս էֆ. Մ. Մինասեանի օգնութեամբ, ի յիշա... Տր. Սայրըս Համլինի։

Աստուած ամէնուն օրհնէ Երգարանի գործածութիւնը։

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

## ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

### I ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Փառք և պատիւ ու զօրութիւն
Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն.
Միասնական Երրորդութեան
Փառք ի բարձունս յաւիտեան։

Սաղ. ՀՌ. 18, 19

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Փառք և պատիւ ու զօրութիւն,
Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն.
Միասնական Երրորդութեան,
Փառք ի բարձունս, փառք ի բարձունս։
Փառք ի բարձունս յաւիտեան,
Փառք ի բարձունս, փառք ի բարձունս
Միասնական Երրորդութեան,

Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն,
Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն,
Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն.
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ամէն, ամէն,
ալէլուիա, Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ամէն,
ամէն. Ալէլուիա, ամէն, ալէլուիա. ամէն.

## 3 ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

### ՄԱՍՆ Ա.

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։

Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ. խոստովանիմք, Տէր, զքեզ և երկրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք, Տէր, զքէն վասն մեծի փառաց քոց.

### ՄԱՍՆ Բ.

Տէր Թագաւոր, Սուրբդ երկնային, Աստուած և Հայր Ամենակալ.

Տէր և Որդի Հօր միածին, Յիսուս Քրիստոս և Սուրբ Հոգի.

### ՄԱՍՆ Գ.

Տէր Աստուած. Գառն Աստուծոյ և Որդի Հօր, Որ առեր զմեղս ի կուսէն, ողորմեցար.



Բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր. Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ.

### ՄԱՍՆ Դ.

Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս. Տէր և Հոգիդ Սուրբ, որ ի փառս Աստուած ընդ Հօր. Ամէն.

Ղուկ. Բ. 14

## 4 ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Փառք ի բարձունըս Աստուծոյ,
Եւ փառք Որդւոյն,
Նաև փառք Սուրբ Հոգւոյ.
Փառք, պատիւ Երկրպագութեան,
Այժմ և միշտ յաւիտեանս
Յաւիտենից. Ամէն, Ամէն.

Մատթ. ԻԱ. 9

## 5 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Ամէն երկիրներ, Տէրոջմով ցնծացէք
Դողով և ուրախութիւնով.
Տէր Եհովային ընծաներ մատուցէք
Հոգւով և ճշմարտութիւնով.

2 Քանզի գերազանց բարերար է մեր Տէրն,
Որ մեզ ստեղծած է, և մենք՝
Անոր խոտաւէտ արօտին ոչխարներն՝
Պիտի անոր ձայնը լսենք։

3 Անոր սուրբ դռները եկէք գոհութեամբ,
Անոր սրահները մտէք.
Անոր ծափ զարկէք հոն, և օրհներգութեամբ
Անոր անուանէն գոհացէք։

4 Զի ինք մեր Աստուածն է. ի յաւիտենից
Կեցած են ու պիտի կենան
Անոր խորհուրդներն ու գործերն գըթալից,
Ազգէ մինչև ազգ, յաւիտեան։

Սաղ. Ղ.Ե. Թարգ. Elias Riggs

## 6 ԻՋԻՐ, ԱՐՔԱՅ ՀԶՕՐ

1 Իջիր, Արքայ հզօր,
Անունըդ փառաւոր
Տուր որ գովենք.
Ամենատէր եղող,
Ամէն տեղ միշտ յաղթող,
Եկուր մեր վրայ տիրող.
Քեզ կ՚աղաչենք։

2 Իջիր, Յիսուս Փրկիչ,
Եկուր մեզ պահպանիչ.



Մեզ միշտ օգնէ.
Քու օգնութիւնըդ մենք
Մեզի պարգեւ ընենք,
Քու վրադ մեր յոյսն դնենք.
Տէր, մեզ լսէ։

3 Իջիր, ով Սուրբ Հոգի,
Ու հիմա տուր մեզի
Վկայութիւն,
Թէ Տէրն մեզ կը սիրէ.
Մեր սիրտն ալ, դուն սրբէ,
Մի հեռանար մեզմէ,
Հոգի սիրուն։

4 Ով դու Երրեակ և մի,
Մեծ գովութիւնք քեզի
Անդուլ տրուին.
Քու փառքըդ տուր որ մենք
Երկնից մէջ վայելենք,
Ու քեզ փառաբանենք,
Տէր երկնային։

Յհն. ԺԴ. 23 Թարգ. I. F. Pettibone

## 7 ՍՈՒՐԲ Է ԱՍՏՈՒԱԾ

1 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
Եհովայ, զօրաց Աստուած.

Տիեզերք, ամէն բաներ,
Քու զօրեղ խօսքովդ ծնած,
Բոլորտիքըդ երբ կեցան,
Աչքըդ խիստ ուրախացաւ.
Յայնժամ լըսուեցան երգեր,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր։

2 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
Մեծ Եհովայ, այժմ և միշտ.
Թէպէտ հող, մոխիր ենք, Տէր,
Կը սիրենք պաշտել քեզ միշտ։
Աշխարհէս անարգըւած,
Բայց անկէ մեզ ես փրկած.
Միաբան կ՚երգենք քեզ, Տէր,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր։

3 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
Յաղթական զօրքերն կ՚երգեն.
Եւ փրկեալ անթիւ ազգեր
Քեզ պիտի երկրպագեն,
Եւ հրեշտակք, սուրբերն ամէն
Ցնծութեան ձայն վերցընեն.
Միաբան ըսուին երգեր,
Սուրբ է, սուրբ է, սուրբ է Տէր։

Յայտ. Դ. 8



## 8 Կ՚ՕՐՀՆԵՆՔ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ

1 Կ՚օրհնենք քեզ, Աստուած, զի Փրկիչը եկաւ,
Խաչին վրայ մեռաւ և վերն փառքով համբարձաւ։
Ալէլուիա, մեր Փրկիչը,
Ալէլուիա, ամէն.
Ալէլուիա, քուկդ է փառքը,
Սրբէ մեզ նորէն։

2 Կ՚օրհնենք քեզ, Աստուած, զի Հոգիդ ալ իջաւ,
Մեզ Փրկիչը յայտնեց և խաւարը անցաւ։
Ալէլուիա, և այլն։

3 Միշտ փառք և գովեստ [illegible] Գառնուկին,
Որ մեր մեղքը ջնջեց ու ներեց դարձողին։
Ալէլուիա, և այլն։

4 Միշտ փառք և գովեստ շընորհաց Աստուծոյն,
Որ սիրեց մեզ, փնտռեց և տըւաւ իր Որդւոյն։
Ալէլուիա, և այլն։

5 Ո՜հ, մեզ արթընցուր և Հոգւովդ նորոգէ,
Ամէն սիրտ երկնաւոր [illegible] վառէ։
Ալէլուիա, և այլն։

6 Ո՜հ, մեզ արթընցուր, մեռեալներս ողջնցուր,
Յիսուսի ձայնն լըսենք, որ կ՚ըսէ, «Ինձ եկուր»։
Ալէլուիա, և այլն։

Յայտ. Ե. 12 Թարգ. Miss C. E. Bush

## 9 ՊԱՇՏԵՑԷՔ ԶՏԷՐ

Ո՜ն, սուրբ հանդիսիւ.
Պաշտեցէք ըզՏէր,
Սուրբն Աստուած,
Պաշտեցէք ըզՏէր,
Սուրբն Աստուած,
Պաշտեցէք ըզՏէր,
Սուրբն Աստուած.

1 Փա՜ռք Հօրդ Աստուծոյ,
Արդար, սուրբ և անաչառ,
Սէրդ անգըրաւ և միշտ վառ,
Գըթած, ողորմած, անճառ.

Կրկներգ Երգենք արդ ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,
Պաշտենք երկըրպագութեամբ և հոգւով մեր սըրտերէն.

2 Փա՜ռք Բանդ Աստուծոյ,
Օրհնեալ մեր Փրկիչ և Տէր.
Մեզ ա՛յնքան եղաւ քու սէր,
Մինչ իսկ մեռնիլ յանձն առեր. Կրկներգ

3 Փա՜ռք Հոգւոյդ Սրբոյ,
Սրբարար ազդմամբ անհուն,
Խըղճի ազդարար անքուն.
Կցորդ փառաց Հօր, Որդւոյն. Կրկներգ

Յայտ. Է. 12 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ



## 10 ՍՈՒՐԲ Է ԵՀՈՎԱՆ

1 Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան.
Ով դուք ազգեր, ցնծմամբ պաշտեցէք զայն.
Թող անոր խօսքով լեռներ դողան,
Թող կայծակն անդուլ բլուրներ առ այն.
Վեհ հանճարովն իր և սիրովն անհուն
Մեծ է Եհովան, Տէր ամենուն.
Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան,
Թող կայծակն անդուլ բլուրներ առ այն.

2 Միշտ օրհնէ զայն, ով դէտ Սիոնի,
Սուրբ բերկրութեամբ պատմէ դու հին լուրը.
Իր ուժով մեզ մահ կը ջընջուի,
Եւ կ՚երգէ երկիրն անհուն փառքը.
Շուրջ իր գահուն, սուրբեր, գովեցէք զայն,
Փառք ըզգեցած, վեհ, անզուգական.
Սուրբ է, սուրբ է, սուրբ է, և այլն.

3 Միշտ օրհնեալ ես, Արքայ մշտնջենան,
Քու որդիներդ խնդիւ կը պաշտեն քեզ.
Սուրբ նուագին երկնից երբ միանան,
Հոն կրկնեն քեզ ծունըր սիրով հեզ.
Հոն, սուրբ լուսոյ մէջ, երբոր զարթնունք մենք
Հոն, տեսնենք պիտի՝ քեզ և միշտ երգենք,
Սուրբ է, սուրբ է, սուրբ է, և այլն.

Յայտ. ԺԵ. 3,4 Թարգ. Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

## 11 ՏԷՐՈՋ ԱՀԵՂ ԳԱՀՈՒՆ ԱՌՋԵՒ

1 Տէրոջ ահեղ գահուն առջև
Խոնարհեցէք սուրբ երկիւղով.
Գիտցէ՛ք թէ Տէրն է սոսկ Աստուած,
Ինք կեանք և մահ տայ իր ձեռքով։

2 Աստուածային իր աջ հզօր
Մեզ ձեւացուց և մարդ ըրաւ.
Երբ զերթ ոչխար էինք մոլոր,
Կրկին մեզ իր փարախ բերաւ։

3 Իր հօտն ենք. ինքն է մեր հովիւն,
Եւ մահացու այս կերպարան.
Ի՛նչ փառք անվերջ տանք սրտագին,
Հզօ՛ր Աստուած, քու սուրբ անուան։

4 Մտնենք դռներն օրհներգութեամբ,
Մինչև երկինք ելլէ մեր ձայն.
Եւ այս երկրէ բիւր բարբառներ
Մէջ տաճարիդ արձագանք տան։

5 Մեծ է հրամանդ, անհունութեան,
Եւ սէրդ անհուն, անմահ է, Տէր.
Ճշմարտութիւնդ՝ ժայռ հաստատուն,
Կեցցէ՛ երբոր անցնին դարեր։

Սաղ. ՂԸ. Թարգ. Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ



## 12 ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ, ՏԷՐ

1 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, Հայր Աստուած մեր,
Քեզ կ՚ուղղենք սրտանց առաւօտեան մեր քաղցր երգեր.
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, տուիչ բիւր բարեաց,
Տէր ամենուն, երրեակ անձ, մի Աստուած։

2 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես ձայն տայ սրբոց դաս,
Երբ անոնց դէմքերնին քու շնորհէդ բաժին կու տան.
Սուրբ գահիդ առջին անոնք ծածկած դէմքով են,
Եւ հոն անդուլ՝ օրհնեալ անունդ գովեն։

3 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, մեծ փառքովդ,
Չը կենար երբէք պղծութեան նշոյլ մը քովդ.
Դու մաքուր հոգւոյն տաս քու գանձէդ բարիք բիւր,
Ով ջինջ սիրոյ և սուրբ կենաց աղբիւր։

4 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, Հայր Աստուած մեր,
Քու անունդ միշտ կը գովեն ձեռացդ գործեր,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, տուիչ բիւր բարեաց,
Տէր ամենուն, երրեակ անձ, մի Աստուած։

Ես. Զ. 3 Թարգ. Ց. Թ. ԳԱՑԱԵԱՆ

## 13 ԱՊԱՀՈՎ ՏԷՐՆ ՄԵԶ ՊԱՀԵՑ

1 Ապահով Տէրն մեզ պահեց
Այս շաբաթ ալ մինհուանէ,
Եւ այսօր մեզ հոս ժողվեց,
Որ շնորհքն խնդրենք իրմէ,
Ինչ հաճոյ է կիրակին,
Է նման երկնաւորին.

2 Երբ շնորհքդ, Տէր, խնդրենք
Սիրելի Փրկչին անուամբ,
Լուսափայլ երեսդ տեսնենք,
Մեր մեղքերն քաւութիւն քեզմով.
Թող աշխարհ անյայտ ըլլայ,
Եւ քու փառքդ երեւնայ.

3 Երբ որ քեզ փառաբանենք,
Տուր որ քեզ ներկայ ճանչնանք.
Եւ քու փառքդ մենք տեսնենք՝
Երբ մեկնեց տաճարդ կու գանք.
Հաճէ առնել տուր, Տէր, մեզի
Յաւիտենական ճաշի.

4 Քարոզուած ճշմարտութիւնն
Մեղաւորն թող նորոգէ,
Սիրողներն զարդարութիւն
Եւ սուրբերն մխիթարէ.



Թող ամէն մէկ կիրակի
Պատրաստէ մեզ երկինքի.
Ես. ԾԸ. 13, 14

## 14 ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ

1 Ո՛հ, պայծառ ու գեղեցիկ օր տէրունի,
Կ'ողջունենք քու լոյսդ ըղձալի,
Որ այս գիշերուան խաւարը ցրուելով,
Փայլեցաւ ժըպիտներով.
Ո՛հ, օր խաղաղ, սուրբ, օր երկնային,
Օր սեպհական, աստուածային,
Առաւօտ զուարթարար ու տէրունի,
Ողջո՛յն քեզ, լոյս բերկրալի.

2 Վեց օրերն աշխատութեան անցան գացին,
Մարմնաւոր գործերն վերջացուցին.
Արդ ուրախանանք, հասաւ օրն հանգստեան,
Օրն զուարթ, տէրունական.
Ո՛հ, օր խաղաղ, սուրբ, եւ այլն.

3 Ուստի վայելենք այս պատուական ժամերն,
Ինչպէս պատուիրեց Աստուած մեր Տէրն,
Որ առաջնորդուինք երկնից սուրբ հանգստեան
Վայելենք փառք յաւիտեան.
Ո՛հ, օր խաղաղ, սուրբ, եւ այլն.
Ս—ւ. Ղ.Բ.

## 15 ՕՐՆ ԶՈՐ ՏԷՐՆ ՕՐՀՆԵՑ

1 Այս է այն օրն զոր Տէրն օրհնեց,
Երկինքը թող ցնծայ.
Այս օրն իրեն սեպհականեց,
Երկիրն ալ ուրախանայ։

2 Այս օր մեր Տէրն սատանային
Յաղթեց, երբոր յարեաւ.
Ննջեցելոց երախայրին
Գերեզմանէն ելաւ։

3 Այսօր սուրբերն կը ժողվուին,
Որ զինք սիրով յիշեն.
Իրենց փրկչովը կը զմայլին,
Իր փառքը կը յայտնեն։

4 Ահա մեզ օրհնեալ կու գայ
Մեծ Դաւիթի Որդին.
Յիսուս, ողջո՜յն քեզ, ովսաննա
Օծեալ Թագաւորին։

Սաղ. ՃԺԸ. 24 Թարգ. Elias Riggs

## 16 ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ

1 Այս առաւօտ օրհնեալ
Ի՛նչ քաղցր է իմ հոգւոյս,
Անոր ճառագայթներն



Կու տան հրճուանք և լոյս.
Գործ աշխարհի, զուարճութիւն
Զաւրեն թող իմ հանդիստ օրուն.

2 Արքային կենաց իջած՝
Բաշխէ շնորհք երկնային.
Ձայն պաշտելով ազգերն
Հաւատան ու փրկուին.
Թող ընդունին մեղաւորներ
Քու խօսքդ սուրբ, շնորհքդ, Տէր.

3 Սուրբ Աղաւնիդ բարձրեալ,
Դու մեզ այսօր օրհնէ.
Սրբէ, ո՛հ, մեր սրտերն,
Անոնց մէջ բնակէ.
Որ մեր հոգին կեանք գտնելով,
Տէրոջը փառք տայ ցնծալով։

Սաղ. Ե. 3 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 17 ՏԷՐՈՒՆԻ ՕՐՆ ՀԱՃԵԼԻ

1 Գործ հաճելի հոգւոյս է, Տէր,
Կարդալ անուանդ օրհնութիւններ.
Առտուն քու սէրդ գովաբանել,
Իրիկուն խօսքերդ մտածել։

2 Վայել է այս օրն հանգստեան
Որ խորհուրդներս յերկինս ըլլան.
Քնար ներդաշնակ թող սիրտս ըլլայ՝
Տեառն օրհնութիւն երգել հիմա։

3 Սիրտըս ցնծար Տէրոջ համար,
Իր գործքն ու խօսք փառաւորեալ.
Խիստ մեծ է գործըն փրկութեան,
Տնօրէնութիւն իմաստութեան։

4 Թէ կատարեալ է փրկութիւնս,
Է պատուական երկնից բաժինս.
Թշնամիէս որ է մեղք իմ,
Ո՜հ, յաւիտեան ես կ'ազատուիմ։

5 Հոս ունեցած բաղձանքս բոլոր
Լեցուած պիտի տեսնեմ ես հոն.
Հոն տալ գովեստ քու սուրբ անուան
Ըլլայ իմ գործըս յաւիտեան.

Ս—Հ. ՁԴ    Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 18 ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԻՐԻԿՈՒՆԸ

1 Սուրբ օրն իր վախճանին
Հիմա ալ մօտեցաւ.
Իմ վրաս այս Կիրակին
Ի՞նչպէս հաշիւ տըւաւ։
Արդեօք ինձ փոխ տըրուած
Ժամերը յարգեցի՞,



Թէ օրըդ, ով Աստուած,
Գարապ տեղ վատնեցի։

2 Դատապարտեալ հոգին
Ի՜նչ մեծ ցաւով կ'ողբայ
Վատնած այն կիրակին,
Որ պիտի չը դառնայ։
Ի՜նչ յուսահատութիւն՝
Երբ ինքնիրեն ըսէ,
«Պատրաստ կար փրկութիւն,
Բայց մերժեցի ինծմէ։»

3 Կիրակիին ժամերն
Զըլ յանդըգնինք պղծել,
Կամ աղօթքի օրերն
Ունայն կերպով վատնել.
Սուրբ օրը թող ըլլայ
Մեզի երկնից նըման.
Կանխաւ ճաշակը տայ
Վերին սուրբ հանգստեան։

Ն. ՄՋ. 2, 6, 7    Թարգ. Elias Riggs

## 19 ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

1 Ով մեր Հայրը երկնաւոր,
Քու անուանըդ սուրբ ըլլայ.
Տէրութիւնըդ փառաւոր
Թող շուտով ամէն տեղ գայ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ

2 Քու օրհնեալ կամքդ ալ ինչոր
Վեր երկինք կը կատարուի,
Այդպէս, ով Տէր Թագաւոր,
Հոս ալ միշտ ի գործ դրուի։

3 Ով Հայր, տուր այսօր մեզի
Մեր ամէն օրուան հացն ալ.
Որ առողջութեամբ քեզի
Ծառայենք, ով Տէր օրհնեալ։

4 Սիրելի Որդւոյդ համար
Մի յիշեր մեր յանցանքներ.
Մենք ալ միշտ կ'ուզենք մոռնալ
Մեր եղբօր ամէն պարտքեր։

5 Փորձութեան մեզ մի տանիր,
Ազատէ մեզ միշտ չարէն.
Զի քուկդ է փառք և պատիւ,
Ով Տէր, յաւիտեանս։ Ամէն։

Մատթ. Զ. 9-13 Թարգ. Elias Riggs

## 20 ՏԷՐՈՒՆԻ ԱՂՕԹՔԸ

Ով Հայր մեր որ յերկինս ես, քու ա | նունդ
| սուրբ ըլ | լայ։ || քու թագաւորութիւնդ գայ,
քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ | նոյնպէս |
երկրի | վրայ։ ||



Մեր հանապազորդ | հացը ... տուր | մեզ
այս | օր։ || Եւ ներէ մեզ մեր պարտքերը, ինչպէս
և մենք կը ներենք մեր | պարտա | պաննե | րուն։ ||
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ ազա- |
տէ ըզ | մեզ չա | րէն։ || Քանզի քուկդ է թագա-
ւորութիւնը և զօրութիւնը և փառքը | յաւի- |
տեանս։ Ա | մէն։

## 21 ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

1 Ով Հայր մեր երկնաւոր,
Անունդ սուրբ ըլլայ։
Դուն ես մեծ Թագաւոր,
Արքայութիւնդ գայ։
Քու կամքդ ալ բարի
Մարդիկ թող կատարեն,
Ինչպէս կը կատարուի
Երկնից հրեշտակներէն։

2 Ձեռքէդ հաց կը խնդրենք,
Շնորհէ մեզ թողութիւն.
Մենք ալ պիտի ներենք
Մեր պարտականներուն։
Մեզ մի տար փորձութիւն,
Այլ ազատէ չարէն.
Քուկդ է արքայութիւնն
Եւ ոյժն ու փառքն։ Ամէն։

Թարգ. Elias Riggs

## 22 ԺԱՄՆ ԱՂՕԹՔԻ

1 Ժամն աղօթքի, ժամն աղօթքի,
Որ աշխարհէս զիս կը զատէ,
Որ Հօրս աթոռին դիմեմ,
Ու իմ կարօտութիւնս յայտնեմ։
Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ,
Հոգիս հանգիստ միշտ կը գտնէ,
Փորձութենէ ալ կ'ազատի
Քու հանելովդ, ժամ աղօթքի։

2 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,
Աղերսըս թեւերովդ տարուի
Շնորհաց աթոռը նստողին,
Զղջացողին ձայնն լսողին։
Իրեն դիմել կը պատուիրէ,
Շընորհք խնդրել կը հրաւիրէ.
Հոգերս անոր ձգեմ պիտի,
Քեզ ըսպասեմ, ժամ աղօթքի։

3 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,
Մխիթարիչ ըլլաս ինծի,
Մինչեւ փառաց լեռնէն նայիմ,
Տեսնեմ իմ տունս երկնային։
Տըկար մարմինս պիտի ձգեմ,
Տէրոջըս քով պիտի ելլեմ,
Ու երթալով երգեմ պիտի,
«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի։»

Սաղ. ՃԼԸ.



## 23 ՇՆՈՐՀԱՑ ՍՈՒՐԲ ԳԱՀ

1 Ազատ ամէն խիստ հովերէ,
Ազատ ամէն փոթորիկէ,
Կայ տեղ մ'անդորր ու ապահով,
Եւ այն Շնորհաց գահուն է քով։

2 Կայ տեղ մը ուր Յիսուս հեղու,
Սուրբ իւղն օծման վրայ մեր գլխու.
Տեղ ամէնէն անուշ, սիրուն,
Եւ այն է մօտ Շնորհաց գահուն։

3 Հոգեպարա՛ր, վե՛հ տեսարան,
Ուր սերտ սրտեր կը միանան,
—Թէեւ զատուած—ջերմ հաւատքով,
Շնորհաց գահուն չուրջն անվրդով։

4 Օ՛ն, արծուի առած թեւեր,
Ըսեմ երկրէս թռչինք ի վե՛ր,
Մեզ ողջունել երկինք կու գայ,
Եւ փառք պսակէ Շնորհաց սուրբ գահ։

Սաղ. ՃԺԶ. 7 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
Բարեփոխեց Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

## 24 ՔՈՒ ՇՆՈՐՀՔԴ, ՏԷՐ

1 Քու շընորհքըդ, Տէր, թող ինձ հերէ.
Ո՞վ իր մեղքերն կը հասկընայ,

Կամ իր յանցանքը միտք կ'առնէ.
Ո՜վ քու առջիդ կ'արդարանայ։

2 Քու շնորհքըդ, Տէր, թող զիս օրհնէ.
Քու բընութիւնդ ինծի ալ տուր,
Քու սուրբ խօսքով դուն զիս մաքրէ,
Ինչպէս որ է Փրկիչս մաքուր։

3 Քու շնորհքըդ, Տէր, թող ինծ օգնէ,
Քանզի ես ինքս եմ խիստ տըկար.
Թշնամիէն միշտ պաշտպանէ,
Երբեք ինծմէ մի հեռանար։

4 Քու շնորհքըդ, Տէր, թող զիս պահէ.
Ինծ պատուիրած ես որ հսկեմ.
Դուն ալ զիս քու ձեռքովդ բռնէ,
Որ փորձութեան մէջ չը մտնեմ։

5 Քու շնորհքըդ զիս սնուցանէ.
Զիս կերակրէ երկնից հացով.
Քու խորհրդովդ առաջնորդէ,
Եւ ընդունէ վերջն ալ փառքով։

Ց–է. Ե. 15 Թարգ. Elias Rigg

## 25 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ՏԵՂ Է

1 Շընորհաց աթոռն փնտռող
Զայն ամէն տեղ կը գըտնայ.
Մենք երբոր ենք աղօթող,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։



2 Թէ հարուստ ենք թէ աղքատ,
Թէ առողջ կամ թէ տըկար
Երբ մեր ձայնն է անընդհատ,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

3 Երբ ճարերըս կը հատնին,
Ու ինծի հանգիստ չըկայ,
Թող ուժերս չը լքանին,
Զի իմ Տէրս է միշտ ներկայ։

4 Ով հոգիս, Փրկիչդ եկուր,
Ինչ տագնապ որ վրադ կու գայ.
Ան պարապ քեզ չը թողուր,
Զի մեր Տէրն է միշտ ներկայ։

Մ–թ. ԺԸ. 20

## 26 ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԷՏՔԸ

1 Աղօթքն է խօսք շատ զօրաւոր,
Խորին բաղձանք կոտրած սրտի.
Ան է մեղքի մէջոց հըզօր,
Զի Տէրն անով մեզ կ'ընդունի։

2 Մարդիկ անով կեանք կը գտնան,
Ազատութիւն մեղքի ուժէն.
Եւ յաղթելով դըռանց մահուան,
Ուրախութեամբ երկինք կ'ելլեն,

3 Անով երկիր, երկինք վերին,
Նոյն սիրով կը միանան.
Զի Հայր Աստուած, Աստուածորդին
Անով կ՚իջնան ի մէջ մարդկան։

4 Եւ Սուրբ Հոգին մեզ օգնելով
Մեր աղօթքին Տէրն կը լսէ.
Յիսուս իր ուխտը յիշելով
Ամէն բան մեզ կը պարգեւէ։

5 Յիսուս, ձայնիս դուն ունկըն դիր,
Եւ ընդունէ իմ սիրտս բոլոր.
Դուն որ անդուլ աղօթք ըրիր,
Աղօթք ընել ինձ սորվեցուր։

Յակ. Ե. 16

## 27 ՈՎ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ

1 Ով Սուրբ Հայր, ինձ ցուցուցեր ես
Յոյսըս է միայն քեզմէ.
Օրէ օր զիս անցուցեր ես
Բազմաթիւ վտանգներէ։
Դուն, Տէր, մոլորած ատենըս
Առաջնորդեցիր ինծի.
Միշտ եղիր, Տէր, ապաւէնըս,
Թող ապրիմ միայն քեզի։

2 Խորամանկ թշնամիներըս
Միշտ կը յարձակին վըրաս.



Ես գիտեմ, բոլոր օրերըս
Կախ պիտի չըլլայ պակաս,
Երկնաւոր շնորհաց աթոռ,
Հոն միայն պիտի դիմեմ,
Որ իմ նեղութեանըս օրը
Զօրութիւն քեզմէ գտնեմ։

3 Հայր իմ, քու պաշտպանութեանըդ
Տուր որ միշտ ապաւինիմ,
Եւ քու առաջնորդութեանըդ
Ձայնիդ պէս թող հետեւիմ։
Քու աչքովըդ, Տէր, ուղղէ զիս,
Փորձիչէն քեզի դառնամ։
Թեւերուդ տակ, Տէր, պահէ զիս,
Միշտ քու քովըդ թող կենամ։

Սաղ. ՃԽԵ. 18, 19 — Թարգ. Elias Riggs

## 28 ՏԷՐՈՋԸ ՏԱՐ

1 Ինչպէս բարեկամ է Տէրը,
Միշտ մեզի կը համբերէ,
Կը ներէ մեր յանցանքները,
Մեր վիշտերն ալ կը կրէ.
Քրիստոնեայ, արտօնութիւնըդ
Այս է, միշտ բերկրապատար,
Քու ամէն փորձառութիւնըդ
Աղօթքով Տէրոջը տար։

2 Շատ անգամ խաղաղութիւնը,
Ո՜հ, ի զուր կը կորսնցնենք,
Աղօթքի արտօնութիւնը
Երբ մոռնանք կամ զանց ընենք՝
Մէկը կա՞յ որ Յիսուսի չափ
Քեզի ցաւակից ըլլար․
Վստահէ անոր, հոգերդ
Աղօթքով Տէրոջը տար․

3 Դուն յոգնա՞ծ, բեռնաւորուա՞ծ ես.
Սիրելիքդ հեռացա՞ն.
Քու Փրկիչդ քեզ կանչած է,
Ինք կ'ըլլայ քեզ ապաստան,
Յիսուսի բաց բազուկները
Ապաւէն են փրկարար․
Շուտ դիմէ հոն, և ամէն բան
Աղօթքով Տէրոջը տար․

Եղ. ԻԵ. 22 Թարգ. *Elias Riggs*

## 29 ԶԻՍ ԱԼ, ՏԷՐ

1 Տէր, այցելութեամբդ երկիրը
Շուտ կ'ընես խիստ պտղաբեր.
Հիմա օրհնութեանդ անձրեւը
Թող կաթի իմ վրաս ալ, Տէր.
Վրաս ալ, Տէր,
Թող կաթի իմ վրաս ալ, Տէր.



2 Մի անցնիր ինծմէ, ով Հայրըս,
Կորսըւածըս դուն փնտռէ.
Զրկապէս ներէ մեղքերըս,
Գըթութիւնդ ինձ պարգեւէ.
Ինձ ալ, Տէր,
Գըթութիւնդ ինձ պարգեւէ.

3 Մի անցնիր ինծմէ, Փրկիչըս,
Քեզ սիրեմ, քեզի յարիմ.
Քաղցըր ձայնդ լսէ ականջըս,
Զիս կանչէ, քեզ հետեւիմ.
Զիս ալ, Տէր,
Զիս կանչէ, քեզ հետեւիմ.

4 Ուրիշներ քու ձայնդ լսած են,
Եւ գտած են փրկութիւն,
Քու շնորհքըդ ընդունած են.
Տուր ինծի ալ օրհնութիւն.
Ինձ ալ, Տէր,
Տուր ինծի ալ օրհնութիւն.

Թէեւ քեզ շատ հեռ մնացած եմ,
Սուրբ Հոգի, մ'անցնիր ինծմէ.
Քեզ մեղքովս վշտացուցած եմ,
Ո՛հ, ներէ և զիս փրկէ.
Զիս ալ, Տէր,
Ո՛հ, ներէ և զիս փրկէ.

Սաղ. ԶԵ. 6 Թարգ. *Elias Riggs*

## 30 ԱՍՏՈՒԱԾ ՊԱՇՏՊԱՆ

1 Մի՛ թողուր զիս, ո՛վ Աստուածըս,
Թող քեզմէ չըմոլորիմ.
Ուժովցուր, Տէր, իմ քալուածքըս,
Եթէ ոչ ես կ՚ընկղմիմ.
Պահպանէ զիս, պաշտպանէ զիս,
Որ երբեք չըկորսուիմ։

2 Աշխարհիս անթիւ հոգերը
Կ՚արգիլեն զիս, Տէր, քեզմէ.
Սատանան իր հրապոյրները
Իմ առջեւըս կը դնէ.
Վարմերումը, նենգերումը
Թող զիս չըմոլորցընէ։

3 Ո՛վ Յիսուս, ցըրուէ վախերըս,
Քու խոստմունքդ է հաստատուն.
Դուն կրնաս ներել մեղքերըս,
Ինձ լըսել տուր ձայնդ սիրուն.
Դուն ես լոյսըս, դուն ես յոյսըս,
Մի միայն Փրկիչըս դուն։

4 Ո՛հ, թէ ես սիրոյդ ուժովը
Տէր Յիսուս, քեզի ձըգուիմ.
Ինձ օգնէ Հոգւոյդ շնորհքովը,
Աշխարհէս հըրաժարիմ.



Տէր, կանչէ զիս, ու քաշէ զիս,
Ես ալ պիտի հետեւիմ։

5 Իմ ներքին սենեակիս մէջը
Դուռը ետեւէս գոցեմ.
Ու սրտիս անկեղծ աղերսը
Աստուծոյս մատուցանեմ.
Արարիչըս և Փրկիչըս
Առանձին տեղ թող գտնեմ։

Յովհ. ԺԴ. 18 — Թարգ. *Elias Riggs*

## 31 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

1 Եհովա, առաջնորդէ զիս,
Զի պանդուխտ եմ ու կարօտ.
Շատ տկար եմ, զօրացուր զիս
Ամենակարող ձեռքովդ.
Դուն, երկնի Հաց,
Կերակրէ զիս որ ապրիմ։

2 Բաց, ո՛վ Տէր, մաքրող աղբիւրը,
Այն ջուրով բըժըշկուիմ.
Թող ամպին, կրակին սիւնովը
Այս տըխուր ձորէն անցնիմ.
Դուն, Փրկիչ մեծ,
Ինձ եղիր ոյժ և վահան։

3 Երբ որ Յորդանան հասնիմ ես,
Ցուրտ մահուան երկիւղն վերցուր.

Դուն որ մահը մեռցուցած ես,
Զիս երկինքը, Տէր, հասցուր.
Փառք, պատիւ քեզ
Միշտ պիտի մատուցանեմ։
Ել. ԺԴ. 19

## 32 ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ

1 Քաղցրութեամբ առաջնորդէ մեզ,
Մինչ կ'ելլենք ցաւոց ձորէն.
Թող շնորհքդ զօրացնէ մեզ,
Խափանէ մեր վախն ամէն.
Զօրացուր մեզ
Քու անհուն շնորհքովդ, Տէր։

2 Թէպէտ և ցաւ ու շատ դառն վիշտ
Մեզ ամէն կողմէն պատէ,
Բայց Յիսուս մեզ կը փրկէ միշտ,
Մեղքն ու դժոխքը կը յաղթէ.
Խօսքն հաստատ է,
Տէրն պիտի զայն կատարէ։

3 Երանի՜ թէ պաշտէի ես
Քեզ, Փրկիչ իմ բարերար.
Ըլլայի երկնից զօրաց պէս,
Որ գովեն քեզ անդադար.
Երջանիկ են,
Ե՞րբ պիտի ես հոն հասնիմ։
Սաղ. ԻԳ.



## 33 ՏԷՐՈՋԸ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂԻՆ ԱՂՕԹՔԸ

1 Խօսէ ինձ, Տէր, խօսիմ և ես,
Արձագանգեմ քու պատգամներ.
Դու փնտռեցիր, փնտռեմ նոյնպէս,
Քու կորուսեալ հէք զաւակներ։

2 Ուղղէ զիս, Տէր, ես ևս ուղղեմ
Մոլորեալներն մեծաւ փութով.
Զիս կերակրէ, և կերակրեմ
Անօթիներն քոյդ մանանայով։

3 Ուսո ինձ, Տէր, ուսուցանել
Քու խոստումներ շնորհաւոր.
Թև տուր բանիցս թափանցել
Խեղճ, յուսահատ շատ սրտերու։

4 Լիութենէդ, Տէր, զիս լեցու,
Մինչև սրտէս բղխին գետեր.
Պարզ կենդանի բանիւ ազդու
Յայտնեմ քու փառք, պատմեմ քու սէր։

5 Երբ, ինչպէս, ուր յարմար դատես,
Զիս գործածէ ըստ քու կամաց.
Մինչև տեսնեմ քու սուրբ երես,
Եւ մանակցիմ քուկին փառաց։

Ել. Դ. 12, 15 Թարգ. Տիկին Հռ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 34 ԱՂՕԹՔ

1 Չկայ, Տէր, ցաւ մ'այնքան չընչին
Որ չը բերուի քեզ աղօթքով։
Չկայ տագնապ մը դոյզն ինքնին
Որ չը չարժէ, Տէր, քու գորով։

2 Դուն, որ վշտաց եղար տեղեակ,
Մեր վիշտերուն չես անտարբեր։
Սէրդ, որ հեծեց բեռներու տակ,
ՈՀ, մեր բեռներն բնաւ չանտեսեր։

3 Չկայ լռին հոգւոյ հառաչ
Որ, Տէր, չըլլայ քեզ լսելի։
Քաղցր է ուսիս ամէն կերպ խաչ,
Երբ քու խաչդ է ինձ հովանի։

4 Դուրսէն տագնապ, ներսէն մեղքեր.
Ա՜հ, սիրտըս հէք ինչպէս տկար,
Թէ Տէրն ցաւոց վրայ չարտասուէր,
Եւ չը մեռնէր մեղաց համար։

Եբր. Բ. 18 Թարգ. Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## 35 ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ

1 Սրտանց կու տամ փառք քեզ, ով Տէր,
Որ պահեցիր զիս այս գիշեր։
Ինձ տըկարիս դուն հոգ տարիր,
Նոր լոյսն ալ ինձ տեսնել տուիր։



2 Տէր, այս լուսոյն հետ երեսիդ
Լոյսն ալ շնորհէ քու ծառայիդ,
Անով հոգւոյս խաւարն մէկդի
Առ, որ ըլլամ լուսոյ որդի։

3 Այսօր ալ ինձ առաջնորդէ,
Ազատ պահէ չարիքներէ.
Օգնէ ինձ որ բարիք գործեմ,
Քեզ և մարդիկ սրտանց սիրեմ։

Սաղ. Ե. 3

## 36 ԱՌՏՈՒԱՆ ԵՒ ԻՐԻԿՈՒԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԳ

1 Ի՜նչ անվախճան է, Տէր, քու սէրն,
Ամէն գիշեր քենէ կու գան
Նոր պարգեւներ, և առտուներ
Լռին կ'իջնեն ցօղի նըման։

2 Ամէն գիշեր զիս կը պահես
Զրահնըւած վըտանգներէ.
Եւ առտուանց դուն կը ղրկես
Արեւդ որ զիս արթընցընէ։

3 Իմ անձըս քեզ կը նուիրեմ
Գիշեր ցորեկ, դուն իմ Տէրս ես.
Անթիւ շնորհքներ քեզմէ կ'առնեմ,
Փառք յաւիտեանս պիտի տամ քեզ։

Ողբ. Գ. 22, 23

## 37 ԵՐԳ ԱՌԱՒՕՏԵԱՆ

1 Ի՜նչ սրտաշարժ այն քաղցր երգեր,
Որոնք մեզ կը հասնին,
Երբ մաղթելու՝ Տէրն սիրողներն
Առաւօտուանց կը հաւաքուին։

2 Դէպ ի երկինք անուշ հովեր
Մաղթանքը կը տանին,
Հայրն կը լսէ անոնց ձայներ,
Կ'օրհնէ ալ լիովին։

3 Նոյնպէս Յիսուս կանուխ ելաւ՝
Ըղձիւ աղօթելու,
Ինքն անապատն առանձնացաւ
Հօրն հետ հաղորդելու։

4 Նոյնպէս հիմա ինք կ'աղօթէ
Լուսոյ մէջ երկնային,
Մեզի համար կը միջնորդէ,
Որ դեռ ծովն ենք մթին։

5 Ով Տէր, մեր նաւն մտիր այսօր,
Ալիքն հանդարտեցու՛ր,
Եղիր մեզ նաւավար հզօր,
Եւ զերծ ցամաքն հասցու՛ր։

Մատթ. ԺԴ. 22,23 Թարգ. C. H. Wheeler



## 38 ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ ԱՌԱՆՁՆԱՆԱԼ

1 Ես կը սիրեմ առանձնանալ՝
Հոգերըս ձըգելով,
Որ իրիկուան ժամերս անցնեմ
Ցնծմամբ աղօթելով։

2 Ես կը սիրեմ լուռ, առանձին
Զղջման արցունք թափել,
Իր խոստումներն յիշել, երբ Տէրն
Միայն կրնայ լսել։

3 Ես կը սիրեմ իմ միտքս բերել
Զայն որ զիս կը հոգայ,
Բոլոր հոգերս, վիշտերս ձըգել
Գըթած Տէրոջըս վրայ։

4 Ես կը սիրեմ երկինք նայիլ
Քաջ հաւատոյ աչքով.
Նեղուած հոգիս կը զօրանայ
Այն ցնծալի տեսքով։

5 Եւ վշտալից կեանքիս վերջին
Օրն երբ իմ վրաս հասնի,
Նըման ըլլայ այս մեղմ ժամուն,
Ու զիս երկինք տանի։

Ղուկ. Ժ. 38-42 Թարգ. I. F. Pettibone

## 39 ՔՈՎՍ ԿԵՑԻՐ

1 Ո՛վ Փրկիչըս, օրն իջած է,
Կ'աղաչեմ քեզ, քովս կեցիր.
Թանձր մութն արդէն կոխած է,
Այս գիշեր իմ հիւրս եղիր.
Երբ պակսին օգնականներըս,
Դուն միայն ես օգնական.
Բազմաթիւ են վտանգներըս,
Ո՛հ, եղիր ինծի պաշտպան.

2 Աշխարհիս պայծառութիւնը
Շատ չանցած կը մթննայ.
Փառքն ու մեծվայելչութիւնը
Շուտ աներեւոյթ կ'ըլլայ.
Բայց դուն ես յոյսիս արեւը,
Յաւիտեան դուն չես փոխուիր.
Ճառագայթներուդ պարգեւը
Շնորհէ ինձ, իմ քովս կեցիր.

3 Շատ անգամ, Տէր, քեզ մոռցած եմ,
Սակայն դուն զիս մի մոռնար.
Շատ անգամ քեզ թողուցած եմ,
Բայց ինծմէ մի հեռանար.
Ո՛վ Յիսուս, հոգւոյս Փրկիչը,
Հետս կենալ դուն խօսք տուիր.
Երբոր զօրաւոր փորձիչը
Յարձակի վրաս, քովս կեցիր.



4 Եւ վերջին թշնամիին վրայ
Տուր որ յաղթանակ երգեմ.
Իմ վրաս յարձակած ատենը,
«Ո՞ւր է քու խայթոցդ» ըսեմ.
Որ մահէն, Տէր, ազատուիմ ես,
Դառն մահուան քեզ յանձնեցիր.
Թող մահուան մէջ չընկրկիմ ես,
Մինչեւ վերջը քովս կեցիր.

Ղուկ. ԻԴ. 29 — Թարգ. *Elias Riggs*

## 40 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

1 Օրն հիմա կը վախճանի
Եւ երկիր լռիկ հանգչի,
Քեզ պաշտել ժողվէ մեզ, Տէր,
Վերը մինչ վառէ գիշեր
Անթիւ լոյսեր.
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես,
Ո՛վ Տէր զօրաց.
Յաւիտեան ես պաշտելի,
Տիեզերք քեզմով է լի,
Աղբիւրդ բարեաց. Ամէն.

2 Տիեզերքն է քու խորան,
Այս կամարն՝ մեր սրբարան.
Տունդ անհուն մեզ կը պատէ,
Հայր, նոյնպէս սիրովդ գրկէ

Քու զաւակներդ՝
Սուրբ ես, սուրբ ես, Լոյսն։

3 Արդ կը ծանրանայ գիշեր,
Մօտ, ա՛լ մօտ եկուր, ով Տէր.
Քու սրտիդ տրոփումն լեցուց,
Եւ քու սէրըդ փայլեցուց
Համայն երկինք՝
Սուրբ ես, սուրբ ես, Լոյսն։

4 Այս կամարն երբ խորտակի,
Այս երկիր երբոր անցնի,
Քու փառացըդ լոյսն, ով Տէր,
Մեզ յայտնէ, և թող շուքեր
Անհետանան։
Սուրբ ես, սուրբ ես, Լոյսն։

Առակ. Գ. 24 Թարգ. C. C. Tracy

## 41 ԵԿԷՔ, ՀՕՍ ԵԿԷՔ

1 Եկէք, հօս եկէք, ա՛լ հանգչելու ատեն է.
Գործքերն թողէք, հոգերն թողէք.
Եկէք, հօս եկէք.
Եկէք ուր կայ խաղաղութիւն,
Ընտանեկան ուրախութիւն,
Եւ եղբայրսիրութիւն.
Եկէք, հօս եկէք։



2 Ցորեկը բոլոր աշխատութեան ատեն է,
Երեկոյեան ժամն՝ հանգստեան.
Եկէք, հօս եկէք.
Հայր, մայր, քոյրեր ու եղբայրներ,
Միացընենք, ուրախ ձայներ,
Երգենք յուսոյ երգեր.
Եկէք, հօս եկէք։

3 Արեւը մըտաւ, լուսինը և աստղերը
Արծաթեղէն լուսով կ՚ելլեն,
Եկէք, հօս եկէք.
Զանոնք և մեզ Ստեղծողին
Մեր երգն ուղղենք ի միասին
Աղօթքով կաթոգին.
Եկէք, հօս եկէք։

Սաղ. ՃԷ. 8

## 42 ԵՐԳ ԵՐԵԿՈՅԵԱՆ

1 Այս օրն անցաւ գընաց,
Խաւարը կ՚երեւնայ.
Տուր որ յիշենք մահուան գիշերն,
Որ շուտ կը մօտենայ։

2 Ցոգնած, քունով թմրած՝
Մեր աչքը կը գոցենք.
Գերեզմանին մէջ շատ չանցած
Ամէնքս պիտի ննջենք։

3 Գիշերս մեզ, Տէր, պահէ
Բոլոր վըտանգներէն.
Հրեշտակդ ղրկէ, որ մեզ հսկէ
Մինչ գայ առտու նորէն։

4 Եւ երբ առտուն կանուխ
Անխոնջ արեւն տեսնենք,
Տուր որ անոր նըման անդուլ
Մեր պարտքերն վարենք։

5 Երբ մեր վախճանը գայ,
Եւ աս կեանքէս զատուինք,
Շնորհէ, փրկչին սիրոյն համար,
Որ մենք քու գիրկդ հանգչինք։

Մ–ւ. Դ.Ա. 5

## 43 ՏՂՈՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔԸ

1 Ո՛հ, նայէ ինծ և լսէ զիս,
Բարեգութ Հովիւ, Յիսուս.
Այս բոլոր գիշերն պահէ զիս
Մինչ վաղուան գըւարթ նոր լոյս։

2 Դուն այսօր զիս պաշտպանած ես,
Գոհութիւնս ընդունէ.
Հագցուցած և կերակրած ես,
Տէր, հիմա ձայնիս լսէ։



3 Կ'աղաչեմ, բոլոր մեղքերըս
Զղջալէս ներէ, ջնջէ,
Եւ սիրած բարեկամներըս
Պաշտպանէ ու միշտ օրհնէ։

4 Հոս փորձութենէ պահէ զիս,
Քու սիրովդ թող ապրիմ.
Ետքն երկնից մէջ ընդունէ զիս,
Հոն քեզի հետ բընակիմ։

Ոչ–. Բ. 18 Թարգ. Elias Riggs

## 44 ԻՄ ՔՈՎՍ ԿԵՑԻՐ

1 Իմ քովս կեցիր, գիշերն կը մօտենայ,
Տէր, քովս կեցիր, խաւարն կը թանձրանայ.
Երբ այլ մըխիթարիչ չի գըտնուիր,
Ո՛վ Թըշուառաց Օգնողդ, իմ քովս կեցիր։

2 Շուտով կ'անցնի օրերն կը վախճանին,
Անյայտ կ'ըլլայ ամէն ցնծում երկրին.
Հոս հաստատուն, անշարժ բան չերեւիր,
Ո՛վ դուն, որ անփոփոխ ես, քովս կեցիր։

3 Ներկայութեանդ կարօտ եմ անդադար,
Առանց շնորհքիդ փորձչին յաղթող չըլլար.
Քեզի պէս ո՞վ կայ առաջնորդ ընկեր.
Ուր որ ըլլամ, ով Տէր, իմ քովս կեցիր։

4 Երբ զիս կ'օրհնես, երկիւղ չունիմ բնաւ,
Անոյշ կ'ըլլան ինծի տրտմունք եւ ցաւ.
Դըժոխք եւ գերեզման ալ ոյժ չունին,
Երբ քովս կենաս անոնք կը յաղթըւին։

5 Մինչեւ վերջին օրերս մօտենան,
Մինչեւ երկնից դռները երեւնան,
Խաւար ճամբու մէջ առաջնորդ եղիր,
Կենաց, մահուան մէջ ալ, Տէր, քովս կեցիր։
Ամէն։

Սաղ. Դ. 8 Թարգ. Elias Riggs

## 45 ՄԻԱՅՆ ԱՅՍ ՕՐ

1 Վաղուան համար չեմ աղօթեր,
Հայր երկնաւոր.
Զիս պահպանէ մեղաց բիծէն,
Միայն այս օր։
Օգնէ գործեմ եւ աղօթեմ
Եռանդով նոր.
Անոյշ լեզուով զայլս բարեփոխեմ,
Միայն այս օր։

2 Ոչ թէ իմ կամքս՝ այլ քուկդ ընեմ,
Տէր Թագաւոր.
Իմ անձս զոհեմ սիրոյդ համար,
Միայն այս օր։
Խօսք չը խօսիմ անգութ կամ չար,
Կամ թունաւոր.



Դիր քու կնիքդ լեզուիս վըրայ,
Միայն այս օր։

3 Սրբէ իմ սիրտս, մեղքերս ներէ,
Ով Տէր, իմ վէմ.
Եթէ մեռնիմ այսօր, կանչէ
Վերին Եդեմ։
Վաղուան համար չեմ աղօթեր,
Հայր երկնաւոր.
Դու զիս բռնէ, չարէն պահէ,
Միայն այս օր։

Մատթ. Զ. 31-34 Թարգ. Տիկին ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 46 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՐԳԵՒՆ Է

1 Թէ որ Աստուած տունն չը շինէ,
Զուր կ'աշխատին զայն շինողներն.
Թէ որ քաղաքն ինք չը պահէ,
Զուր կը հըսկեն պահապաններն։

2 Զուր է կանուխ ելլել առտուն,
Եւ ուշ հանգչիլ ու քիչ ուտել.
Զի Տէրն կ'ուզէ իր սիրելոյն
Հանգստութիւն միայն շնորհել։

3 Ահա որդիք ու աղջիկներ
Ժառանգութիւն են Աստուծմէ.

Քեզի յանձնենք մեր զաւակներն,
Եւ օրհնութիւն խնդրենք քեզմէ։

Սաղ. ՃԻԷ.

## 47 ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀԻԼ

1 Հայր բարեխնամ ազգի մարդկան,
Մինչեւ վերջն իմ յոյս է քեզի.
Եւ երբ հասնի օր նեղութեան,
Յոյս չեմ դըներ չընչին բանի։

2 Ինձ առաջնորդ քեզ առնեցայ,
Դուն միշտ եղար սէրս բարեկամ.
Կեանքիս մէջ քե՛զ միայն ճանչցայ,
Թող կեանքս քեզմով գտնէ վախճան։

3 Երբ ծերութեան օրեր թշուառ
Հասնին վըրաս, գիս մի՛ թողուր.
Դուրս մի՛ ձըգեր յուսահատեալ՝
Վերջին օրերս ողբալ տխուր։

4 Մինչեւ կ'ապրիմ դու ես ինձ վէմ,
Երկրպագեմ քեզ ի մահու.
Մահէն ետքն ալ քեզ պիտի՝ օրհնեմ
Անվերջ դարեր հետ սուրբերուն։

Սաղ. ԻԳ. 4 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՋՃԵԱՆ



## 48 ՄԵՆՔ ՉԵՆՔ ՁԳԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

1 Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեան.
Քանզի մանկանց է առաջնորդ,
Ծերոց ալ գաւազան։
Ճըրագ է ան. լոյս փառաւոր
Կու տայ մեր մութ ճամբուն.
Կը ցուցնէ փառք երկնաւոր,
Բընակարան սիրուն։
Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեան.
Քանզի մանկանց է առաջնորդ,
Ծերոց ալ գաւազան։

2 Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը,
Քանզի միայն անկէ
Երկնից ճամբան կրնանք գտնել,
Փախչիլ ալ դըժոխքէ։
Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ
Իջաւ հոս երկինքէն,
Որ իր արիւնը թափելով
Մեզ ազատէ մեղքէն։
Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը, ԵՒայլն։

3 Մենք չենք ձըգեր Սուրբ Գիրքը,
Այլ քարոզենք պիտի,

Որ արձագանգը աշխարհէն,
Ծովէն անդին լսուի,
Եւ փրկութեանը ձայն լսեն
Մարդիկ ամէն երկիր.
Մենք ալ, Տէրոջ Սուրբ Խօսքէն
Բնաւ չենք հրաժարիր։
Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը, Ամէն։

Սաղ. ճժթ. 105 Թարգ. Elias Riggs

## 49 ՀՐԱՇԱԼԻ ԽՕՍՔ ԿԵՆԱՑ

1 Ո՜հ, ինծ դարձեալ երգէ զանոնք,
Հրաշալի խօսք կենաց.
Եւս գեղափայլ տեսնեմ զանոնք,
Հրաշալի խօսք կենաց.
Կենարար խօսք գեղեցիկ,
Ինծ յայտնեն հաւատք, պարտք։
Խօսք գեղեցիկ, խօսք հրաշալի,
Հրաշալի խօսք կենաց։

2 Օրհնեալ Յիսուս տայ ամենուն,
Հրաշալի խօսք կենաց.
Լո՛ւր, մեղաւոր, զայս ձայն սիրուն,
Հրաշալի խօսք կենաց.
Ձրի պարգեւ է քեզ լիովին,
Մեզ սիրով կոչեն յերկին։
Խօսք գեղեցիկ, Ամէն։



3 Ձայն տայ սիրոյ Աւետարան,
Հրաշալի խօսք կենաց.
Ձայն թողութեան, խաղաղութեան,
Հրաշալի խօսք կենաց.
Ով Յիսուս, Փրկիչ միայն,
Սրբացուր մեզ յաւիտեան։
Խօսք գեղեցիկ, Ամէն։

Յովհ. ժբ. 21 Թարգ. ՀՐԱՆՏ ՔԻՐԻՉՃԵԱՆ

## 50 ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Քու Սուրբ Գիրքդ է ինծ հաճելի,
Լոյս կ'ընծայէ խիստ ցնծալի
Խեղճին որ խաւարի մէջ է.
Քու խօսքդ մոլոր ճամբաս կ'ուղղէ,
Եւ վախդ սանձ է իմ չար սրտիս,
Խոստումներդ հանգիստ կու տան խղճիս։
2 Քու սուրբ օրէնքդ ինծ կը յայտնեն
Ան կանոններն որ ինծ պէտք են.
Անոնք ազնիւ ուսում են ինծ,
Եւ քան ըզմեղր անուշ են ինծ,
Բոլորէն զտուած մաքուր ոսկի
Սրտիս այնքան չէ ցանկալի։

3 Ըսպառնալիքդ կ'արթընցընեն,
Ու իմ վըտանգս ինծ կը յայտնեն.
Բայց Տեառն օրհնեալ Աւետարան
Զիս կը փրկէ մինչ յաւիտեան.

Մեղքս կը յայտնէ, հոգիս կ'ուղղէ,
Ձրի բայց մեծ վարձք կը շնորհէ։

4 Իր սխալները ո՞վ գիտէ.
Ով Տէր, դուն իմ մեղքերս քաւէ,
Ամէն մեղքէ զիս ետ պահէ,
Որպէս օրհնութեան մէջ ընդունէ.
Չըլլայ անշահ եւ անպիտան
Այն կենսատու Գիրքդ յայտնութեան։

Սաղ. ԺԹ. 7-11

## 51 ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԸԼԼԱԼՈՒ Է

1 Երիտասարդն ինչո՞վ մաքրէ
Իրեն մոլար ճամբան.
Ըզգուշութեամբ թէ որ պահէ
Քու խօսքդ սրբազան։

2 Բոլոր սրտով քեզ խնդրեցի,
Թող մի տար մոլորիմ.
Պատուիրանքներդ մտածեցի,
Խօսքիդ պիտի նայիմ։

3 Քու օրէնքովդ կ'ուրախանամ
Անգին գանձի մը պէս.
Եւ թող մի՛ տար որ խօսքդ մոռնամ,
Որպէսզի զիս փրկես։

Սաղ. ՃԺԹ. 9



## 52 ԱՍՏՈՒԾՈՑ ԽՕՍՔԻՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ

1 Վկայութիւնդ զարմանալի
Է միշտ ինձ հաճելի,
Անոր համար ալ իմ հոգիս
Զայն միշտ պահէ պիտի։

2 Քու Սուրբ խօսքիդ պատուիրանքներն
Միշտ լոյս կու տան մարդուն.
Միամիտներն ու տգէտներն
Կ'ընեն շատ իմաստուն։

3 Բերանս բացի, հառաչեցի,
Խօսքիդ ես ցանկացի.
Ճամբուդ մէջ դուն զիս հաստատէ,
Որ չարն չիշխէ ինծի։

4 Իմ վրաս քու լոյսդ փայլեցուր,
Ծառադ լուսաւորէ.
Քու սուրբ օրէնքդ ինձ սորվեցուր,
Որ ինձ ճամբադ յայտնէ։

5 Կ'իջնեն լացող իմ աչքերէս
Արցունք՝ գետի նման,
Զի շատ մարդիկ չը պահեցին
Օրէնքըդ սրբազան։

Սաղ. ՃԺԹ. 27

## 53 ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Ո՛վ դուն Սուրբ Գիրք երկնային,
Պատուական գանձս ես իմին,
Որ ըսկիզբս ինծ կը պատմես,
Ինչ ըլլալս ինծ կը յայտնես։

2 Մոլորեալըս կը խրատես,
Եւ Փրկչին սէրն կը յայտնես.
Դուն ինծի ես կառավար,
Դատաւոր ես բարերար։

3 Նորոգուիլ մեզ Սուրբ Հոգւով,
Ըստանալ կեանքն հաւատքով,
Դուն կ'ըսես թէ կայ հընար,
Ու մեզ ես միշտ մըխիթար։

4 Երկնային փառքն կը պատմես,
Եւ կորուստն ալ կը յայտնես.
Ո՛վ դուն Սուրբ Գիրք երկնային,
Պատուական գանձս ես իմին։

Բ. Տիմ. Գ. 16

## 54 ԿԵՆԱՐԱՐ ԲԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

1 Թող քու Սուրբ Խօսքդ, Տէր իմ Փրկիչ,
Իմ վըշտակիր սըրտիս ազդէ.



Նա առաջնորդ և ըսփոփիչ
Ըլլայ ինծ միշտ, ու ինծ օգնէ։

2 Խաբող համոյք իմին հոգիս
Երկար ատեն մոլորցուցին.
Սուտ բարիքներ այս աշխարհիս
Իմ սէրս առ քեզ խափանեցին։

3 Բայց ձայնըդ, Տէր, հաւատարիմ,
Խորունկ քունէ զիս արթընցուց.
Առ քեզ դարձուց անսահման սիրտ իմ,
Եւ իմ աչքէս արցունք վազցուց։

4 Աշխարհասէրք միշտ կը զրուցեն,
Մեզ ո՞վ պիտի տայ բարութիւն.
Տէր, դէմքըդ ցոյց աստուածեղէն,
Տուր ինծ Որդւոյդ խաղաղութիւն։

Հռոմ. ԺԵ. 4

## 55 ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Տէր գըթութեան, ինծ ողորմէ,
Քուկին օրէնքդ ինծ սորվեցուր.
Ճըշմարտութեանդ լոյսն ինծ յայտնէ,
Քու փըրկութեանդ զիս շուտ հասցուր։

2 Ես քու ծառադ եմ կամաւոր,
Զիս իմաստուն, ըզգաստ ըրէ.

Վըկայութիւնդ՝ խօսքդ զօրաւոր
Հոգւոյս ազդէ, սըրտիս տիրէ։

3 Ատենն եկաւ որ Տէր Աստուած
Իր զօրութիւնն ի գործ դընէ.
Զի անհաւատն և անաստուած
Տէրոջն օրէնք կը խափանէ։

4 Անոր համար ես սիրեցի
Պատուիրանքներդ բոլոր սրտով.
Ազնիւ ոսկին ես սեպեցի
Ոչինչ բան քու պատգամիդ քով։

5 Անոր համար ամէն քուկին
Պատուէրդ ուղիղ կը համարիմ.
Եւ սըտութեան ճամբան մըթին
Միշտ ատելով ես կը փախչիմ։

Սաղ. ՃԺԹ.

## 56 ԵՐԳ ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

1 Յաւիտենական Էակ,
Եհովայ, Աստուած միակ,
Դուն ըրիր աշխարհ համայն,
Կառավար ամենիշխան.
Դըրութիւնն աստեղերաց
Լոկ քեզմով է ըստեղծուած,



Բընութեան կարգադրութիւն
Լոկ քեզմով է հաստատուն։

2 Մեծութեանդ չի կայ սահման,
Գիտութիւնդ է անպայման,
Անպայման և զօրութիւնդ,
Մաքէ վեր է բարութիւնդ.
Դու պատճառ ես ամէնուն,
Եւ աղբիւր բարիքներուն.
Դու ողորմութիւն, սէր ես,
Ամենուն կը հաղորդես։

3 Ով երրեակ և մի Աստուած,
Ինքնակալ Տէր զօրութեանց,
Խընամող, նայող, սիրող,
Ինձ եղիր առաջնորդող.
Մութ ատեն՝ կենացըս լոյս,
Եւ սրտիս՝ ցաւոց մէջ յոյս,
Մահուան մէջ՝ տուիչ կենաց,
Ինձ եղիր ուխտիս Աստուած։

Թարգ. Ա. Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

Սաղ. ՃԳ.

## 57 ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԲԵՐԴ Է ՀԱՍՏԱՏՈՒՆ

1 Աստուած մեր բերդ է հաստատուն,
Եւ է հըզօր պաշտպան մը.
Երբ վիշտ պատէ և փորձութիւն,
Ինքն է քաջ օգնական մը։

Չի խաւարի իշխան,
Արթուն և ժըրաջան,
Դատանամուտ կ՚ըլլայ,
Բռնել մեզ կը փութայ,
Որ տապալէ անդունդը՝

2 Մեր զօրութիւնն է ունայն,
Մեր քաջութիւնը խոտան է.
Այլ զօրապետ կայ խիստ արի,
Խաղաղութեան իշխանն է.
Ո՞վ է այս զօրական.
«Յիսուս Քրիստոս Օծեալ»
փրկիչը նա յաղթեց,
Եւ մահը խափանեց.
Ամենազօր Փրկիչ է։

3 Թող սատանան յոյժ աշխատի
Իւր դաւերով բռնել մեզ.
Մենք վախ չունինք, զի Տէրն բարի
Կարող է պաշտպանել մեզ.
Դեւք ալ պատիր, անթիւ,
Մեզ պաշարեն խըռնիւ,
Կրնանք հաստատ կենալ
Մինչ Տէրն ամենակալ
Անյաղթ մեր ապաւէնն է։

Սաղ. ԽԶ։ Թարգ. M. P. Parmelee



## 58 ՈՎ ԱՐԱՐԻՉ ՀԶՕՐ

1 Ով Արարիչ հըզօր,
Հայր յաւիտենական,
Սիրով ականջ խոնարհեցուր
Մեր փառաբանութեան։
Լըսէ մեր ձայն, թէ և
Գիտենք, ով բարձըր Տէր,
Քու աթոռիդ շուրջ կ՚որոտան
Միշտ ալէլուիաներ։

2 Լըսէ, ով սուրբ Աստուած,
Ձայն մահկանացութեան,
Երբ մեղաւորք սիրոյ Աղբիւրն
Օրհնաբանել բաղձան.
Զուարթունք անթիւ, որ վերն
Ծովու ձայնով կ՚երգեն,
Լըսեն ապշած, երբ յաղթական
Երգն փրկելոց լըսեն։

3 Ով դու երրեակ և մի,
Աղբիւր ողորմութեան,
Ո՞ւր կայ հըրաշք սքանչելի
Քու մեծ սիրոյդ նըման.
Ոչ երկնային մի քնար,
Ի ձեռն հրեշտակաց
Կրնայ պատմել սքանչելիքն
Աստուածային շնորհաց։

4 Ով դու Գառնուկ զենեալ,
Քոյդ է փառաց աթոռ.
Դու ես երկնից գեղեցկութիւն,
Դու ես կեդրոն անոր։
Շնորհէ մեզ, ով Փրկիչ,
Լոյսիդ մէջ բընակիլ,
Մեր գործն ըլլայ քեզ յաւիտեան
Սիրել, փառաբանել։

Յու. Ա. 3 Հեղինակ C. C. Tracy

## 59 ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ

1 Կ'երգեմ անճառ քոյդ զօրութիւն
Աստուած մեր Եհովայ.
Զի լեռն, երկինք, ծովն ալ անհուն
Ոյժիդ են միշտ վըկայ.
Կ'երգեն ամէնն՝ իմաստութիւն,
Զի աստղ, արև յաւէտ
Շողան, սուրան, իշխեն, ցընծան,
Կամքովդ, Տէ՛ր, ախրաւէտ։

2 Կ'երգեմ, Տէ՛ր, քու բարիքդ անգին
Որ լնու երկիրը յոր,
Ամէն բան քու բարի կամքին
Նշանն է յայտարար.
Աչքերս, Տէ՛ր, ուր որ դարձընեմ,
Տեսնեմ հրաշք մեծափառ.
Երկիրն, երկնից կամարն վըսեմ
Փառքիդ ցոյցք են պայծառ։



3 Ամէն ծաղիկ կամ շնչին բոյս
Սիրոյդ է, Տէ՛ր, նըշան.
Ամպերն, հովերն մըրկայոյզ
Ծառայ են քեզ միայն.
Փոքրիկ ու մեծ կենդանիներ
Խնամքիդ են առարկայ.
Հեռու կամ մօտ չիք տեղ մը, Տէ՛ր,
Ուր որ դուն չես ներկայ.

Սաղ. ԿԶ. Թարգ. Յ. Մ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

## 60 ԶԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱԲԱՆԵԼՈՒ ՀՐԱՒԷՐ

1 Տուէք Աստուծոյ, ազգեր մարդկային,
Տուէք Աստուծոյ փառք ու զօրութիւն.
Պատիւ, զօրութիւն անկ են Արարչին,
Զի գանձ է բարեաց անճառ և անհուն։

2 Աստուած կ'որոտայ երկնից բարձունքէն,
Ծովեր, անդունդներ համակ կը յուզուին.
Անոր ահաւոր ձայնով՝ համօրէն
Աշխարհ կը սարսի դողով ահագին.

3 Աստուած հովերուն թևով կը սուրայ,
Լեռներ կը հալին անոր երկիւղէն.
Սակայն կը տեղայ բարիք անխընայ,
Եւ է իր որդւոց ամուր ապաւէն.

Սաղ. ԻԹ.

## 61 ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 *Աստուած ողորմի մեզի, ու | օրհնէ մեզ, || երեսը փայ | լեցնէ մեր | վրայ, ||*

2 *Որ երկրի վրայ քու ճամբադ | ճանչցը | ւի, || ու ամէն ազգաց | մէջ քու | փըրկու | թիւնդ։ ||*

3 *Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով Աստ- ուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ գո | վեն։ ||*

4 *Ազգերը թող ուրախանան | ու ցըն | ծան. || վասն զի ժողովուրդները ուղղութեամբ պիտի դա- տես, ու երկրի ազգերուն դուն պի | տի ա- | ռաջնոր | դես։ ||*

5 *Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով Աստ- ուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ գո | վեն։ ||*

6 *Երկիրը իր պտուղը | պիտի | տայ. || ու Աստուած, մեր Աստուածը, | մեզ պի | տի օրհ | նէ։ ||*

7 *Աստուած մեզ պի | տի օրհ | նէ, || ու երկրի ամէն ծայրերը ան | կէ պի | տի վախ | նան։ || Ա | մէն։ ||*

*Սաղ. ԿԷ*

## 62 ԵՐԿՆԱԿԱՄԱՐ

1 *Վերն անսահման երկնակամար,*
*Եթերական դաշտ կապուտակ,*



*Եւ աստղերու գունդն անհամար*
*Կը հռչակեն Տէրն հեղինակ։*
*Արեւն անխոնջ մինչեւ օրէ օր*
*Մեզ ցոյց կու տայ Տէրոջը փառք.*
*Երկրէ երկիր պատմէ անոր*
*Ճարտար ձեռաց գործքն եւ արարք։*

2 *Ու երբ պատէ մութ վերըստին,*
*Վարէ լուսին նոյն երգն ընտիր.*
*Եւ պատմութիւնն իր ծընունդին*
*Կրկնէ երկրին լուռ, ունկընդիր.*
*Մինչ իր դըրացի ջահեր պայծառ,*
*Հանդիսաւոր վազքին առեն,*
*Սփռեն այն լուրն ծայրէ ի ծայր,*
*Եւ վեհօրէն զայն հաստատեն։*

3 *Երբ լըռութեամբ հանդիսաբար*
*Դառնան անոնք շուրջ մեր երկրին,*
*Թէեւ չունին ձայն կամ բարբառ,*
*Բայց մարդ կը զգայ որ կը բերկրին.*
*Ու ծիրանի շրջաններով*
*Կ՚երգեն անդուլ վերերն յառած,*
*Եւ լուսաւոր նշաններով*
*Կ՚ըսեն, «Գործքն ենք անոր ձեռաց»։*

*Սաղ. ԺԹ. 1-6* Թարգ. Ց. Թ. ԳԱՑԱԽԵԱՆ

## 63 ԲՆՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆ

1 Տէր, դուն համայն բնութեան իշխան,
Քու փառքդ պատմեն երկիր, երկին.
Արև, աստղեր քեզմով կենան,
Բայց ի՜նչ մօտ ես դու մեր սրտին։

2 Դուն մեր կեանքի արեւն շողուն,
Շողերդ պարզեն ուղին խաւար.
Ա՛սող մեր յոյսին, քու լոյս ժպտուն,
Վանէ գիշերն մթին, երկար։

3 Ծիծաղկոտ քոյ այգն է մեր շքեղ,
Դէմքդ անժպիտ՝ մթին գիշեր.
Քու գութն է մեր պայծառ աղեղ,
Մերն են միայն մեղքին ամպեր։

4 Դուն ես ամէն կեանքի արև,
Քաղցրը շողերդ սփռեն քու սէր.
Քու լուսափառ գահին առջև
Լոյսէդ ուրիշ լոյս չենք ուզեր։

5 Ո՛հ, Տէր, տուր մեզ ճշմարտութիւնդ,
Եւ քու սիրով վառուած սրտեր.
Ամէն մարդ թող պաշտէ անունդ,
Եւ լոյսդ վանէ մեղքին գիշեր։

Ցայտ. Ե. 13 Թարգ. Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ



## 64 ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՎԸ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ Է

1 Երկինք յայտնի կը փառողեն
Տէրոջը փառքն ամեն ատեն.
Օրն ալ ատուր խօսք կը յայտնէ,
Գիշերն հանճար միշտ կը պատմէ։

2 Լեզու չունին և չեն խօսիր,
Անոնց ձայները չեն լսուիր.
Բայց խօսքերնին այն տեղ կ'երթայ,
Ուր որ արեւն իր լոյսն կու տայ։

3 Տէրոջն օրէնքն է երկնային,
Կը նորոգէ մարդոց հոգին.
Վկայութիւնն է ճշմարիտ,
Կ'ընէ տգէտն ըղձօնամիտ։

4 Իր կանոններն շիտակ, սիրուն,
Սրտից կու տան ուրախութիւն.
Պատուիրանքներն են շատ պայծառ,
Աչաց կու տան լոյս մշտավառ։

5 Անոնք ընտիր են ոսկիէն,
Ախորժելի՝ անոյշ մեղրէն.
Երբ քու ծառադ զանոնք պահէ,
Մեծ հատուցում պիտի առնէ։

Սաղ. ԺԹ.

## 65 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԳԷՏ ԵՒ ԱՄԵՆՈՒՐԵՔ

1 Ո՜վ Տէր, դուն զիս միշտ կը քննես,
Իմաստութեամբդ զիս կը ճանչնաս.
Նստելս՝ ելլելս դու միշտ գիտես,
Միտքս հեռուէն կը հասկընաս։

2 Ես ո՞ւր երթամ քու Հոգիէդ,
Որ տիեզերքն է տարածուած.
Ես ո՞ւր փախչիմ քու երեսէդ,
Որմէ բան մ'ալ չէ ծածկըւած։

3 Թէ որ երբեք երկինք ելլեմ,
Դուն հոն ներկայ կը գտնուիս.
Թէ որ դժոխք մահիճս ընեմ,
Ահա հոն ալ կ'ելլես առջիս։

4 Ես փառք կու տամ, ով Տէր, քեզի,
Որ զիս ըրիր ահեղ կերպով.
Գործքերդ են շատ զարմանալի,
Զանոնք գիտցայ հաճութիւնով։

5 Տէ՛ր, զիս փորձէ եւ սիրտս քննէ,
Իմ խորհուրդներս բոլոր ճանչցիր.
Թէ որ ճամբաս թիւր ու չար է,
Առաջնորդէ ճամբուդ ընտիր։

Սաղ. ՃԼԹ.



## 66 ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

1 Աստուած, Տէր մեր, ի՜նչ փառաւոր
Է քու անունդ երկրի վըրայ.
Անճառ լուսովդ երկինք բոլոր
Յաւերժաբար կը ցոլանայ։

2 Երբ կը տեսնեմ երկնից կամար,
Որ է գործք քու ճարտար մատանց,
Պար աստեղաց, լուսինն պայծառ,
Որ քու խօսքովդ են ըստեղծուած,

3 Ես զարմանքով յայնժամ կ'ըսեմ,
Մարդն ո՞վ է, Տէր, որ դուն յիշես.
Արդեօք ի՞նչչափ է մարդ վըսեմ,
Որ դուն անոր միշտ այց կ'ընես։

4 Քանզի դուն զայն պըսակեցիր
Իբրեւ պատուով հրեշտակային.
Վերակացու դուն զայն դըրիր
Ձեռագործիդ՝ բոլոր երկրին։

5 Արջառ, թռչուն եւ ձուկ անոր
Տըւիր որ հընազանդ ըլլայ.
Աստուած, Տէր մեր, ի՜նչ փառաւոր
Է քու անունդ երկրի վըրայ։

Սաղ. Ը.

## 67 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆՈՒՆ ՎՐԱՅ ԿԸ ՏԻՐԷ

1 Տէրն կը տիրէ, երկիր ցընծայ,
Թող կըղզիներ ուրախանան.
Մեր փըրկութիւնն անկէ կու գայ,
Գահն է աթոռ արդարութեան։

2 Արդարութիւնն երկինք պատմեն,
Բոլոր ազգեր իր փառքն տեսնան.
Ամէն մարդիկ որ կուռք պաշտեն
Թող քու առջեւ ըդ ամըչնան։

3 Քանզի, ո՛վ Տէր, դուն բարձր ես
Բոլոր երկրիս մարդիկներէն.
Շատ բարձրացար և շատ մեծ ես
Բոլոր երկրիս աստուածներէն։

4 Ո՛վ Տէրն սիրող բարեպաշտներ,
Միշտ ատեցէք ըղչարութիւն.
Տէրն կը պահէ ամէն սուրբեր,
Կու տայ անոնց իր փրկութիւն։

5 Արդարներուն լոյս ծագեցաւ,
Յայտնըւեցաւ ճշմարտութիւն.
Ուրախութիւն պարգեւեցաւ
Սրտով ուղիղ եղողներուն։

Սաղ. ՂԷ.



## 68 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐՉԻՆ

1 Եկէք ցնծանք Տէրոջն առջին,
Զի նա է մեզ կեանք և պաշտպան.
Աղաղակենք մեր մեծ փրկչին,
Զի նա է մեզ վէմ փրկութեան։

2 Ինչու որ Տէրն է մեծ Աստուած,
Աստուածներուն մեծ Թագաւոր.
Անոր ձեռքին մէջ է աշխարհս,
Լեռներ, դաշտեր, գանձեր բոլոր։

3 Իրենն է ծովը, զայն ինք շինեց,
Եկէք ծռինք Տէրոջ առջին.
Ձեռքով ցամաքն ան ստեղծեց,
Տանք գոհութիւն Ըստեղծողին։

4 Ինչու որ ան է մեր Աստուած,
Մենք ոչխարներ իր արօտին.
Անոր խօսքերն են լուսաւորած,
Մըտիկ ընենք անոր ձայնին։

Սաղ. ՂԵ.

## 69 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Ով փառաւորեալ Արքայ երկնաւոր,
Երկնի ու երկրի Տէր և Դատաւոր,

Տըկար մարդիկներ կարող չեն երգել
Քու իշխանութիւնդ մեծ եւ ահաւոր։

2 Տէր, քու զօրութիւնդ պատմել կարող չեն,
Շնորհքիդ մեծութիւնն խորհիլ կարող չեն
Ոչ այս աշխարհիս բոլոր բընակիչք,
Ոչ ալ երկինքի սուրբերը ամէն։

3 Տէրոջը առջեւ անթիւ հրեշտակներ
Գիտնալ կարող չեն անոր խորհուրդներն.
Իրենց պաշտօնն է զայն փառաբանել,
Ու միշտ կատարել իր սուրբ հրամաններն։

4 Այն սուրբ հանդէսին հետ ես ալ կ'ուզեմ
Որ անձըս քեզի, Տէր իմ, զոհ ընեմ.
Ջնջին ընծաս դուն անտես մի ըներ,
Հաճէ ընդունիլ զիս, երբ քեզ կ'երգեմ։
Սաղ. ՃԽԵ.

## 70 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱՏԵՍ Է

1 Քըննողդ համայնից, ով Տէր իմ Աստուած,
Գիտես դուն մեղքերս գաղտնի գործըւած.
Աչքէդ յարարթուն ոչ մէկ ծածուկ բան
Կրնայ վըրիպիլ, թէպէտ աննըշան։

2 Ամէն տեսակ մեղք խօսքի, խորհըրդի,
Որով իմ հոգիս միշտ կը խըռովի,
Գրքիդ մէջ անջինջ գըրուած կը մնան
Մինչեւ գայ վերջին ահեղ դատաստան։



3 Ահա ես համակ զղջուած իմ անձէս,
Վըստահ քու գըթոյդ, կու գամ միայն քեզ.
Ջնջէ, Տէր, մեղքերս մինչդեռ չեմ մեռած,
Ըրէ զիս ժառանգ կեանքի եւ փառաց։

4 Յիշէ այն մեծ գին, որով Տէր Յիսուս
Կամաւ վըճարեց պարտքերը հոգւոյս.
Անոր արիւնով սուրբ եւ պատուական
Մաքրէ զիս, ըլլամ զաւակ քեզ արժան։
Սաղ. ՃԼԹ.

## 71 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Լեզուովս պիտի Աստուած գովեմ,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կորչի,
Ալ աւելի պիտի երգեմ.
Անոր փառք տալս չունի վախճան,
Զի երբ օրերս հոս լըմննան,
Վերն յաւիտեանս պիտի երգեմ։

2 Բիւր երանի յուսացողին
Մեծ Աստուծոյն Իսրայէլին,
Տիեզերաց Ըստեղծողին.
Տէրոջը խօսքն է հաստատուն,
Ինքն է փրկիչն աղքատներուն,
Միշտ խոստումներն կը կատարուին։

3 Լեզուովս միշտ պիտի գովեմ,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կորչի,

Ալ աւելի պիտի երգեմ.
Անոր փառք տալս չունի վախճան,
Զի երբ օրերս հոս լմննան,
Վերն յաւիտեան պիտի երգեմ։
Սաղ. ՃԽԶ.

## 72 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Աստուած իմ, երբ հոգիս նայի
Ամէն ողորմութեանդ,
Ուրախութեան մէջ կ'ընկղմի,
Սիրոյ և ցնծութեան։

2 Հազարաւոր շնորհքներ քեզմէ
Ամէն օր կ'ընդունիմ.
Բայց քու պարգևներուդ մեծն է
Այս շնորհակալ սիրտ իմ։

3 Բոլոր կենացս օրերն երգեմ
Տէրոջը սէրն գըթած.
Երկնից մէջ զայն պիտի կրկնեմ
Ի մէջ հրեշտակաց։

4 Ես յաւիտեանս ուրախ երգել
Կ'ուզեմ քեզի երգել.
Չեն բաւական անթիւ դարեր
Քու սէրդ փառաբանել։
Սաղ. ՃԳ.



## 73 ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

1 Հայր ամէնուս է Տէր Աստուած,
Ողորմութեամբ, սիրով լեցուած.
Բազումողորմ է և գըթած,
Այն որ երկնից մէջ է նըստած։

2 Առանց իր բարձըր հրամանին
Ճնճղուկ մ'անգամ գետին չիյնար.
Ասանկ գըթած Հօր մը որդին
Ի՞նչպէս անվախ իրեն չերթար։

3 Միայն մեղքէն թող մենք վախնանք,
Այն ատելի է Աստուծոյ.
Թէ իր պատուէրն պահած չըլլանք,
Կ'արժանանանք սաստիկ պատժոյ։
Ղուկ. ԺԲ. 6, 27-31

## 74 ԱՍՏՈՒԱԾ ԵՐԿՆԱՒՈՐ ՀԱՅՐ ՄԵՐ

1 Երկնից Աստուածն որ կը պաշտենք,
Մեզ բարեկամ և Հայր ալ է.
Մեր ուխտն անոր հաստացնենք,
Որ մեր աղօթքը վեր ելլէ։

2 Մեր սիրտն անոր կամաւ տանինք,
Ինքն աղօթքի խօսք կը հաճի.
Իր սէրն անհուն՝ գիշերն յիշենք,
Թող ինքը միշտ փառաւորուի։

3 Երբ Աստուծոյ դէմ մեղանչենք,
Իր թողութիւնն սրտանց խնդրենք.
Մեզի համար մեռաւ Յիսուս,
Չունինք ուրիշ Փրկիչ մը մենք։

4 Գթած հօր պէս սիրով վառուած՝
Ներողութեամբ ինք կ'ողորմի.
Թէ հոս ծնողքէ ենք զրկուած,
Անմահ Հայր մը ունինք յերկնի։

Միք. Է. 18

## 75 ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽՈՒՆ ՓԱՌՔԸ

1 Գլուխ եղեր, Տէր, սէրդ ու գութ,
Ազգաց պատմեմ խոստումդ անսուտ
Փրկել ամէն հոգի, որ քեզ
Իր վէմն ընէ սրտով անկեղծ.

2 Որքա՜ն հզօր ես, ով Աստուած,
Աղբիւր նաև ամէն բարեաց.
Քեզի պէս մեծ չկայ էակ,
Որ մեզ սիրէ գթով համակ։

3 Երկինք, երկիր են քոյդ միայն.
Քու ձեռքդ հիմնեց զանոնք համայն.
Թաբոր, Հերմոն, ազգեր մարդկան
Անունդ կ'օրհնեն ի մի բերան։



4 Արժա՜ն, իրօք, համերգս այս պերճ.
Հայր, բարձր ըլլայ բազուկ քո մեծ.
Չի հիմ գահիդ արդար օրէնք
Եւ լոյս դէմքիդ է սէր աննենգ։

5 Երնէ՜կ անոնց որ չեն անմիտ,
Սիրով կ'անսան խրատու ձայնիդ.
Անոնք պիտի ցնծան, հրճուին
Գործովք իրենց միակ Փրկչին։

Սաղ. ՁԹ.

## 76 ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՆԵՐՈՒՆ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

1 Տէրն օրհնեցէք, զի է բարի,
Իր գթութիւնն է յաւիտեան.
Տէրոջ գործքերն են սխրալի,
Մարդ զայն գովել չէ բաւական։

2 Երնէ՛կ անոնց որ կը պահեն
Տէրոջ օրէնքն և պատուիրան.
Երնէ՛կ անոնց որ միշտ կ'ընեն
Գործ գթութեան, արդարութեան։

3 Տէր, զիս յիշէ, ինչպէս կ'ընես
Քու սիրելեացդ. ինծ ալ եկուր.
Ճշմարտութիւն սիրեմ քեզ պէս,
Եւ միշտ պահեմ իմ սիրտս մաքուր։

4 Ընտրեալներուդ մէջ հետդ ըլլամ,
Տեսնեմ քու փառքդ ու վայելեմ.
Խաղաղ սրտով ու բախտանամ,
Եւ անվախճան կեանք ժառանգեմ։

5 Փրկէ զմեզ, ո՛վ Տէր Աստուած,
Մարդոց մեղքէն զմեզ ժողվէ,
Մենք միշտ կ'երգենք անունդ գթած,
Արդարութեամբդ մեզ փրկէ։

Սաղ. ճէ.

## 77 ԿԱՅ ԱՄԵՆՈՒՐԵՔ ԱՍՏՈՒԱԾ

1 Աստղ, լուսին, պայծառ արեւ,
Որոտում, փայլակ, անձրեւ,
Փոքր բլուր եւ բարձր լեռն,
Գեղեցիկ թռչնոց երգերն,
Որ եւ իցէ արարած
Միշտ կը քարոզէ զԱստուած։

2 Ծովն, ցամաք, ամպերն երկնից,
Հով մեղմ կամ մրրրկալից,
Կը գոչէ մեկտեղ համայն
Տիեզերք բարձրաձայն,
Թէ գործքովը յայտնուած
Կայ ամենուրեք Աստուած։

Սաղ. ճԺԹ. Թարգ. Elias Riggs



## 78 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Պիտի երգեմ քեզի,
Աստուած իմ Թագաւոր.
Անունդ ի՜նչ սիրելի,
Գործքերդ ի՜նչ փառաւոր.
Քեզ գովելու կը փափաքիմ,
Մինչեւ մահուամբ փառաց հասնիմ.

2 Մարդոց իշխաններուն
Ինչո՞ւ համար յուսամ.
Մահկանացուներուն
Ինչո՞ւ ես հաւատամ.
Շուտով կ'ելլէ անոնց հոգին,
Եւ խորհուրդներն կը կորսուին.

3 Աստուած է որ կոյրին
Աչքերը կը բանայ,
Խեղճին ու պանդուխտին
Պաշտպանութիւն կու տայ.
Եւ որբն ու անյոյս այրին
Միայն անոր կ'ապաւինին.

4 Աստուած զանոնք գիտէ
Որ զինքը կը սիրեն.
Անոնց կ'առաջնորդէ
Որ զինքը կը խնդրեն.

Անոնց կեանքին ինք կը հաւնի,
Յետոյ փառաց մէջ կ'ընդունի։

5 Երկրիս վրայ, Տէր, ինծի
Տուր որ քեզ միշտ գովեմ.
Ու վերջն ալ անկէ
Ուրախութեամբ երգեմ,
Երբոր ասկէ փոխադրուիմ,
Երբոր մահուամբ փառաց հասնիմ։
Սաղ. ճԽԶ.

## 79 ԱԼ ՄՕՏ ՔԵԶԻ

1 Ալ մօտ ըլլամ, ո՛վ Տէր,
Ալ մօտ քեզի.
Թէեւ ճամբաս ըլլայ
Դառն, ցաւալի,
Միշտ աղօթեմ պիտի,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի.

2 Թէեւ թափառական,
Գիշեր ատեն,
Մութ տեղ քարի մը վրայ
Իմ գլուխս դնեմ,
Երազներուս մէջ, Տէր,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի.



3 Սանդուխ մը հոն տեսնեմ
Քովէդ իջած,
Անթիւ սուրբ հրեշտակներ
Վրան ալ կայնած,
Որ աչք ընեն ինծի
Ալ մօտ ըլլալ քեզի,
Ալ մօտ քեզի.

4 Քունէս ելած՝ ես քեզ
Պիտի գովեմ,
Ու դառն վիշտէս Բեթէլ
Պիտի շինեմ,
Որ տառապանքներովս
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի.

5 Երբոր ուրախ թեւով
Ես վեր թռչիմ,
Աստղէն ու արեւէն
Երբոր անցնիմ,
Հոգիս երգէ պիտի,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի.

Ծնն. ԻԸ. 10-22 Թարգ. I. F. Pettibone

## 80 ԱՍՏՈՒԱԾ

1 Աստղ, լուսին, պայծառ արեւ,
Որոտում, փայլակ, անձրեւ,

Ուր ցամաքը տարածուած,
Միշտ խօսին, «Մեծ է Աստուած»։

2 Առաւօտ և իրիկուն,
Օրն և եղանակ սիրուն,
Ծառաստան, դաշտ հաճելի
Միշտ յայտնեն զԱստուած բարի։

3 Ցօղն փայլուն և շունչ գարնան,
Վարդն անուշ և ծիածան,
Քաղցր պտուղ, արտ բարեբեր
Միշտ կ'ըսեն, «Աստուած է սէր»։

Սաղ. ՃԽԷ. Հեղինակ C. C. Tracy

## 81 ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Ահա մեզի մանուկ ծնաւ,
Ծնաւ զաւակ Դաւթի.
Մեզի որդի մը տրուեցաւ,
Ուրախութի՛ւն երկրի։

2 Իր Հօրը աթոռին վրայ
Փառքով պիտի նստի.
Պիտի ելլէ ու բարձրանայ,
Ըլլայ շատ անուանի։

3 Պիտի կոչուի Խորհրդակից,
Հայր յաւիտենական,



Հզօր Աստուած և Տէր երկնից,
Խաղաղութեան Իշխան։

4 Իր տէրութիւնն է հաստատուն,
Անհուն և անվախճան.
Իշխանութեանը մեծնալուն
Պիտի չըլլայ սահման։

5 Արքայութիւնը Քրիստոսի,
Ով Տէր, շուտով թող գայ.
Եւ ցնծութեամբ թող երգուի
Ամէն տեղ Ովսաննա։

Ես. Թ. 6 Թարգ. Elias Riggs

## 82 ԲԵԹՂԵՀԵՄԻ ԱՍՏՂԸ

1 Գիշերային դաշտից վրայ
Անթիւ աստղեր կը փայլէին,
Բայց լոկ մէկ աստղ լոյս կու տար
Մեղաւորի տխուր աչքին.
Ահա, գործերը լուսափայլ
Կը հռչակեն փառքն Արարչի,
Բայց չեն կրնար Փրկիչն յայտնել.
Միայն աստղը Բեթղեհեմի։

2 Անգամ մը ես կը նաւէի,
Սաստիկ մրրիկ, խաւար գիշեր.

Ծովուն անդունդը ճեղքըւած
Իմ նաւըս շուտ պիտի կլլէր.
Անով արիւնըս պաղեցաւ,
Մահ դէմ առ դէմ եկաւ ինծի.
Յայնժամ իսկոյն աստղ մ'երեւցաւ,
Պայծառ աստղը Բեթղեհէմի.

3 Իմ լոյսըս, յոյսըս այն միայն,
Իմ մեծ վախերըս փարատեց.
Ալեաց ու փոթորկին մէջէն
Նաւահանգիստ առաջնորդեց.
Արդ, ամրացած և ապահով
Այսօր և միշտ գովեմ պիտի,
Ու յաւիտենական երգով,
Միայն աստղը Բեթղեհէմի.

Մատթ. Բ. 9, 10 Թարգ. C C. Tracy

## 83 ՓՐԿՉԻՆ ԾՆՈՒՆԴԸ

1 Լո՛ւռ գիշեր, սո՛ւրբ գիշեր.
Ծով ու ցամաք քնով են խաղաղ.
Մեղմ կը փայլի աստղը Բեթղեհէմէ,
Եւ հեռուէն շատ աչքեր կը գրաւէ,
Հոն՝ ուր Փրկիչը ծնաւ.

2 Լո՛ւռ գիշեր, սո՛ւրբ գիշեր.
Երգ մը ահա հովիւին վըրայ



Հրեշտակներուն անթիւ խումբը կ'երգէ,
Երգ՝ որ ցնծման աւետիս կը բերէ.
«Տէրը, Փրկիչը, եկաւ.»

3 Լո՛ւռ գիշեր, սո՛ւրբ գիշեր.
Ով դու երկիր, ա՛լ արթընցիր.
Քու օրհնութիւնըդ արդ վեր թող ելլէ,
«Փառք Աստուծոյ ի բարձունըս» երգէ,
Խաղաղութի՛ւն աշխարհի.

Ղուկ. Բ. 13, 14

## 84 ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

1 Օ՛ն, զարթիր, յոգնած հոգի, երգն ահա զուարթուն,
Սուրբ երկնից սրահէն, կըրկին ձայն կու տայ մարդուն.
Նոր խրախոյս, նոր յոյս կու տան մեզ երգին շեշտերն,
Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն,
Փառք քեզ, արդ, օրհնեալ Հայր,
Փառք քեզ, արդ, օրհնեալ Հայր,
Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն.

2 Մի՛ վախնար, մեղաց որդի, ա՛լ կարէ քու լաց.
Մի՛ վախնար, վշտաց որդի, ահա երկինքը բաց.
Թող ա՛լ քեզ սարսափ չազդէ ցուրտ մահուան ստուերն,

Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն։
Փառք քեզ, Նոյէլ։

3 Մի՛ վախնար, վշտաց հոգի, երբ լոյսեր մարին,
Մի՛ վախնար, ո՛վ քաջ, երբ բուռն են նետեր չարին.
Ձեր վրայէն, մեղաց գերիք, շուտ կ'իյնան կապերն,
Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն։
Փառք քեզ, Նոյէլ։

4 Օ՛ն, զարթիր, յոգնած հոգի, նոր օր է ծագեր.
Ա՛լ գոչեն երկնից պերճանք և զուարթնոց երգեր.
Փառքդ հագիր և թող լսուին քու երգիդ շեշտերն,
Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն։
Փառք քեզ, Նոյէլ։

Յովհ. Ա. 14 — Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 85 ՅԻՍՈՒՍ ԱՆՈՒՆԸ

1 Այնպէս անոյշ անուն չըկայ,
Չըկայ այնպէս սիրուն մը,
Ինչպէս ծընանելէն առաջ
Փրկչին տրուած անունը։
Փափաք ունինք մեր Տէրն տեսնել,
Տեսնել մեր Հօրը տունը.



Այնպէս անոյշ անուն չըկայ,
Ինչպէս Յիսուս անունը։

2 Հրեշտակն իջաւ, «Յիսուս,» ըսաւ,
«Դընես անոր անունը,
Քանզի մահէն պիտի փրկէ
Բոլոր իր ժողովուրդը։»
Փափաք ունինք, Նոյէլ։

3 Խաչին վըրայ ալ գըրեցին
Այս պատուական անունը,
Որ մարդ տեսնէ ինչո՛ւ համար
Միշտ զինքը սիրելու է.
Փափաք ունինք, Նոյէլ։

4 Ու հիմա Հօրը քովն նստած,
Ինքն է մեր Բարեխօսը.
Ուստի սիրենք ու միշտ գովենք
Մեր Տէր Յիսուս Քրիստոսը։
Փափաք ունինք, Նոյէլ։

Մատթ. Ա. 21 — Թարգ. I. F. Pettibone

## 86 ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ Ի ԲԵԹՂԵՀԷՄ

1 Բեթղեհէմի դաշտին վըրայ
Մինչ հովիւներն ի գիշերին
Իրենց հօտերն կը հսկէին,
Հրեշտակ մ'անոնց տայ աւետիս

Խմբերգ.— «Ի Բեթլեհեմ, ի Բեթլեհեմ
Յիսուս ծնաւ մեզի Փրկիչ.
Ի Բեթլեհեմ, ի Բեթլեհեմ
Յիսուս ծընաւ մարդոց Փրկիչ։»

2 Հրեշտակն կ՚ըսէ, «Ահա վըսեմ
Ուրախութեան աւետիս ձեզ.
Քրիստոս ծընաւ ի Բեթլեհեմ,
Ծընաւ Փրկիչ խոնարհ ու հեզ։»
Խմբ.— «Ի Բեթլեհեմ,» նոյն։

3 Ազգ մարդկային արդ թող ցնծայ,
Երկինք, երկիր ուրախանան.
Յիսուս ծընաւ մեզի արքայ,
Ամօթապարտ ըլլայ սատան։
Խմբ.— «Ի Բեթլեհեմ,» նոյն։

4 Խումբն զուարթնոց այսօր կ՚երգէ,
«Փառք ի բարձունս, խաղաղութիւն,
Եւ ի մարդիկ մեծ հաճութիւն,
Զի ծնաւ Փրկիչն ի Բեթլեհեմ։»
Խմբ.— «Ի Բեթլեհեմ,» նոյն։

Ղուկ. Բ. 8-14 Թարգ. Կ. Յ. ՊԷՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ

## 87 ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿԸ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1 Գեթսեմանի պարտէզն մըտէք,
Դուք, դժուէն փորձըւածներ.



Ձեր Տէրոջ պայքարն տեսէք,
Այն խիստ ահաւոր գիշեր.
Իր ցաւէն ետ մի քաշուիք,
Որ աղօթք ընել սորվիք։

2 Մօտեցէք այն ատեանին,
Ուր փառաց Տէրն կ՚անարգուի.
Նայեցէք անոր վըշտին.
Ի՜նչ ցաւով սիրտն կը լեցուի։
Դուն ալ մի քաշուիր ցաւէն,
Խաչդ կըրել սորվէ իրմէն։

3 Գողգոթան ի վեր ելէք,
Հոն անոր ոտքերն գրկած՝
Այս անհուն հրրաշքն տեսէք,
Աստուծոյ Որդին զոհուած.
«Կատարեալ է,» կը գոչէ.
Սորվեցէք մեռնիլ՝ անկէ։

4 Գերեզմանը մօտեցէք,
Ուր մարմինը թաղուեցաւ.
Այն դատարկ է, նայեցէք,
Ո՞վ ըզՏէրն անկէ առաւ։
Տէրն յարեաւ ու համբարձաւ,
Մեզ ալ նոյն խոստմունք տըւաւ։

Մարկ. ԺԴ. 32-36

## 88 ՅԱՌԱՋ, ՅԱՌԱՋ, ԱՐՔԱՅ ՀԶՕՐ

1 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հզօր,
Քրիստոս խոնարհ և փառաւոր.
Ի՛նչ վայելուչ, ի հանդիսի,
Ովսաննա և արմաւենի։

2 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հզօր,
Քու դէմդ կ'ելլէ մահ ահաւոր.
Առջեւըդ չարն կը նըւաճի,
Մահովըդ մահն կը յաղթըւի։

3 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հզօր,
Զօրքեր երկնից հանդիսաւոր
Նային ըսքանչանօք անհուն
Իրենց Իշխանին զոհուելուն։

4 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հզօր,
Քու տէրութիւնդ է հոգեւոր.
Ցաւէն, մահէն ա՛ռ հոս բաժին
Եւ վերը փառքդ մըտիր կրկին։

Յովհ. ԺԲ. 12-15 Թարգ. C. C. Tracy

## 89 ԳԵԹՍԵՄԱՆԻ

1 Ահա կեդրոն ձորէն կ'անցնի
Տրտմած Փրկիչը սիրելի
Դէպ ի Գեթսեմանի.



Իր դէմքն է ի՜նչ Աստուածային,
Բայց վրան ցաւ, վիշտ կը տեսնըւին։

2 Մարդուս մեղքերն կը վերցընէ,
Կրկին կրկին աղօթք կ'ընէ
Ի մէջ Գեթսեմանի.
«Ո՛վ Հայր, թէ որ է կարելի,
Թող այս գաւաթն ինծմէ անցնի։»

3 Իր հեզութիւնն ի՜նչ սիրելի,
Իր Հօր կամքին կը խոնարհի
Ի մէջ Գեթսեմանի.
«Ո՛վ Հայր, իմ կամքըս չէ, հապա
Միայն քու կամքըդ թող ըլլայ։»

4 Հայրն ալ լսեց. ու իր Որդին
Սուրբ հրեշտակներն զօրացուցին
Ի մէջ Գեթսեմանի.
Ցաւոց գաւաթն առաւ, յարեաւ,
Կրկին ուրախութեան հասաւ։

5 Թէ որ վիշտեր մեր վրայ հասնին,
Ու տառապանք վերէն տրուին,
Դէպ ի Գեթսեմանի
Նայինք, մեր Տէրը հոն տեսնենք,
Անոր նման աղօթք ընենք։

Մատթ. ԻԶ. 36

## 90 ԳՈՂԳՈԹԱ

1 Անհուն սիրովս ի Գողգոթա,
Ո՛հ, խաչուեցաւ Տէրն իմ բարի.
Արիւն թափեց խաչին վըրայ,
Եւ ինձ շնորհեց ներում ձրի։

Ո՛վ Գողգոթա, վեհ Գողգոթա,
Տէրոջ արեան եղար վըկայ.
Ո՛վ Գողգոթա, սուրբ Գողգոթա,
Փրկչիս մահուան եղար վըկայ։

2 Ժայռեր պատռին, արեւն սեւնայ,
Մինչ խաչին վըրայ մեռնի Յիսուս.
Եւ իր մահուամբ կ'անմահանայ
Հէք մահապարտ հոգիս անյոյս։
Ո՛վ Գողգոթա, եւայլն։

3 Տէր իմ Յիսուս, ո՛վ սէր անճառ,
Ի՛նչ դառն տագնապ խաչին վըրայ
Դուն կրեցիր ինծի համար,
Զիս փրկելու ի Գողգոթա։
Ո՛վ Գողգոթա, եւայլն։

Մատթ. ԻԷ. 33-53 Թարգ. Կ. Յ. ՊԷՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ

## 91 ԽԱՉԻՆ ՎՐԱՅ

1 Ահա տեսէ՛ք Գառն Աստուծոյ,
Խաչին վըրայ, խաչին վըրայ.



Արիւնն թափեց որդին մարդոյ
Խաչին վըրայ, խաչին վըրայ։
Ո՛հ, լսեցէ՛ք գոչումն, «Էլի,
Էլի, լա՞մասաբաքթանի։»
Տեսէք Փրկիչն, որ կը մեռնի
Խաչին վըրայ, խաչին վըրայ։

2 Տեսէ՛ք տարածեալ բազուկներն
Խաչին վըրայ, խաչին վըրայ.
Արիւնահոս կողն ու ձեռքերն
Խաչին վըրայ, խաչին վըրայ։
Խաւարեցաւ լոյսն արեգին,
Խաւար պատեց զերկիր, զերկին
Երբոր Յիսուս յաղթեց դեւին,
Խաչին վըրայ, խաչին վըրայ։

3 Արդ գործն վըսեմ կատարուեցաւ
Խաչին վըրայ, խաչին վըրայ.
Մեծ յաղթութիւն ինքն տարաւ
Խաչին վըրայ, խաչին վըրայ։
Նա ողբալ աչքերն յերկինս ուղղած՝
Գոչեց «Ամէնն է կատարեալ.»
Յանժամ հոգին առ Հայրն յանձնած՝
Ո՛հ, մեռաւ խաչին վըրայ։

4 Ա՛հ, ո՛ւր երթամ պիտի պատմեմ
Զոհն Փրկչին խաչին վըրայ.

Կ'ուրախանամ երբ կը լսեմ
Ձայն Փրկչին խաչին վրայ.
Այո՛, յաւէտ այս է հաւատքս
Հիմա, և միշտ և յաւիտեան,
Թէ պարգևեց Յիսուս ինձ կեանս
Խաչին վրայ, խաչին վրայ.
Ղուկ. ԻԳ. 33-46, Յովհ. ԺԹ. 25-30

## 92 ՓՇԵՂԷՆ ՊՍԱԿ

1 Ով Նուրբ Գլուխ, ինչո՞ւ ես
Ցաւի մէջ ընկղմած.
Ինչո՞ւ վիրաւորուած ես,
Եւ փուշերով պսակուած.
Ով սուրբ Գլուխ, փառքովդ
Երկինք կը լեցնես.
Բայց հոս արհամարհուածդ,
Դուն պատուական ինձ ես.

2 Ո՜հ, ինչ ցաւով լեցուած ես,
Ինչ անարգանքներով.
Տրտմութեամբ պատած ես,
Բայց վերջը ցնծումով.
Ամէն քու ցաւն ու գութը
Չարերը կը փրկէ.
Մերն էր բոլոր յանցանքը,
Պատիժն Ան կը քաշէ.



3 Ինչ խօսք, ով իմ Փրկիչս,
Գտնեմ քեզ օրհնելու.
Որ հանեցար իմ անձըս
Մահուամբդ փրկելու.
Տէր, տուր որ քու շնորհքովդ
Հաւատարիմ մնամ,
Եւ յաւիտեան քու սէրդ
Բնաւ ես չը մոռնամ.

4 Չըլլայ որ քեզ թողում, Տէր,
Եւ ոչ քեզմէ թողուիմ.
Հաւատքս քեզ կ'ընդունի, Տէր,
Եւ միշտ քուկդ է սիրտ իմ.
Երբ բռնուի իմ կեանքըս,
Ու մահ ինծի հասնի,
Տուր որ հատնին ցաւերըս,
Հոգիս ալ քովդ հանգչի.
Յովհ. ԺԹ. 2, 5

## 93 ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՒՉԱԿԱՆ ՄԱՀԸ

1 Յիսուս Քրիստոս, տեսայ քուկին
Մահուան ցաւերդ, սոսկաց հոգիս.
Այո, մեռար դուն կամովին
Վասն ապըստամբ մեղաւորիս.

2 Դուն տանջեցար, և բնութիւն
Ողբերգական հեծեց ձայնով.

Արեւն ծածկեց իր լոյսն փայլուն,
Լացին սուրբերը մահդ ողբով։

3 Քու մահըդ, Տէր, զոհ արդարան,
Մինչ աչքերնուս ըլլայ ներկայ,
Թանգի արիւնըդ պատուական
Ամէն մեղքէ մեզ կը լուայ։

4 Յիսուս Քրիստոս, թող անդադար
Սրտիս ազդէ սէրդ գերապանծ.
Դուն մեր մեղաց համար մեռար,
Միայն դուն ես փրկիչ, Աստուած։

Մտթ. ԻԷ. 45-53

## 94 ԽԱՉԻՆ ՏԱԿ

1 Երբ գամ կայնիմ խաչիդ մօտիկ,
Արեւ, աշխարհ կ'ելլեն աչքէս.
Ի՞նչ են երկրի փառք սնոտիք,
Դուն ցաւերովդ ինձ հերիք ես։

2 Հոս թոյլ կու տաս ինձ որ ծունկերդ
Բռնեմ, փարիմ անսուրբ ձեռքովս.
Եւ անարգել սիրուն ոտքերդ,
Ա՜հ, համբուրեմ պիղծ շրթունքովս։

3 Այդ վարդագոյն ներկած երես
Երբ կը դիտեմ, անձս կ'ուրանամ.



Եւ կ'ամչնամ գանգատներէս,
Ամէն ցաւերս ալ կը մոռնամ։

4 Թո՛ղ զիս խաչիդ ոտքերին տակ.
Հո՛ս կը տեսնեմ մեղքս անհամար.
Ա՛լ չեմ փնտռեր պատիւ, վաստակ,
Կ'ուզեմ զոհուիլ քեզի համար։

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

Ղուկ. Թ. 23

## 95 ԽԱՉԻՆ ՏԱԿ ՆՍՏԻԼԸ

1 Ո՜րչափ քաղցր է այն ժամը,
Երբ խաչին առջեւ կենամ.
Կատարեալ խաղաղութիւն մը
Քրիստոսի մահէն կ'առնեմ.
Հոն սիրով, ցաւով լեցուած եմ,
Արցունքներս կը վազեն.
Հաւատքիս մէջ հաստատուած եմ,
Կեանք կ'առնեմ իր մահուանէն։

2 Ո՜հ, այս տեղը ինչ օրհնեալ է,
Երբ խաչիդ տակ կը նստիմ.
Գութն Աստուածային փայլած է
Շնորհալի աչքէդ, Տէր իմ։
Հոս նստած թող նայիմ մէյմը
Իր սիրոյն զարմանալի,
Եւ իր պատուական արեամբը
Աստուծոյ ես դառնալի։

Կող. Ա 20

## 96 ՅՈՅՍ ՄԵՐ Ի ԽԱՉԵԱԼՆ ՔՐԻՍՏՈՍ

1 Ով խաչեալ Փրկիչ Քրիստոս,
Որ սիրող ես իմ հոգւոյս,
Քեզ միայն կը պաղատիմ,
Ողորմէ ինձ եղկելւոյս.
Թող ան ջուրը և արիւն
Որ կողէդ, Տէր, կը վազէ,
Հոգիիս ամէն մեղքերն
Մաքրելով զիս բժշկէ.

2 Արցունքներս թէև վազեն
Իմ աչքէս առատապէս
Նախանձով թէև իմ սիրտս
Միշտ վառի խիստ սաստկապէս,
Ո՜հ, կարող չեն զիս սրբել
Իմ մեղքէս և զիս մաքրել.
Այլ, Փրկիչ իմ, դո՛ւն միայն,
Դուն կրնաս մեղքերս քաւել.

3 Երբ հասնի իմ շունչըս, Տէր,
Երբ մահուամբ աչքերս գոցեմ,
Անծանօթ երկիրն հասնիմ,
Աթոռիդ վրայ քեզ տեսնեմ,
Ով խաչեալ Փրկիչ Քրիստոս,
Երբ ես քու առջիդ կայնիմ,
Տուր ինծի, Տէր, կ'աղաչեմ,
Որ դրկիդ մէջ ես հանգչիմ.

Հռովմ. Ե. 7-9 Թարգ. Elias Riggs



## 97 ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԸ

1 Փրկչիս խաչին ներքեւը
Կ'ուզեմ առնել կայան,
Խիստ ծարաւուտ երկրի մը մէջ
Ժայռի շուքի նման.
Ի՜նչ զովարար ծածկոյթ է ան
Կէս օր՝ տաքութենէն,
Ճամբուն վրայ ալ հանգըստարան
Օրուան ծանրութենէն.

2 Ի՜նչ քաղցր ու ապահով է
Փորձուած բընակարան,
Ուր Աստուծոյ արդարութիւնն
Ու սէրն կը միանան.
Ինչպէս Յակոբ նահապետին
Երազն զարմանալի,
Այնպէս խաչն ալ՝ մինչև երկինք
Սանդուխ ինծ կը թըւի.

3 Երբեմն Փրկչիս խաչին վրայ
Աչքս հաւատքով տեսաւ
Զայն որ զիս փրկելու համար՝
Իր անձը զոհ ըրաւ.
Եւ տեսնելով կը սքանչանայ
Իմ սիրտս այս բաներուն,
Իմին մեծ անարժանութեանս,
Անոր անհուն սիրոյն.

4 Կ'ընտրեմ, ով խաչ, քու շուքըդ
Անվտանգ ինծի ապաւէն,
Բընաւ ուրիշ լոյս չեմ ուզեր
Փրկչիս դէմքին լոյսէն.
Ա՛լ յոյզս չէ երկրիս վաստակն,
Ա՛լ չեմ փնտռեր աշխարհս.
Իմ մեղքս միայն ամօթըս է,
Խաչն ալ միայն իմ փառքս.

Ես. ԼԲ. 2 — Թարգ. Elias Riggs

## 98 «ԱՄԷՆ ԲԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ Է»

1 Լռեցէք սիրոյ բարբառը.
Աղաղակ Գողգոթայէ
Կը պատռէ պինդ ապառաժը,
Երկրաշարժ, խաւար կ'ընէ.
«Կատարեալ է,»
Հոգեվար Փրկիչն գոչէ.

2 «Կատարեալ է,» — Ի՞նչ հառաչք այս,
Ո՛հ, այս խօսք յոյժ սքանչելի.
Օրհնութիւն անհուն յերկնից գայ
Շնորհօք Տէր Յիսուսի.
«Կատարեալ է,»
Հոգեվարն, ո՛վ սուրբք, խօսի.

3 Սերովբէք, ձեր քնարները
Միացէք նորէն զարնել.



Քաղցր երգով երկինքն, երկիրը
Թող օրհնեն զԷմմանուէլ.
Ալէլուիա,
Փառք Գառին, ուզեց մեռնիլ.

Յով. ԺԹ. 30 — Թարգ. Մ. Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 99 ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

1 Երբ այն խաչին ես կը նայիմ,
Ուր որ մեռաւ փառաց Տէրն իմ,
Իմ մեծ շահերս վնաս կը սեպեմ,
Հըպարտութիւնս ալ կ'անարգեմ.

2 Չը պարծենամ ուրիշ բանով,
Բայց թէ միայն Փրկչիս մահով.
Բոլոր փափաքս մեծ կամ չնչին
Ես կը զոհեմ իր արիւնին.

3 Տես, իր գլխէն, ձեռքէն, ոտքէն
Սէր, տրտմութիւն մէկ կը վազեն.
Ե՞րբ միացան ասոնք ասանկ,
Ի՞նչպէս ըրին փուշերն պըսակ.

4 Փառքն արքայից ինծի տրուէր,
Ան շատ պզտիկ պարգեւ մըն էր.
Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն
Արժան է տալ իմ կեանքս ողջոյն.

Գաղ. Զ. 14

## 100 ԿԱՆԱՉԱՒԷՏ ԲԼՈՒՐԸ

1 Կանաչաւէտ բլուր մը կայ,
Գողգոթա իւր անուն.
Ուր մեր Փրկիչն ի մահ խաչին
Յայտնեց իւր սէր անհուն.
Ո՜հ, փոխարէն այսքան սիրոյ,
Տէր, քեզ ի՞նչ վըճարենք.
Իցի՜ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
Միայն քեզ նուիրենք.

2 Ա՜հ, ի՞նչ դառն վիշտ օրհնեալ մեր Տէրն
Կրեց մեզի համար.
Ո՛չ մի լեզու կարէ պատմել
Ցաւերն իւր անհամար.
Ո՜հ, փոխարէն այսքան սիրոյ,
Տէր, քեզ ի՞նչ վըճարենք.
Իցի՜ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
Միայն քեզ նուիրենք.

3 Այն որ անմեղ, անբիծ ալ էր,
Եղաւ իբր յանցաւոր,
Որ արդարներ ըլլանք իրմով,
Ու ո՛չ թէ մեղաւոր.
Ո՜հ, փոխարէն այսքան սիրոյ,
Տէր, քեզ ի՞նչ վըճարենք.
Իցի՜ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
Միայն քեզ նուիրենք.



4 Այդ արիւնոտ սուրբ ձեռքերուդ՝
Համբոյր բիւր, Տէր Յիսուս.
Որովք բացիր երկնից դռներ,
Պարգեւեցիր մեզ յոյս.
Ո՜հ, փոխարէն այսքան սիրոյ,
Տէր, քեզ ի՞նչ վըճարենք.
Իցի՜ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
Միայն քեզ նուիրենք.

Յովհ. ԺԹ. 17, 18 Թարգ. Ա. Կ. ԳԵՏԻԿԵԱՆ

## 101 ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԸ

1 Իմ պարծանքս և իմ փառքըս
Է լոկ խաչն Քրիստոսի.
Խաչն, դարուց աւերներուն վրայ
Վեր կանգնած, վսեմ փայլուն,
Երբ կենաց վայերն պատեն զիս,
Վախ ահեղ, յոյս խաբէբայ,
Յայնժամ խաչն աչքիս առջեւ
Աւելի կը շողշողայ.

2 Երբ իմ սիրտըս բերկրալից է
Եւ երկինք պայծառ իմ վրայ,
Լոյսն անգամ խաչին լուսովը
Աւելի փայլուն կ'ըլլայ.
Բաղդ, ցընծում կամ ցաւ ու վիշտ ալ
Նոյն խաչովը կ'օրհնուի,

Զի Փրկչին սիրով կ՚ըլլամ ես
Յաւիտեան երանելի։

Գաղ. Զ. 14 Թարգ. C. C. Tracy

## 102 ԱՊԱՒԷՆ

1 Այլ ապաւէն ես չեմ ուզեր,
Բայց Յիսուսի արիւնն ու սէր.
Ո՛չ, չեմ ուզեր ուրիշ խոստում,
Այլ լոկ անոր անուան յենում,
Անշարժ վէմին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն։

2 Երբ մութ պատէ իր դէմք սիրուն՝
Յենիմ անոր շնորհաց անհուն.
Եւ երբ գոռան մրրիկ և հով
Մընայ խարիսխըս ապահով.
Անշարժ վէմին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն։

3 Խոր հոսանքէն այս մութ կենաց
Կ՚անցնիմ՝ լոկ իր ուխտին յենած,
Հոգ չէ ցնդին թող իմ յոյսերս,
Ինքն է անշարժ յոյսըս ու սէրս,
Անշարժ վէմին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն։

4 Ու երբ հնչեն վերջին փողեր,
Զիս չեն գտներ մահուան դողեր,



Զի իր արեամբ սրբուած, արդար,
Պիտի գովեմ զինք անդադար։
Անշարժ վէմին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն։

Եբր. Զ. 18 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

## 103 ԽԱՉԻՆ ՄՕՏ

1 Ով Յիսուս, հոգիս պահէ
Միշտ խաչիդ մօտերը,
Ուր աղբիւր մը կը հոսէ
Իր բուժող ջուրերը.
Տէր, քու խաչդ միշտ ընեմ
Փառքս ու ցնծութիւնըս,
Մինչ գետէն անդին գտնեմ
Քաղց երանութիւնըս։

2 Մօտ խաչիդ հոգիս հասաւ,
Տէր, ողորմութեանդ.
Հոն իմ շուրջըս փայլեցաւ
Աստղ առաւօտեանըդ.
Տէր, քու խաչդ միշտ ընեմ
Փառքս ու ցնծութիւնըս,
Մինչ գետէն անդին գտնեմ
Քաղց երանութիւնըս։

3 Տէր, քու խաչըդ օրէ օր
Բեր աչքիս առջեւը,

Անդադար մընամ անոր
Ըստուերին ներքեւը.
Տէր, քու խաչդ միշտ ընեմ
Փառքս ու ցընծութիւնըս,
Մինչ գետէն անդին գըտնեմ
Քովդ երանութիւնըս։

4 Մօտ խաչին ես կը սպասեմ,
Մինչ Տէրոջը փառքը
Հոն, գետէն անդին, տեսնեմ,
Ոսկեղէն եզերքը։
Տէր, քու խաչդ միշտ ընեմ
Փառքս ու ցընծութիւնըս,
Մինչ գետէն անդին գըտնեմ
Քովդ երանութիւնըս։

Եփես. Բ. 13 Թարգ. Elias Riggs

## 104 ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՈՒԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

1 Մէկը տեսայ փայտէն կախուած,
Նեղեալ, արիւնլուայ,
Ինձ նայեցաւ աչքով տրտմած,
Խաչին երբ մօտեցայ։

2 Անշուշտ ըրի. ես չեմ մոռնար,
Ի՜նչ նայուածքով կ՚ըսէր,
«Իմ մահըս է քեզի համար,»
Թէպէտ ինք չէր խօսեր։



3 Ո՜հ, ըզգացի արտմութիւնով
Մեղքերս, ու շատ լացի.
Տեսայ որ ես մեղանչելով
Իմ Տէրըս մեռցուցի։

4 «Վա՜յ ինձ, աւա՜ղ, ալ յոյս չունիմ.»
Լալով ես կանչեցի.
«Ո՞ր կողմ երթամ, ո՞ւր փախչիմ
Զի Տէրն ըսպաննեցի։»

5 Երկրորդ անգամ գըթած աչքով
Խաչէն ինձ նայեցաւ.
Եւ իր շընորհքը յայտնելով՝
Սիրով ինծի ըսաւ,

6 «Ջըրի շնորհքով ես կը քաւեմ
Մեղքերըդ, սիրելիս.
Յօժար կամքով մահ յանձն կ՚առնեմ,
Որ յաւիտեան ապրիս։»

Մարկ. Ժ. 45

## 105 ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

1 Հրեշտակներ, քարն վեր առէք,
Այդ որսէդ քաշէ, մահ, ձեռք.
Տէր, անմահ յաղթանակաւ
Տէրն այսօր փառքով յարեաւ,

2 Նայեցէք, սուրբք, Յաղթողին,
Համբառնայ, տեսէք, յերկին.
Խումբք երկնից, ի մէջ ճամբուն
Մարմնացեալ Տէրոջն տուք ողջոյն.

3 Կը բանայ երկինք դուռն լայն,
Որ փառքով անցնի Հսկայն.
Գահդ բազմէ, Արքայդ փառաց,
Քուկդ է տէրութիւնն անանց.

4 Երկնային դասք, անդադար
Օ՛ն, զարկէք ոսկի քնար.
Երգեցէք վըսեմ երգեր
Ոգւորք ըի բոց լեզուօք առ Տէր.

5 Փառք, պատիւ Էմմանուէլին,
Տէր, Փրկանք, Միջնորդ մերին.
Հաշտուին երկրիս ծայրեր
Սուրբ անուանն օրհնութիւններ.

Մատթ. ԻԸ. 2-4 Թարգ. Մ. Տ. ՔԻՐԻՉՃԵԱՆ

## 106 ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

1 Հրեշտակն յերկնից կ'իջնայ,
Կ'ըսէ մարդկան ազգին,
«Ազատորդի, ցնծա,
Ահա քեզ աւետիս.



Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Իբր անդրանիկ յարուցելոց։»

2 «Երբ կ'որոտար երկինք,
Երկիր հիմն սարսեցաւ.
Ապշած ինկան մարդիկ,
Տապանը բացուեցաւ,
Քրիստոս յարեաւ,» եւ այլն.

3 «Հոս չէ ան որ մեռաւ,
Կանայք, ինչո՞ւ կ'ողբաք.
Սուգի ատենն անցաւ,
Ուրախանայ աշխարհք.
Քրիստոս յարեաւ,» եւ այլն.

4 «Եկէք, ու զիս տեսէք,»
Ըսաւ ինք, Տէրն փառաց.
«Բոլոր աշխարհ գացէք,
Ըսէք ամէն ազգաց,
Քրիստոս յարեաւ,» եւ այլն.

5 Արդ մենք ալ յարութեան
Հանդէսը կատարենք.
Եւ ի ձայն ցնծութեան
Ուրախալից գոչենք,
Քրիստոս յարեաւ, եւ այլն.

Մարկ. ԺԶ. 1-18, Ղուկ. ԻԴ. 1-12
Թարգ. Մ. Ա. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 107 ՅԱՐՈՒՑԵԱԼ Է ՏԷՐ

1 Յարուցեալ է Տէր այսօր, Ալէլուիա.
Նա յաղթող է և հզօր, Ալէլուիա.
Իր մահուամբն հիանալի, Ալէլուիա,
Մեզ կացոյց միշտ կենդանի, Ալէլուիա։

2 Երգերով մեր քաղցրալուր, Ալէլուիա,
Արդ գովենք Տէրն երկնաւոր Ալէլուիա,
Ինք կրեց դառն վիշտ ու ցաւ, Ալէլուիա,
Որ ապրինք, մեր տեղ մեռաւ, Ալէլուիա.

3 Իւր կրած այն դառն տագնապ, Ալէլուիա,
Մեր սիրոյն յաւէտ է կապ, Ալէլուիա,
Որ սրտէն յերկինս հանի, Ալէլուիա,
Ուր Յիսուս ի սպաս հանգչի, Ալէլուիա.

4 Յարուցեալ է Տէրն մեր, Ալէլուիա,
Ընելով գըժոխս աւեր, Ալէլուիա,
Պիտ' իշխէ դարեր անվերջ, Ալէլուիա,
Ու բնակի մեր սրտից մէջ, Ալէլուիա։

Մատթ. ԻԸ. 7 Թարգ. Յ. ՏԱՃԱՏԵԱՆ

## 108 ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

1 «Չէ աստ, քանզի յարեաւ.
Մի խնդրէք զայն ընդ մեռեալս.



Կ'ապրի նա որ մեռաւ,»
Լուսազգեաց հրեշտակն ըսաւ.
Նա յաղթեց իւր թշնամւոյն,
Եւ յայտնեց իւր զօրութիւն,
Երբ առաւ խայթն մահուանէ,
Յաղթանակ գերեզմանէ.
Ապա մի սիրտ մի ձայն,
Բոլոր երկիր ցնծան.
Ամէն մարդիկ ու թող գոչեն,
Եւ հրեշտակներն անդրադարձեն,
«Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ,
Ցնծում, ցնծում աշխարհի.»

2 Չէ աստ, քանզի յարեաւ.
Չէ այլ եւս նա աստ յերկրի,
Իւր փորձութիւնն անցաւ,
Չիք այլ եւս վիշտ կրելի.
Նըպատակն իւր է լըցուած,
Եւ իւր գործն աստ կատարուած.
Նա որ էր ի խաչ մեռած՝
Փառաւոր գահն է բազմած.
Ապա մի սիրտ, մի ձայն, Եւայլն.

3 Չէ աստ, քանզի յարեաւ,
Եւ աչաց անյայտ եղաւ.
Բայց թէ մեռանինք իրմով,
Դարձեալ պիտ' ելլենք անով,
Չի նովաւ կ'ապրինք միայն

Որ կ'ապրի ինք յաւիտեան.
Ինչ օրհնեալ խոստումն և յոյս,
Գիտ՛ ապրինք նովա ի լոյս.
Ալլա մի սիրտ, մի ձայն, և այլն:

Մատթ. ԻԸ. 6 Թարգ. Մ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

## 109 Կ'ՕԾՈՒԻ ՇՈՂՈՎ

1 Երկինք կ'օծուի շողով այգուն,
Լեցնեն օդ մեղեդիք.
Պարտեալ դըժոխք նստի նկուն,
Ցընծմամբ երգեն մարդիկ
Մինչ մեր փրկիչ, հզօր Արքայ
Փըշրէ դըռներն մահուան.
Եւ մութ շիրմին խորքէն դուրս գայ
Քայլով վեհ, յաղթական.
Փառք Աստուծոյ, գոչենք ուժգին,
Բիւր փառք ձօնենք, արդ, Բարձրեալին.
Փառք տանք անոր միաբերան,
Ամէն, փառք իր անուան,
Իր սուրբ անուան, սուրբ անուան.

2 Մահուան գերին կըրեց շըղթան
Բանտին մէջ ըստորին
Բայց նա յարեաւ, յաղթեց մահուան,
Ըրաւ զայն իր գերին.
Փայլուն զուարթունք գոչեն, ալ բա՛ց



Արցունք, խունկ և վիշտեր.
Այսօր թող նոր երգեր փառաց
Գովեն յարուցեալ Տէր.
Փառք Աստուծոյ, և այլն.

Ա. Կոր. ԺԵ. 20,54,55, Ես. ԻԵ. 8
Թարգ. Ց. Թ. ԳԱՑԱՆԵԱՆ

## 110 ԼՄՆՑԱՒ, ԼՄՆՑԱՒ

1 Խօսք տըւած է Աստուած, փրկութիւնն է ձրի.
Ամէնուն որ փրկիչն հաւատքով կ'ընդունի.
Լըմընցաւ, լըմընցաւ,
Որ մեռած էր յարեաւ,
Եւ անով հաւատացողն փրկութիւն ըստացաւ.
Լըմընցաւ, և այլն.

2 Ճանապարհս հոս իրաւ, է լեցուն վըտանգով,
Բայց Յիսուս ինձ է միշտ առաջնորդ ապահով.
Լըմընցաւ, և այլն:

3 Սիրելիքս հրեշտակաց հետ փառք վայելեն,
Ապահով հոն հասած են, և այսպէս կ'երգեն.
Լըմընցաւ, և այլն.

4 Արքային մօտ ապայք ալ իմ աչքս կը տեսնէ.
Քանի որ կ'երգեն, ինք ժպտելով կը լսէ.
Լըմընցաւ, և այլն.

5 Մարգարէք և արքայք նոյն գնդաց հետ ալ կան,
Այն ոսկի քաղքին մէջ երգելով կը ցնծան.
Լըմընցաւ, Նայլն։

6 Նոյն գնդաց մէջ բաժին կայ քեզի և ինծի,
Եւ մեր երգն փրկութեան միշտ պիտի այս լինի.
Լըմընցաւ, Նայլն։

Յովհ. ժէ. 4, ժԹ. 30

## 111 ՓՐԿԻՉՍ Կ'ԱՊՐԻ

1 Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի.
Ա՜հ ինչ խրախոյս կու տայ ինծի.
Կ'ապրի, կ'ապրի Այն որ մեռաւ,
Կ'ապրի որ տայ ինձ կեանք անբաւ։

2 Կ'ապրի Գըլուխըս յաւիտեան,
Մահուամբ՝ մահուան վրայ յաղթական.
Կ'ապրի, կ'ապրի զիս փրկելու,
Եւ իր սիրովը օրհնելու։

3 Կ'ապրի երկնից մէջ փառաւոր,
Տէր ամենուն և Թագաւոր.
Կ'ապրի բարձրերը համբարձած,
Իր և մեր Հօր աջ կողմն նստած։

4 Կ'ապրի, որ միշտ ինծի օգնէ,
Հոգւոյս համար բարեխօսէ.
Կ'ապրի, ինձ առաջնորդելու,
Եւ զիս վտանգէ ազատելու։



5 Կ'ապրի որ փարատէ վախերս,
Եւ միշտ սրբէ իմ արցունքներս.
Կ'ապրի, կու տայ ինձ կեանք և լոյս,
Եւ ըսփոփանք ու խրախոյս։

6 Կ'ապրի ու միշտ զիս կը սիրէ,
Եւ միշտ հոգիս կը պաշտպանէ.
Կ'ապրի և ինձ կ'ըլլայ Արքայ,
Եւ Մարգարէ ու Քահանայ։

7 Կ'ապրի ու ես պիտի ապրիմ,
Ու միշտ իր քովը բընակիմ.
Ա՜հ ինչ ցնծում կու տայ ինծի,
«Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի։»

Թարգ. Elias Riggs

Յոբ. ժԹ. 25

## 112 ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԻ ՄԻԱՅՆ ՊԱՏԱՐԱԳԸ

1 Որչափ արիւն որ թափուեցաւ
Հըրէական հին զոհերէն,
Մեղքերն մաքրել կարող չեղաւ,
Կամ ազատել ըզմարդ խղճէն։

2 Միայն Քրիստոս՝ Գառն Աստուծոյ,
Որ յանձն առաւ զմահ անպարտ,
Մեզ կը սրբէ մեղաց յաղայ
Պատարագաւն անհամեմատ։

3 Տէր, թող նայիմ ես հաւատքով
Այն քաւչական պատարագին,
Երբ մեղքերէս հեռանալով՝
Կը զղջանամ յոյժ լալագին։

4 Ով իմ հոգիս, դարձիր ու տես
Աստուածորդին խաչին կախուած
Քեզի համար չարի մը պէս՝
Քու մեղքերովդ տանջուած։

5 Եկէք, փառք տանք ուրախ ձայնով
Այն Գառնուկին որ մեզ սիրեց,
Իր փրկարար սէրն երգելով,
Որ անէծքէն մեզ ազատեց։
Յովհ. Ա. 29

## 113 ՅԻՍՈՒՍ ԱՂԲԻՒՐ ԿԵՆԱՑ

1 Տէր Յիսուս, Էմմանուէլ,
Մեզ աղբիւր կենաց բացիր.
Մեր հոգւոց համար մեռնիլ
Եւ խաչուիլ դուն յանձն առիր։

2 Սուրբ կողիդ արիւնը, Տէր,
Աղբիւրի պէս որ վազեց,
Չար աւազակին մեղքերն
Կատարելապէս սրբեց։



3 Ով գառն Աստուծոյ, մաքրէ
Մեր հոգին ան աղբիւրովն.
Կ'աղաչենք, Յիսուս, քու է
Մեր մեղքերն ան արիւնովն
Յայտ. ԻԱ. 6

## 114 ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԻՒՐ

1 Տէր Յիսուսի երակներէն
Աղբիւր մը կը յորդէ
Արեամբ լեցուած, մեր մեղքերէն
Կը լուայ ու կը մաքրէ։

2 Խաչին վըրայ խեղճ աւազակն
Երբ այն աղբիւրն տեսաւ,
Զարչարանացը ժամանակն
Խիստ շատ ուրախացաւ.

3 Ասոր նըման թէպէտ ըլլամ
Շատ չարագործ, ես ալ
Նոյն աղբիւրին ջուրովն կրնամ
Լուացուիլ, մաքուր ըլլալ։

4 Այն փրկարար աղբիւրն տեսայ,
Եւ տեսնելէս ի վեր
Իմ գովութեանըս առարկայ
Եղաւ քու սէրդ, ով Տէր։

5 Ու երբ հոս գովելէն դադրի
Մահուամբ տկար լեզուս,
Երկնից մէջ սէրդ ա՛լ աւելի
Երգեմ, ով Տէր Յիսուս.

Զաք. ԺԳ. 1 — Թարգ. Elias Riggs

## 115 ՈՀ, Ի՜ՆՉ ՀԻԱՆԱԼԻ ՓՐԿԻՉ

1 Յիսուս քաւիչ մեղաց,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Փրկեալ ենք արդ, պարտքն է վճարուած,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Ո՜հ, ի՜նչ հիանալի
Փրկիչ իմ, Յիսուս.
Ո՜հ, ի՜նչ հիանալի.
Փրկիչ իմ և Տէր.

2 Կ'օրհնեմ իր սուրբ արիւնն յաւէտ,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Որ հաշտեցուց զիս Հօրը հետ,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Ո՜հ, ի՜նչ հիանալի, Նոյն.

3 Նա բարեկամն է մտերիմ,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Կ'ընէ զիս միշտ հաւատարիմ,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Ո՜հ, ի՜նչ հիանալի, Նոյն.



4 Ինձ ոյժ կու տայ իր սէրն անգին,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Յաղթել չարին ու փորձանքին,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Ո՜հ, ի՜նչ հիանալի, Նոյն.

5 Անոր կու տամ իմ սիրտ ու սէր,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Աշխարհ ինձմէ բան չըսպասէր,
Ո՜հ, Փրկիչ հիանալի.
Ո՜հ, ի՜նչ հիանալի, Նոյն.

Բ. Կոր. Ե. 18, 19, 21 — Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

## 116 ՀՆԱՐԱՒՈ՞Ր Է

1 Հընարաւո՞ր է որ ըլլայ
Փրկչիս արեան մէջ ինձ բաժին.
Մահուանը ես առիթ եղայ,
Մեղքերս խաչին զինք գամեցին,
Ողորմութի՜ւն զարմանալի,
Որ Տէրս ինծի համար մեռնի.

2 Այն սէրը ո՞վ պիտի չափէ,
Եւ խորութիւնը հասկընայ.
Ամենաբարձրը սերովբէ
Ի զուր քննել պիտի ջանայ.
Գաղտնի՜ք անհուն, անքննելի,
Ահա, Անմահը կը մեռնի.

3 Կամաւ փառաց աթոռն ձգեց,
Ինքզինքն ունայնացուց, եկաւ,
Զիս կորուսեալս սիրով փնտռեց,
Մահուամբ հոգիս ծախու առաւ.
Անձառելի՜ ողորմութիւն.
Չըկայ ինձ դատապարտութիւն։

4 Յիսուս իմս է, ասոր յուսամ.
Ան է իմ գլուխս, անով կ՚ապրիմ.
Երբ յայտնըւի երկրորդ անգամ,
Առջին ուրախ պիտի կայնիմ։
Կը մտնեմ ալ համարձակ,
Փրկչիս ձեռքէն կ՚առնեմ պսակ։

Յովհ. Գ. 16

## 117 ՅԻՍՈՒՍ

1 Թէ որ գրեմ, ով Տէր Յիսուս,
Զուննենայի բաժին հոգւոյս,
Եւ քու արիւնդ մեղաւորաց
Տեղ չըստանար ներում մեղաց,
Ամէն խեղճէ՝ ես խըղճալի,
Այսօր ո՞ւրն կը գտնէի։

2 Ինձ եղկելւոյս տեղ չէր ըլլար,
Չի սրտիդ պէս սիրտ ո՞ւր գտնար,
Մինչ գըթառատ և բղխայուն,
Քեզ դիմողին սիրով լեցուն։



Քեզմէ ուրիշ պէտք չէ ինձ բան,
Յոյս, ապաւէն հոգւոյս միայն։

Յովհ. Զ. 68-70 Թարգ. Տիկին Հռ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 118 ՈՎ ՀՈԳԻՈՅՍ ՍԻՐՈՂ ՔՐԻՍՏՈՍ

1 Ո՛վ հոգւոյս սիրող Քրիստոս,
Թող թռչիմ ես քոյդ ի ծոց.
Երբ գոռան ջուրք յորդահոս
Եւ ամպեր մութ, հողմակոծ,
Բաց հըզօր թեւերդ, ա՜հ, բաց,
Զիս այլուր վայր ապահով.
Մինչ անցնի վախ ամպրոպաց,
Առ, Փրկիչ, զիս առ քու քով։

2 Ես չունիմ այլ ապաւէն,
Դու ես վէմըս, ո՜հ, Տէր իմ.
Կատաղի ալեաց մէջէն
Դէպ ի վեր քեզ կը նայիմ.
Մի թողուր զիս միայնակ,
Չիք դադար, այլ ո՞ւր գտնեմ.
Ա՜հ, կուրծքիդ վրայ հոն շիտակ,
Թոյլ տուր գամ և շունչ առնեմ։

3 Դու արեւս ես, դու սէր իմ,
Տէր, ամէն բան ես ինձ դուն.
Բաց ի քէն ես ո՞վ ունիմ.
Դու բարիքս ես մընայուն,

Զիս յաղթածքս գիրկդ առ, Տէր,
Սիրտ տուր, ո՛հ հէգ մեղաւորիս,
Զիս ինկածըս դուն առ վեր,
Եւ դարման տուր խոցերուս։

4 Ով Փրկիչ իմ, շնորհքիդ ծով
Թող մեղքիս լեռներն թաղէ.
Պիղծ եմ ես բոլոր անձով,
Սուրբ արիւնդ իմ վրաս ցօղէ.
Դու ես ակ կենաց, ով Տէր,
Սիրտդ սիրոյ գետ կը բղխէ.
Ա՛հ, ծարաւ եմ, թող քու սէր
Յորդելով զիս ողողէ։

Սող. Թ. 9 — Թարգ. Կ. Ա. ԳԵՏԻԿԵԱՆ

## 119 ՔՐԻՍՏՈՍԻ ՍԷՐԸ

1 Զարթիր, հոգիս, ուրախ երգով,
Քու մեծ Փրկիչդ օրհնէ փառքով
Զի յոյս միայն է անյոյսին,
Իր սէրը, ոհ, ի՜նչ կաթոգին,

2 Զիս կործանած, ինկած տեսաւ,
Բայց սիրելէն չը դադրեցաւ.
Զիս կորսուածս ինք ազատեց,
Իր սէրը, ոհ, անչափ է մեծ։

3 Զօրք թշնամեաց, երկիր, դժոխք,
Թէպէտ ճամբուս են խափանողք.



Բայց անվրդով զիս կ'անցընէ.
Իր սէրը, ոհ, միշտ կը յաղթէ։

4 Երբ նեղութիւնք ամպի մը պէս
Գոռան իմ չորս դին սպառնալէս,
Ան կը կենայ միշտ մօտ ինծի.
Իր սէրը, ոհ, ի՜նչ ցանկալի

5 Շատ հեղ կը զգամ իմ չար սրտէս,
Որ հեռանալ կ'ուզէ Փրկչէս.
Թէպէտ շատ հեղ ալ զինք մոռցայ,
Իր սէրը, ոհ, միշտ կը մնայ։

6 Եւ երբոր մահ ձորէն անցնիմ,
Բոլոր ուժէս ալ զրկանիմ,
Վերջին շունչիս հանէ, Տէր իմ,
Որ քու սիրոյդ երգով մեռնիմ։

7 Ունիմ ես տենչ խաւարն ձգել,
Ան լուսափայլ աշխարհն ելել,
Միշտ երգելու ի լոյս անշէջ
Քու սէրըդ, ոհ, երկինքին մէջ։

Ա Յովհ. Դ. 10

## 120 ՓՐԿՉԻՆ ՍԷՐԸ

1 Միշտ երգենք Փրկչին մեծ սէրը,
Որ ներած է մեր մեղքերը,

Եւ ջնջուած է մեր վախերը.
Փա՛ռք անոր անուան։

2 Մեզ արեամբ ծախու առած է,
Մոլորողը ինք փնտռած է,
Սուտ ճամբաներէն բերած է.
Փա՛ռք անոր միայն։

3 Անսպառ երկրէս տանողը,
Մանանան մեզ կերցնողը
Եւ յաղթութիւն տուողը
Ինքն է. փա՛ռք Փրկչին.

4 Վերն պիտի տեսնենք մեր Տէրը,
Յաւիտեան անոր մեծ սէրը
Յիշելով մեր քաղցր երգերը
Պիտի մատուցուին։

5 Մինչ երգենք Փրկչին մեծ սէրը,
Որ ներած է մեր մեղքերը,
Եւ ջնջուած է մեր վախերը,
Փա՛ռք անոր անուան
Ղուկ. ԺԹ. 10

## 121 ՅԻՇԷ ԶԻՍ

1 Յիսուս, Փրկիչ մեղաւորաց,
Միայն քեզ կը նայիմ.



Քու մեծ սիրոյդ առատութեամբ
Յիշէ զիս, ով Տէր իմ.
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր։

2 Սքանչելի Միջնորդ առ Հայր,
Իմ անձնատուր քեզի.
Երկնից անհուն փառքն վայելու
Յիշէ զիս, Սիրելի.
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր.

3 Ես յանցաւոր եմ և անարգ,
Բայց փրկութիւնդ է ձրի.
Քու կին ամենառատ շնորհքովդ
Յիշէ զիս, Սիրելի,
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր։

4 Երբ իմ աչքերս մահուամբ գոցեմ,
Երբ անդարձան թողուիմ,
Յայնժամ, ով դուն Փրկիչ Յիսուս,
Յիշէ զիս, կ'աղաչեմ.
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր։
Ղուկ. ԻԳ. 42, 43

## 122 ԼՍԱԾ ԵՄ ԵՍ ՓՐԿՉԻ ՄԸ ՍԷՐՆ

1 Լսած եմ ես Փրկչի մը սէրն,
Հիանալի մի սէր է այն հարկաւ.
Բայց միթէ թողլով նա բարձրերն,

Սուրբ արիւն լեցուած՝ ինձ համար հոս եկաւ,
Սուրբ արիւն, սուրբ գութով ինձ համար։
Ինձ, ինձ, այո, ինձ համար, ինձ, ինձ, ինձ համար։

Մեր Տէրն անսահման իր սիրով իջաւ վար իր մահուամբ փրկելու քեզ և զիս։

2 Լսած եմ թէ հոս անյանցանք
Տանջեցաւ, խաչեցաւ չարաչար.
Բայց կա՞յ տեղ մ'ըսուած թէ տանջանք
Ճաշակեց, խաչեցաւ իրօք ինձ համար,
Տանջեցաւ, խաչեցաւ ի՞նձ համար,
Ինձ, ինձ, նոյն։

3 Լսած եմ թէ վերն կայ երկինք,
Յիսուսի սիրած աղոց տուն յարմար.
Բայց կա՞յ այն տեղ վայր մը, զոր ինք
Պատրաստեց, զարդարեց յատուկ ինձ համար,
Պատրաստեց, զարդարեց ի՞նձ համար։
Ինձ, ինձ, նոյն։

4 Խնդրեմ, Տէր իմ, ըսէ, որո՞ւն
Ես գիտեմ, թէ ոչ քեզ՝ անմոլար.
Ըսէ ձայնովդ սուրբ և սիրուն
Թէ փրկիչ և երկինք մը կա՞յ ինձ համար,
Կա՞յ փրկիչ և երկինք ինձ համար.
Ինձ, ինձ, նոյն։

Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՆԵԱՆ

ԾԱՆՕԹ.— Իւրաքանչիւր տունին երգուելէն



վերջը թող ժողովուրդը, եթէ ուզէ, ըսէ Սուրբ Գիրքի այն համարը որ կը համապատասխանէ։

Ա. Տունէ պատասխան.

Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու։ Ա Տիմ. Ա. 15

Բ. Տունէ պատասխան.

Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ. մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ, և անոր վէրքերովը մենք բժշկուեցանք։
Ես. ԾԳ. 5

Գ. Տունէ պատասխան.

Իմ Հօրս տանը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի։ Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ։ Յովհ. ԺԴ. 2

Դ. Տունէ պատասխան

Եկէք ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ։
Մատթ. ԺԱ. 28

## 123 ՔՐԻՍՏՈՍԷ ԶԶԱՏՈՒԻԼ

1 Փառաւորեալ Աստուածորդի,
Սիրոյ աղբիւր կեանք աշխարհի,

Դէմքիդ լուսոյն մարդ կը զմայլի,
Ով սիրելի Տէր իմ Յիսուս։

2 Ո՜հ այն ի՜նչ մեծ սէր ցուցուցիր,
Երբ դառն գաւաթը խմեցիր,
Որով աշխարհս փրկեցիր.
Ով պաշտելի Տէր իմ Յիսուս։

3 Դուն իմ հոգիս քեզի դարձուր,
Տըկար հաւատքըս զօրացուր,
Ու փրկութիւնդ ինծի ցուցուր,
Ով կենսատու Տէր իմ Յիսուս։

4 Ո՜հ, չեմ ուզեր որ սէրդ մոռնամ,
Դէմքիդ լոյսէն ալ հեռանամ.
Դուն զիս բռնէ, Տէր բարեխնամ,
Եւ մարդասէր Փրկիչ Յիսուս։

Յովհ. ժէ. Հեղինակ Տիկին ՀՌ. ՎԱՐԴՈՒԿԵԱՆ

## 124 ԱՆՃԱՌ ՍԷՐ

1 Յիսուս յայտնեց ինձ սէր անբաւ.
Խաչին վրայ չարչարուեցաւ,
Փրկել հոգիս մեղաթաթաւ՝
Սիրովն անճառ, անբաւ,
Խմբ. Անոր սէրն է անճառ, անբաւ,
Անոր սէրն է անճառ, անբաւ,



Սէրն զոր Յիսուս ինձ ցոյց տըւաւ՝
Սէր է անճառ, անբաւ,

2 Կըրեց վիշտեր բազմատեսակ,
Եւ, ո՜հ, դըրաւ փուշէ պըսակ,
Տըւաւ իր կեանքըն ինձ փրկանակ՝
Սիրովն անճառ, անբաւ.
Խմբ. Անոր սէրն է, Եւայլն։

3 Խաղաղութիւն ունիմ անով.
Իր սուրբ արեան արժանիքով
Է բարեխօս Աստուծոյ քով՝
Սիրովն անճառ, անբաւ.
Խմբ. Անոր սէրն է, Եւայլն.

Հռովմ. Ե. 6-8 Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

## 125 ՓՐԿՉԻՆ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

1 Փրկիչն ցուցուց ողորմութիւն
Ինձ մեղաւոր արարածիս.
Ինծի յայտնեց իր սէրն անհուն,
Որ դըժոխքէն փրկէ հոգիս.
Աս տեսնելով կ՚ուրախանամ,
Ողորմութեանն ալ փառք կու տամ։

2 Ես, բարկութեան արժան որդի,
Տէր Յիսուսէն շընորհք գըտայ.

Ինք բաժանող պատը քակեց,
Եւ ես Տէրոջս հետ միացայ.
Ո՜վ կատարեալ սա գթութիւնն.
Ողորմութի՜ւն, ողորմութի՜ւն։

3 Ով իմ Աստուած, պիտի պատմեմ
Ողորմութիւնդ ամէն մարդու.
Յայնժամ ըզքեզ պիտի գովեն
Հաւատացեալք ամէն դարու.
Տրտմեալք ուրախ պիտի ըլլան՝
Ողորմութիւնդ երբ հասկընան

4 Պանդխտութեանս կարճ ժամանակն՝
Ներկայութիւնդ թող հետս ըլլայ.
Ողորմութեանդ պիտի յուսամ
Երբ մահն ինծի կը մօտենայ.
Յայնժամ երկնից մէջ յաւիտեան
Փառք պիտի տամ ողորմութեանդ։

Ա. Տիմ. Ա. 15

## 126 ԿՈՅՐ ԲԱՐՏԻՄԷՈՍ

1 «Ողորմէ ինձ, ողորմէ ինձ,
Ով Որդի Դաւթի, Քրիստոս.»
Այսպէս կ'աղաչէր ճամբուն վրայ
Կոյր, աղքատ Բարտիմէոս.

2 «Լուռ կեցիր,» ըսին շատերը,
Սակայն ան աղաղակեց



Անհամբեր, մինչեւ որ Տէրը
Զինք գութով իրեն կանչեց։

3 Չէր արծաթ անոր խնդրածը,
Թէպէտ էր սովոր մուրալ.
Դաւիթի Որդւոյն արուածը
Չէր կարող ուրիշ մը տալ.

4 «Տէ՛ր, վերցու՛ր այս կուրութիւնը,
Թող աչքերս բացուին,» ըսաւ.
Շուտ տեսաւ, իսկոյն եւ ինքը
Յիսուսի ետեւէն ինկաւ։

5 Ո՜րչափ սիրուն հիմա լեցուն է.
Ամէնուն ալ կը խօսի.
Աս ողորմութիւնն անհուն է,
Ի՜նչ փրկիչ զարմանալի։

6 Երանի՜ թէ ասոր քովը
Կոյրերուն ամէնը գար.
Ինք անշուշտ անչափ շնորհքովը
Շուտ անոնց տեսնել կու տար։

Մարկ. Ժ. 46-52 Թարգ. Elias Riggs

## 127 ՇՆՈՐՀՔՈՎ ՓՐԿՈՒԹԻՒՆ

1 Շընո՜րհք, ձայն սիրելի,
Ի՜նչ քաղցր ես դուն ինծի.

Երկինքն այս ձայնը թող կրկնէ,
Երկիրն ալ թող լսէ։

2 Շնորհքն յայտնեց ճամբան՝
Փրկել չար ազգ մարդկան.
Եւ այս ճամբուն շաւիղքն ամէն
Շնորհք կը ցուցնեն։

3 Շնորհքն է լոյս ոտքիս՝
Տանիլ զիս դէպ յերկինս.
Ու ես որչափ յառաջ երթամ,
Շնորհքով կը զօրանամ։

4 Շնորհքն պիտի փրկէ
Ամէն տանջանքներէ.
Ուրեմն միշտ շնորհք խնդրենք
Ու Տէրն փառաբանենք։

Տիտոս. Բ. 11

## 128 ՎՃՏԱՀԱՐ ՄԱՐԴ ՄԸ

1 Շատ հեղ ճամբան առաջս կ'ելլէր
Խեղճ մարդ մ'աղքատ և վշտահար,
Անանկ խեղճուկ աղերս կ'ընէր,
Որ «Ջէ» ըսել ինձ չէր հնար։
Զը հարցուցի անունն ի՛նչ էր,
Ո՛ր տեղ կ'երթար, ո՛ւր էր գացեր.
Իրեն քաշեց սրտիս մեծ սէրն,
Բայց չեմ գիտեր ի՛նչ էր պատճառն։



2 Երբ աղքատիկ սեղանս դըրած՝
Հաց կ'ուտէի, ան ներս մտաւ.
Տեսայ ինքն էր յոգնած, քաղցած,
Բոլորն տուի, օրհնեց կերաւ։
Բայց մէկ բաժինն երբոր նորէն
Ինծի տըւաւ՝ կերայ ձեռքէն,
Հրեշտակային բաժին մըն էր,
Եւ մանանայի համն ինձ կու տար։

3 Յստակ վազող ջուրի մը քով
Մէկ մ'ալ տեսայ կորած ուժէ,
Ծարաւ, նայէր մարած աչքով,
Զի չէր կրցած խմել անկէ.
Վեր հանեցի, իսկոյն ելաւ,
Առաւ գաւաթս, ծարաւն անցաւ.
Կրկին լեցուց ինծի խմցուց,
Բոլորովին ծարաւս մոռցուց։

4 Բանտի մէջ էր, դատապարտուած
Իբրև մատնիչ մը մեռնելու.
Մէկէն ամօթն մէկդի ձըգած՝
Գացի իր քովն զինք պատուելու։
Հարցուց ինծի որ սէրս փորձէ
Թէ տալ իմ կեանքս սիրտս յօժար է.
«Մարմինս ակար՝ հոգիս յօժար,»
Ըսի, «կու տամ քեզի համար։»

5 Յանկարծ իսկոյն մարդն աննշան
Տեսայ փոխուած Փրկչիս դէմքին.

Երկու ձեռքի վիրաց նշանն
Բերաւ իմ Տէրս աչքիս առջին.
Եւ խօսեցաւ անուշ տալով,
«Դուն ինծ եկար չամչնալով,
Այն գործերով ինչ որ ըրիր,
Դուն մի՛ վախնար, ինծի ըրիր»:

Մատթ. ԻԵ. 35-40 Թարգ. Ա. Հ. ՃԻՃԻՋԵԱՆ

## 129 ՅԻՍՈՒՍ ԻՄ ՅՈՅՍ

1 Տէր, քու ոտից առջին
Կ'իյնամ անյոյս,
Աչք իմ յառած խաչին,
Տուր ինծ խրախոյս.
Թող այն արեան չիթեր,
Որ թափուեցան հոն, Տէր,
Զիս ալ հանեն ի վեր,
Յիսուս իմ յոյս.

2 Եւ զղջման դառն արցունք
Մինչ կը հոսին,
Թող քու սիրոյն բարձունք
Ինծ ալ խօսին.
Դուն ես տենչն իմ հոգւոյս,
Այս է բոլոր իմ յոյս,
Վան իմ մեռած Յիսուս,
Յոյսն անյուսին:



3 Թող սուրբ կողիդ վէրքէն
Դուրս ցայտէ լոյս,
Այդ սուրբ լուսոյն խորքէն
Թող շողշողայ յոյս
Լոյս տայ հէքիս անլոյս,
Յոյս տայ սրտիս անյոյս:
Քու մահ կեանք տայ հոգւոյս,
Իմ յոյս Յիսուս:

4 Փառք քեզ, Տէր իմ, փառք քեզ,
Լոյս տաս հոգւոյս,
Եւ միշտ առատ թափես
Յոյս ու խրախոյս.
Քու սիրոյդ բարձունքէն
Սրբես իմ արցունքներն.
Մինչ այս ըլլայ իմ երգն,
Յիսո՛ւս իմ յոյս.

Տիտոս Բ. 13

## 130 ՅԻՍՈՒՍԸ ՏԵՍՆԵԼ

1 Յիսուսը ես տեսնել կ'ուզեմ,
Կարօտ եմ ես անոր.
Կ'ըսեն, դարման անկէ փնտռեմ
Ցաւոց հազարաւոր.

2 Կոյր եմ, և ինծ ըսին, Յիսուս
Կրնայ տալ տեսութիւն,

Հիւանդ, տկար անդամներուս՝
Կըլլան առողջութիւն։

3 Աղքատ եմ, ինձ աւետեցին,
Յիսուս ունի գանձեր,
Որ ինձ նըման կարօտեալին
Բաշխել է խոստացեր։

4 Մերկ եմ, ցնծամ, եւ լսեցի
Թէ իր արդարութեան
Ճերմակ զգեստն կու տայ ինծի,
Կ'ուզեմ խնդրել և զայն։

5 Է անփոփոխ, կ'ըսեն, Յիսուս,
Անոր սէրն չի պակսիր.
Աւա՜ղ, սիրոյն ընկերներուս
Ստէպ չեմ վստահիր։

6 Է ցանկալի. Յիսուս, ըսին,
Բընաւ արատ չունի.
Ա՜հ թէ անոր դէմքին լոյսին
Մէկը հանդիպէի։

7 Ով Հայր, գըթած, օգնէ նայիմ
Որդւոյդ քու միածին.
Նայիմ, տեսնեմ, յուսիմ, փոխուիմ,
Սիրոյն կերպարանքին։

Մատթ. ԺԱ. 4-6   Հեղինակ ՏԻԿԻՆ ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ



## 131 ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Քաղցր է անունը Քրիստոսի
Հաւատացեալ սրտին.
Անով իր վախն կը խափանուի,
Վէրքերը կը բուժուին։

2 Կը բըժըշկէ խոցուած հոգին,
Տրտմեալն ուրախ կ'ընէ.
Կենաց հաց է անօթիին,
Յոգնածն հանգիստ կ'ընէ։

3 Անով աղօթքըս կ'ընդունուին,
Թէև մեղքով լեցուած.
Թէև դեւերն հակառակին,
Տէրն զիս է ընդունած։

4 Դուն, Տէր, գիտես սէրս ինչ պաղ է,
Գործքով ալ շատ թոյլ եմ.
Բայց երբ իմ աչքըս քեզ տեսնէ,
Քեզ լաւ կը ծառայեմ։

5 Հոս, Տէր, լեզուս պիտի պատմէ
Քու սէրդ ամէն մարդուն.
Թող քաղցր անունդ մըխիթարէ
Զիս, Տէր, մահուան ժամուն։

Ա. Պետ. Բ. 7, Գործ. Դ. 12

## 132 ՔՐԻՍՏՈՍԻ ԴԷՄՔԸ

1 Դէմք մը կայ վեհ ու մէկ հատիկ
Յերկինս, յերկիրս նըմանն իւր չէր.
Զայն խըռւամբ ճանչցողներուն՝
Այնքա՜ն սիրուն, այնքան տխրուն.

2 Գիտի ճանչնամ, տեսնեմ երբ զԱյն,
Թէ քահանայ է, Տէրս, Արքան.
Իր թափանցիկ դէմքին մէջէն
Գտնեմ իմ Հայրս, Աստուածս, ՈՐ Է՛Ն.

3 Զայն տեսնելու շատ իղձ ունիմ,
Թէև հարկ է որ նախ մեռնիմ.
Թերևս ցոյց տայ կողն ու ձեռքեր,
Որ ինձ համար են ծակծըկուեր.

4 Ա՜հ, զայն տեսնելս գէթ մի անգամ
Ինձ կը բաւէ բիւր հազար ամ.
Բերկրած սրտէս ըղխին երգեր,
Գովեմ, պաշտեմ զԱստուածն իմ Տէր.

Յայտ. ԻԲ. 4, Ա Յովհ. Գ. 2
Հեղինակ ՏԻԿԻՆ ՀՈՒ. ՇՄԵԻՈՆԵԱՆ

## 133 ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Ո՜հ թէ կարող ես ըլլայի
Փրկչիս փառացն անչափելի
Մէկ մասն միայն պատմել.



Երկինք պիտի շատ թըռչէի,
Հետ հրեշտակաց ըսկըսէի
Անոր քընար զարնել.

2 Այն սուրբ արիւնն զոր ինք թափեց,
Ու մեղապարտ հոգիս փրկեց,
Պիտի ես երգէի.
Հոգիս, անոր խիստ գերապանծ
Արդարութիւնն վըրան հագած,
Հոն միշտ պիտի փայլի.

3 Մեր մեծ Միջնորդն աթոռն նստած,
Վըսեմ պաշտօններուն հագուած,
Պիտի ես երգէի.
Իր փառքն անհուն, Աստուածային
Ամէն զօրու, երկրի, ազգի
Պիտի միշտ պատմէի.

4 Բայց շուտ այն օրն պիտի ծագի,
Երբ ՏԷՐԸ զիս պիտի տանի
Ուր զինք պիտի տեսնեմ.
Հոն իր առջեւ պիտի կայնիմ,
Հոն յաւիտեանըս օրհնըլիմ,
Եւ միշտ իր սէրն երգեմ։

Յայտ. Ե. 11-14 Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

## 134 ՅՈՒՇՔ ԳԱԼԻԼԵԱՅ

1 Զիթենազարդ սա լեռ ու ձոր,
Սա պարտէզներ, ափուն ծործոր,

Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն
Հին պատմութիւն մը մեղրածոր.
Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
Ըղ Յիսուսէ խօսէ ընդ իս։

2 Ու որթաշատ այգիք բեղուն
Եւ դաշտերու շուշանք շողուն
Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն
Անոր գործերն, խօսքերն զեղուն,
Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
Ըղ Յիսուսէ խօսէ ընդ իս։

3 Այս սերմնացանք, ո՜հ, պարտասած,
Այս ուռկաններ հէք ձկնորսաց
Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն
Այն առակներն, զոր Նա ասաց.
Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
Ըղ Յիսուսէ խօսէ ընդ իս։

4 Խեղճ նաւորդներ հանդիպակաց,
Գոռ մըրնչիւնք այն կոհակաց



Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն
Սաստողն ծովուն ու փոթորկաց.
Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գալիլեա, քաղցըր Գալիլեա,
Ըղ Յիսուսէ խօսէ ընդ իս։

5 Ու ախտացեալք ազգի ազգի,
Կոյրեր, կաղեր ամէն կարգի
Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն
Բժիշկը մեծ այն վեհոգի։
Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
Ըղ Յիսուսէ խօսէ ընդ իս։

6 Գալար մարգեր, հանդարտ գետեր,
Ու հովիւներ, անոնց հօտեր
Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն
Քաջ Հովուապետն ամենատէր.
Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
Ըղ Յիսուսէ խօսէ ընդ իս։

7 Այս փառապանծ ծովն ու ափեր,
Զքնաղ վայրերն դար ու սարեր
Ինձ յարաժամ ի յուշ կ'ածեն,
Ա՜խ, այն Փրկիչը կենսաբեր.

Ով Գողգոթա, վեհ Գողգոթա,
Անունդ անուշ է իմ սրտիս.
Ով Գողգոթա, քաղցր Գողգոթա,
Ըղձիւսաւէ խօսէ ընդ իս։

Մատթ. ԺԵ. 29-31, Մարկ. Ա. 39

Թարգ. Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

## 135 ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳՈՎ ՊՍԱԿՈՒԻԼԸ

1 Ողջո՜յն մեծ Իմմանուէլին.
Թող պետութիւնք երկնից
Երկրպագեն, զայն հռչակեն
Արքայ, Տէր ամենից։

2 Թող մեր երկրին լեզուք ամէն
Ըլլան հոս ձայնակից.
Անոր փառք տան, զայն ընդունին
Արքայ, Տէր ամենից։

3 Ո՜հ, ե՞րբ պիտի մենք զայն պաշտենք
Ի մէջ գնդաց երկնից.
Անոր երգենք ու զայն կոչենք
Արքայ, Տէր ամենից։

Ես. Է. 14, Մատթ. Ա. 23

Թարգ. ԶԵՆՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ



## 136 ԱԼԷԼՈՒԻԱ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

1 Անոր, որ մեր մեղաց համար
Կրեց վիշտեր, ցաւ անհամար,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան։

2 Սիրով զոհուած սուրբ Գառնուկին,
Որ մեզ տուաւ իր կեանքն անգին,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան։

3 Անոր, որ դուրս յարեաւ շիրմէն,
Ցոյն յաղթութեան շողաց իրմէն,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան։

4 Անոր, որ մեզ է առաջնորդ,
Մեծ բարեխօս միակ միջնորդ,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան։

5 Փրկչին թող տան փառք ու պատիւ
Երկնի, երկրի սուրբերն անթիւ.
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան։

Յայտ. Ա. 5, 6

## 137 ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

1 Լաւ բարեկամ մը կայ վերերն,
Յիսուս Քրիստոս է իր անունն.
Այս աշխարհիս բարեկամներն
Շուտով կ'անցնին, չեն հաստատուն.

Ուստի թող ես անհոգ չըլլամ
Յիսուսն ընել ինձ բարեկամ

2 Աշխարհ բոլոր փառքովն կ'անցնի,
Հաստատ մնայ Յիսուս մեր վէմ.
Մարդիկ երբ չեն օգներ ինծի,
Յիսուս միշտ քովս պատրաստ գտնեմ.
Ուստի, Լոյսն.

3 Ան ինձ համար իր անձն զոհեց,
Որ ես երկնից հաղորդ ըլլամ.
Իմ տեղըս իր արիւնն թափեց,
Որ ես իրմով արդարանամ.
Ուստի, Լոյսն.

4 Բարեկամիս մեծ գթութիւնն
Օրէ օր զիս սիրով կ'ուզէ.
Յիսուս միշտ իմս է, ես իրենն՝
Մինչև որ մահն իմ շունչս կտրէ.
Նաև ալ երկնից մէջ յաւիտեան
Բարեկամիս հետ մնամ։
Յովհ. ԺԵ. 13-15

## 138 ՅԻՍՈՒՍԻ ՔՈՎԸՆ

1 Յիսո՛ւս, փրկիչ ու բարեկամ,
Տուր որ քովէդ միշտ ընթանամ.
Առաջնորդէ բռնած ձեռքէս՝
Նոր ոտք ելլող մանկան մը պէս,



2 Որ երբ քայլերս ա՛լ դեղեւին,
Փարիմ իսկոյն քու աջ թեւին.
Վստահութեամբ իյնամ քու գիրկ,
Սերտ վայելեմ քաղցրիկ ու գիրգ։

3 Դէմ դառնութեանց կ'ըլլամ հըսկայ,
Երբ քեզ հոգիս ինձ մօտ ըզգայ.
Տուր որ քովէդ միշտ ընթանամ,
Յիսո՛ւս, փրկիչ ու բարեկամ։
Յովհ. ԺԵ. 10 Հեղինակ Գ. Ց. ԿԻՒԼԵԱՆ

## 139 ՅԻՍՈՒՍ ՄԵԾ ԲԺԻՇԿ

1 Ի՛նչ գեշ էր վիճակըս,
Երբ Տէրը զիս տեսաւ,
Եւ հոգիիս դարմանը
Լոկ իրքն ինծի տըւաւ.
Մահուան շատ մօտ գըտաւ զիս,
Գերեզմանէն հանեց,
Որ խեղճ մարդոց պատմեմ ես
Ինչպէս զիս բըժըշկեց։

2 Ուրիշ ամէն ախտերը
Թեթեւ են մեղքին քով.
Կ'աւրէ բոլոր մարմինը,
Բայց բուն հոգին՝ ուժով։
Բազում և ծանր ախտեր կան,
Բայց մեղքն է ծանրագոյն,

Ու յոյս միայն Փրկչին վրան՝
Կ'ըլլայ դեղ այս ցաւոյն։

3 Շատ բժիշկներ տեսած եմ,
Ինծի շատ դեղ տուին,
Բայց աւելի վատցած եմ,
Բնաւ օգուտ չըրին։
Ոմանք, «Զուննիս դուն խոտ մը,»
Ըսին, «Շուտ կ'ազատիս,»
Իսկ այլք ըսին, «Չիք յոյս մը,
Անշուշտ պիտի մեռնիս։»

4 Սակայն այն մեծ Բժիշկըս,
Անհամեմատ սիրով,
Շուտ ընդունեց խնդիրքըս՝
Ինծի ողորմելով.
Նաեւ բացաւ աչքերըս,
Վէրքերս ինծի յայտնեց,
Ցուցուց բոլոր մեղքերս,
Շնորհքով զիս բժշկեց։

5 Խաչեալ Փրկիչ Յիսուսը
Երբ հաւատքով տեսնանք,
Մեղքի ու մահուան լուծը
Շուտով լինալ կը զգանք։
Մեզ կը կանչէ Բժիշկը,
Դժուար պայման չըկայ,



Չըրխապէս մեր վիշտը
Անով պիտի վերնայ։

Մարկ. Բ. 17

## 140 ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ

1 Տէր, հովուի պէս խնամէ մեզ,
Օգնութեանդ կը կարօտինք,
Ջուրերու քով արածէ մեզ,
Արօտիդ կը փափաքինք.
Տէր, հովիւ մեր,
Գնեցիր մեզ, քուկդ լինինք։

2 Ոչխարներդ ենք, պաշտպանէ մեզ,
Մոլորեալն գթով փնտռէ,
Մթութեան մէջ պատսպարէ մեզ,
Փարախիդ մէջ մեզ պահէ։
Տէր, հովիւ մեր,
Բազուկդ մեր վրայ տարածէ։

3 Խոստացած ես ընդունիլ մեզ,
Թէպէտ ենք շատ մեղաւոր.
Բարեգութ ես ողորմիլ մեզ,
Ու մեղքէ սրբել անբիծ.
Տէր, հովիւ մեր,
Կը դիմենք քեզ յուսալից

4 Պարգեւէ արդ երախտիքըդ,
Կամքդ ընել մեզ զօրացուր,
Տուր որ մենք քալենք շաւիղըդ,
Մեր սրտերն սիրովդ լեցուր.
Տէր, հովիւ մեր,
Ո՛հ, հօտիդ մեզ միացուր.

Յովհ. Ժ. 7,9

## 141 ՏԷՐԸ ՔԱՋ ՀՈՎԻՒ

1 Ինծ Տէրը եղաւ Հովիւ կառավար,
Եւ ո՛չ մէկ բանի կարօտ չեմ ըլլար.
Օրեր անվախճան՝ դաշտերն խոտաւէտ
Պիտի ճարակեմ ընտրեալ հօտիդ հետ.

2 Հանդարտ ջուրերուն զիս կ'առաջնորդէ,
Ծարաւը հոգւոյս կը յագեցընէ.
Հոգիս իր խօսքովը միշտ կը նորոգէ,
Ուղիղ ճամբուն մէջ հաստատ կը պահէ.

3 Մահուան ալ շուքի ձորին մէջ քալեմ,
Չարէն չեմ վախնար ու վախնալու չեմ.
Քանզի, ո՛վ Տէր, դուն ինծի միշտ կ'օգնես,
Եւ գաւազանովդ կը մխիթարես.

4 Քու ողորմութիւնդ իմ հետըս կու գայ.
Բոլոր կեանքիս մէջ ինծի սիրտ կու տայ.
Տէրոջը տաճարն պիտի ես հանգչիմ
Եւ հոն անվախճան դարեր բնակիմ.

Սաղ. ԻԳ.



## 142 ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ

1 Դու Հովիւս ես, բարեգութ Տէր,
Այլ բանի ես չեմ կարօտ.
Արածէ զիս ջուրերու քով,
Քաղցր է ինծ քուկին արօտ,
Քաջ Հովիւդ իմ,
Զիս պահէ քեզի միշտ մօտ։

2 Նորոգէ, Տէր, այս սիրտն իմ չար,
Փառք, պատիւ տամ քու անուան.
Առաջնորդն իմ և արթուն դէտ,
Ցոյց ինծ նեղ, ուղիղ ճամբան։
Քաջ Հովիւդ իմ,
Տըկարիս լեր օգնական,

3 Արհաւիրք և կամ մահուան շուք
Պաշարեն զիս, չեմ վախնար.
Զի դու հետս ես, և զօրեղ ցուպդ
Իմ սրտիս է մխիթար։
Քաջ Հովիւդ իմ,
Թշնամւոյն ձեռք զիս մի տար.

4 Սեղանէդ ճոխ կերակրէ զիս,
Դէմ յանդիման թշնամւոյն.
Եւ իւղով սուրբ զիս օծէ, Տէր,
Լից բաժակն իմ լեփ լեցուն.
Քաջ Հովիւդ իմ,
Ճաշակեմ քու սէրդ անհուն.

5 Ցիրուի թող միշտ իմ հետս գան
Անհամար քու բարիքներ.
Բընակիմ սուրբ հովանույդ տակ,
Տանարիդ մէջ շատ օրեր.
Քաջ Հովիւդ իմ,
Երկինքէդ զիս մի զրկեր.

Սաղ. ԻԳ. Հեղինակ Ցիկլին ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 143 ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԸ

1 Իննըսուն և ինը կար ապահով
Պաշտպանուած, հանգիստ պառկած,
Սակայն ոչխար մը մոլորելով
Լերանց վրայ էր հեռացած.
Լերանց վրայ ահեղ ու վայրենի,
Հովուին բարեգութ խնամքէն հեռի,
Հովուին բարեգութ խնամքէն հեռի:

2 «Տէր, ահա քովդ են իննսուն և ինն.
Անոնք չե՞ն քեզ բաւական.»
Պատասխանեց քաջ Հովիւն թէ «Մին
Թշուառ է մոլորական,
Եւ ի՛նչ նեղութիւն որ պէտք է կրել,
Կ'երթամ անապատն ոչխարս գըտնել,
Կ'երթամ անապատն ոչխարս գտնել.»

3 Բայց ո՛չ մէկը կրցաւ գիտնալ թէ Տէրն
Ի՛նչ խորունկ ջուրէ անցաւ.



Ի՛նչ մութ էր իր անցուցած գիշեր,
Մինչև կորսուածն գըտաւ.
Լըսեց անապատն անոր խեղճ ձայն՝
Մահուան մօտ թշուառ անօգնական,
Մահուան մօտ թշուառ անօգնական:

4 «Տէր, ինչո՞ւ այդ արեան կաթիլ շիթեր
Լեռն ի վեր կաթկըթած.»
«Գաւթէն ոչխար մը դուրս էր ինկեր,
Անոր համար են թափուած.»
«Ուստի՞ են, Տէր, այս ձեռացդ վէրքերն.»
«Շատ փուշք զիս այսպէս ըրին գիշերն,
Շատ փուշք զիս այսպէս ըրին գիշերն.»

5 Եւ ահա մոլորածը կը գտնէ,
Մեծապէս կ'ուրախանայ.
«Ուրախ եղէք ինծի հետ,» կ'ըսէ,
«Քանզի կորսուածն գըտայ.»
Գահն հրեշտակաց արձագանգ տըւաւ,
«Ուրախ եղէք, Տէրն իրենը գտաւ,
Ուրախ եղէք, Տէրն իրենը գտաւ,»

Մատթ. ԺԸ. 12-14

## 144 ԵՐԿՆԱՅԻՆ ՓԱՐԱԽԻՆ ԳԱՌԻՆՔՆ

1 Երջանիկ փարախ, երջանիկ արօտ՝
Բարի Հովիւին փարախ

Յաւխտանըս կայ մէկ Հովիւ, մէկ հօտ.
  Ա՛լ վտանգ հոն չըկայ, ո՛չ վախ։
Կը ծաղկի հոն վարդ, կը ծաղկի շուշան,
  Գարուն անդադար երկինք։
Ո՛չ ցուրտ և ո՛չ տաքութիւն կը զգան
  Երջանիկ փարախին գառինք։

2 Կան փոքրիկ թումբեր, ուր որ այս երկրիս
  Յոյսերը պառկած կը ննջեն.
Գետնի տակ թաղուած են և աչքերնիս
  Այն գետին արցունքով կը թրջեն։
Բայց ճըրագը, որ կը պակսի երկրէ,
  Վառած կը փայլի երկինք.
Եւ բարի Հովիւը սիրով կը պահէ
  Երջանիկ փարախին գառինք։

3 Մեր սրտին մշտամին ալ մինակ կ'երթանք
  Կենաց տըրտմալից ճամբան.
Վաղըն գի ցուրտ հողը լեցուած տեսանք
  Սպիտակ ճակատին վըրան։
Սակայն հաւատքով ու զըւարթ աչքով
  Արդ վեր կը նայինք երկինք.
Ժողվուած են հոն, և ա՛լ ապահով,
  Երջանիկ փարախին գառինք։

Յովհ. Ժ. 11, 16 — Թարգ. Elias Riggs



## 145 ԱՐՔԱՅՆ ՍԻՐՈՅ Է ԻՄ ՀՈՎԻՒ

1 Արքայն սիրոյ է իմ Հովիւ,
  Ես մէկ բանի կարօտ չեմ,
Սիրտս կը խայտայ անհուն խընդիւ,
  Զի ինքն իմս է, ես իրն եմ։

2 Փըրկեալ հոգիս կ'առաջնորդէ
  Վըճիտ, հանդարտ ջուրի քով.
Ու խոտաւէտ արօտներէ
  Կը կերակրէ զիս սիրով։

3 Ես շատ անգամ, խեւ ու յիմար,
  Թողած եմ իմ բարի հօտ.
Բայց ինք փընտռեց սիրայօժար,
  Կըրկին բերաւ զիս իր մօտ։

4 Մահուան ձորէն ալ չեմ վախնար
  Եթէ, Տէր, դուն ես իմ հետ.
Քու ցուպդ ու գաւազանըդ յար
  Ինձ մխիթար են յաւէտ։

5 Կեանքիս բոլոր օրերուն մէջ,
  Տէր, հետս ըլլայ թող քու սէր.
Ու քեզ գովեմ դարեր անվերջ,
  Երբ այս ձորէն ելլեմ վեր։

Սաղ. ԻԳ. — Թարգ. Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

## 146 ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼՈՒԽԸ ՔՐԻՍՏՈՍ Է

1 Յիսուս, դուն ես մեզ Առաջնորդ,
Միակ Գլուխ եկեղեցւոյն,
Եւ թողուցիր քեզ փոխանորդ
Քու Սուրբ Հոգիդ, լոյս գերագոյն։

2 Յիսուս, դուն ես վէմ յաղթական,
Որով կանգնի եկեղեցին.
Կանոն ունի Աւետարան,
Ամէն մարդիկ քեզմով փրկուին։

3 Յիսուս, դուն ես Հովիւ բարի,
Իր ոչխարներն նայող՝ փնտռող.
Ով որ քեզի կը յանձնուի,
Չըկայ ձեռքէդ յափշտակող։

4 Յիսուս, դուն ես մեծ Թագաւոր,
Նոյն և քաւիչ մեծ Քահանան.
Անգին արեանդ զոհ փառաւոր
Է առաջնորդ մեր փրկութեան։

5 Տէր, մեծութիւնդ մեզի զգացուր,
Որ քեզ միայն մեր Գլուխ ճանչնանք,
Մեր յոյս, հաւատ, սէր աւելցուր,
Որ քեզ արժան պատիւ, փառք տանք։

Եփես. Ա. 22, Կող. Ա. 18



## 147 ԵՐԳ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

1 Բացուին այսօր երկնից կամարք.
Իջիր մեզի, ո՛վ Սուրբ Հոգի.
Մեր խղճալի սրտից կապանք
Քու զօրութեամբդ արձըկուի։

2 Մեղաց խաւարն է մեզ պատեր,
Թող փարատի ու չքանայ.
Սառեալ զղջում ու սէր առ Տէր
Մեր սիրտերուն մէջ արթըննայ։

3 Թող մեր միտքերն լուսաւորուին
Տէրոջը կամքը ճանչնալու.
Ու մեր սիրտերը համոզուին
Ամէն մեղքէ հրաժարելու։

4 Առատաբուխ պարգեւներով,
Կարեկցութեամբ մեզի եկուր.
Փառաց երկրին փափաքներով
Դուն մեր սիրտերն այսօր լեցուր։

5 Առաջնորդէ մեզ, կ'աղաչենք,
Ճշմարտութեան մէջ անդադար,
Որ մեր ընթացքը կատարենք
Անկեղծութեամբ մինչև ի սպառ։

Գործ. Բ. 2-4

## 148 ԱՂՕԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

1 Ով Սուրբ Հոգի, լոյս երկնային,
Դուն իմ հոգիս լուսաւորէ.
Ցրուէ խաւարն գիշերային,
Եւ ցորեկուան պարզ լոյս ծագէ։

2 Ով Սուրբ Հոգի, հզօր Աստուած,
Քու զօրութեամբդ իմ սիրտս մաքրէ.
Զի ներսիդիս ժողով մեղաց
Իշխանութեամբ միշտ կը տիրէ։

3 Ով Սուրբ Հոգի, Մխիթարիչ,
Տրտում հոգիս մխիթարէ.
Սրտիս բոլոր վիշտ խոցոտիչ
Ուրախութեամբ դուն փարատէ։

4 Ով Սուրբ Հոգի, ամենազօր,
Իմ սիրտս մըտիր, հոն բընակէ.
Վերցուր անկէ կուռքերս բոլոր,
Եւ յաւիտեան հոն դուն իշխէ,

Յովհ. ԺԶ. 7-11

## 149 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՏՐՈՒԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Տէր, վար նայէ աչքով գըթած,
Ադամորդին տես կործանած.



Մեղքն յաղթանակ կը տարածէ,
Ամէն տեղեր մարդ կը սպաննէ։

2 Պաշտօնեաներդ պարապ կ՚ելլեն,
Մեռած մարդոց կը քարոզեն.
Հոգիդ չառնած անոնց սըրտին
Անոնք ի զուր կը պաղատին։

3 Բայց Սուրբ Հոգիդ մահն կը յաղթէ,
Մեռելներուն կեանք կը բերէ.
Չոր ոսկորներ ձայնովդ կ՚ելլան,
Նոր յարութեամբ կ՚ուրախանան։

Յովհ. ԺԶ. 13

## 150 ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Իմ աղաղակս, ով Տէր, լըսէ,
Եւ Սուրբ Հոգիդ ինծի պարգեւէ.
Աննենգ լեզուով քեզ կ՚աղաչեմ,
Անկեղծ սրտով աղօթք կ՚ընեմ։

2 Իմ քայլերուս եղիր պաշտպան,
Ճամբուդ մէջ թող հաստատ մընան.
Ոտքերս ընաւ չը խոտորին,
Սուրբ օրէնքիդ միշտ հետեւին։

3 Ողորմութիւնդ ըսքանչելի
Սիրոյդ համար ցուցուր ինծի.

Աջովդ փրկէ զիս վախէն,
Իմ յոյսս ես ամէն ատեն։

4 Աչքի բիբի պէս զիս պահէ,
Քու թեւերուդ տակ զիս ծածկէ․
Զիս ազատէ վտանգներէն,
Որ իմ հոգիս կը պաշարեն։

Ցուցն. ԺԴ. 26

## 151 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Ով Տէր Յիսուս, դուն խոստացար
Որ Սուրբ Հոգիդ ղրկես․
Ճշմարտութեան լոյսն փրկարար
Մեզի միշտ հաղորդես։

2 Արդ, կ'աղաչեմ բոլոր սրտով,
Ինձ Սուրբ Հոգիդ ղրկէ․
Ամէն բան թող աղէկ կերպով
Ինծի սորվեցընէ։

3 Ինչպէս որ դուն ի վերնատան
Առաքելոց տուիր
Քու Սուրբ Հոգիդ՝ լոյս գերբնական,
Քեզմէ պարգեւ ընտիր,

4 Ինծի ալ տուր, որ զիս սրբէ.
Որ քու օրէնքդ սիրեմ.



Իմ միտքս բանայ, սրտիս ազդէ,
Որ միշտ քեզ ծառայեմ։

5 Ով Սուրբ Հոգի, չեմ արժանի
Տաճար քեզ ըլլալու․
Եկ, զիս ըրէ գործիք քեզի,
Քու լոյսդ տարածելու։

Ցուցն. ԺԴ. 26

## 152 ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Այգիիդ, Տէր, այցելու լեր,
Քու անձրեւդ միշտ ղրկէ մեզ․
Շատ կը նուաղին հոգիք մեր,
Թէ լոյսդ մեր վրայ չը ծագես։
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ։

2 Մի՛ կենար մեզմէ հեռու, Տէր,
Այլ վերէն շնորհքդ մեզ ղրկէ․
Կը յաղթեն մեզ փորձութիւնք մեր
Թէ որ գթութիւնդ չօգնէ,
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ։

3 Թող սաստիկ սէր լեցընէ մեզ,
Աղօթքի մէջ զօրանանք․

Թող ան որ կը գտանի քեզ՝
Մինչ յաղթէ չարին փորձանք.
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ։

4 Տէր, յաղթէ ուժով փորձողը,
Բարեգթէն սիրտն կակղցուր.
Ընկլուէ հիմա մեծ գործը,
Մեղաւորն քեզի դարձուր.
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ.

Գործ. Դ. 31

## 153 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Ով Սուրբ Հոգի, իջիր արդ դուն իմ մէջ,
Սիրտս աշխարհէն կտրէ, ու թեւդ տակ առ.
Դուն անզօրիս շնչէ կորով անշէջ,
Որ քեզ սիրեմ սիրով մը անըսպառ.

2 Ես չեմ ուզեր երազ կամ խանդ մըտաց,
Ոչ ալ յանկարծ մարմնոյ հանգիստ ցըրտին,
Կամ այցելու հրեշտակ, երկինք մը բաց,
Այլ կը խնդրեմ, վանէ մէգն իմ սըրտին.

3 Տուր ինձ զգալ որ դուն իմ մօտս ես,
Եւ սորվեցուր վարել հոգւոյս կիրքեր,
Ու վըտարել կասկած, հառաչք սըրտէս,
Եւ հաւատքով անսալ ձայնիդ, ով Տէր։



4 Թող հրեշտակի մը պէս սիրեմ զքեզ,
Այդ սուրբ սիրով լեցուի թող անձս համակ,
Ու վրաս հանգչի սուրբ Աղաւնին ու հեզ,
Սիրտըս խորան ըլլայ, և սէրդ՝ կըրակ.

Հռովմ. Ը. 26, 27 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՍԱՆ

## 154 ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

1 Տիեզերքը Նորոգող,
Կեանք տըւող համայնից,
Կը հաւատանք քեզ, Սուրբ Հոգի,
Հօր, Որդւոյ ալ փառակից.

2 Առաջնորդ ես անսխալ
Մոլորեալ մեղաւորին.
Մեր խաւարը հալածող
Անըստուեր լոյս երկնային,

3 Զօրավիգ դուն ի բարձանց
Ճշմարիտը փնտռողին,
Դուն միայն կրնաս փոխել
Մեղապարտ սիրտն ու հոգին.

4 Կ'աղաչենք քեզ միաբան,
Ով գըթած օրհնեալ Հոգի,
Շնորհացդ այցելութեան
Դուն ըրէ մեզ արժանի.

5 Մեր մեղքերն ճանչնալ տուր մեզ,
Բարեխնամ Մխիթարիչ,
Տուր սրտանց զղջում ընել,
Ու նայիլ դէպ ի Փրկիչ:

6 Քու ձրի պարգեւներովդ
Սրտերնիս դուն զարդարէ,
Որ դառնանք մենք Քրիստոսի,
Հեռանանք միշտ մեղքերէ:

Յհն. Ա. 2

## 155 ՅՈԲԵԼԵԱՆ ՏԱՐԻՆ

1 Հնչեցուցէք փողերն,
Ամէն ազգ աշխարհիս
Մինչեւ երկրի ծայրերն
Լսեն այս աւետիս.
«Հասաւ մեծ Յոբելեան տարին,
Ով մեղաւորք, դարձէք Փրկչին:

2 Յիսուս մեծ Քահանան
Մեզ քաւութիւն բերաւ.
Տրտմեալք ուրախ ըլլան,
Պատիժն մեզմէ վերցաւ.
Հասաւ մեծ Յոբելեան տարին,
Ով մեղաւորք, դարձէք Փրկչին:

3 Մեղաց գերիներուն
Ահա ազատութիւն.



Տրտմեալք ուրախ ըլլան,
Պատիժն մեզմէ վերցաւ.
Հասաւ մեծ Յոբելեան տարին,
Ով մեղաւորք, դարձէք Փրկչին:

3 Մեղաց գերիներուն
Ահա ազատութիւն.
Գտնէք ի Տէրն սիրուն
Այս ապահովութիւն.
Հասաւ մեծ Յոբելեան տարին,
Ով մեղաւորք, դարձէք Փրկչին:

4 Աստուծոյ Գառնուկին
Տուէք պատիւ և փառք.
Քարոզեցէք Փրկչին
Անունն բոլոր աշխարհք.
Հասաւ մեծ Յոբելեան տարին,
Ով մեղաւորք, դարձէք Փրկչին:»

Ղուկ. Դ. 18, 19

## 156 ՄԵՂԱՒՈՐ, ԼՍԷ ԱՍ ՁԱՅՆԸ

1 Մեղաւոր, լսէ աս ձայնը.
Այժմ եկիր
Մըտադիր
Երկնաւոր կոչմանը:

2 Մինչդեռ կայ քեզի երկինքը
Օթեւան,

Լեր ժրաջան.
Քեզ կանչեց Տէրն ինքը։

3 Քու առջիդ պատրաստ խնճոյք կայ,
Մի սպասեր,
Առ և կեր.
Կեանք պիտի հոգւոյդ տայ։

Ես. ԾԵ. 6 Թարգ. Elias Riggs

## 157 ԲԱՑ ԴՈՒՌԸ

1 Բաց դուռ մը կայ որուն մէջէն
Խաչին փայլունութիւնը
Մեզ ցոյց կու տայ ամէն ատեն
Փրկչին մեծ գթութիւնը։
Ո՜հ, գութ անպատմելի, իրաւ
Այն դուռն ինծի՞ համար բացուաւ,
Ինծի՞, ինծի՞, ինծի՞ համար բացուաւ։

2 Այն դուռն է ամէնուն արձակ,
Որ փրկութեան ծարաւ են.
Մեծ և պզտիկ, հարուստ, աղքատ,
Մանել հրաւիրուած են։ Ո՜հ, Եւայլն։

3 Շուտով այն բաց դռնէն մանել
Ըլլայ մեր նպատակը.
Մեր խաչն առնել, յարատեւել,
Եւ ընդունալ պսակը։ Ո՜հ, Եւայլն։



4 Նորը Փրկչին հետ մեր ելլենք,
Ուր որ գացած է ինքը.
Եւ յաւիտեան տեսնենք, սիրենք,
Ու զԱյն գովենք երկինքը։ Ո՜հ, Եւայլն։

Յայտ. ԻԱ. 25 Թարգ. Elias Riggs

## 158 ԳԱԼ Կ՚ՈՒԶԵ՞Ս

1 Կը համբորդենք տունն երկնային,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
Ուր հոն երգենք սէրն մեր Փրկչին,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։
Բիւրաւորներ այն տունն հասան,
Եւ հոն անդուլ կ'ուրախանան,
Ու դեռ անթիւ համբորդք ալ կան.
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։

2 Կ'երթանք Գառնուկը տեսնելու,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
Իր սուրբ անունը գովելու,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
Կենաց պսակ պիտի դնենք,
Ու ոսկիէ քնար զարնենք,
Ցնծում ալ լեռին վայլենք.
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։

3 Ով դուն յոգնած, բեռնաւորուած,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.

Քեզի հանգիստ կայ պատրաստուած,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։
Քեզ ընդունիլ Տէրն կը բաղձայ·
Ով որ Անոր կը հաւատայ՝
Տէրոջը փառքն պիտի տեսնայ·
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։

4 Ասկէ աւելի ճամբայ չիկայ,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
Ապաշխարէ ու հաւատա,
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։
Փրկչիդ այս ձայնն մտիկ ըրէ.
«Թող տուր, եկուր իմ ետեւէս,
Ու փրկութիւնս պիտի տեսնես։»
Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս։

Թուոց. Ժ. 29 Թարգ. I. F. Pettibone

## 159 ԱՅՍՕՐ

1 Յիսուս կ'ըսէ այսօր,
«Ինծի եկուր։»
Ինչո՞ւ, ով մեղաւոր,
Չես մօտենար։

2 Կ'ըսէ, «Այսօր փնտռէ
Դուռն ապաւէն,
Չի մահն ու դատաստան
Միշտ քեզ մօտ են։»



3 Այսօր քեզ կը կանչէ,
Ով մեղաւոր,
Սիրով կը հրաւիրէ.
Լսէ անոր։

4 Հոգին եւս կը կանչէ,
Անոր լսէ.
Զինք մի արտմեցըներ,
Շնորհաց օրն է։

Եբր. Գ. 15.

## 160 ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻ

1 Տունդ եկ, տունդ եկ.
Սիրողդ է ցաւագին,
Ճանապարհըդ մթին,
Անձայն, միայնակ.
Որդի անառակ,
Տունդ եկ, ո՜հ, տունդ եկ։

2 Տունդ եկ, տունդ եկ,
Քու դարձիդ կը սպասենք,
Դուռին քով կը հսկենք,
Ուշացաւ ժամանակն.
Որդի անառակ,
Տունդ եկ, ո՜հ, տունդ եկ։

3 Տունդ եկ, տունդ եկ,
Ձգէ մեղք և ամօթ,

Եւ վիշտեր անծանօթ,
Եւ փորձիչն խորամանկ.
Որդի՛ անառակ,
Տունդ եկ, ո՛հ, տունդ եկ։

4 Տունդ եկ, տունդ եկ,
Հայրըդ քեզ կը գըթայ.
Անոր տունը հաց կայ.
Փութա, ով սովամահ
Որդի՛ անառակ,
Տունդ եկ, ո՛հ, տունդ եկ։

Ղուկ. ԺԵ. 17 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 161 ՄԵՂԱՒՈՐԻՆ ՅՈՐԴՈՐԱՆՔ

1 Քարեղէն սիրտ, արդ դղրդա,
Կակուղցիր խաչէն յաղթուած
Տես արիւնն հողին վըրայ,
Եւ մարմինը ջախջախուած.
Մեղաւոր, ա՛ս ի՞նչ ըրիր.
Տէրը դո՛ւն ըսպաննեցիր։

2 Տէրն մեղքերդ ըսպաննեցին,
Գամ զարկին իր մարմնին.
Փուշերով պըսակեցին,
Մըխեցին նիզակ կողքին.
Իր հոգին ան զոհ ըրաւ,
Քու մեղացդ համար մեռաւ,



3 Արդ կ՚ուզե՞ս այս մահն փրկչին
Քու հոգւոյդ ունայն ըլլալ.
Իր արիւնն կ՚ուզե՞ս կրկին
Ոտքերուդ կոխան ըլլալ.
«Ո՛չ, ով Տէր, մեղքես զատուիմ,
Ընդունէ կոտրած սիրտս իմ»։

Յովհ. ԺԹ. 37, Զաք. ԺԲ. 10

## 162 ԱՀԱ ԿԱՑՆԱԾ ԴՐԱՆԴ ԱՌՋԻՆ

1 Ահա կայնած դըրանդ առջին՝
Քեզ կը ձայնեմ պաղատագին.
Սիրտ մեղաւոր լըսէ չեշտերս,
Կըրնա՞մ գալ ներս, կըրնա՞մ գալ ներս։

Կրկներգ. Ահա կայնած դըրանդ առջին՝
Քեզ կը ձայնեմ պաղատագին.
Սիրտ մեղաւոր, լըսէ չեշտերս,
Կըրնա՞մ գալ ներս, կըրնա՞մ գալ ներս։

2 Փուշով պսակուած քեզի համար
Ըսպանեցի համբերատար.
Լըսէ, հոգի, Փրկչիդ ալերս՝
Կըրնա՞մ գալ ներս, կըրնա՞մ գալ ներս։

Կրկ. Ահա կայնած, և այլն։

3 Թող զուր չանցնի իմ աղերսանք,
Յիշէ իմ վիշտն ու ցաւն տանջանք,
Մահուան մըտեց քեզ համար սէրս,

Սիրտ մեղաւոր, կրնա՞մ գալ ներս։
Կրկ. Ահա կայնած, ի դուռ։

4 Քեզի բերի ներում, հրճուանք,
Խաղաղութիւն, սուրբ սէր, նոր կեանք․
Խեղճ սիրտ, ահա իմ նուէրներս․
Չես կ'ընդունի՞ս, կրնա՞մ գալ ներս։
Կրկ. Ահա կայնած, ի դուռ։

Յայտ. Գ. 20 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 163 ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻՆ Կ'ԱՆՑՆԻ

1 Ի՞նչ են այս մեծ բազմութիւններ,
Այս անձկութեամբ դիզուող խումբեր,
Այս ժողովները օրէ օր,
Եւ այս գրգռումը անսովոր։
«Յիսուս Նազովրեցին կ'անցնի,»
Մեղմ ձայներով շատերէն կ'ըսուի։

2 Յիսուս Նազովրեցին ո՞վ է,
Որ ժողովուրդն այդպէս շարժէ․
Կրնա՞յ անցնող օտարական
Իր կամքին պէս իշխել մարդկան։
Յիսուս Նազովրեցին կ'անցնի,
«Մեծ մարգարէ,» շատերէն կ'ըսուի։

3 Ան է որ մեր վիշտերն կրեց,
Եւ մեր ախտերը բժշկեց



Հիւանդ ու կաղ ու կոյր բերին,
Եւ անոր ոտքը ձգեցին․
Յիսուս Նազովրեցին կ'անցնէր,
Սրտաբեկեալն յուսով կը լեցուէր։

4 Մեր օրերուն մէջ ալ կու գայ,
Մեր դռներուն կը մօտենայ․
Այո, ու կը հաճի մտնել,
Եւ մեզի հետ ընթրիք ընել։
Յիսուս Նազովրեցին կ'անցնի,
Ո՞վ երկրպագութեամբ զինքը կ'ընդունի։

5 Ծանրաբեռնեալք, շուտով եկէք,
Ներում, հանգիստ, շնորհք գտէք,
Գտէք հոս բարիքներ անհուն
Եւ անվախճան ուրախութիւն։
Յիսուս Նազովրեցին կու գայ,
Փորձուածներուն ապաւէն մը կայ։

6 Բայց եթէ այս հրաւէրն մերժէք,
Այս սէրն անհուն արհամարհէք,
Ինքն ալ ցաւով ձեզ կը ձգէ,
Ձեր դառն աղօթքը կը մերժէ։
Յիսուս եկաւ ու մեկնեցաւ,
Ա՜լ փրկութեան ժամանակն անցաւ։

Մարկ. Ժ. 46-52 Թարգ. Elias Riggs

## 164 ՓՐԿՉԻՆ ԵԿԷՔ

1 Փրկչին եկէք, ո՛հ, մի ուշանաք,
Բաց է ճամբան, սուղ է ժամանակ.
Մեր մէջ կայնած՝ ձայնով քաղցրալուր
Կ'ըսէ, «Ինծի եկուր։»
Ո՛հ, ինչ քաղցր պիտի ըլլայ հրճուանք,
Երբ, Փրկիչ, քեզի հետ միանանք,
Եւ վայելենք դէմքիդ լոյսն անշէջ
Մեր երկնային տան մէջ։

2 Ան իր հրաւէրն կ'ուղղէ ամենուն,
Իր գութն անբաւ է և սէրն անհուն.
Ձայն մեր ընտրեալ Փրկչին անսանենք,
Մի վարանիք, եկէք։
Ո՛հ, ինչ քաղցր, և այլն։

3 Նա մեր մօտն է այսօր մանաւանդ,
Անսանք ձայնին, ըլլանք հլնազանդ.
Մինչ դեռ կրկնենք հրաւէրն սիրալուր,
«Տէրն կը կանչէ, եկուր։»
Ո՛հ, ինչ քաղցր, և այլն։

Եւ. Յհ. 6,7 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

## 165 ՈՒԽՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1 Ով մեղաւոր անարգեկած
Անթիւ կապանքներով,
Ցանցանքներու տակ ճնշուած
Անձն և կրկին գոլ



2 Եկուր սրտով խոնարհական.
Թէև քեզ արգիլէ
Մարմինն, աշխարհ կամ Սատանան,
Այս որոշումն ըրէ. —

3 «Պիտի դիմեմ Տէր Յիսուսին,
Իր քովը ես գիտեմ.
Մեղքերս լեռան կը նմանին,
Բայց հոն պիտի մտնեմ.

4 Շիտակ ան մարդասէր Փրկչին
Ճուտով պիտի երթամ,
Եւ օրհնած Թագաւորին
Ոտքին առջև իյնամ.

5 Թերևս ձայնիս մտիկ ընէ,
Թերևս շնորհաց հասնիմ.
Իր գաւազանն երկընցընէ,
Որ դպչելով ապրիմ։

6 Թերևս աղերսըս ընդունի.
Բայց եթէ մերժուիմ,
Ուրիշ տեղ յոյս չիկայ ինծի.
Պիտի հոն կորսուիմ։»

7 Այլ ոչ, ով մեղաւոր խոնարհ,
Հոն չես կրնար մեռնիլ.

Ո՛չ Սատանայ և ո՛չ աշխարհ
Կրնայ քեզի հանել՝

8 Հոն, հոն միայն ես ապահով,
Անոր խոստումներն ունիս.
Քեզ կ'ընդունի անհուն սիրով,
Ու յաւիտեան կ'ապրիս։

Յովհ. Զ. 37. Թարգ. Elias Riggs

## 166 ՄԵՂԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԽՐԱՏ ԵՒ ՅՈՐԴՈՐ

1 Ով մեղաւոր մարդ, խեղճ, թըշուառ,
Նայէ որ քեզ ճանչնաս.
Սուտ աշխարհիս փառքին համար
Դըրախտէն դուրս չը մընաս։

2 Փուճ բաներու դուն խելք մի՛ տար,
Պէտք է զանոնք մոռնաս.
Զի այս աշխարհս յանկարծաբար
Պիտի թողուս երթաս։

3 Յիսուս նստած աթոռ փառաց՝
Մեղքերդ պիտի քննէ.
Դուն մի յուսար որ ոսկի ու գանձ
Այն օրն քեզի օգնէ,

4 Քեզ պատրաստուած է փառք դըրախտին,
Դեռ չես անկէ զըրկուած.



Քեզ կը կանչէ ձայն Յիսուսին.
Լըսէ որ ետք չի լաս։

5 Այն սուրբ ձայնին հընազանդէ,
Վաղուան զայն մի ձըգեր.
Այս մեծ շընորքն ու ժամն յարգէ,
Գուցէ ա՛լ չես գտներ։

Մատթ. ԺԶ. 26

## 167 «ԵԿԷՔ ԻՆԾԻ, ԵՒ ԵՍ ՁԵԶ ՊԻՏԻ ՀԱՆԳՉԵՑՆԵՄ»

1 Ահա Աստուած գըթած
Քեզի հրաւէր կու տայ.
Շնորհաց գահին վրայ է նստած,
Խեղճ մեղաւոր, գնա։

2 Դիմէ անոր անվախ,
Խնդրէ որ հաշտուիս,
Անսուտ է ինք, և անյապաղ
Ձըրի պիտի ներուիս։

3 Իր Սուրբ Հոգին խնդրէ,
Որ նոր սիրտ տայ քեզի,
Երկնից համար քեզ պատրաստէ,
Ու միշտ մէջդ բընակի։

4 Հիմա պատրաստ է տալ
Այս պատուական պարգեւն,

Վերջին ալ հանգիստը կատարեալ
Իր աթոռին առջեւն։

Մատթ. ԺԱ. 28

## 168 ՄԵՂԱՒՈՐԻՆ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

1 Ո՛վ զարմանալի սէր աստուածային,
Որ ինք մեր աշխարհ ղրկեց իր Որդին.
Եկաւ, մեզ փրկեց մահէն, դժոխքէն,
Ու մեզ մօտեցուց մեր Ստեղծողին։

2 Բոլոր մեր մեղքեր վրան ինք առաւ,
Խաչին վրայ Տէրն մեր տեղը մեռաւ.
Իր ամենասուրբ արիւնը և կեանք
Ըզմեզ փրկելու անհուն գին տուաւ,

3 Տեսէք մեր Փրկիչն, որ մահը յաղթած՝
Անճառ մեծ փառքով երկինք է ելած.
Մեզի համար հոն կը բարեխօսէ,
Իր Հօրն Աստուծոյ աջ կողմը նստած։

4 Տէրն դատաստանի վերջէն պիտ' իջնէ,
Ահեղ փողերով պիտի մեզ կանչէ.
Իսկոյն ալ բացուի ամէն գերեզման,
Ու ննջեցեալներն առջեւը բերէ։

5 Արդար Դատաւոր, ինծի շնորհք տուր,
Անկէ ապահով իմ անձըս անցուր,
Ու քու արիւնովդ մեղքէն մաքրուած՝
Սուրբ հրեշտակաց մէջ հոգիս բազմեցուր։

Յովհ. Գ. 16



## 169 Ո՞ՒՐ Է ՈՐԴԵԱԿՍ ՀԻՄԱ

1 Ո՛հ, ո՞ւր մնաց որդեակս այսօր
Որդեակն իմ սիրական,
Ինքն էր կենացըս լոյսն բոլոր,
Սիրոյս ալ առարկան։
Ո՛հ, ո՞ւր է որդեակս այսօր,
Ո՛հ, ո՞ւր է որդեակս մոլոր,
Սիրտս է կոտրած, զինք մոռնալ չեմ կրնար,
Ո՛հ, ո՞ւր է որդեակս այսօր։

2 Երբ ծունըր գար իր մօրը քով,
Ցօղի պէս էր մաքուր.
Սիրուն էր յոյժ և քաղցր դէմքով,
Այնքան հեզ էր սիրտն իւր,
Ո՛հ, ո՞ւր է, և այլն։

3 Ո՛հ, ինձ նորէն տըրուէր, որդեակ,
Տեսնել քու դէմքդ սիրուն,
Որուն ժըպիտը անուշակ
Կ'ըներ զուարթ մեր տուն։
Ո՛հ, ո՞ւր է, և այլն։

4 Ո՛հ, փնտռեցէք հոգւոյս համար,
Իր մօրը նայելին.
Զի սիրտս կ'անձկայ ըսել անոր,
«Կը սիրեմ քեզ տակաւին։»
Ո՛հ, ո՞ւր է, և այլն։

Ղուկ. ԺԵ. 11-32

Թարգ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## 170 ԱՍՏՈՒԾՄՈՎ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ

1 Թափառական հոգիս,
Դադրէ՛. այս աշխարհիս
Մէկ բեւեռէն մինչեւ ի միւսն
Հանգիստ չըկայ քեզի։

2 Տես Աստուծոյ տապան,
Նայէ այն բաց դըրան.
Շուտով մըտի՛ր, հոն բընակէ,
Ունայն յոյսերդ ձըգէ։

3 Հանգիստ պիտի ըլլաս,
Եւ շատ ուրախանաս.
Ամէն երջանկութեամբ լիցուիս,
Տէրոջմով փրկուիս։

4 Ով անհանգիստ հոգիս,
Դադրէ՛. այս աշխարհիս
Մէկ բեւեռէն մինչեւ ի միւսն
Հանգիստ չը կայ քեզի։

Եբր. Դ. 9-11

## 171 ՀՐԱՒԷՐ ԱՌ ՄԵՂԱՒՈՐՍ

1 Հոգին հոգւոյս կ'ըսէ,
«Ով մեղաւոր, եկուր.»



Եկեղեցին ալ կը կըրկնէ
Ամէն մէկուն, «Եկուր։»

2 Ամէն լըսողն ըսէ
Ամէն մարդու, «Եկուր.
Եթէ արդարութիւն կ'ուզես,
Միակ աղբիւրն եկուր։»

3 Այո, ով ծարաւի,
Ուրախութեամբ եկուր.
Կենաց ջուրն է առատ, ձրի.
Յիսուս կ'ըսէ, «Եկուր։»

Յայտ. ԻԲ. 17

## 172 ԿԷՍ ՀԱՄՈԶՈՒԱԾ

1 Կէս համոզուած ես հաւատալու,
Կէս համոզուած Քրիստոս ընդունելու,
Միւսքըդ ըսել կու գայ,
«Հոգի, առ այժմ գընա,
Երբ ժամանակ գըտնեմ,
Քեզ կը կանչեմ։»

2 Կէս համոզուած դու, մի ուշանար,
Մեծ հրաւէրին անհոգ մի ըլլար.
Կանչողն փրկիչըդ է,
Սիրով քեզի կ'ըսէ,
«Հանգիստ կու տամ քեզի,
Եկուր ինծի։»

3 Կէս համոզուած դու, հունձքը կ'անցնի.
Շուտ քու վճիռդ պիտի կնքուի.
Չըլլայ որ հոս մնաս
Ու ետքը դառն ողբաս.
«Ո՜հ, ո՜հ, կէս համոզուած,
Բայց կորսուած։»

Գործ. ԻԶ. 28, ԻԴ. 25 Թարգ. Elias Riggs

## 173 ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՒԷՐԸ

1 Եկէք ինծի, բոլոր յոգնած եւ բեռնա | ւորած- |
ներ, || եւ ես պիտի հանգ | չեցնեմ ըզ | ձեզ։ ||

2 Առէք իմ լուծս ձեր վրայ, եւ սորվեցէք ինծմէ որ
հեզ եմ եւ խո | նարհ սըր | տով, || եւ ձեր ան-
ձերուն հան | գիստ պիտի գըտ | նէք։ ||

3 Քանզի իմ լուծս քաղցր է, եւ իմ | բեռս՝ թե- |
թեւ։ || Քանզի իմ լուծս քաղցր է, || եւ իմ բեռս՝
թե | թեւ։ ||

4 Ու Հոգին եւ հարսը կ'ըսեն, Եկ. եւ ով որ կը լսէ
թող | ըսէ, | Եկ. || եւ ով որ ծարաւի է՝ թող
գայ, եւ ով որ կ'ուզէ՝ կենաց | ջուրն առնէ
ձը—րի։ || Ա | մէն, | Ա | մէն։ ||

Մատթ. ԺԱ. 28-30. Յայտ. ԻԲ. 17



## 174 ԱՌ ՇՆՈՐՀԱՑ ԱԹՈՌՆ

1 Եկ, տրտմալից դու, երբ ցաւ քեզ պատած է,
Եկ շնորհաց աթոռին ջերմ, խոնարհ.
Հոս բեր քու սիրտդ, վիշտովդ երբ խոցուած է.
Դեղ կը գտնէ հոս ամէն ցաւ դժուար։

2 Հոս մոլորեալն կը գտնէ կենաց լոյսը,
Հոս ալ տրտմեալն ցնծում անըսպառ.
Մխիթարիչն կու տայ հոս խրախոյսը.
Դեղ կը գտնէ հոս ամէն ցաւ դժուար։

3 Հոս կենսատու երկնից ջուրը բղխեալ է,
Ուր կը փայլէ աթոռէն անդադար.
Քեզ է կոչումը, պայմանն հաւատալ է.
Դեղ կը գտնէ հոս ամէն ցաւ դժուար։

Եբր. Դ. 16 Թարգ. ՄԿՐՏԻՉ ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 175 ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1 Քանի որ մահը կ'ուշանայ,
Առողջութիւն եւ յոյս ալ կայ.
Բայց, ո՜հ, շուտով խորունկ գիշեր
Պիտի կըտրէ ամէն յոյսեր։

2 Այսօր Աստուած կը հրաւիրէ.
Կենաց խօսքը ինչ քաղցր է.

Ով մեղաւոր, փութա՛, եկու,
Պատրաստ է Տէրն քեզ ներելու։

3 Արդ թեւերն ժամանակին
Քեզ գերեզմանը կը տանին.
Եւ այն տանն ուր յոյս չը կայ՝
Հոգիդ պիտի ներկայանայ։

4 Այն աշխարհ, անյայս երկիր՝
Ողորմութեան յոյս չը ծագիր.
Աստուած չը կայ աղօթք լսող.
Յիսուս չըկայ հոգիդ փրկող։

Բ Կոր. Զ. 2

## 176 ԱՂՕԹՔ ՈՐ ՔՐԻՍՏՈՍ ՃԱՆՉՑՈՒԻ

1 Ով փրկարար, Յիսուս, իմ Տէր,
Որչափ կան դեռ սրտեր դժուար,
Որ շուրջս պատող բիւրաւորներ՝
Ըստ արժանւոյն քեզ չեն ճանչնար։

2 Քեզ՝ մէկ հատիկդ ի բիւրս բիւրոց,
Անունդ՝ անուանց մէջ սիրելի,
Պաշտեն, սիրեն դասք զուարթնոց,
Իսկ սիրտ մարդկան քեզ դէմ գոցուի։

3 Մարդիկ միայն քեզ կը տեսնան
Անարգուած և վիրաւոր.
Քու դէմք աւրած, ցաւդ անհուն,
Արիւնաներկ մարմինդ բոլոր։

4 Ով Թագաւոր փառաց, շնորհաց,
Տէր իմ, Փրկիչ իմ սիրական,
Քաղցր դէմքդ ծածկող այդ քողը բաց,
Գեղեցկութիւնդ մարդիկ տեսնան.

Եա. ԾԳ 1-3 10-12  Հեղինակ ՏԻԿ. ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 177 ՄԷԿ ԺԱՄ ՄԸ ԿԱՅ, ՄԷԿ ԿԷՏ ՄԸ ԿԱՅ

1 Մէկ ժամ մը կայ, մէկ կէտ մը կայ,
Թէպէտ մեզ անծանօթ,
Ամէն մարդուն վըճիռն կու տայ,
Կա՛մ փառք և կա՛մ ամօթ,

2 Գիծ մը սահմանեալ,
Անյայտ մեր աչքերէն,
Տէրոջը գութը կը զատէ
Անոր բարկութիւնէն.

3 Բայց մարդը այն գիծէն անցած՝
Դուրսը անհոգ մընայ,
Մինչև անյոյս և կորուսած՝
Դըժոխքի մէջ արթըննայ։

4 Տէրն ո՛րչափ պիտի համբերէ
Անոնց որ մեղք գործեն.

Ե՞րբ բարկութեամբ պիտի ըսէ,
«Հանգիստս չը մտնեն»

5 Ո՞ւր է այն ահաւոր սահման.
Յայն ե՞րբ կը վախճանի.
Ով մեղաւորք, այս պատասխան
Վերէն կու գայ ձեզի.

6 «Այսօր ձեր Աստուծոյն ձայնին
Թէ՛ որ պիտի լսէք,
Ձեր սիրտը ապստամբութեամբ
Ա՛լ մի խստացնէք։»

Եբր. Դ. 3 — Թարգ. Elias Riggs

## 178 ՅԻՍՈՒՍԻ ԵԿ ԱՅՍՕՐ

1 Յիսուսի եկ այսօր,

2 Կը փրկէ քեզ այսօր,

3 Հաւատա դուն այսօր։

4 Ինք կարող է այսօր,

5 Ինք պատրաստ է այսօր,

6 Կ՚ընդունի քեզ այսօր,

7 Արդ փնտռէ զինք այսօր,

8 Ո՜հ, կ՚անչէ զինք այսօր,



9 «Ողորմէ ինձ» այսօր,

10 Կը լսէ քեզ այսօր,

11 Կը ներէ քեզ այսօր,

12 Կը մաքրէ քեզ այսօր։

12 Կը սիրէ քեզ այսօր,

14 Մի մերժեր զինք այսօր,

Եբր. Գ. 13, 15 — Թարգ. Elias Riggs

## 179 ՏԷՐՈՋԸ ՁԱՅՆԸ

1 Տէրոջը ձայնը լսեցի.
Ըսաւ, «Ինծի եկուր.
Գլուխդ, ով յոգնած հոգի,
Կուրծքիս վրայ հանգչեցուր։»

2 Ինչպէս էի անոր եկայ.
Կոյր՝ մերկ՝ յոգնած՝ տրտում.
Հոս ապաստանարան գտայ.
Ան ինծի տուաւ խնդում։

3 Տէրոջը ձայնը լսեցի.
«Ձրիաբար խմէ
Կենաց ջուրէն,» ըսաւ ինծի,
«Ու խմելով ապրէ։»

4 Եկայ, գաւաթըս լեցուցի
Այն կենսատու ջուրով.
Անով ծարաւս անցուցի,
Հիմա կ՚ապրիմ անով։

5 Տէրոջը ձայնը լսեցի.
«Ես աշխարհի լոյսն եմ.
Եկուր, գիշերդ պիտի անցնի,
Ցորեկդ փայլեցընեմ»։

6 Եկայ, և ան եղաւ ինծի
Արև, լուսոյ շրջան.
Եւ այն լոյսով քալեմ պիտի
Մինչև ճամբուս վախճան։

Մատթ. ԺԱ. 28 Թարգ. Elias Riggs

## 180 ԶՂՋԱՑԵԱԼ ՄԵՂԱՒՈՐԻՆ ԱՂՕԹՔԸ

1 Ով Տէր գթած, որ կը լսես
Աղօթքը խեղճերուն,
Ամէն արցունք ալ կը սրբես
Աչքէն տրտմածներուն։

2 Տես աթոռիդ առջին ինկած
Ծառայ, խեղճ մեղաւոր.
Ըզքեզ փնտռել չե՞ս հրամայած,
Ինծի չըսի՞ր «Եկուր»։



3 Միթէ մեղքիս վախը կրնա՞յ
Զիս քու քովէդ վանել.
Ինծի միայն յոյս կը մնայ
Առջիդ շնորհք գտնել։

4 Թող քու անհուն ողորմութիւն
Իմ յոյսըս հաստատէ.
Թող բըժըշկող ձայնդ՝ ցնծութիւն
Սըրտիս մէջ տարածէ։

Ղուկ. ԺԸ. 13 Թարգ. C. C. Tracy

## 181 ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻ

1 Եղո՜ւկ ինծի, ի՜նչ էր ըրի.
Իմ բարերար Հայրս թողուցի,
Եւ չանսալով բարի խրատին
Մեղայ, մեղայ յամենայնի։

2 Դառն ցաւերով և վիշտերով
Արդարապէս կը պատժուիմ,
Կամաւ իմ Հօրս տունէն ելայ
Որ սովամահ հոս կորնչիմ,

3 Ինձ փրկութեան ա՛լ յոյս չկա՜յ.
Դառնամ առ Հայրս, գոչեմ «Մեղայ,
Չեմ արժանի որդի ըլլալ,
Զիս ընդունէ իբրև ծառայ»։

4 Այո՛, մեղայ, Աստուած իմ Հայր,
Քու առջդ կ'կենամ ես կորսուած,
Անթիւ մեղքերըս ինձ ներէ,
Եւ ընդունէ զիս, Հայր գթած։

Ղուկ. ԺԵ. 17-19 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 182 ՄԵՂԱՒՈՐԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԴԻՄԵԼԸ

1 Եղո՛ւկ եմ ես, ով Տէր, աղքատ,
Մերկ եմ ու կոյր և յուսահատ,
Քեզմէ ի զատ ո՞ւր երթամ,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

2 Իմ մէջս չի կայ արդարութիւն,
Ցոյս, փրկութիւն կամ քաւութիւն.
Ինչպէս որ եմ, քու առջդ կ'կենամ,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

3 Դուն քու արիւնըդ թափեցիր,
Եւ խեղճ մեղաւորիս ըսիր.
«Քու փրկութիւնըդ ես կ'ըլլամ.»
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

4 Հոգին և հարսն՝ «Եկուր,» կ'ըսեն,
«Ձրի խմէ կենաց ջուրէն.»
Ես կը լսեմ ու կ'արտորամ,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։



5 Դուն ալ սիրով զիս ընդունէ,
Բոլոր մեղքերըս, Տէր, ներէ.
Լուա զիս որ մաքուր ըլլամ,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

Յովհ. Ա. 29 Թարգ. Elias Riggs

## 183 ՅՈՐԴՈՐ ԱՌ ՄԵՂԱՒՈՐՍ

1 Քեզ ի՞նչ եղաւ. մի՛ քընանար,
Մի՛, Յովնանի պէս մի՛ ըլլար.
Ել, արթընցիր, ով իմ հոգիս,
Վըտանգի մէջ կը տեսնեմ զիս։

2 Ահե՛ղ վըտանգ, մահը կու գայ,
Արդարութեամբ կը մօտենայ,
Որ խեղճ մարմինըդ հոս ձգէ,
Քեզ ատեանին առջև հանէ։

3 Ահե՛ղ ատեան, սուրբ և արդար,
Ողորմութիւն չիք, չես դառնար.
Ամենագէտ, ատող չարաց,
Բայց ի դատել, ՈՐ ԷՆ Աստուած,

4 Ահե՛ղ Աստուած, «Մաշող կրակ,»
Քննող սրտից, որոնց մի՛ակ
Ինքն է տեղեակ, փրկել չուզեր.
Վըճիռ կու տայ, ալ ետ չառներ։

5 Ուրեմն եկէ՛ր, մի՛ յապաղեր,
Փութով այն նեղ դրանէն մտիր.
Բնաւ մի՛ շեղիր, յառաջ վազէ,
Եւ անդադար շընորհք խնդրէ։

## 184 ԼԱԼԸ ՉԻ ՓՐԿԵՐ ԶԻՍ

1 Լալը չփրկեր զիս.
Անդադար դառն արցունքներս
Չեն կրնար սրբել մեղքերս,
Ոչ հեռացնել վախերս.
Լալը չփրկեր զիս։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

2 Գործը չփրկեր զիս,
Անձնուրաց երախտիքներ,
Ծիգն ու ջանք ալ մարդասէր,
Բնաւ հոգիս չեն նորոգեր.
Գործը չը փրկեր զիս։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։



3 Ոչ ալ ըսպասելը.
Ըսպասելըն է մեռնիլ.
Ինծ չօգներ անյոյս պառկիլ,
Արարչիս դէմ գանգատիլ,
Ոչ ալ ըսպասելը։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

4 Կը փրկէ հաւատքը.
Աստուծոյ Որդւոյն նայիմ,
Եւ իր բազուկներն նետուիմ,
Ա՛լ անոր ապաւինիմ.
Կը փրկէ հաւատքը։
Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
Ինծ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս։

Եփես. Բ. 8, 9 Թարգ. Elias Riggs

## 185 ՈՒՇ ՄՆԱԼՈՒՆ ՎՏԱՆԳԸ

1 Ինչո՞ւ դուք ըսէք թէ Դեռ կանուխ է
Երկնից ու մահուան վերայօք խորհիլ.
Ծաղկի մը շուտով թառամիլն հընար է,
Ինծի ալ այսօր հընար է մեռնիլ։

2 Թէ որ ապըստամբ հոգիս անարգէ
Տէրոջը շընորհքն անհուն և բարի,
Վերջն ալ Սուրբն Աստուած զիս պիտի մերժէ,
Երկնից փառաց մէջ պիտի չընդունի։

3 Երբոր բարկանայ, ալ ես ի՞նչ ընեմ,
Ու երբ սիրելու տեղ Տէրն զիս ատէ,
Որ իր շընորհքներն հիմա կ'անարգեմ,
Ու սիրտս չարութիւն և մեղք կը սիրէ։

4 Ո՛հ, ի՜նչ սոսկալի է իր ձեռքն իյնալ,
Իր ուժը անհուն ի՜նչպէս համբերեմ.
Երբ ինք ըսկըսի ինծի բարկանալ,
Անգամ մը զարնէ, գըժոխքը կ'երթամ։

5 Այն ժամը կանչել պարապ է բընաւ,
Նեղուիմ, թողութիւն ու շնորհքը խնդրել.
Ապաշխարութեան ատենը անցաւ,
Ու յոյս չը մընաց իմ Տէրըս տեսնել։
Ես. ԾԵ. 6, 7

## 186 ՅԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱՑ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ

1 Կարօտ եմ, Տէր, մեծ զօրութեան,
Որ սրբութեամբ քեզ ծառայեմ.
Քանզի սիրտս է բոյն ցանկութեան,
Շատ մեղքերու բեռան տակ եմ։



2 Անշուշտ պիտի ես կորսուիմ
Այս խղճալի վիճակիս մէջ,
Թէ որ շուտով չը նորոգուիմ,
Ու մաքրուիմ շնորհքովըդ մեծ.

3 Գիտեմ որ ես եմ անարժան
Աստուածային քու շընորհաց.
Զի անարգած եմ, շատ անգամ,
Քու Սուրբ Հոգիդ՝ ինծ պարգեւուած.

4 Ուխտով կրկին քեզ կ'աղաչեմ,
Տէր, Սուրբ Հոգիդ ինծ պարգեւէ.
Թող համաձայն անոր քալեմ,
Ըզգոյշ հեռու ամէն մեղքէ.
Եբր. Բ. 17, 18 Հեղինակ ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՋՃԵԱՆ

## 187 ՄՈԼԱՐ ՈՉԽԱՐ

1 Մոլար ոչխար էի.
Ու հօտն չէի սիրեր.
Չէի անոր Հովուին ձայնին,
Ուղղուիլ չէի ուզեր։
Ես անառակ էի,
Իմ տունս չէի սիրեր.
Հօրմէս հեռու կը փախչէի,
Մըտիկ չէի ըներ։

2 Ձոր անապատ և մեծ,
Անտառ խիտ, անհագին.
Փնտռեց Հովիւը իր ոչխարն,
Ու Հայրը իր Որդին,
Մահուան մօտ զիս գտան,
Սաստիկ վիրաւորուած.
Զիս փաթթեցին սիրոյ կապով,
Ու վեր առին՝ մարած։

3 Յիսուս է իմ Հովիւս,
Ինքն է որ զիս սիրեց.
Որ զիս լուաց իր արիւնով,
Հոգիս ալ դարմանեց։
Մոլար ու կորսուած,
Ինկած, ան զիս գտաւ.
Զիս ան առաւ ուսին վրայ,
Եւ իր փարախն բերաւ։

4 Ա՛լ չեմ մոլար ոչխար,
Փարախըս կը սիրեմ.
Հովուիս ձայնն ալ ինծի քաղցր է,
Ուղղուիլ յօժար եմ ես։
Այլ ես չեմ անառակ,
Իմ տունըս կը սիրեմ.
Քաղցր է ինծի իմ Հօրըս ձայնն,
Իր մօտ կենալ կ'ուզեմ։

Ղուկ. ԺԵ. 4-7 Թարգ. Elias Riggs



## 188 ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Ով Տէր լսէ ձայնն աղօթքիս,
Եւ դիր ականջ աղաչանքիս.
Եւ ծառայիդ տուր պատասխան,
Ով Տէր Աստուած արդարութեան։

2 Քու ծառայիդ հետ մի մտներ
Դատաստանի, Տէր մարդասէր.
Քանզի բնաւ մարդ մ'ալ չը կայ,
Որ քու առջիդ արդարանայ։

3 Իմ ձեռքս քեզի կ'երկնցընեմ,
Զի քեզ միայն իմ Տէրս գիտեմ.
Չորցած երկրի պէս՝ անձս քեզի
Մեծ փափաքով կը ծարաւի։

4 Ինծի սուրբ կամքդ սորվեցուր,
Կատարելու շնորհքդ ալ տուր.
Զի անձս քեզի եմ վերցուցած,
Դուն ես ինծի միակ Աստուած։

5 Բարի Հոգիդ առաջնորդէ,
Ուղիղ երկիրդ զիս մտցունէ.
Զիս ապրեցուր անուանդ համար,
Չարէն փրկէ, Աստուած արդար։

Սաղ. ՃԽԳ.

## 189 ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԻՆՉՈ՞Ւ ՄԵՌՆԻՍ

1 Ով անձըս, շուտ ապաշխարէ,
Ատկէ քեզի վարձք մահ ունիս,
Քեզմէ մեղաց լուծը ձըգէ.
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս։

2 Հէզ Յիսուսի հիմա դիմէ,
Իսկոյն կուլէ յանցերդ քեզմէ.
Յիսուսի պէս փրկիչ ունիս,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս։

3 Դուն յարաժամ պատրաստ կեցիր,
Եւ քու պարտքերըդ լաւ ճանչցիր,
Բարիք գործէ, միջոց ունիս,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս։

4 Ով Սուրբ Հոգի, դուն ինձ օգնէ,
Մահուան համար զիս պատրաստէ.
Սրբացուցիչ որ քեզ ունիմ,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ։

5 Ով Հայր, Որդի և Սուրբ Հոգի,
Երրորդութիւն ըսքանչելի,
Ես որ կընիքդ ճակտաս ունիմ,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ։

Եղեկ. ԼԳ. 11 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ



## 190 ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

1 Գիտելու մէկ կէտ մը կայ,
Որ մըտքիս տանջանք կու տայ.
Արդեօք Տէրը կը սիրե՞մ,
Ես իրե՞նն եմ, կամ թէ չեմ։

2 Թէ սիրեմ, այսպէս կ'ըլլա՞մ
Ցրտացած և անկենդան.
Իր անուան ծանօթ չեղողք
Վատ ինծմէ կ'ըլլա՞ն արդեօք։

3 Ընթերցմունք, քարոզ, աղօթք,
Ինչ ընեմ լի է մեղօք.
Դուք, որոնց Տէրն սիրողներ,
Ա՞ս է, ո՛հ, վիճակըն ձեր։

4 Տէր, ցրուէ իմ տարակոյս,
Դու որբոցդ արև ու լոյս,
Լոյս ծագէ գործիդ շնորհաց,
Եթէ ան է բոկրուած։

5 Քեզ որչափ սիրած ալ եմ,
Տուր որ աւելի սիրեմ.
Ո՛հ, սիրած չեմ նախ թէ որ,
Ինձ օգնէ, սկըսիմ այսօր։

Յովհ. ԻԱ. 16 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 191 ԽՈՐՈՒԹԻ՛Ն ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

1 Խորութի՜ւն ողորմութեան.
Միթէ Տէրն ինծի ներման
Չար մէկուն կրնա՞յ ներել,
Գլուխն մեղաւորաց փրկել։

2 Աստուծոյ Որդին մերժած,
Խաչն ալ ոտնակոխ ըրած,
Իր շնորհքներն անարգեցի,
Զինքն բազում տրտմեցուցի։

3 Բայց Յիսուս է Միջնորդ իմ,
Իր արեանն ապաւինիմ.
Տէրն է սէր, գիտեմ, կը զգամ,
Ալ ինչո՞ւ վախկոտ ըլլամ։

4 Համարձակ անոր երթամ,
Աթոռին առջեւն իյնամ,
Մեղքերուս ներումն առնեմ,
Եւ առատ շնորհք գտնեմ։

5 Տէր, օգնէ ինձ որ զղջամ,
Մեղքերուս վըրայ ողբամ,
Որ մոլոր ճամբաս ձըգեմ,
Քեզ դառնամ ու ծառայեմ։

Ովս. ԺԱ. 8 Թարգ. C. H. Wheeler



## 192 ՄԻ ԱՆՑՆԻՐ ԻՆՁՄԷ ՓՐԿԻՉՍ

1 Մի անցնիր ինձմէ, Փրկիչըս,
Աղաղակս լըսէ.
Ընդունէ խոնարհ աղերսըս,
Մի անցնիր ինձմէ։
Ով Փրկիչըս,
Աղաղակս լըսէ,
Ընդունէ խոնարհ աղերսըս,
Մի անցնիր ինձմէ։

2 Ո՛հ, իմ անարժանութեանըս
Թողութիւն շնորհէ,
Եւ իմ անհաւատութեանըս
Դուն, ով Տէր, օգնէ.
Ով Փրկիչըս, և այլն.

3 Քու արժանաւորութեանդ
Ես կ'ապաւինիմ.
Զիս փրկէ որ գըթութեանդ
Մեծ շնորհքին ապրիմ.
Ով Փրկիչըս, և այլն.

4 Մըխիթարութեանս աղբիւրը,
Բաց ի քէն, ով Տէր,
Թէ՛ երկնից մէջ թէ՛ երկրիս վրայ
Մէկը չեմ ուզեր։
Ով Փրկիչըս, և այլն.

Մտթ. Ի. 30

## 193 ՔԵԶԻ ԿԱՐՕՏ ԵՄ

1 Քեզի կարօտ եմ, Տէր,
Ո՛հ, ամէն ժամ.
Անոյշ է ձայնդ ինծի,
Քեզի կու գամ։
Կարօտ եմ, ո՛հ, կարօտ եմ,
Միշտ քեզի կարօտ եմ,
Օրհնէ զիս, ով Փրկիչ իմ,
Քեզի կու գամ։

2 Քեզի կարօտ եմ, Տէր,
Եղիր ներկայ.
Երբ մօտ ըլլաս, փորձանքն
Կը թեթեւնայ.
Կարօտ եմ, և այլն։

3 Քեզի կարօտ եմ, Տէր,
Շուտով եկուր,
Թէ ոչ՝ իմ կեանքս բոլոր
Կ'անցնի ի զուր.
Կարօտ եմ, և այլն։

4 Քեզի կարօտ եմ, Տէր,
Քու կամքդ յայտնէ,
Եւ քու մեծ խոստումներդ
Ինծի կատարէ.
Կարօտ եմ, և այլն։



5 Քեզի կարօտ եմ, Տէր,
Տէր բարերար.
Զիս մի թողուր, Յիսուս,
Որբ և անճար.
Կարօտ եմ, և այլն։

Եբր. Դ. 15, 16 Թարգ. C.C. Tracy

## 194 ՅՈՅՍ ԱՆՅՈՅՍԻՆ

1 Անյոյսին յոյս, ով Յիսուս,
Հաստատուն խարիսխ հոգւոյս.
Սիրտս, հոգիս դուն նորոգէ,
Մեղքերէս զիս ազատէ։

2 Աստուծմէ օտարացած՝
Մեղքերէս եմ տանջուած,
Ազատում ես կը փնտռեմ.
Ո՞ւր պիտի Փրկիչ գտնեմ։

3 Շատ օրեր քեզմէ հեռի՝
Զիս փրկել ես ջանացի.
Արդ բոլոր յոյսերս հատած՝
Քեզ կու գամ, ո՛վ «Գառն Մորթուած»։

4 Քեզ գտնել է, Տէր, իմ ջանք,
Առ քեզ է իմ հառաչանք.
Քու վէրքերդ մեղքիս դարման,
Գին կենացս՝ շիթ քու արեան։

5 Տէր Յիսուս, յոյս անյոյսին,
Ինձ դարձուր նայուած քուկին.
Այս պահուս մինչ կ'աղօթեմ՝
Ո՜հ թէ քեզ հոգւովս գտնեմ։

Ա Տիմ. Ա. 1, Կող. Ա. 27

## 195 «ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍՆ ԵՄ»

1 Այո, լոյս ես, Տէր սիրելի,
Քեզ չը գտած՝ ես կոյր էի.
Լսեր էի թէ սիրտս է չար,
Վա՜յ եղկելույս, չէի ըզգար։

2 Լսեր էի թէ մեղք ունիմ,
Եւ թէ դժոխք բաժինս է իմ.
Հոն կ'երթայի ես չարաչար,
Վա՜յ եղկելույս, չէի ըզգար։

3 Լսեր էի թէ սէր ես դու,
Կեանք և հանգիստ կու տաս մարդու,
Եւ թէ ըղջարն կ'ընես արդար,
Վա՜յ եղկելույս, չէի ըզգար։

4 Բայց երբ ըզքեղ բաժինս ըրի,
Իմ սիրտս ու սէրս քեզի տուի,
Հաւատացի, տեսայ, կը զգամ.
Օգնէ ինձ որ ա՛լ չը կուրնամ։



5 Ինծի նման շատեր ալ կան,
Որ տակաւին կոյր կը մնան.
Բաց աչքերնին որ քեզ տեսնեն,
Եւ նեղ դռնէն շուտ ներս մտնեն։

Յովհ. Ը. 12 — Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 196 ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՄԵՌԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ

1 Եթէ աշխարհն է գեղեցիկ,
Ու իր փառքերն են շողշողուն,
Հարստութիւն, պատիւ, բարիք
Կը գրաւեն ըզսիրտ մարդուն,

2 Զուարճութիւնք հեշտացուցիչ
Են ցանկալի համայն մարմնոյն,
Անարգ սէր իբր գոհացուցիչ
Թէ կը խաբեն ըզսիրտ մարդոյն,

3 Թող ինձ ըլլայ մեռած ամէն.
Ոչ գեղեցիկ, ոչ շողշողուն
Բընաւ ինծի չը ներգործեն,
Զի են խաբող ունայնութիւն։

4 Աշխարհն ինծի է խաչ եղած,
Ես աշխարհի՝ բոլորովին.
Ով Սուրբ Հոգի, օգնէ 'բարձանց,
Կենդանացուր զիս երկինքին։

5 Իմ փառքս ըլլայ խաչն Յիսուսի,
Զուարճութիւնս՝ անոր խօսքերն.
Թող ես ապրիմ միշտ կենդանի՝
Կատարելու իր պատուէրներն.

Գաղ. Զ. 14 Հեղինակ ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 197 ՔՐԻՍՏՈՍ ԻՄՍ Է

1 Տէրը դուռս կը զարնէր՝
Յայտնելով իր սէրն անհուն,
Ինծ իր ձայնը կը յիշէր,
Եւ իր քաւչական արիւնն.
«Ես մեղքերդ ներել կ'ուզեմ,
Ով մեռնող հոգի, մտնե՞մ»

2 Երբ այս շնորհալի խօսքերն
Իմ թշուառ հոգիս լսեց.
Իր սիրոյն ուժովը Տէրն
Կարծր սիրտս շուտ կոտրեց.
Յայնժամ դուռը լայն բացի,
«Տէր Յիսուս, մտիր,» ըսի.

3 Խօսքն հոգիս բերնէս ելած՝
Ներս մտաւ. ես ալ իսկոյն
Ոտքերուն առջեւն ինկած՝
Խնդրեցի ողորմութիւն.
Իմ անձս, գերի նման,
Սէր եւ վիշտ մէկտեղ անցան.



4 Քանի որ անոր ոտքերն
Արցունքովս կը լուայի,
«Ես ձրի բոլոր մեղքերդ
Կը ներեմ,» ըսաւ ինծի.
«Հաւատարիմ դուն գտնուէ
Մինչեւ մահ, եւ պըսակուէ»

5 Այս խօսքով իսկոյն իմ սիրտս
Սուրբ ուրախութեամբ լեցուաւ,
Եւ մըրրկածուփ հոգիս
Փառաւոր հանգիստ մըտաւ.
Հիացայ իր սուրբ սիրոյն,
Երկնաւո՜ր երանութիւն.

6 Երազի պէս սուտ հաճոյք
Ա՛լ անհետ եղան աչքէս.
Մերժեցի բոլոր աշխարհք
Որ ա՛լ չպատուիմ Փրկչէս.
Ես անորն եմ, սէր նորա
Արդ իմս է. Ալէլուիա.

Յայտ. Գ. 20 *Elias Riggs*

## 198 ՄԵՂԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

1 Աստուած ողորմած, ինծի ողորմէ,
Անհուն գթութեամբդ իմ մեղքըս քաւէ,

Ամէն յանցանքէս լուա, զիս մաքրէ,
Եւ իմ մեղքերէս, ով Տէր, զիս սրբէ։

2 Քանզի յանցանքներս յայտնի են ինծի,
Մեղքս ալ միշտ աչքիս առջին կը կայնի.
Միմիայն քեզի դէմ ես մեղանչեցի,
Ու մեծ չարութիւն առջեւդ գործեցի։

3 Թէ որ զիս պատժես, դուն կ՚արդարանաս
Ու դատաստանովդ անբիծ կը մնաս.
Քանզի յանցանքով մօրմէս յղացայ,
Ծընած ատենս ալ մեղքի մէջ ծընայ։

4 Մաքրէ մշտիկով որ ես սրբանամ,
Ձիւնէն աւելի ճերմակ ես ըլլամ.
Ամէն մեղքերէս դուն զիս ազատէ,
Մըխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ։

5 Ով Տէր, ներսի դիս սուրբ սիրտ ստեղծէ,
Ինծի նորոգուած հոգի մը շնորհէ.
Զիս քու երեսէդ բնաւ մի ձգեր,
Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի առներ։

6 Քանզի, ով Տէր, դուն զոհեր չես կամիր,
Եւ ողջակէզներ բնաւ չես հաւնիր,
Տէրոջ հաւնած զոհն կոտրած հոգին է,
Խոնարհ սրտին սէրն անոր հաճոյ է։

Սաղ. ԾԱ.



## 199 ՏԷՐ, ՁԱՅՆԴ ԿԸ ԼՍԵՄ

1 Տէր, ձայնդ կը լսեմ,
Որով զիս կը կանչես.
Կու գամ որ զիս սուրբ արիւնովդ
Լուաս, մեղքէ մաքրես։
Տէր, քեզի կու գամ,
Հիմա զիս լուա,
Զիս մաքրէ սուրբ արիւնովդ
Հեղեալ ի Գողգոթա։

2 Տկար և պիղծ կու գամ,
Դու, Տէր, ինձ ոյժ կու տաս,
Եւ, որ ձիւնէն ճերմակ ըլլամ՝
Սուրբ արիւնովդ կը լուաս։
Տէր, քեզի կու գամ, և այլն։

3 Զիս, Տէր, վստահութեան,
Յուսոյ և հաւատոյ
Կը հրաւիրես, խաղաղութեան
Եւ կատարեալ սիրոյ։
Տէր, քեզի կու գամ, և այլն։

4 Թող յարձակին փորձանք,
Կու տաս ինձ յաղթանակ,
Կու տաս հոս շնորհք և սփոփանք,
Վերջն ալ փառաց պսակ։
Տէր, քեզի կու գամ, և այլն։

5 Փա՜ռք քաւութեան արեան,
Փա՜ռք Քրիստոսի շնորհաց,
Մեր կատարեալ արդարութեան
Եւ անվախճան կենաց։
Տէր, քեզի կու գամ, և այլն։

Սաղ. ԾԱ. 7, 8 Թարգ. Elias Riggs

## 200 «ԵԿԷՔ ԻՆԾԻ»

1 Ես կը լսեմ ձայնդ, ով Յիսուս,
Անոր համար կու գամ.
Սիրուն քու ձայնդ ականջս լեցուց.
Ի՞նչպէս ես չարտորամ։
Կու գամ, կու գամ, զիս մի մերժեր,
Յոյժ կ՚աղաչեմ, ով Տէր.
Արժանացուր յոգնած հոգիս՝
Սուրբ հանգստեան երկնից։

2 Հոգիս կեանքէս է ձանձրացած՝
Այս չոր ձորին եզերքն.
Սիրտս ներսի զիս է խռովուած՝
Մեղքիս ճնշող բեռէն։
Կու գամ, և այլն։

3 Ունայն անդ ես շատ ջանք ըրի
Փրկել զիս իմ ուժովս.
Յանցանքս սրբել ես չկրցի
Բարեգործութիւնովս։
Կու գամ, և այլն։



4 Քու սուրբ արիւնըդ թափուեցաւ
Խաչափայտին վրայ.
Բոլոր իմ մեղքս հոն քաւուեցաւ
Արդար գլխուդ վրայ.
Կու գամ, և այլն։

5 Ո՜րչափ սուրբեր արդէն եկան
Քու անուշութիւնդ վայելել.
Դուն ես ճամբան որով կրցան
Այն սուրբ հանգիստն մտնել։
Կու գամ, և այլն։

Մատթ. ԺԱ. 28 Թարգ. Ա. Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

## 201 ԿԸ ՀԱՒԱՏԱՄ

1 Ես յաւիտեան հանգիստ կ՚ըլլամ
Միայն քու քովդ, Յիսուս.
Քու վէրքերէդ կեանք կը ստանամ,
Փրկիչ, դուն ես ինծ յոյս։
Կը հաւատամ, կը հաւատամ
Որ Յիսուսի մահուամբը,
Եւ իր արեամբը, անգին արեամբը,
Մեղքէ ազատ կ՚ըլլամ։

2 Խաչեալ Փրկիչս և իմ Աստուածս,
Մեղաց քաւիչ աղբիւր,
Քու արիւնէդ սրսկէ վրաս,
Պահէ զիս միշտ մաքուր։
Կը հաւատամ, և այլն։

3 Լուա՛, զիս, Տէր, և քուկդ ըրէ,
Լուա, եղիր դուն իմս.
Ոչ թէ միայն ոտքերս մաքրէ,
Ձեռքերս, գլուխս և սիրտս.
Կը հաւատամ, և այն։

4 Քու արիւնովդ իմ սիրտս սրբէ,
Մինչ քեզ տեսնեմ աչքով.
Փառաց յուսով աչքերս գոցէ,
Հոգիս լեցուր սիրով.
Կը հաւատամ, և այն։

Փիլ. Գ.7-11 Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

## 202 ԼՈՅՍ ԲԱՐԵՐԱՐ

1 Լոյս բարերար, տիրող մէգին մէջէն
Դուն զիս ուղղէ.
Մութ է գիշերն, և ես հեռու՝ տունէն.
Զիս հոն ուղղէ։
Պահէ քայլերս, խընդրեմ՝ չէ բընաւ
Տեսնել հեռուն. ինծի մէկ քայլ է բաւ։

2 Այսպէս չէի միշտ, ես չէի խնդրեր
Որ զիս ուղղես.
Իմ ելքս ու մուտքս ես կ'ընտրէի, բայց արդ
Դո՛ւն զիս ուղղէ.
Շէն օր սիրող, անվախ և անտարբեր,
Կամքս էր հըպարտ. անցեալըս մի՛ յիշեր։



3 Քու ոյժդ հըզօր օրհնած է ցարդ, և դեռ
Զիս պիտ՝ ուղղէ
Ճահիճն, ճահճին վրայէն՝ խոր ստուերներ
Մինչև քաշուին,
Եւ հետ այգուն ժպտին իմ սիրելիքս,
Զորս կորուսեր էի ես մէկ պահիկ։

Յովհ. Ը.12 Թարգ. Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## 203 ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

1 Հաւատքս քեզ կը նայի,
Ով Գառն Գողգոթայի,
Փրկիչ իմին
Ձայնիս մտիկ ըրէ.
Իմ մեղքըս, Տէր, քաւէ.
Ըլլամ ես յայմհետէ
Միայն քուկին։

2 Թող քու շնորհքդ անհուն
Ընէ սիրտս հաստատուն,
Նախանձս վառէ.
Մահուամբդ զիս կը փրկես.
Ուստի բոցի մը պէս
Իմ սէրըս սաստկացեալ
Վառիլ կ'արժէ։

3 Այս մութ ճամբուս վախճանին
Մինչև աչքերըս տեսնան՝

Յառաջ տար զիս։
Խաւարը լոյս ըրէ,
Աչքիս արցունքն սրբէ։
Եւ մի՛ թողուր քեզմէ
Զատուի հոգիս։

4 Կեանքիս երազն անցած՝
Երբ մահը իմ վրաս
Կը յարձակի,
Օրհնեալ Փրկիչ, սիրով
Ամէն վախս յաղթելով՝
Վեր առ զիս ապահով,
Որ անձս ապրի։

Ես. ԽԵ. 22

## 204 ԵՐԲ ՀԱՒԱՏՔՈՎ ԿԱՐՈՂ ԸԼԼԱՄ

1 Երբ հաւատքով կարող ըլլամ
Երկինքն իմս է ըսել,
Վախէ ազատելով կրնամ
Լացող աչքերս սրբել։

2 Թող դէմս ելլեն մեծ զօրութեամբ
Աշխարհքն ու Սատանան։
Կրնամ նայիլ հանդարտութեամբ
Անոնց կատաղութեան։

3 Թէեւ իմ վրաս անթիւ հոգեր՝
Փոթորիկի նման,



Եւ կամ ցաւեր ու դառն վիշտեր
Յարձակելու ըլլան,

4 Երբեք պիտի չը յաղթուիմ,
Այլ ամէնուն յաղթեմ։
Միայն թէ հայրենիքս հասնիմ,
Փրկչիս երեսն տեսնեմ։

5 Հոգւոյս հանգիստը հոն պիտի
Ծովու նման ըլլայ,
Եւ ա՛լ վշտաց ալիք չանցնի
Խաղաղ սրտիս վրայ։

Բ Պետ. Ա. 10 Թարգ. Elias Riggs

## 205 ԻՆՉՊԷՍ ՈՐ ԵՄ

1 Ինչպէս որ եմ, մեղքով լեցուած,
Խեղճ մեղաւոր ու կորսուած,
Աչքերս դէպի ի Փրկիչդ ուղղած,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

2 Ինչպէս որ եմ, չսպասելով
Հոգիս սրբել պարապ յոյսով,
Լոկ արիւնիդ վստահելով,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

3 Ինչպէս որ եմ, շատ տանջուած,
Ու բազմաթիւ մեղքով պատած,
Ասդին անդին միշտ տատանած,
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

4 Ինչպէս որ եմ, դուն, Տէ՛ր, գիտես,
Բոլոր մեղքերըս կը ջնջես,
Աղտոտ հոգիս դուն կը սրբես.
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

5 Ինչպէս որ եմ, այնպէս կու գամ.
Շնորհքէ որ միշտ քու քովդ ըլլամ,
Ու յաւիտեան երեսդ տեսնամ.
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ։

Յովհ. Ա. 29, Ես. Ա. 18

## 206 ՃԱՄԲԱՍ ԴՈՒՆ, ՏԷՐ, ԸՆՏՐԷ

1 Ճամբաս դուն, Տէր, ընտրէ,
Թող ինծ խաւար ըլլայ.
Ձեռքովդ առաջնորդէ,
Ընտրէ ինծի ճամբայ։
Ես չեմ համարձակիր
Բընաւ վիճակս ընտրել.
Դուն կառավարս եղիր,
Սորվիմ շիտակ քալել,

2 Խնդրած արքայութիւնս
Է քուկդ, ով Տէր իմ.
Քուկդ ալ ըլլայ շաւիղս,
Թէ ոչ կը մոլորիմ։
Դուն որոշէ վիճակս
Անհուն իմաստութեամբ.



Առ և լեցուր բաժակս
Վիշտով կամ վայելմամբ։

3 Ընտրէ բարեկամներս,
Ախտերս, առողջութիւնս,
Փորձանքըս ու հոգերս,
Ու կամ հանգստութիւնս։
Ինծի խոստմունք տուիր
Որ ազատես չարէն.
Տէր, առաջնորդս եղիր,
Իմաստութիւնս։ Ամէն։

Յոբ. ԻԳ. 10, Մատթ. ԻԶ. 39 Թարգ. Elias Riggs

## 207 ՏԷՐ, ԻՆՉՊԷՍ ՈՐ Կ՚ՈՒԶԵՍ

1 Տէր, ինչպէս որ կ՚ուզես.
Քու կամքըդ իմս ընեմ.
Սիրոյ ձեռացըդ մէջ
Ամէն բան կը յանձնեմ.
Առաջնորդէ ինծի,
Ընտրէ ինծի ճամբայ.
Թող միշտ սրտանց երգեմ,
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»։

2 Տէր, ինչպէս որ կ՚ուզես.
Թէ՛ տաս ուրախութիւն,
Թէ՛ լուսադոյն օրեր
Վիշտ, ցաւ ու նեղութիւն,

Ու արտասուաց մէջէն
Թէ աստղըս երեւնայ,
Թող յոյըս չըմարի.
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»

3 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Ինչ որ ըլլայ վիճակս,
Զիս քեզ նուիրած ընես,
Ըլլաս իմ օրինակս.
Երկրիս վրայ դուն լացիր,
Ծառադ ալ հոս թող լայ,
Միայն թէ հետս եղիր.
«Քու կամքըդ, Տէր, ըլլայ»

4 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Դուն հետս ըլլաս. Իրաւ
Ինչ որ ալ որոշես՝
Ինծի ամէնն է լաւ,
Ամէն բան ապահով
Ներկայ եւ ապագայ.
Երգեմ միշտ ցնծումով,
«Քու կամքդ, Տէր, ըլլայ»

Մարկ. ԺԴ. 36 Թարգ. Elias Riggs

## 208 ԻՄ ՏԷՐՍ ԻՆԾ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ

1 Իմ Տէրըս ինծ կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.



Ուր որ ըլլամ, ինչ որ ընեմ,
Առաջնորդող ձեռքն կը տեսնեմ.
Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կ'ուղղէ.
Ես աշակերտ միշտ գտնուիմ,
Եւ հետեւող հաւատարիմ:

2 Թէ անապատ թափառիմ,
Կամ Եդեմի շուքէն անցնիմ.
Լոյս կամ խաւար թէ զիս պատէ,
Դարձեալ Աստուած կ'առաջնորդէ:
Կ'առաջնորդէ, եւ այլն.

3 Տէր, ձեռքդ ձեռքիս մէջ ես բռնեմ,
Այսուհետեւ չը տրտնջեմ.
Գոհ եմ, վիճակըս ինչ որ է,
Զի Տէրըս ինծ կ'առաջնորդէ:
Կ'առաջնորդէ, եւ այլն.

4 Երբ հոս ընթացքըս կատարեմ,
Շնորհքովդ երբ աշխարհիս յաղթեմ,
Մահուան ջուրը գետն զիս չըխռովէ.
Հոն ալ Տէրն ինծ կ'առաջնորդէ,
Կ'առաջնորդէ, եւ այլն.

Սաղ. ԻԳ. 2, 3 Թարգ. Elias Riggs

## 209 ՓՐԿՉԻՍ ԲԱԶՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

1 Փրկչիս բազուկներուն մէջ
Գլխի հանգչի հոգիս,
Անոր սիրոյն գրօշակը
Գլխա՛ ըլլայ հովանիս։
Հրեշտակային երգի պէս
Ձայն մը յերկնից կու գայ,
Ինձ ամենայն վշտաց մէջ
Քաղցրը հրճուանք կու տայ։
Փրկչիս բազուկներուն մէջ
Գլխի հանգչի հոգիս,
Անոր սիրոյն գրօշակը
Գլխա՛ ըլլայ հովանիս։

2 Հոն աշխարհիս հոգերը
Զիս չեն կրնար նեղել.
Սատանային հրապոյրքը
Ա՛լ չեն կրնար խաբել։
Հոս քիչ մ՚ալ աշխատանք կայ,
Քիչ մըն ալ փորձութիւնք,
Քիչ մըն ալ ցաւ և վիշտ կայ,
Ու դեռ քիչ մ՚ալ արցունք։
Փրկչիս բազուկներուն մէջ, և այլն։

3 Յիսուս, քաղցր ապաստանըս,
Հոգւոյս համար մեռաւ.



Ա՛լ այս անշարժ վէմին վրայ
Յոյսս հաստատուեցաւ։
Անդորր հոս կը սպասեմ ես
Մինչև գիշերն անցնի,
Եւ ոսկեղէն եզրին վրայ
Այգ փառաւոր ծագի։
Փրկչիս բազուկներուն մէջ, և այլն։

Սոփ. Գ. 17 — Թարգ. Elias Riggs

## 210 ՀԱՅՐ ԻՄ, ՔՈՒ ԿԱՄՔԴ ԹՈՂ ԸԼԼԱՅ

1 Արև, անձրև ինչ կը ղրկէ,
Երկուքն ալ պէտք են ծաղիկին,
Եւ արտասուք ու խնդութիւն
Հարկ են կարօտ, խեղճ հոգիին.
Թէև արև, անձրև ինձ գայ,
Հայր իմ, քու կամքդ թող ըլլայ։

2 Երբեք սիրով լեցուած զաւակն
Իր Հօրը դէմ տրտունջ կ՚ընէ՞.
Ըստեղծողիս հետ թող իմ սիրտս
Հլու զաւկի պէս միշտ գործէ.
Թէև արև, անձրև ինձ գայ,
Հայր իմ, քու կամքդ թող ըլլայ։

3 Ինձ արուած կենաց վիճակն
Ամենալաւ կ՚ուզեմ սեպել,
Եւ երբ իմ վրաս շուք մահուան,

Ուրախութեամբ սա երգն ըսել.
Թէեւ արեւ, անձրեւ ինձ գայ,
Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ՝

Մ—թ. Զ. 10 Թարգ. Miss C. E. Bush

## 211 «ՔՈՒ ՀՈԳԻԴ ԻՄ ՎՐԱՍ ԶԳԷ»

1 Ի՜նչ քաղցր է, Տէր, ապաւինել
Քոյին մեծ զօրութեան,
Առաջնորդող բազուկդ առնել,
Ըզգալ ի նեղութեան։

2 Դուն, Տէր, կ'ուզես որ քեզ յայտնեմ
Բոլոր ցաւերս, վիշտերս,
Որ՝ վրադ, վստահութեամբ, ձգեմ
Ամէն օրուան հոգերս։

3 Կ'ուզես որ քեզ միայն նայիմ
Խընամքդ խնդրեմ սրտով,
Նեղիչ վախերըս փարատեմ
Խոնարհ, ջերմ աղօթքով։

4 Արդ, ով իմ սիրտս, ինչո՞ւ խռովիս
Գալիք չար վախերէ,
Մինչդեռ փրկչին հրաւէրն ունիս,
«Քու հոգդ իմ վրաս ձգէ։»

Ս—Ղ. ԾԵ. 22 Թարգ. Ն. Ս. Թ. ՆԱՀԻԿԵԱՆ



## 212 ՏԷՐՆ Է ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴ

1 Թէեւ նաւազեալ՝ մեր ճամբան մենք կ'երթանք,
Տէրն է առաջնորդ եւ իր խօսք մեր բերկրանք.
Թէեւ տառապանք եւ փորձանք խիստ մօտ են,
Ի՞նչ հոգ, երբ ունինք Տէրը մեզ ապաւէն։

2 Ինչպէս կը խընամէ ոչխարներն իր հօտին,
Ինք կ'առաջնորդէ մեզ կանանչ արօտին.
Խաւար դաշտերուն մէջ գառներն կը գրկէ,
Որոգայթներէ մոլորեալն կը փրկէ։

3 Երբ ամպ մեզ պատէ, մեր Աստուածն է մեր լոյս,
Մրրիկ թէ մեր շուրջ գոռայ, Տէրն է մեր յոյս,
Թէեւ պարտասած՝ մեր ճամբուն մէջ բերկրինք,
Զի Տէրն առաջնորդ է, մեր տունն է երկինք։

Ս—Ղ. ԽԸ. 14 Թարգ. Ա. Ե. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 213 ՅԻՍՈՒՍ ՀԱՍՏԱՏ ՀԻՄ

1 Ո՜րքան հաստատուն է հիմն ձեր հաւատքին՝
Դըրուած Աստուծոյ խօսքին մէջ սըրբազան.
Անսուտ են անոր խոստումներն թանկագին,
Ձեզի՝ որ ընտրած էք Յիսուսն ապաստան։

2 «Երբեք մի՛ վախնար, ընաւ մի՛ վըհատիր,
Քանզի ես Աստուածդ եմ, պատրաստ քեզ նեցուկ.

Մինչ հեռուդ կ'ըլլամ, խոստումներս չեն պակսիր,
Ապաւէն, զօրավիգ է հըզօր իմ բազուկ»:

3 «Խորունկ ջուրերէ երբ անցնիս սըրտաթունդ,
Գետեր վիշտերու չի պիտի կոխեն քեզ.
Ներկայութիւնովս կ'օրհնեմ մինչ փորձութիւնդ՝
Սրբագործելով թախիծներդ հոգեկեզ»:

4 «Հոգին, որ կ'ընտրէ զիս իրեն ապաւէն,
Բընաւ չեմ մատներ ձեռքը իր ոսոխին.
Եթէ յարձակի դըժոխքն ալ համօրէն,
Բընաւ, ո՛հ, բընաւ չեմ լըքեր այն հոգին»:

Ես. ԽԳ. 1-7 Թարգ. Գ. Ց. ԿԻՒԼԵԱՆ

## 214 «ԵՍ ՁԵԶ ԲԱՐԵԿԱՄ ԱՆՈՒԱՆԵՑԻ»

1 Երգէ, ո՛վ հոգիս, օրհներգ մը անոր,
Որ կ'առաջնորդէ իմ կեանքս յարաժամ.
Անվախ կը մտնեմ ամէն ճամբայ նոր,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ:

2 Լոյսի, ըստուերի մէջ պիտի երգեմ,
Վըստահ շեշտերով բերկրիմ ու ցընծամ.
Կարող չէ հանել ինծ չարիք դըժխեմ,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ:

3 Թող զիս պաշարեն վիշտեր դըժընդակ,
Վըրաս յարձակի կասկած ալ տարտամ.
Փոյթ չէ, կը տանի հաւատքս յաղթանակ,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ:



4 Մահն ալ իմ հոգիս բաժնել չի կըրնար
Անկէ որ տուաւ ինծ կեանք անթառամ.
Մէկդի կը դըրի իմ տապանաքար,
Քանզի Տէր Յիսուս է ինծ բարեկամ:

Յովհ. ԺԵ. 15 Թարգ. Ց. Գ. ԿԻՒԼԵԱՆ

## 215 ՏԷՐ, ԻՆԾԻ ԱՌԱՋՆՈՐԴԷ

1 Տէր, ինծի առաջնորդէ,
Որ չի մոլորիմ քեզմէ.
Խաւարին է իմ ճամբան,
Տէր, սիրովդ եղիր պաշտպան.
Տէր, սիրովդ եղիր պաշտպան,
Տէր իմ, Տէր իմ, Տէր, ինծի առաջնորդէ,
Մինչ սիրովդ ճամբաս ուղղէ,
Ամէն օր ձեռքէս բռնէ.

2 Դուն հոգւոյս լեր ապաստան,
Երբ ցաւոց ալիք գոռան.
Ապահով եմ, Տէր, քու քով,
Կեանք անդորր ունիմ քեզմով
Տէր իմ, Տէր իմ, և այլն.

3 Տէր Յիսուս, ուղղիչ կենաց,
Զիս հասցուր երկիրն փառաց.
Հոն երգեմ երգ յաղթութեան,
Հոն գովեմ քեզ յաւիտեան:
Տէր իմ, Տէր իմ, և այլն.

Սաղ. ԻԵ. 4, 5

## 216 ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՌ ՏԷՐ

1 Տէր, ուրախ կ'ըլլամ միշտ ես
Երբ վըստահ եմ լոկ իքեզ.
Միշտ վըստահ սուրբ փորձութեան,
Խընամոցըդ հայրական.
Քու սիրոյդ, ուժիդ վըստահ,
Քու կամքիդ անսասան անահ։
Երջանիկ կ'ըլլամ միշտ ես
Երբ վստահ եմ լոկ իքեզ։

2 Քեզ վստահ, միակ իմ լոյս
Գիշերոյ մըթին ժամուս.
Թէ՛ առողջ և թէ՛ հիւանդ,
Թէ՛ հարուստ և թէ՛ տընանկ,
Թէ՛ տըխուր և թէ՛ ուրախ,
Յարաժամ իքեզ վստահ։
Երջանիկ կ'ըլլամ միշտ ես
Երբ վստահ եմ լոկ իքեզ։

3 Յոյս իմ է խաչիդ ատեանն,
Եւ հաւատքս ի շնորհ միայն.
Լոկ իքեզ կ'ապաւինիմ,
Քեզ Յիսուս, քաջ Փրկիչ իմ.
Թէ՛ ի կեանս և թէ՛ ի մահ
Միշտ, ո՛հ, միշտ իքեզ վստահ։
Երջանիկ կ'ըլլամ միշտ ես
Երբ վստահ եմ լոկ իքեզ։

Սաղ. ԻԷ. 1 Թարգ. Ա. Ս. ՏԱՐԱԳՃԵԱՆ



## 217 ՏԷՐՈՋԸ ԹԵՒԵՐՈՒՆ ՏԱԿ

1 Թեւերըդ, Տէր իմ, թող ըլլան
Ինծ հովանի և ապաստան,
Հոն բընակիմ ես անվըրդով՝
Ձերծ վըտանգէ և ապահով։

2 Այս աշխարհի կեանքի շրջան
Լի է վախով ամէն վայրկեան.
Թեւերուդ տակ միայն, ով Տէր,
Կրնամ ապրիլ ես անվեհեր։

3 Արիւն, քրտինք հոսին ճակտէս,
Կը հալածուիմ ոսոխներէս,
Կ'ուզեմ գտնել հանգիստ անձիս.
Թեւերուդ տակ, խնդրեմ, առ զիս։

4 Գողգոթայի սարին վըրան
Լացող աչքերս թող քեզ տեսնան,
Տէր իմ, խաչին շուքովը ես
Թող պաշտպանուիմ իմ մեղքերէս։

5 Տէր, տարածէ թեւերդ իմ վրան,
Անոնք ըլլան թող ինծ վըրան.
Մինչև վերջին րոպէն կեանքիս
Թեւերուդ տակ հանգչի հոգիս։

Սաղ. ՂԱ. 1, 4 Հեղինակ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## 218 ՔՈՒ ԿԱՄՔԴ ԸԼԼԱՅ

1 «Քու կամքդ ըլլայ». || արագընթաց
կեանքիս հոսանք ժայ | ռուս ա | փանց |
| Մէջ թէ հոսէ, կ՚երգեմ սրտանց, |
Քու կամքդ ըլ | լայ։ ||

2 «Քու կամքդ ըլլայ». || զըւարթ արև
Եթէ փայլի գըլ | խուս վե | րև, |
Ցնծմամբ կ՚երգեմ ես արդարև,
| Քու կամքդ ըլ | լայ։ ||

3 «Քու կամքդ ըլլայ». || թէև ամպոտ
Ըլլան երկինք, ճամ | բան ա | ղօտ, |
Պիտի կրկնեմ չեշտով նուազկոտ, |
| Քու կամքդ ըլլայ։ ||

Մատթ. ԻԶ. 42

## 219 ՄԻԱՅՆ ՓՐԿՉՈՎ

1 Ինծի՛ բարձրագոյն սուրբ վէմին հաւատքի՝
Հոգիս իր ցաւով, վիշտերով կը թռչի.
Թէպէտ մեղաւոր, սակայն քուկդ եմ, Տէր իմ,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ՚ապրիմ։
Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ՚ապրիմ։



2 Մենիկ ժամերուս, տանջանքի դառն ատեն,
Երբոր փորձութիւնք խեղճ հոգւոյս չորս դին պատեն,
Կեանքի ալեծուփ ծովուն մէջ երբ թաղուիմ,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ՚ապրիմ։
Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ՚ապրիմ։

3 Շատ հեղ, գոռ մարտի մէջ ճնշեալ ոսոխէն,
Քեզի դիմելով ես գըտայ ապաւէն.
Եւ որչափ յաճախ, ո՛հ, սուրբ վէմ հաւատքիս,
Քեզմով կորուսեալ պաշտպանուած է հոգիս.
Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ՚ապրիմ։

Սաղ. ԿԱ. 1-4 Թարգ. Ա. Ս. ՓԱՇԿԵԱՆ

## 220 ՅԻՍՈՒՍ ԿԱՐՈՂ Է ՓՐԿԵԼՈՒ

1 Փառք Յիսուսի, փառք, փառք անհուն,
Որ ձրի փրկանք և կեանք տըւաւ.
Սուրբ քաւութիւն կայ ամենուն,
Կըրնայ փրկել զիս ալ հարկաւ,
Այո, նա կարող է փրկել,
Տըւէք ամենուն այս մեծ լուր.
Իր կուրծքն ինծ յենարան,
Որ շիթերն սուրբ արեան
Զիս լըւան, ըլլամ ձիւնէն մաքուր։

2 Անյոյս, անլոյս, մեղաւորըս
Հոգիս վիճակէ աննախանձ

Ի լոյս հանեց, և զայն բրաւ
Ժառանգ թագուց և պալատանց։
Այո, Նա կարող է, և այն։

3 Սիրոյն բարձունք, ոհ, ի՜նչ քաղցր են,
Շնորհաց խորերն՝ ի՜նչ անյատակ.
Ա՜հ, ծծէի ես իր սէրէն
Եւ ապրէի իր թեւոց տակ։
Այո, Նա կարող է, և այն։

Եբր. Է. 25 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

## 221 ԿԱ՞Յ ԵՐԲԵՔ ԸՆՏԻՐ ՀՈՎԻՒ ՄԸ

1 Կա՞յ երբեք ընտիր հովիւ մը
Սիրելի Փրկչին նման.
Կա՞յ անոր նման հըզօր մը
Որ ըլլայ մեզի պաշտպան.
Գթութիւնն անոր անհուն է,
Սէրն անոր՝ Աստուածային.
Մեր խորհուրդը, մեր երազը
Չեն հասնիր անոր չափին։

2 Քան զովկեան վսեմ ու լայն է
Աստուծոյ ողորմութիւնն.
Իր արդարութեան մէջ գութ կայ,
Պատուական է փրկութիւնն,
Դատապարտեալին շնորհք կայ,
Փրկեալին ալ օգնութիւն.



Մեռեալին, ո՜հ, յոյս և կեանք կայ,
Այն է Յիսուսի արիւնն։

3 Յաւիտեան մեր Հօրը գութը
Կը մնայ անչափելի.
Եւ անհուն էակին սիրան է
Անկ սիրոյ ըսքանչելի.
Ո՞ւր էր որ անկեղծ սրտով մը
Մեր Տէրոջը յուսայինք,
Անդադար անոր լոյսին մէջ
Բերկրութեամբ միշտ քալէինք։

Յովհ. Ժ. 11, 15, ԺԵ. 13 Թարգ. C. C. Tracy

## 222 ԳԵՐԱԶԱՆՑ Է ՍԷՐ

1 Քան գիտութիւն է գերազանց քու սէր,
Յիսուս Փրկիչըս, իմ հոգիս բայց դեռ
Կ'ուզէ լաւ եւս տեղեակ ըլլալ սիրոյդ
Բարձանց, խորքին, ուժին, չափին, և շատ
Լաւ եւս տեղեակ։

2 Քան խօսք ճարտար է գերազանց քու սէր,
Յիսուս Փրկիչ իմ, բայց խեղճիս շրթներ
Պիտ՝ ամբողջութեամբ պատմեն, հեռու կամ մօտ,
Քու սէր, որ կը վանէ երկիւղ, ամօթ,
Եւ սէր կ'ազդէ։

3 Քան զօրութիւն է գերազանց քու սէր,
Յիսուս Փրկիչըս, բայց իմ սիրտըս դեռ.

Կ'ուզէ երգել այն սէր, զեղուն, առատ,
Որ ապստամբս ըրաւ մը հարազատ
Որդի երկնից։

4 Սիրոյդ զեղմունքըն հող չեմ կարող թէպէտ
Գիտնալ, պատմել և զայն երգել յաւէտ,
Կրնամ սակայն սիրոյդ ակին մաքուր
Մօտը բերել իմ խեղճ սիրտս թափուր,
Որ զայն լեցնես։

5 Երբ քաղցըր դէմքըն տեսնեմ գըթած Փըրկչին,
Ծունըր դըրած անոր գահուն առջին,
Ո՛հ, յայնժամ իմ հոգիս ցնծմամբ զեղուն՝
Անոր խորքին, հըզօր, վըսեմ, բեղուն
Սէրն պիտ' երգէ։

Եփես. Գ. 18, 19 Թարգ. Յ. Թ. ԴԱՑԵԱՆ

## 223 ՍԷՐ ՔՐԻՍՏՈՍԻ

1 Ունայնութիւն ունայնութեանց,
Բոլոր աշխարհ է փուճ և սուտ.
Միայն Փըրկիչ Քրիստոս Աստուած
Եւ սէր նորին է ինձ օգուտ։

2 Պէտք է որ ես զայն շատ սիրեմ,
Զի Նա այնչափ նախ զիս սիրեց.
Պէտք է անոր սիրտս նուիրեմ,
Քանզի Նա զինքն ինծի շնորհեց։



3 Հոգւոյս համար Նա զինք զոհեց,
Որպէս՝ զի ես արդարանամ.
Մեղքիս համար մահ ճաշակեց,
Որպէս զի ես անմահանամ։

4 Արդեօք ո՞ր մարդ՝ կամ ո՞ր հրեշտակ,
Փրկչիս նըման ինձ սէր ցուցուց.
Կըրեց վասն իմ վիշտ դըժընդակ,
Եւ փրկութեան ինձ յոյս թողուց.

5 Տէր, քու սիրովդ իմ սիրտս վառէ,
Որ քեզ միայն սրտանց սիրեմ.
Եղբարցս համար յիս սէր ազդէ,
Որ սէրս սիրոյդ նըմանցունեմ։

Հռով. Ե. 7-9

## 224 ՍԷՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

1 Ով Տէր Յիսուս, քեզ կը սիրեմ,
Քանզի քու սէրդ ինձ շատ քաղցր է.
Ես բարձրաձայն պիտի երգեմ,
Թող զայն բոլոր աշխարհ լըսէ։

2 Այո, քաղցր ես հոգւոյս իմին,
Յոյս, փրկութիւն, կեանք ես ինծի.
Անարգ բան է գոհարն անգին,
Ոսկին ալ ինձ չնչին փոշի։

3 Քու մեծ շնորհքդ սրտիս վըրայ, Տէր,
Մինչ կեանք տըւող հոսք կը բերէ.
Կը բուժէ ամէն ցաւեր,
Բոլոր իմ անձս կը նորոգէ։

4 Ոչ նեղութիւն, ոչ հալածանք
Զիս քու սէրէդ կրնան զատել.
Ու ոչ ալ մահ և ոչ ալ կեանք
Զիս քու անձէդ կրնան բաժնել։

5 Պիտի պատմեմ սէրն մեծ Փրկչիս,
Մինչև վերջին իմ շունչս հատնի.
Յայնժամ, օրհնեալ Փրկիչ, հոգիս
Քու սուրբ գրկիդ մէջ թող հանգչի։

Հռովմ. Ը. 35-39

## 225 ՄԻՇՏ ՁՕՆՈՒԱԾ ՔՈՒ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

1 Առ, Տէր, կեանքս, ըլլայ թող ան
Միշտ ձօնուած քու սուրբ անուան.
Առ ձեռքերս, և թող շարժին
Միշտ հըլու՝ սիրոյդ ուժին.
Առ ոտքերս, և թող քալեն
Միշտ ուղիղ՝ քու սուրբ ճամբէն.
Առ իմ ձայնս, և թող, ով Տէրս,
Քեզ միայն ուղղեմ երգերս։

2 Առ շրթներս, անոնց վըրայ
Սուրբ պատգամդ թող միշտ թրթռայ.



Առ ինչքերս, տիրէ գանձիս,
Չեմ պահեր բան մը անձիս.
Առ իմ խելքս, գործէ թող այն
Սուրբ կամքիդ միշտ համաձայն.
Առ ժամերս, օրերս, որ յար
Քու սիրովդ սահին խաղաղ։

3 Առ իմ կամքս, տիրէ անոր
Արդ, ով Տէր, կամքովդ հըզօր.
Առ նաև իմ սիրտըս չար,
Զայն ըրէ հոգւոյդ տաճար.
Սէրս ալ առ, անոր գանձին
Դու եղիր տէրն առանձին.
Առ անձս ալ, թող այն, ով Հայր,
Միշտ ապրի լոկ քեզ համար։

Հռովմ. ԺԲ. 1 Թարգ. Յ. Թ. ԳԱՑԱՆԵԱՆ

## 226 ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

1 Տէր իմ, քեզ կը սիրեմ,
Միայն քեզմով կ՚ապրիմ.
Թէ որ Աստուածս ես մերժեմ,
Շուտով կը կորսուիմ։

2 Քու սէրդ այնչափ քաղցր է
Որ բանով պատմել կ՚ըլլայ.
Ուր ես ներկայ՝ դըրախտն հոն է,
Ուր չես՝ դըժոխք կ՚ըլլայ։

3 Հրեշտակք սուրբ անդադար
Թող քնարներ զարնեն.
Երկինք հոն չը կրնար ըլլալ,
Թէ որ քեզ չը տեսնեն։

4 Եւ տիեզերքն ամէն
Ինծի խրատցընէ
Հաճոյք մը տալ կարող ոչ են,
Թէ հեռանաս ինձմէ։

5 Սիրոյ ծովդ, անսահման
Ուրախութեամբ լեցուն,
Դուն ես, Տէր, և սրտիս շրջան,
Հոգւոյս ցնծման կեդրոն։

Սաղ. ԼԶ. 7-9

## 227 ԿԱՏԱՐԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

1 «Խաղաղութի՛ւն, լըման խաղաղութի՛ւն.»
Այսպէս խօսի Տէր Յիսուսի արիւնն։

2 «Խաղաղութի՞ւն, երջանկութիւն անբաւ.»
Ինչ որ ըլլայ, կամքն Յիսուսի է լաւ։

3 «Խաղաղութի՞ւն.» փորձանք կան բիւրաւոր.
Գիրկն Յիսուսի պիտի հանգչինք անդորր։

4 «Խաղաղութի՞ւն.» զատուա՞ծ ընկերներէ.
Զանոնք և մեզ Տէրն կը պահպանէ։



5 «Խաղաղութի՞ւն.» Թող վաղը մութ ըլլայ.
Յիսուս կեցած է աթոռին վըրայ.

6 «Խաղաղութի՞ւն.» Թող գայ կենաց վախճան
Մահուան վըրայ Յիսուս է յաղթական,

7 Հերի՛ք է. վիշտ և փորձութիւն կ'անցնի,
Պատրաստ է մեզ խաղաղութիւնն երկնի։

Ես. ԻԶ. 3 Թարգ. C. C.Tracy

## 228 ՓՐԿԻՉՍ ՄԻՇՏ Է ՄՕՏ

1 Թող իմ արտասունքըս ա՛լ դադարի,
Քանզի Յիսուս միշտ մօտ է ինծի,
Տէրս ու Փրկիչըս իմ քովս կը մընայ.
Երբ կը խօսի ինձ, իմ սիրտս կը ցնծայ.
Երկնաւոր սուրբ հրեշտակներ
Իմ ճամբուս կ'ըլլան ընկեր,
Եւ Փրկիչըս մարդասէր,
Փրկիչըս, Փրկիչըս, Փրկիչըս միշտ է մօտ։

2 Ալ չը վախնամ, ու չը թուլնամ.
Թէ արթուն ըլլամ, թէ՛ քնանամ,
Հանգիստ վայելեմ ես կամ թէ թափառիմ,
Քանզի Փրկիչըս միշտ քովըս ունիմ,
Երկնաւոր սուրբ հրեշտակներ, և այլն.

3 Հոս վայելածս է վայրկենական,
Բայց երկնաւոր վայելքը կը մնան.
Հոս հաւատքով թող Փրկչիս հետ քալեմ,

Հոն յաւիտեան անոր սէրն վայելեմ.
Երկնաւոր սուրբ հրեշտակներ, և այլն։

Ելից ԼԳ. 14 Սաղ. ԼԴ. 7 — Թարգ. Elias Riggs

## 229 ՕՐՀՆԵԱԼ ՆՐԱՇԽԻՔ

1 Օրհնեալ երաշխիք, իմս է Յիսուս,
Ո՜հ, այս խորհուրդն ի՜նչ քաղցր է հոգւոյս.
Փրկութեան ժառանգ, Տէրոջն եմ ես,
Իր արիւնովն սրբուած մեղքերէս։
Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին,
Ու երգեմ սէրն անհուն իմ Փրկչին,
Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին,
Ու երգեմ սէրն անհուն իմ Փրկչին։

2 Իրն եմ ես, Ան իմ Տէր և Արքայ,
Կը զգամ իր փառքը անձիս մէջ ներկայ.
Սուրբ հրեշտակներ գալով երկինքէն՝
Շնորհաց, սիրոյ երգ կը մրմնջեն,
Պիտի պատմեմ, և այլն։

3 Ալ զիս յանձնած եմ անոր բազկաց,
Յոյժ երջանիկ եմ, անվախ, անկասկած.
Իր բարութեամբ է լեցուն հոգիս,
Միակ իր սէրը նիւթ է երգիս։
Պիտի պատմեմ, և այլն։

Բ Տիմ. Ա. 12 — Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ



## 230 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

1 Երջանիկ անոնք են
Որ Փրկչին կը լսեն,
Եւ իրենց գանձը վերն դիզեր են.
Լեզուներ կարող չեն
Սրբոց փառքը պատմել,
Որ Փրկչին սիրոյն համն առեր են։

2 Իմ կենացս օրերն
Ես պիտի օրհնեմ Տէրն.
Փրկութիւնը իմն է միայն.
Ամէնքն ալ հաւատան
Եւ հասնին փրկութեան,
Մէկ ցնծում ու մէկ երգ ունենան։

Փիլ. Դ. 4

## 231 ՍՈՒՐԲ ԸԼԼԱԼՈՒ ԲԱՂՁԱՆՔ

1 Ով Տէր, մեզի պատուիրեցիր
Որ սուրբ ըլլանք սրտով.
Սրբոց միայն երնէկ տուիր,
Որ քեզ տեսնեն աչքով։

2 Ով Սուրբ Աստուած, դուն զիս սրբէ
Ամէն տեսակ մեղքէ.
Անմահ հոգիս դուն ազատէ
Մեղաց պատճառներէ։

3 Դուն իմ սրտիս նոր սէր ազդէ,
Որ սուրբ ըլլալ ջանամ.
Եւ իմ հոգիս լուսաւորէ,
Որ սուրբ օրէնքդ ճանչնամ.

4 Իմ սիրտս, Տէր, քեզի դարձուր,
Որ միշտ մեղքէն փախչիմ.
Դուն սուրբ Հոգւովդ ինծի շնորհք տուր,
Որ քեզ միայն յարիմ.

5 Ես կը բաղձամ սուրբ ըլլալու,
Որպէս զի դրախտ մտնեմ.
Ես կը ցանկամ սուրբ ըլլալու,
Որպէս զի քեզ տեսնեմ.

Ա. Պետ. Ա. 15, 16

## 232 ԵՐԱՆԵԼԻ ՕՐ

1 Երանելի այն օրն է, Տէր,
Որ ես բաժինս քեզ ըրի.
Ուրախ հոգիս անդուլ իր աչքն
Ու ցնծութիւն պատմէ պիտի:
Երանելի այն օրն ըսուի,
Որ Տէրն մեղքերս ներեց ինծի.
«Արթուն կեցիր, աղօթք ըրէ,
Ու միշտ ցնծա,» ինծի կ'ըսէ.

2 Իմ սիրտս բոլոր անոր կու տամ
Որ իմ սիրոյս է արժանի.



Իր սեղանին երբ մօտենամ,
Ուրախ երգով իր տունն լեցուի,
Երանելի այն օրն ըսուի, և այլն.

3 Ահա փրկչիս ես ուխտ ըրի,
Տէրոջն եմ ես ու իմն է ան.
Զիս ան կանչեց, անոր գացի
Ես՝ ճանչնալով ձայնն պատուական.
Երանելի այն օրն ըսուի, և այլն.

4 Փրկչիդ վըրայ յոյս դընելով,
Խռովեալ հոգիս, հանգիստ ըլլաս.
Ամէն բարիք վայլես իրմով,
Եւ իր քովէն չըհեռանաս.
Երանելի այն օրն ըսուի, և այլն.

5 Իմ ուխտըս, ով Փրկիչ Յիսուս,
Ամէն օր նորոգեմ պիտի.
Ու երբ հասնիմ մահուան ժամուս,
Երգեմ պիտի «Ուխտ սիրելի»
Երանելի այն օրն ըսուի, և այլն.

Ես. ԽԴ. 5 Թարգ. I.F.Pettibone

## 233 ԲԱՐԻ Է ԻՄ ՀՈԳԻՈՅՍ

1 Երբ խաղաղութիւն իբրև գետ կը յորդէ,
Կամ ցաւք իբր ալիք հողմայոյզ,
Ինչ որ է բաժինս ուսուցիր դու ինձ թէ՝
Բարի է, բարի է իմ հոգւոյս

Խմբերգ. Բարի է իմ հոգւոյս,
Բարի է իմ հոգւոյս, բարի է,
Բարի է իմ հոգւոյս։

2 Թէեւ փորձութիւնք ու դեւեր զիս պատեն,
Յիշեմ թէ գթած Տէրն սիրուն
Իմ թշուառութիւնս նկատած է արդէն,
Ինձ համար թափած է իր արիւն։
Բարի է, և այլն։

3 Մեղքերս, ո՜հ, խորհուրդ մեծ և ըսքանչելի,
Մեղքերս, ո՛չ մասամբ այլ լըրիւ,
Խաչին վրայ գամուած՝ ոչ եւս ինձ կըրելի.
Փառք Տէրոջս, այժմ և միշտ փառք, պատիւ։
Բարի է, և այլն։

4 Տէր, շուտ գայ այն օրն երբ ցնդին սև ամպեր,
Հաւատքն ըլլայ տեսութիւն.
Երբ փողը հընչէ, և իջնէ փառաց Տէրն,
Այս նաև բարի է իմ հոգւոյս։
Բարի է, և այլն։

Սաղ. ԾԵ. 18,22 Թարգ. Ա. Ե. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

## 234 ՍՈՒՐԲ ԸԼԼԱՄ

1 Ո՜հ թէ սուրբ ըլլամ ես,
Միշտ ա՛լ աւելի
Սիրտս, հոգիս և միտքըս
Քեզ հընազանդի,



Օրէ օր պարտքերըս
Աւելի սիրով
Կատարեմ, ով Տէրըս,
Քու հոգւոյդ շնորհքով։

2 Քու Հոգիդ, ով Հայրըս,
Անդադար ինձ տուր,
Որ մաքուր ընէ զիս,
Աւելի մաքուր.
Ու իմ հառաչանքըս
Դէպ ի վեր երթայ,
Միշտ իմ պաղատանքըս
Աստուծոյս ըլլայ։

3 Երբ շատնան վիշտերըս,
Վախս ու տարակոյս,
Ո՜հ, յանձնեմ հոգերըս
Միշտ իմ Աստուծոյս.
Ինք բոլոր խաւարըս
Լոյս պիտի ընէ,
Ինչ որ հիմա մութ է
Պիտի բացատրէ.

4 Բարձըր և ա՛լ բարձըր
Գիշերէս թռչիմ,
Մինչ երկնից սուրբ լոյսը
Բերկրութեամբ հասնիմ.
Թող ըլլայ մաղթանքըս
Քեզ ընդունելի.

*Այս է, Տէր, իմ ջանքըս,*
*Դուն օգնէ ինծի։*

Ա. Յովհ.Գ.3 — Թարգ. *Elias Riggs*

## 235 ՏԷՐ ԻՄ, ՓՐԿԻՉ, ԵԿՈՒՐ

1 *Տէր իմ, Փրկիչ, եկուր,*
*Հաճէ բնակիլ իմ քով.*
*Ըրէ իմ սիրտս մաքուր,*
*Սրբէ զայն քու Հոգւով։*
*Եկուր, Փրկիչ, սիրովդ անճառ,*
*Եւ սիրտս ըրէ քեզ սուրբ տաճար։*

2 *Դուն տիրէ իմ մտքին,*
*Հոգւոյս ալ կիրքերուն,*
*Մինչեւ հըպատակին*
*Քու զօրութեանդ անհուն։*
*Եկուր, Փրկիչ, սիրովդ անճառ,*
*Եւ սիրտս ըրէ քեզ սուրբ տաճար։*

3 *Յայնժամ իմ սիրտս կ'ըլլայ*
*Քու սուրբ սիրոյդ խորան,*
*Որուն վրայ շողայ*
*Արեւն խաղաղութեան։*
*Եկուր, Փրկիչ, սիրովդ անճառ,*
*Եւ սիրտս ըրէ քեզ սուրբ տաճար։*

Սաղ.7, 10 — Թարգ.Գ.Յ.ԿԻՒԼԵՍԱՆ



## 236 ՍՐԲՈՑ ՕՐԻՆԱԿԸ

1 *Տուր ինծ հաւատոյ թեւերը,*
*Որ թըռչիմ ու վեր ելլեմ.*
*Երջանիկ անթիւ սուրբերը*
*Եւ երկնից մեծ փառքն տեսնեմ։*

2 *Հոս երբեմն իրենց մահիճը*
*Արցունքով կը թրջէին,*
*Մեղքերու դաժան փորձութեան դէմ*
*Միշտ կը պատերազմէին։*

3 *«Ուսկի՞ց էր ձեր յաղթութիւնը,»*
*Հարցընեմ. և միաբան*
*Յաղթանակն ու փրկութիւնը*
*Յիսուսի խաչին կու տան։*

4 *Դիտեցին անոր քայլերը,*
*Եւ անոնց հետեւեցան.*
*Մինչեւ որ հասան երկինքը,*
*Անոր սուրբ հանգիստն մըտան։*

5 *Գոհութիւն քեզի, մեր Տէրը,*
*Որ քայլերըդ մեզ կ'ուղղեն,*
*Եւ վըկաներուդ խումբերը*
*Նոյն ճամբան կը ցուցընեն։*

Եբր.ԺԲ.1 — Թարգ. *Elias Riggs*

## 237 ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ

1 Ո՜րչափ օրհնեալ է այն կապանք,
Որով եղբայրքս կը միանանք.
Այս շնորհք տըւաւ մեզի Յիսուս,
Աղբիւրն շնորհաց, Փրկիչ հոգւոյս.

2 Մեր յոյսն ու վախն են հաւասար,
Նաեւ խնդում զըւարթարար.
Մեր մտմտուք, հոգ, նեղութիւն
Չունին բնաւ տարբերութիւն.

3 Մենք մեր եղբօր բոլոր վշտաց
Ենք մասնակից եւ արտասուաց.
Թէ մէկ եղբայր մեզմէ զատուի,
Մեզ ցաւ կու տայ անտանելի.

4 Բայց հաստատուն մեծ յոյս ունինք
Զայն տեսնելու վերին երկինք.
Այս աներկբայ յոյս և հաւատ
Կ՚ընեն ըզմեզ հոգւէ ազատ.

5 Եւ միացած ուրախ սըրտով
Մենք այն օրուան կ՚անձկանք սիրով.
Մեղք, վիշտ և հոգ յանժամ փախչին,
Եւ սէր մաքուր ի մեզ հանգչի.

Հռոմ. ԺԲ. 5



## 238 ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ

1 Եղբայր ենք մենք, մէկ Հօր որդիք,
Չըկայ մեր մէջ մեծ կամ պըզտիկ.
Մէկ ուսուցիչ ունինք՝ Յիսուս,
Մէկ մեր հաւատք, և մէկ մեր յոյս.

2 Մէկ ճամբայով կ՚երթանք մէկ տուն,
Տուն լուսեղէն, յաւերժ սիրուն.
Ուր մահ կամ վախ չը կայ մեզի,
Ամէնքը հոն սիրով են լի.

3 Ի միասին հոն յաւիտեան
Պիտի բնակինք մենք համաձայն.
Ուստի սիրենք հոս մէկըզմէկ,
Մէկ սիրտ ըլլանք և մէկ խորհուրդ.

Մատթ. ԻԳ. 8 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 239 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

1 Եկէք, Տէրն սիրողներ,
Պատմենք ցնծութիւններս.
Մէկտեղ ելլեն մեր քաղցր երգեր
Մինչեւ աթոռն Փրկչիս.

2 Եւ թող անոնք չերգեն,
Որ Տէրը չը ճանչցան.
Բայց Արքային որդւոց ամէն
Վայել է որ փառք տան.

3 Հոս իր սուրբ Սիօնին
Ցնծումն կը վայելենք,
Մինչև հասնինք երկնաւորին,
Իր փառքն անհուն տեսնենք։

4 Ուստի մենք միշտ երգենք,
Բընաւ տրտում չըլլանք.
Էմմանուէլին հողէն կ'անցնինք,
Դէպ ի երկինք կ'երթանք։

Յակ. Ե. 13

## 240 ԽԱՉԸ ՏԱՆԻԼ

1 Միթէ Յիսո՞ւս լոկ խաչն առնէ,
Եւ մարդս ազա՞տ ըլլայ.
Ո՛չ. խաչ մը կայ ամէն մէկուն.
Ինծի ալ խաչ մը կայ։

2 Ի՜նչ երջանիկ վերի սուրբերն,
Որ հոս կը տրտմէին.
Բայց հոն անխառն սէր կը վայլեն,
Ցնծում ալ լիովին։

3 Օրհնեալ է խաչս, պիտի առնեմ,
Մինչև որ մահն ինձ գայ.
Ու վեր ելլեմ, պըսակս առնեմ.
Ինծի պըսակ մը կայ։

Ղուկ. Թ. 23 Թարգ. J. F. Pettibone



## 241 ԱՅՍՕՐ ԱՅԳԻԻՍ ՄԷՋ ԳՈՐԾԷ

1 Օդին մէջ մեղմ, լռիկ, բայց ազդու ձայն մը կայ,
Որ ըստէպ ականջնուս կը հնչէ.
Առտուանց, թէև մենք չըսպասենք, ան կու գայ,
Կէս օրին, իրիկունն ալ մեր շուրջը կ'ըլլայ.
«Այսօր այգիիս մէջ գործէ։»

2 Եւ այս ձայնն ուղղակէս երկինքէն իջնելով՝
Մեզ, ուր որ թափառինք, կը գտնէ.
Թէ՛ դաշտի թէ՛ քաղքի մէջ մեզի հասնելով,
Թէ՛ լսենք և թէ՛ ոչ, անդադար գոչելով.
«Այսօր այգիիս մէջ գործէ։»

3 Ան մեր Հայրն է որ մեզ մեծ սիրով կը կանչէ,
Իր ձայնին հնազանդ ըլլանք մենք.
Անդադար օրհնութիւն իր ձեռքէն մեզ կ'իջնէ,
Մենք ուրեմն, իր սիրոյն նուիրուած ի սրտէ՝
Այսօր այգիին մէջ գործենք։

Մատթ. ԻԱ. 28, 29

## 242 ՕՐ Մ'ԱԼ ՏԷՐՈՋԸ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

1 Տէրոջըս սուրբ գործին մէջ
Օր մ'ալ ինծ տըրուեցաւ.
Երկրիս լըռումը,
Երկնից ծագումը
Օր մ'ալ ինծ մօտեցաւ։

Սիրոյն Փրկչիս
Կ'ուրախանայ հոգիս,
Տէրոջըս սուրբ գործին մէջ
Որ մ'ալ շնորհած է ինձ,
Որ մ'ալ մօտ է երկինքը,
Երկրէս որ մ'ալ պակսած.

2 Որ մ'ալ գործել կրցած եմ
Տէր Յիսուսի համար.
Ինքն է իմ Տէրըս,
Իմ յոյսս ու սէրըս,
Թող հաւատարմաբար
Իմ Տէրս պաշտեմ,
Անոր միշտ ծառայեմ
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն։

3 Որ մ'ալ շնորհուեցաւ ինծ.
Ի՛նչ բերկրութիւն եղաւ
Պատմել թէ Տէրը
Յայտնեց իր սէրը,
Մեզի համար մեռաւ,
Այս պատմելով՝
Իմ սիրտս լեցաւ սիրով.
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն։

4 Որ մ'ալ ջանքով անցած է,
Աշխատանքով լեցուն,
Բայց յայտնուած է
Ու մօտեցած է



Երկնից մէջ փառք անհուն,
Իմ Յիսուսիս
Յանձնեմ յոգնած հոգիս,
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն։

5 Հանգիստ Տէր Յիսուսի հետ՝
Ջանքէն ետև կու գայ.
Քաղցր է այս ջանքը,
Այս աշխատանքը,
Եթէ քու կամքդ ըլլայ,
Ով Տէր, կ'ուզեմ
Որ օր մըն ալ գործեմ,
Տէրոջըս սուրբ գործին մէջ, և այլն։

Յ-հ. Թ. 4 Թարգ. Miss C. E. Bush

## 243 ՀԱՑԴ ՁԳԷ ՋՐՈՑ ԵՐԵՍԸ

1 Հացդ ձըգէ ջըրոց երեսը,
Մի կարծեր թէ կ'ընկղմի.
Թէև ուշանայ արդիւնքը,
Անպատճառ գանես պիտի.
Տուր բաժին եօթնին, ութին ալ,
Կարօտից առատ բաշխէ,
Զի Աստուած խոստում տըւած է,
Որ քեզ աւելի օրհնէ։

2 Հացդ ձըգէ ջըրոց երեսը,
Զի մէկ օրմ տարուած ալեօք,

Բուսնելով հեռու երկրի մէջ
Կը բերէ պըտուղ առատ.
Նոյն կերպով բարի ջանիցդ մէջ
Քեզ կ'օգնեն բուռն ալիքներն՝
Փրկարար ճշմարտութիւնը
Քարոզել երկրիս ծայրերն։

3 Հացդ ձըգէ ջըրոց երեսը,
Ճոխ բարիք միշտ տարածէ,
Թըշուառաց հասցուր դարմանը,
Լըքեալներն մըխիթարէ։
Մի վախնար թէ քաղց հասնի քեզ,
Տէրն պիտոյքդ կը լեցնէ,
Մինչ կու տայ քեզ փոխարէնը,
Վարձքն ալ ևս կը պարգևէ։
Ժող. ԺԱ. 1, 2

## 244 ԵՐԳ ԿԵՆԱՑ

1 Տըխուր ողբով մ'ըսեր ինծի,
Այս կեանքն է լոկ երազ.
Գործ կայ ինծի, գործ կայ քեզի
Ամէն տեղ հանապազ։

2 Կեանք իրական է, փութաջան,
Եւ նըպատակ ունի.
Անոր վախճան չէ գերեզման,
Անգին ալ կը նայի։



3 Կեանքս օգտակար և թանկագին
Ընել ենք հրաւիրուած.
«Դուն հող էիր, դառնաս հողին,»
Հոգւոյն վրայ չէ ըսուած։

4 Ամէն դարու մեծ բարերար
Մարդոց կեանքն կը փայլի.
Մեր ետեւէն հետք օգտակար
Ձըգել է պարտք մեզի։

5 Յառաջ երթանք, վեր նայելով
Մեր կեանքն վըսեմ ընենք.
Արթուն ըլլանք, և եռանդով
Տէրոջը ծառայենք։
Սաղ. ԼԶ. 9, Գ.Ա. 14-16 Թարգ. Elias Riggs

## 245 ԲԱՆ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

1 Յիսուս, քու կեանքդ անգին
Տըւիր ինծի.
Ես պարտական եմ կեանքս
Զոհել քեզի.
Հոգիս թող քեզ պաշտէ,
Իր ուխտը կատարէ,
Նուէր մ'ալ ընծայէ,
Տէր իմ, քեզի.

2 Կ'երթամ աթոռն շնորհաց
Յանուն Փրկչիս.

Հաւատքըս կը նայի
Բարեխօսիս
Օգնէ խաչս տանելու,
Մեծ սէրըդ պատմելու,
Մաղթանքս ալ ուղղելու
Հօր Աստուծոյ։

3 Շնորհէ որ աշխատիմ
Նըման քեզի.
Որ, որ իւրաքանչիւր,
Գործ սիրելի,
Բարիք մը ըսկըսած,
Մէկ օրհնութիւն գործուած,
Մէկ կորուսեալ փրկուած,
Ջեռաքս լինի։

4 Ինչ որ ունիմ եւ եմ՝
Կու տամ քեզի.
Իմ անձս, տրտում, ուրախ,
Քուկին լինի.
Եւ երբ երկրէդ անցնիմ,
Վերն ալ առջիդ իյնամ,
Յայնժամ պիտի ըլլամ
Նըւէր քեզի։

Բ Կոր. Ե. 14, 15

## 249 ԴՈՒՆ ՅՈԳՆԱ՞Ծ ԵՍ

1 Դու յոգնած կամ վըհատա՞ծ ես,
Խիստ կը տանջուի՞ս.



Տէր Յիսուս կ'ըսէ. «Եկուր ինձ
Որ հանգչիս»

2 Ապացոյց կա՞յ ցուցնելու ինձ
Թէ ուղղիչս է Ան.
«Ձեռքերուն, ոտքին, կողին վրայ
Վէրքեր կան։»

3 Կա՞յ զարդարելու պըսակ մը
Ճակտին Իշխանին։
«Կայ, այո՛, փուշէ դափնի մը
Հաւատա։»

4 Ի՞նչ վարձք, եթէ զինք գտնեմ հոս,
Ու հետեւիմ միշտ.
«Շատ արցունք եւ աշխատանք կայ.
Շատ ալ վիշտ։»

5 Թէ խնդրեմ որ ընդունի զիս,
Կը մերժէ՞ զիս Ան։
«Ոչ, մինչեւ երկինք, երկիրն ալ
Վերջանան։»

6 Հետեւիմ, գտնեմ, մնամ ալ,
Ինձ կու տա՞յ օրհնէք.
«Սուրբք՝ Այո, կ'ըսեն. վկայ են
Մարգարէք» Ամէն։

Մատթ. ԺԱ. 28, Յովհ. Զ. 37

Թարգ. ՊՕՂՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ

## 247 ՔՐԻՍՏՈՆԷԻՆ ԳՈՐԾԸ

1 Գործ կայ ինծ յանձնուած,
Երկնից յարմարցնել
Անմահ հոգիս, և իմ Աստուածս
Վարքովս փառաւորել,

2 Բոլոր ընկերներուս
Հոգիներուն համար
Աշխատելով՝ ներկայ դարուս
Ըլլամ միշտ օգտակար։

3 Ով Տէր, ինծի օգնէ
Առջևդ քալելու,
Եւ քու շնորհքովդ զիս պատրաստէ
Վերջին հաշիւս տալու։

4 Վառէ զիս նախանձով,
Հսկեմ, աղօթք ընեմ.
Չը կայ ասկէ զատ ապահով
Ուրիշ ճամբայ, գիտեմ։

5 Եթէ քեզի անսամ,
Ինծ կայ կեանք անվախճան.
Բայց եթէ ուխտադրուժ ըլլամ,
Մահ յաւիտենական,

Մարկ. ԺԳ. 33, 35 — Թարգ. Elias Riggs



## 248 ՈՎ ՏԷՐ, ԹՈՂ ՔՈՒ ՀԵՏԴ ՔԱԼԵՄ

1 Յօժար ծառայութեամբ, ով Տէր,
Ըլլամ քեզի խոնարհ ընկեր,
Սիրոյ գաղափարդ ինծ յայտնէ,
Զիս համբերող ու քաղցր ըրէ։

2 Սիրով, գութով քեզ նմանիմ,
Որ թուլասիրտն մեղմով շահիմ.
Որ մոլորեալը ես բերեմ,
Եւ Հօրը տունն առաջնորդեմ։

3 Յիսուս, շնորհէ մեղմութիւնդ,
Ինծ սորվեցուր համբերութիւնդ.
Սիրով, գործով քեզ հետ քալեմ,
Եւ բարիով չարին յաղթեմ։

4 Թող լոյս ծագի ճամբուս վրան,
Յուսով փայլի թող ապագան.
Խաղաղութիւնդ ինծ տուր, ով Տէր,
Տուր որ ըլլամ քեզի ընկեր։

Կող. Ա. 10 — Թարգ. C. C. Tracy

## 249 ԱՆՁՆՈՒԻՐԱՑՈՒԹԻՒՆ

1 Յիսուս, աշխարհը եմ ձգած,
Ու խաչս առի որ առ քեզ գամ.

Մերկ և աղքատ ու անարգուած,
Հերիք է ինձ որ քեզ ճանչնամ։

2 Այս աշխարհիս սուտ բարիքներ,
Որոնց վրայ կը յուսայի,
Ինծի եղան պարապ բաներ,
Ու քեզ միայն ես իմս ըրի։

3 Թող այս աշխարհ զիս անարգէ,
Տէր Յիսուսի նոյնպէս ըրաւ.
Մարդոց դատումն զիս կը մերժէ,
Բայց դուն զիս մի մերժեր բնաւ։

4 Կարող չէ վիշտ ինձ վնասել,
Երբոր Քրիստոս իմ հետըս է.
Ցաւ, նեղութիւն, տանջանք քաշել
Ինձ բերկրութիւն, ցնծում ալ է։

5 Ով իմ հոգիս, ուրախ եղիր,
Առջեւըդ փառք կայ անդադար.
Վերեւ կոչումըդ լաւ ճանչցիր,
Մարմնոյ վիշտէն ալ մի վախնար։
Ղուկ. Թ. 23

## 250 ԳՈՐԾԵԼՈՒ ԱՏԵՆՆ

1 Ծաղկաւէտ դաշտին վրայ
Ցօղը կը փայլի.
Առաւօտեան հրաւէրն է
Քեզ, ով պատանի։



Օ՜ն, շահէ ջանքովըդ
Ոսկեղէն ժամեր.
Գործելու ատենն է,
Շուտ կու գայ գիշեր։

2 Տես, որ մօտեցած է
Արդ օր հասարակ.
Կէս օրուան յորդորն է
Քեզ, միջահասակ,
Բեռ և տաքութի՞ւն կայ,
Գործըդ մի ձգեր.
Քանզի վարձքըդ մեծ է
Երբոր գայ գիշեր։

3 Կ'երկարին շուքերը,
Օրն կը վախճանի,
Իրիկուան խըրատն է
Քեզ, ով ծերունի։
Քիչ է ժամանակըդ,
Ձեռքըդ չը թուլնայ.
Կատարէ քու գործըդ,
Զի գիշեր կու գայ։
Յովհ. Թ. 4, Հռով. ԺԳ. 11 Թարգ. C. C. Tracy

## 251 ԽՈՐ ՋՈՐԸ

1 Ով տառապանաց աշխարհը,
Ի՞նչ սուր են փուշերդ ինծի.

Ո՞ւր էր որ զիս հանէր մէկը
Այս խոր ձորէն։

2 Ով Իսրայէլի տանողը,
Եկ ամպի, կրակի սիւնով.
Անվրդով անցուր մեր անձը
Այս խոր ձորէն։

3 Քաջ Հովիւ դուն, Տէր Յիսուս իմ,
Բաց քու սիրոյդ բազուկներ.
Հետս եղիր, զօրեղ պաշտպան իմ,
Այս խոր ձորէն։

4 Սուրբ Հոգի, հզօր Աստուած մեր,
Թշնամեաց յաղթէ ուժովդ.
Մի՛ թողուր զիս դեռ չելած վեր
Այս խոր ձորէն։

5 Ո՜հ, ի՛նչ վիշտ ու ցաւ քաշած եմ
Հաս կեանքիս բաժին եղած.
Ընդունէ զիս երբ ելլեմ ես
Այս խոր ձորէն։

Հռովմ. Ը. 35-39 Հեղինակ Ա. Հ. ՃԻՃԻՋԵԱՆ

## 252 «ԱՂԷԿ ԵՂԱՒ ԻՆԾԻ ՈՐ ՎՇՏԱՑԱՅ»

1 Ո՛վ Հայր, օրը հազար անգամ
Վարդից համար քեզ փառք կու տամ.
Իսկ ոչ երբեք փշոց համար
Փա՛ռք քեզ, ըսի վստահաբար։



2 Ցերեկին՝ վարձքի ես ակն ունիմ,
Թէ հոս սիրով կըրեմ խաչն իմ.
Բայց կը մոռնամ թէ այս կենաց
Մէջ ալ առիթ է պարծանաց։

3 Եթէ Որդւոյդ գործն յաջողի
Զարչարանքով կը կատարուի,
Հարկաւ ինձ ալ պէտք են փուշեր,
Արժէք ունին և իմ ցաւեր։

4 Տէր, զիս լո՛ւ ու սիրտս մաքրէ,
Թէեւ անցնիմ հուրէ, ջուրէ.
Եւ փորձութեանց դիմադրելով
Նոր զօրութիւն շահիմ Հոգւով։

5 Իբրեւ մանուկ, Հայր, անվրդով,
Իմին բաժինս գրկեմ սիրով.
Փուշ, խաչ և ցաւ, վիշտեր համայն՝
Թող ինձ թըւին սիրոյդ նշան։

Սաղ. ՃԺԹ. 71 Հեղինակ Տիկ. ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 253 ՆԱՒԸ ՓՈԹՈՐԿԻ ՄԷՋ

1 Խաղաղ էր ծովն Գալիլեայի,
Երբ նաւ մ'անոր վըրան
Ճամբայ ելաւ. շատ հաճելի
Կու գար այն տեսարան։
Սակայն յանկարծ մեծ փոթորիկ
Ծովուն վըրայ կ'ելլէր.

Խաւարն կոխեց, ու հովն սաստիկ
  Ալիք կը վերցնէր։

2 Միայն մէկ անձ չը սարսափած՝
  Նոյն նաւակին մէջ կար.
Այն ալ գլուխը վար դրած՝
  Հանդարտ կը քընանար,
«Ո՛հ, Վարդապետ, քու հոգդ չէ՞,»
  Կ'ըսեն, «մենք կ'ընկղմինք.
Շուտով ելիր ու մեզ փրկէ.
  Ահա կը կորսուինք։»

3 Այն աղաղակն երբոր լսեց,
  Անմիջապէս ելաւ,
Հովերն ու ծովն յանդիմանեց,
  Խաղաղութիւն եղաւ։
Կ'ապշին այն ձայնը լսողներ,
  Եւ իրարու կ'ըսեն,
«Այս ո՞վ է որ ծովն ու հովեր
  Անոր մտիկ կ'ընեն։»

4 Երբ քու նաւակդ, ով հոգիս,
  Ընկղմելու մօտ է,
Յայնժամ վախով չը զարհուրիս,
  Փրկչիդ աղաղակէ։
Այն որ երկինքը կը նայի,
  Կարող է քեզ փրկել,
Սաստել ամէն փոթորիկի,
  Եւ «Լուռ կեցիր» ըսել։



5 Յիսուս, սաստէ զօրեղ խումբովդ
  Մեր թշնամիներուն.
Ալ մեզ չըսեն թէ «Աստուծմով
  Չըկայ ձեզ փրկութիւն։»
Մեր հոգիին «Քու՛ն լեր» ըսէ.
  Քու փրկութիւնդ ճանչնանք,
Եւ ազատուած ամէն չարէ՝
  Քեզմով ուրախանանք։

Մատթ. Ը. 23-27 — Թարգ. Elias Riggs

## 254 ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԷՄԸ

1 Ո՛հ, մերթ ըստուերներն ի՛նչ խոր են,
Կեանքի շաւիղն ի՛նչ դառնագին.
Վըշտեր ալ երբեմն ահագնօրէն՝
Մըրրկի պէս կոծեն մեր հոգին։
  Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
  Դէպ ի Վէմն որ բարձր է քան զանձն իմ։

2 Ո՛հ, մերթ օրն է ո՜րչափ երկար,
Եւ խոնջ եմ մարմնով բովանդակ.
Սակայն ես տաժանք չեմ ըզգար,
Հանգչիմ երբ Վէմին շուքին տակ։
  Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
  Դէպ ի Վէմն որ բարձր է քան զանձն իմ։

3 Մընալ կ'ուզեմ միշտ, Վէ՛մ, քու մօտ,
Աչքերս թէ խինդ կամ շիթ ծորեն.

Ճամբաս հարթ ըլլայ կամ լեռնոտ,
Անցնիմ ալ մահուան մութ ձորէն.
Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպ ի վէհն որ բարձր է քան զանձն իմ։

Սաղ. ԿԱ. 2 — Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 255 ԴՈՒՆ ԶԻՍ ԿԸ ՅԻՇԵՍ, ՏԷՐ

1 Փորձանքներու մէջ անհամար,
Եւ փուշերուն մէջ սըրածայր,
Խորհուրդ մ'անոյշ կ'անցնի մըտքէս
Թէ դուն զիս կը յիշես։
Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ինչ վախնամ երբ մօտ ես ինծ,
Եւ, Տէր, զիս կը յիշես։

2 Կեանքի հոգեր կու գան ուժգին
Մըթագնելու տըկար հոգին.
Կրնամ անոնց կուրծք պարզել ես
Մինչ դուն զիս կը յիշես։
Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ինչ վախնամ երբ մօտ ես ինծ,
Եւ, Տէր, զիս կը յիշես։

3 Թող մութ ամպեր գան ու երթան,
Դժուար կամ հարթ ըլլայ ճամբան.
Հոգ չեմ ըներ, վստահ եմ ես
Որ դուն զիս կը յիշես։



Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ինչ վախնամ երբ մօտ ես ինծ,
Եւ, Տէր, զիս կը յիշես։

Եզեկ. ԺԶ. 60 — Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 256 ՄԻ ԶԻՋԱՆԻՐ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ

1 Ո՛հ, մի զիջանիր, մի անսար փորձիչին,
Զի մէկ զիջանիլն կը տանի ուրիշին.
Մեղքին դէմ կռուէ և կիրքերըդ զըսպէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ.
Քու փրկիչդ կը գըթայ քեզ,
Յաղթութիւն պիտի տայ քեզ.
Կը լնէ քու աղօթքըդ,
Քեզ կը զօրացընէ։

2 Ատէ պղծութիւն և ամէն չար խօսքեր,
Եւ ապականիչ ընկերներ մի՛ սիրեր.
Վախցիր Աստուծմէ, սուրբ անունը յարգէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ.
Քու փրկիչդ, և այլն։

3 Աստուած պիտի վարձք տայ ամէն յաղթողին,
Յաղթէ հաւատքով փորձութեան և մեղքին.
Արթուն եղիր միշտ, եռանդով աղօթէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ.
Քու փրկիչդ, և այլն։

Թես. Գ. 3 — Թարգ. Elias Riggs

## 257 ՀԵՌՈ՜Ւ ԲԱԺԱԿ

1 Ըմպելիքէ կենանք հեռի,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ.
Զոր գործածենք գինի, օղի,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։
Մեզ չէ պիտոյ, օգուտ չունի,
Վնասը շատ, վտանգ ունի,
Հեռո՜ւ բաժակ, հեռո՜ւ բաժակ,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։

2 Տես սա արբշիռն ո՛րչափ տժգոյն,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ.
Ինկած գետին, դէմքը դալկուն,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։
Իր հանդերձներն պատառ'ա, պատառ'ա,
Իր դէմք այլայլ ու խեղճագար,
Հեռո՜ւ բաժակ, հեռո՜ւ բաժակ,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։

3 Խեղճ զաւակունք հաց կը մուրան,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ.
Եւ ամուսինն թափառական,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։
Տունն աւերակ, դրամ չունի,
Ինքը տկար, պարապ շատ ունի,
Հեռո՜ւ բաժակ, հեռո՜ւ բաժակ,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։



4 Ո՛վ բարեկամք, ա՛լ չըխըմենք,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ.
Եւ ո՛չ գընենք, ո՛չ վաճառենք,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։
Ժուժկալութիւնն թէ ընդունինք,
Փորձութենէն բոլ կ'ազատինք,
Հեռո՜ւ բաժակ, հեռո՜ւ բաժակ,
Հեռո՜ւ, հեռո՜ւ բաժակ։

Առակ. ԻԳ. 29-32 Թարգ. Յ. Յ. ԼԵՒՈՆԵԱՆ

## 258 ՅԱՂԹՈՂԻՆ ԱՐՄԱՒԵՆԻՆ

1 Հայր, ճամբաս ինծ սորվեցուր,
Փորձութեան այս ժամանակն
Այնպէս անցընել ցուցուր
Որ տանիմ կենաց պսակն.
Յաղթողին արմաւենին
Ցայնժամ տուր որ ձեռքս տանիմ,
Եւ սրբոց ու հրեշտակաց հետ
Ես նոր երգն երգեմ։

2 Ուրախ սիրով թող լեցընէ
Երկնային քաղցր Աղաւնին.
Զար կիրքերս դադրեցընէ,
Որ յաղթեմ ամէն մեղքին։
Յաղթողին արմաւենին, և այլն։

3 Զիս խաղաղութեամբ լեցուր,
Փոթորիկը հանդարտի.
Գանգատներըս դադրեցուր,
Թող հոգիս սիրովդ հանգչի։
Յաղթողին արմաւենին, և այլն։

4 Հրամանովդ սուրբ հրեշտակներ
Բոլորտիքս բանակ դընեն,
Եւ մերքէն սիրոյդ աչքերն
Մինչև վերջը վրաս հսկեն.
Յաղթողին արմաւենին, և այլն։

## 259 ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ

1 Ո՜վ Քրիստոսի օրհնեալ ծառան,
Աղէկ քեզ պատրաստէ.
Յիսուս Քրիստոս, մեծ առաջնորդդ
Աչքերդ առջին բըռնէ։
Անոր սիրով լեցուած,
Աշխարհն ետեւդ ձգած,
Տէրոջ ձայնին մտիկ ըրէ,
Եւ միշտ յառաջ վազէ։

2 Քու Տէրդ ճամբադ կը պատրաստէ,
Որ անվըտանգ վազես.
Ինկած ատենդ կը վերցընէ,
Որ զինք փառաւորես։



Քեզ միշտ կը կերակրէ,
Վէրքերդ կը բըժշկէ.
Քեզի ալ, երբ փառքովը գայ,
Փառաց պըսակ կու տայ։

3 Քու Տէր Աստուածդ մեղաւորներն
Այն օրն պիտի պատժէ,
Եւ անհնազանդ հետեւողներն
Փառքէն պիտի զրկէ։
Ուստի հնազանդ եղիր,
Շնորհացը մէջ կեցիր.
Վարձատրութեան օրն երբոր գայ,
Վարձքդ մեծ պիտի ըլլայ։

Եփես. Զ. 10, 11

## 260 ՏՈՒՆՍ Է ԵՐԿԻՆՔ

1 Օտարական եմ հոս,
Տունս է երկինք.
Փըրկիչըս է Քրիստոս,
Տունս է երկինք։
Երկրիս վըրայ իբրու
Վըտանգ կայ, միշտ և ցաւ,
Բայց վերը փառք անբաւ.
Տունս է երկինք։

2 Ունիմ հոս փորձութիւնս,
Տունս է երկինք.

Կարճ է պանդխտութիւնս,
Տունս է երկինք.
Մրրիկն է վայրենի,
Սակայն շուտով կ'անցնի.
Ես տունս հասնիմ պիտի.
Տունս է երկինք։

3 Ուստի չեմ գանգատիր,
Տունս է երկինք,
Բաժինըս չէ երկիր,
Տունս է երկինք.
Փրկչիս խոստմունքն ունիմ,
Որ իր աջ կողմը կայնիմ,
Եւ իր աթոռն նստիմ.
Տունս է երկինք։

Եբր. ԺԱ. 13 — Թարգ. Elias Riggs

## 261 ՀՈՍ ՉԻՔ ՀԱՆԳԻՍՏ

1 Իբըր պանդուխտ աշխարհ կը թափառիմ,
Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
Իբըր ճամբորդ երկրի վրայ կը շրջիմ,
Բայց կ'օրհնուիմ, բայց կ'օրհնուիմ.
Աչքս եմ յառած փառաւոր այն օրուան,
Երբ մեղքն ու ցաւ պիտի անհետանան.
Սիրտս կը հրճուի լսելով Փրկչին ձայն,
Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ։



2 Հոս նեղութիւնք և վիշտեր խիստ դառն են.
Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
Հոս կը թողում բարեկամներս ամէն,
Պէտք է երթամ իմ հայրենիք։
Ոհ, ո՜րչափ քաղցր է խոստումն Յիսուսին.
Թէ օրհնեալ են ոյք ի Տէր ննջեցին.
Արժանացած փառաւոր վիճակին,
Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ։

3 Իբր անապատ է աշխարհս վշտալից,
Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
Հոս վարած կեանքըս է կեանք մեղսալից.
Փրկչիս արիւնն կը քաւէ զիս։
Շուտ չարիքէն պիտ՝ ըլլամ ազատեալ,
Շուտ պիտ՝ երթամ Յիսուսի գիրկն իյնալ,
Հոն պիտ՝ ըլլամ յաւիտեանս օրհնեալ,
Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ։

Ա Մնաց. ԻԹ. 15

## 262 ԵՍ ՊԱՆԴՈՒԽՏ ԵՄ

1 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ.
Զիս մ'արգիլեր դուն, քանզի կ'երթամ ես,
Որ միշտ կենաց աղբիւրէն խմեմ ես։
Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ։

2 Կը ցանկամ ես տեսնել այն փառքը,
Զոր երկնից մէջ միշտ սուրբերն կը վայելեն,
Այս աշխարհի մէջ ճամբաս շատ մութ է,
Բայց այն օրհնեալ երկինքը պայծառ է։
Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ։

3 Այն քաղաքը՝ ուր որ կ'երթամ ես,
Իմ Փրկչիս պայծառ լոյսովը կը փայլի.
Հոն ոչ ցաւեր կան և ոչ վիշտեր ալ,
Ոչ արցունքներ, ոչ արտմութիւններ ալ։
Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ։
Ծն. ԻԳ. 4, Սաղ. ԼԹ. 12

## 263 ԵՐԿՆԻՑ ՓԱՅԼՈՒՆ ԴԱՇՏԵՐԸ

1 Շուտով օրերս կ'անցնին կ'երթան.
Ու ես, որ հոս պանդուխտ եմ,
Փափաք չունիմ որ միշտ կենամ,
Քանզի հոս շատ նեղուած եմ։
Յորդանանու գետին հասանք,
Կ'անցնին մեր ընկերները.
Ու մեր գլխուն կը տեսնուին
Երկնից փայլուն դաշտերը։

2 Ուստի, եղբարք, արթուն կենանք,
Նոյնինք մեր Հօրը տունը.



Փրկչին ձայնին լսող ըլլանք,
Շահինք մեծ փրկութիւնը։
Յորդանանու գետին հասանք, և այլն։

3 Մենք հոս ըստէպ ցաւեր կը կրենք,
Ու մեր սրտեր խոցուած են.
Բայց յաւիտենական վայելք
Մեզի յերկինս պահուած են,
Յորդանանու գետին հասանք, և այլն։
Սաղ. Դ.

## 264 ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ԵՐԳ

1 Ել, հոգիս, թեւերդ լայն բաց,
Վերին կոչումդ յիշէ.
Այս կեանքին բաներն ձգած՝
Դէպ ի երկինք թռչէ։
Արեգակ, լուսին, աստղեր,
Ու աշխարհս ալ շուտ կ'անցնին.
Ել, հոգիս, արդ դէպ ի վեր,
Ի կողմն Տէր Յիսուսին։

2 Գետն ի ծովը կը վազէ
Բընաւ կանգ չառնելով.
Ծառն դէպ ի երկինք կ'ելլէ
Ըստեղծողին կամքով։
Ու այսպէս Հոգւով ծնածն
Վեր կ'ելլէ արտորալով,

Որ տեսնէ փառաց Աստուածն,
Հանգչի հոն ապահով։

3 Ի՞նչ է փառք, հարստութիւն,
Երբ վեր աչքերս յառեմ.
Փուճ՝ աշխարհ, մարմին, արիւն,
Անոնց հընարքն կ'ատեմ.
Պանդուխտներ տուն չեն շիներ,
Օտար մարդն առտուն կ'երթայ.
Երբ անցնի լոկ մէկ գիշեր,
Կ'ուզէ ելլել ճամբայ։

4 Պանդուխտներ, ալ մի տրտմիք,
Առէք ձեր յաղթանակն,
Ծոյա ձեր Տէրը, սիրելիք,
Ձեզի կու տայ պըսակն։
Քիչ ատեն համբերելով՝
Ձեր վայելքն ալ կը տրուի.
Ու ցաւերն հոս թողելով՝
Հանգչիք ծոցն Յիսուսի։

Փիլ. Գ. 14

## 265 ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ

1 Ո՞ւր կայ հանգստութիւն
Յոգնած, տրտմած հոգւոյն.
Ունայն է ծովը զայն փնտռել,
Կամ մինչ բեւեռն քալել։



2 Աշխարհըս չըկրնար
Երջանկութիւն մեզ տալ.
Կեանք չէ՝ այս կեանքն ապրիլ միայն,
Ո՛չ ալ մեռնիլ՝ այս մահն.

3 Այս արտասուաց ձորէն
Անդին կեանք կայ նորէն.
Այն չը չափուիր տարիներով,
Լեցուն է սուրբ սիրով։

4 Ուրիշ մահ մ'ալ կու գայ,
Որուն վախճան չըկայ.
Ո՛հ, ի՛նչ ցաւեր դառն, անվախճան,
Երկրորդ մահուան մէջ կան։

5 Աստուած, Տէր գըթութեան,
Շնորհքդ թափէ մեր վրան,
Որ մենք փախչինք այն մահուանէ,
Ու չը զատուինք քեզմէ։

Եբր. Դ. 8-11

## 266 ՑՆԾՈՒՄՈՎ ՎԱԶԵՆՔ

1 Մենք ցնծումով, ցնծումով միշտ վազենք,
Մինչ սուրբերուն փառաւոր տեղն ելլենք.
Տէր Յիսուսի ձայնն լսենք ու ցնծանք,
Ու ցնծումով, ցնծումով քովն երթանք։

Կարճ է ճամբան, շուտ պիտի վերջանայ,
Մեր տունը միշտ Աստուծոյ քով ըլլայ։
Տէր Յիսուսով փրկութեան, ո՜հ, հասնինք,
Հոն ցնծումով, ցնծումով միշտ հանգչինք։

2 Մեզմէ առաջ գացողներ շատ եղան,
Եւ մեզ ալ հոն տեսնելու կը ցանկան,
Որ Գառնուկին քաղցրաձայն երգ երգենք,
Միշտ ցնծումով, ցնծումով զայն օրհնենք։
Քաղցր ձայներ ականջնիս կը հասնին,
Փրկեալներուն քնարներն կը լսուին։
Սուրբ հրեշտակաց մեղեդին կը լսենք,
Հոն ցնծումով, ցնծումով կը վազենք։

3 Մահը շուտով թէեւ մեզ հոն տանի,
Չը վախնալով վեր ելլենք Յիսուսի։
Գերեզմանին մէջ անոր պէս պառկինք,
Եւ ցնծումով անոր հետը ննջենք։
Սուրբ յարութեան առաւօտը ելլենք,
Մահն յաղթըւած, խափանուած ալ տեսնենք։
Սուրբ երկնային քաղաքին մէջ շրջինք,
Հոն ցնծումով, ցնծումով բնակինք։

Բ. Կոր. Ե. 1, 8

## 267 ԵՐԿՆԻՑ ՃԱՄԲԱՆ

1 Մենք երկնից ճամբան գտած ենք,
Տէր Յիսուս անոր լոյսն է.



Ցորեկուան ու գիշերուան մէջ
Մեզ պիտի առաջնորդէ.
Երբ անցնինք անհեղ հոսանքը
Դէպ ի հանգըստեան երկիրը,
Չենք կորսնցըներ շաւիղը,
Զի Փրկիչն մեզի է լոյս։

2 Այն օր կատաղի ալիքը
Շուտ կրցու խաղաղցընել,
Կը ցրուէ մեր արհաւիրքը.
Այն կրնայ հոգին փրկել՝
Երբ անցնինք, եւ այլն։

3 Ով Հովիւ, առաջնորդէ մեզ,
Մեր ոտքերն չը մոլորին.
Վըտանգէ դու պահպանէ մեզ,
Որ պահենք միշտ մեր ուղին։

Յովհ. ԺԴ. 2-6 Թարգ. Elias Riggs

## 268 ՀՐԵՇՏԱԿԱՑ ՈՂՋՈՅՆԸ

1 Իմ տունս է յերկին, հոս չըկայ ինձ հանգիստ,
Արդ հի՞մ տրտնջեմ, երբ յայտնին փորձեր խիստ.
Լըռէ՛, ներսիմ սիրտ, յաւերժոյնն չոր խիթաս՝
Զու գիտ լոկ կարճէ. ի քո տուն մերձենաս։
Անդ են զըւարթունք գան իւրեանց դաշնակով,
Բարեւ՜ս գաս, կ'երգեն քաղցրալուր ձայներով.

Կանգնելու ի բիւրեղ դուռն ոսկի լուսավառ
Նուագեն ինձ ողջոյն յաւերժանցի հրճուագաւառ։

2 Ինծի համար չէ իմ բարիքս որոնել
Յաւիտեան մի աշխարհ, ո՛չ յոյսերս հոն կերտել.
Քաղաք՝ զայն դիտեմ զոր ձեռք ոչ է հիմներ,
Երկրի փափաքիմ զոր մեղք ոչ է պղծեր.
Անդէն զուարթունք, և այլն։

3 Փուշեր, տատասկներ թող ամէն շուրջ գինե,
Հակիլ չեմ կամիր ես վարդից հոս վերև.
Ես ո՛չ զիմ բաժին, ո՛չ հանգիստ կը խնդրեմ
Մինչև որ յաւէտ փրկչին գիրկ զայն գտնեմ։

Բ Կոր. Ե. 1 Թարգ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐՊԷՅ

## 269 ԻՄ ՏՈՒՆՍ Է ԵՐԿԻՆՔ

1 Իմ տունս է երկինք, հոս չըկայ ինձ հանգիստ.
Արդ ի՞նչ տրտնջեմ, երբ հասնին փորձեր խիստ.
Լռէ, աղխուր սիրտ. Թէ գայ իսկ յուսեգոյնն,
Ուղիղ կը կարճէ, շուտ տանի քեզ Հօրդ տուն.
Յայնժամ հրեշտակներն գան իրենց դաշնակով,
Ողջոյն նուագել փաղփրալեր ձայներով.
Բիւրեղ դրանց մէջ ոսկի լուսավառ
Կ՚երգեն, Բարեւ գոյ այս մեր սուրբ
բնագաւառ։

2 Ինծի համար չէ իմ բարիքս փնտռել
Մէջ այս աշխարհի, կամ յոյսերս հոս կանգնել.



Քաղաքն այն դիտեմ զոր ձեռքեր չեն հիմներ,
Երկրին փափաքիմ ուր որ մեղք չէ մըտեր.
Յայնժամ հրեշտակներն, և այլն։

3 Թող շուրջը ամէն սուր փուշեր, տատասկներ.
Երկրի վարդից վրայ ես հանգչիլ չեմ ուզեր.
Ես ոչ իմ բաժինըս ոչ հանգիստ կը խնդրեմ
Մինչև որ յաւէտ փրկչին գիրկ զայն գտնեմ.
Յայնժամ հրեշտակներ, և այլն։

Կոր. Ե. 1 Թարգ. Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## 270 ԻՄ ԿԵԱՆՔՍ Է ՔՐԻՍՏՈՍ

1 Իմ կեանքըս է Քրիստոս,
Եւ ինձ օգուտ է մահ,
Խաչս ինձ կու տայ ուրախութիւն,
Բոլոր վընաս է շահ.

2 Հոս լոկ պանդուխտ եմ ես,
Իմ տունս է վերն շինուած.
Ամէն գիշեր վրանս կանգնելով
Օր մ՚ալ եմ մօտեցած։

3 Ընկերս է Տէր Յիսուս,
Անոր ճամբան կ՚ընտրեմ.
Անոր ցուպին մասնակցելով
Անհուն հրճուանք վըսեմ

4 Լերանց վրայ արշալոյս
Զորերն կ'արթնցընէ.
Լոյս երկնային աչքիս առջև
Խաւարն կը հալածէ.

5 Ճամբուս վախճանն է մօտ,
Հանգչիլ ես կ'արտորամ,
Փուշ գանձերով զիս մի՛ փորձեր,
Իմ թագս առնել կ'երթամ։

6 Մընամ հաւատարիմ
Մինչ ձայնն Փրկչիս ըսէ,
«Ողջո՜յն, ծառայ իմ սիրելի,
Իմ փառքըս ժառանգէ։»

Փիլ. Ա. 21 Թարգ. C. C. Tracy

## 271 ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ

1 Տըրտմած անձս երբ կարենամ
Իմ անձս Տէրոջ յանձնել,
Խոնարհ սըրտով կարող ըլլամ
Պատժող Աստուծս օրհնել,
Շուտով վըրաս ցընծում կու գայ,
Տըխուր հոգիս կ'ուրախանայ.

2 Գըթած Փրկչիս ոտքերն իյնալ
Դառն վիշտերով պատած,
Եւ հոն աղօթք ընել ու լալ
Շատ արցունքներ թափած՝



Անուշ կու գայ իմ հոգիիս,
Զի Տէրն լըսող է իմ ձայնիս։

3 Օրհնեալ է ան երբոր կու տայ,
Օրհնեա՜լ երբ ետ կ'առնէ.
Սիրով ինծի այցի կու գայ,
Սիրով ալ կը պատժէ.
Աստուած արդար է և բարի,
Իր կամքը թող միշտ կատարուի։

Բ. Կոր. Զ. 10

## 272 «ՄԻՆՉԵՒ ՈՐ ՏԷՐԸ ԳԱՅ»

1 Մի՛ գանգատիր, ով իմ հոգիս,
Քու կեանքդ է կարճ, գործ շատ ունիս.
Ինչ տաղանդներ որ Տէրն քեզ տայ,
Լաւ գործածէ «Մինչև որ գայ։»

2 Թէ նեղութիւնք դէզ դէզ ելլեն,
Աջ և ահեակ քեզ պաշարեն,
Մի՛ շուարիր, հանգիստ մը կայ
Բոլոր սրբոց «Երբ Տէրը գայ։»

3 Խոնարհ եղիր, սակայն արի.
Յառաջ մըղէ քու գործդ բարի.
Քու Տէրդ է մօտ, սիրտդ ուժովնայ,
Քու գիրքդ պահէ «Մինչև որ գայ։»

4 Եւ երբ ընթրեաց Տէրունական
Հաղորդ կ'ըլլաս մարմնոյն, արեան,

Պատմէ այլոց՝ սէրն անմոռաց,
«Մինչեւ որ գայ քեզ Տէրն» փառաց։

5 Անյոյս չըլլան քեզ դառն վիշտեր,
Երբ սիրելիքդ ննջեն ի Տէր.
Մահէն անդին անվերջ կեանք կայ,
Կը միանաք «Երբ Տէրը գայ։»

6 Ո՛վ անձկալից սիրտ, համբերէ,
Թէեւ փառաց կառքն յապաղէ,
Կ'անցնին ցաւերդ, վախճան կու գայ,
Քու ոյժդ կրկնէ «Մինչեւ որ գայ։»

7 Երբ քու աչք, ոտք, բազուկ, մարմին
Լոյսէ, ուժէ ա՛լ զրկուին,
Ծոյլին՝ պատիժ, իսկ քեզ՝ վարձք կայ,
Փառաց պսակ, «Երբ Տէրը գայ։»

Ա Կոր. ԺԱ. 26, Յայտ. ԻԲ. 7, 20

Հեղինակ Տիկին Հռ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 273 ԵԿՈՒՐ ԻՆԾԻ

1 Շուրջըս կենաց յուզեալ ծովուն
Լացով իմ աչքըս | կը նա | յի. ||
Բայց ինծ կու գայ մի ձայն սիրուն.
Եւ այն կ'ը | սէ, «Ե | կուր ին | ծի։» ||

2 Կ'ըսէ թէ «Քու նեղեալ հոգւոյս
Հանգստութիւն կը | գտնը | սի. ||



Ո՛հ, երբ կ'ըլլամ յոգնած, անյոյս,
Ի՛նչ քաղցր այն | ձայն, «Ե | կուր ին | ծի։» ||

3 Երբոր վախճանս կը մօտենայ,
Ու սիրտըս շատ կը | զարհու | րի, ||
Մահուան երկիւղը վրաս կու գայ,
Այն ձայն կ'ը | սէ, «Ե | կուր ին | ծի։» ||

4 «Աշխարհս կ'անցնի, եկուր ինծի,
Երկիրս բնաւ հան | գիստ չու | նի. ||
Աչքերդ դէպ ի երկինք վերցուր,
Ես եմ բա | ժինդ, ե | կուր ին | ծի։» ||

5 Ով ձայն գըթած, ով ձայն սիրուն,
Ցաւ կամ տագնապ երբ | վրաս հաս | նի, ||
Տուր խրախոյս դուն իմ հոգւոյն,
Մեղմով ը | սէ, «Ե | կուր ին | ծի։» ||

Յայտ. ԻԲ. 17 Թարգ. C. C. Tracy

## 274 ՏԷՐԸ ՄԵՐ ՄԻԱԿ ՄԽԻԹԱՐԻՉԸ

1 Նեղեալ հոգւոյս դուն օգնական.
Երբ տրտմութիւնք իմ վրաս կու գան,
Երբ զիս պատէ ծովնեղութեան,
Քեզի դիմեմ, Յոյս իմ միայն։

2 Կ'ուզեմ ցաւերս քեզի յայտնել,
Զի դուն կարող ես բժշկել.

Քու խօսքդ միայն զիս կ'ազատէ
Վրաս եկած ամէն ցաւէ։

3 Բայց երբ իմ ներսս երկմտիմ,
Սիրտս եւս բանալ երբ վարանիմ,
Ուրախութիւնըս կը հատնի,
Բոլոր իմ յոյսըս կը կորսի։

4 Արդ, ո՞ւր երթամ, Տէր սիրական,
Դուն ես միայն ինծ օգնական.
Հոգիս քեզի կ'ապաւինի,
Ցաւոց մէջէն քեզ կը նայի։

Բ Կոր. Ա. 3, 4

## 275 ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ

1 Յիսուս, դուն մեզ մխիթարէ
Մեր նեղութեանը մէջ.
Աստուած Փրկիչ, մեզ պաշտպանէ
Մինչեւ մեր կենաց վերջ։

2 Դուն Սուրբ Խօսքովդ ըսիր մեզի,
«Եկէք ինծ, յոգնածներ,
Ինծմէ գտէք հանգիստ սրտի,
Թըշուառ բեռնաւորուածներ»։

3 Ով Տէր Յիսուս, քեզի կու գամ,
Տուր ինծ հանգըստութիւն.



Սրտիս ցաւերն քեզ կը բանամ,
Տուր ինծ, դուն, ցնծութիւն։

4 Քեզմէ զատ ուրիշ ո՞ւր երթանք,
Չի դուն ես փրկութիւն.
Քեզի գալով կեանք կը գտնանք
Եւ սուրբ խաղաղութիւն։

5 Դուն մեզ օգնէ ի մէջ վշտաց,
Յիսուս, քեզ կ'աղաչենք,
Որ քու անունդ միշտ գերապանծ
Անդուլ փառաւորենք։

Բ Թես. Բ. 15, 16

## 276 ԻՆՔ ԿԸ ՀՈԳԱՅ

1 Հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Վըստահէ միշտ իր խօսքին.
Գիտ' անտես թէ միշտ Ինք է
Ապաստան մը թանկագին։

2 Իր ձեռքերն քեզ կը բանեն,
Կանգնելու քեզ ոյժ կու տայ,
Չի Յիսուս իր սիրածներն
Կը պահէ միշտ անսասան։

3 Այս երկինք ու այս երկիր
Թող անցնին ու չիք դառնան.

Բայց անոնց ձըրի շնորհքն իր
Անփոփոխ է յաւիտեան։

4 Ով Յիսուս, Տէր բարերար,
Վէմ անխախտ եղիր մեզ դուն.
Թո՛ղ ըլլանք փրկմամբ մենք յար
Սիոնի պէս հաստատուն։

Սաղ. ԾԵ. 22 Թարգ. Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

## 277 ՀՈԳԴ ՏԷՐՈՋԸ ՎՐԱՅ

Հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Տէրոջը վրայ ձգէ,
Հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Ու ան քեզ պիտի խընամէ ու մխիթարէ,
Քեզ պիտի խընամէ ու մխիթարէ,
Քեզ պիտի խընամէ ու մխիթարէ,
Քեզ պիտի խընամէ ու մխիթարէ,
Հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Հոգդ Տէրոջը վրայ ձգէ։

Ա Պետ. Ե. 7

## 278 ՏՐՏՄԵԱԼ ՀՈԳԻՈՑՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

1 Խաղաղութիւն ըլլայ քեզի,
Ով վըշտալից տըրտմեալ հոգի.



Արդ աղաղակդ թող դադարի,
Եւ արցունքներդ շուտով կըտրի.
Ահա, քեզ դէմ գըտնըւեցաւ,
Որ վերցընէ կըսկիծդ ու ցաւ։

2 Թէեւ սրտիդ հառաչանքէն,
Դառնակսկիծ սաստիկ ցաւէն
Սորված են պինդ ապառաժներ
Ողբերգական եղանակներ,
Բայց Տէրն վէրքերդ կը բըժշկէ,
Բոլոր մեղքերդ ալ կը քաւէ,

3 Ով մարդ, մեղքով բեռնաւորուած,
Եկ համարձակ Տէրոջդ գըթած.
Քու ծանըր բեռդ մէկդի ձըգէ,
Եւ ապաւէնդ Քրիստոս ըրէ.
Տէրն է փրկիչդ. ի՜նչ խօսք օրհնած.
Դուն միշտ սիրէ, օրհնէ զԱստուած,

Ղուկ. Դ. 17-21

## 279 ՁԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1 Վեր նայէ վեր, սիրելի հայր,
Թո՛ղ վիշտերըդ ձանձրալի.
Վեր նայէ վեր Յիսուսի միշտ,
Որ սիրեց մեզ աւելի։
Վեր նայէ վեր, սիրելի մայր,
Ո՜հ, ի՜նչ մարդասէր Յիսուս,

Կը սպասէ քեզ որ խնդրես զինք,
Եւ հոգերդ մէկդի թողուս։

2 Վեր նայէ վեր, սիրելի հայր,
Մեր այս կեանքն շուտով կ'անցնի.
Բայց անճառ ցնծում երկնից մէջ
Անցեալին տեղ կը ստացուի։
Վեր նայէ վեր, սիրելի մայր,
Թո՛ղ հոգերդ խիստ վշտալի.
Սուրբ սրտով, ջերմ աղօթքով մենք
Գանք մեկտեղ յերկինս պիտի։

3 Վեր նայէ վեր, սիրելի հայր,
Դէպ ի տունըդ երկնաւոր.
Հոն ամէնքըս խաչ կրած ենք,
Հոն հանգիստ կայ փառաւոր։
Վեր նայէ վեր, սիրելի մայր,
Վեր՝ պայծառ երկնից կամար.
Որ յիշես այն խոստացեալ փառք,
Որու դու ժառանգ եղար։

4 Վեր նայէ, սիրուն եղբայր, վեր,
Օ՛ն, ամէնքս յառաջ երթանք.
Քաղցր հանգիստ փնտռենք երկինքը,
Շուտ կ'անցնի անտի այս կեանք,
Վեր նայէ վեր, սիրելի քոյր,
Քու վերին տունդ բերկրալից.



Հոն ուր կը յուսանք մեկտեղ գալ,
Անվախճան սիրով բնակիլ։

Ես. ԻԶ. 3 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

## 280 ՏԷՐԸ ՊԻՏԻ ՀՈԳԱՅ

1 Կերպով մը անշուշտ պիտի Տէրը հոգայ.
Իմ կերպըս չըլլայ թող,
Քու կերպըդ չըլլայ թող,
Բայց Տէրը պիտի իր կերպովը հոգայ։
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ։

2 Յարմար ժամու մէջ պիտի Տէրը հոգայ.
Իմ ժամըս չըլլայ թող,
Քու ժամըդ չըլլայ թող,
Բայց Տէրը պիտի իր ժամուն մէջ հոգայ,
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ։

3 Մի յուսահատիր, պիտի Տէրը հոգայ.
Ինչ ինչ որ խոստած է
Անվրէպ կատարած է.
Վստահ ըլլանք, Տէրը անշուշտ կը հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ.

4 Օ՛ն, Տէրը ծովուն մէջ ճամբայ կը բանայ.
Ինք միշտ յաղթական է,
Մեզի ալ պաշտպան է.
Մեր երգն այս ըլլայ. «Պիտի Տէրը հոգայ»։
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա. պիտի նա հոգայ։

Սաղ. Խէ. 5, Մատթ. Զ. 25-34 Թարգ. Elias Riggs

## 281 ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

1 Գաղտնի իմաստութեամբ Աստուած
Հրաշքներ կը կատարէ,
Փոթորիկին վրայ նստած՝
Ամպերն իր կառքն կ'ընէ։

2 Իր առաջնորդութիւնքն անհուն՝
Հանք են խոր հանճարի.
Իր գերագոյն խորհուրդն փայլուն
Ի գործ պիտի դրուի.

3 Վախկոտ սուրբեր, ո՛հ, քաջ եղէք.
Ամպերն երկիւղ կու տան,
Բայց վախճանին ըսպասեցէք,
Բարիք պիտի տեղան։

4 Տկար աչքով ու խորհուրդով
Դուք Տէրը մի՛ դատէք.
Խոժոռ նայուածքներուն ներքև
Ժպիտ պիտի տեսնէք։



5 Խորհուրդն ամէն ժամ կը բացուի,
Պիտի շուտ հասուննայ.
Բողբոջն թէպէտ դառն գտնուի,
Ծաղիկն անոյշ կ'ըլլայ։

6 Թերահաւատութիւն մարդկան
Մոլար է, կը խաբէ.
Աստուած ինքն է իրեն թարգման,
Ամէն բան կը պարզէ։

Ես. ԽԲ. 16 Թարգ. Elias Riggs

## 282 ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱՒԷՆԸ

1 Տէր Աստուած մեր ապաւէնը
Ու մեր զօրութիւնն ալ է.
Ինք մեր նեղութեան ատենը
Կը սփոփէ և կը փրկէ։

2 Մեր Տէրոջը ժողովուրդը
Թող աւերմըն չը վախնայ.
Զի իր յոյսը հաստատուած է
Ճշմարիտ հիման վրայ։

3 Թէպէտև դառն ջուրերը,
Ու ծովուն ալ մէջ ձգուին
Յաւիտենական լեռները,
Բայց պիտի ան չը շարժի։

4 Մեր Սիոնը ապահով է,
Զի իր Տէրը կը տիրէ.

Եւ իր յոյսը Աստուծմով է.
Անիկա կ'առաջնորդէ։

5 Եհովայ, Զօրաց Աստուածը,
Օգնական մեզի կ'ըլլայ
Ինքը, Յակոբին Աստուածը,
Կը տիրէ երկրիս վրայ։

6 Տէր Աստուած մեր ապաւէնը,
Ու մեր զօրութիւնն ալ է,
Ինք մեզ նեղութեան ատենը
Կը սփոփէ և կը փրկէ։

Սաղ. ԽԶ. Թարգ. Elias Riggs

## 283 ԱՅՍՕՐ ԱՒԵԼԻ ՄՕՏ ԵՄ

1 Քաղցրիկ աղբիւր խորհուրդ մը կայ,
Կրկին կրկին իմ միտքս կու գայ.
Մօտ եմ երկնից ա՛լ աւելի,
Այսօր քան թէ երբեք էի։

2 Մօտ եմ իմ Հօրս երկնաւոր
Ինծ պատրաստած տան փառաւոր.
Մօտ եմ ճերմակ մեծ աթոռին,
Մօտ եմ յասպիս փայլուն ծովին։

3 Կենացս վախճանն ա՛լ աւելի
Մօտ է, որ բեռս ուսէս ձգուի.
Մօտ եմ իմ խաչս վար դնելու,
Մօտ եմ պսակս ժառանգելու։



4 Հայր իմ, եղիր ինծ վէմ ամուր,
Տըկար մարմինս դուն զօրացուր.
Զիս քու զօրեղ թեւովդ բռնէ,
Յոյսս անհաստատ դուն հաստատէ։

5 Պատրաստ ըլլամ մահուան գետէն
Անցնիլ, երբոր կանչես մէկէն.
Թերեւս մօտ եմ ա՛լ աւելի,
Քան թէ իմին միտքէս կ'անցնի։

Հռովմ. ԺԳ. 11 Թարգ. Տիկին Հռ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 284 ԹՈՂԷ ՔՈՒ ՑԱՒԵՐԴ

1 Թողէ քու ցաւերդ,
Ով թերահաւատ,
Սրբէ արցունքներդ,
Մ'ըլլար յուսահատ.
Բոլոր տրտմութիւններդ
Պատմէ Յիսուսի.
Շուտով նեղութիւններդ
Պիտի փարատի։

2 Խաւա՞ր է գիշերը,
Լոյս պիտի ծագի.
Քեզի համար Տէրը
Միշտ հոգ կը տանի.
Խընդրէ իր արեւը,
Անշուշտ քեզ կու տայ,

Դիմէ անոր քովը,
Քու բեռդ կ՚ամբառնայ։

3 Քեզի ինչ նըպաստ է
Մեծ իմաստութեամբ.
Օգնել միշտ պատրաստ է
Անհուն գըթութեամբ.
Գընա և տրտմածը
Դուն մըխիթարէ.
Բոլոր մընացածը
Տէրոջըդ պահէ։

Ես. ԼԵ. 10 Թարգ. Elias Riggs

## 285 ԽԱՉԻՆ ՔՈՎ ՏԵՂ ԿԱՅ

1 Քեզ համար, ով ուղւոր,
Խաչին քով տեղ կայ,
Քու սըրտիդ վիշտերն բոլոր
(Ինչ հրաւէր կու տայ)
Հիմա քու Փըրկչիդ պատմէ.
Ամէն բան այստ խօսէ,
Ինք անշուշտ քեզ կը լսէ.
Խաչին քով տեղ կայ։

2 Մոլորող, ո՛հ, արտորցիր,
Խաչին քով տեղ կայ.
Փրկութեան ճամբան գըտիր,
Երջանի՛կ ճամբայ.



Ով յոգնած, բեռնաւորած,
Փորձութիւններով տանջուած,
Հանգըստեան ես հրաւիրուած.
Խաչին քով տեղ կայ.

3 Ալ անհո՞գ ես, մեղաւոր,
Խաչին քով տեղ կայ.
Յիսուս դիմէ այսօր,
Ինք միայն կրնայ
Քու բոլոր մեղքերդ ներել,
Տարակոյսդ վերցնել,
Եւ հոգիդ մըխիթարել.
Խաչին քով տեղ կայ։

4 Տես, աղբիւր մը կենդանի,
Խաչին քով տեղ կայ,
Բաց ինծի է, բաց քեզի.
Զրկալէս թող գայ
Թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ,
Թէ՛ ծառայ և թէ՛ ազատ.
Մի ըլլար դու յուսահատ,
Խաչին քով տեղ կայ։

5 Հարսը և Հոգին կ՚ըսեն,
Խաչին քով տեղ կայ.
Լըսողներն ալ թող պատմեն,
Թող աշխարհ գիտնայ
Թէ սիրոյն գանձն է լեցուն,
Եւ ողորմութիւն անհուն

Մատուցուած է ամէնուն.
 Խաչին քով տեղ կայ։
Կող. Ա. 19-22

## 286 ԱՒԵԼԻ ՄՕՏ ԵՐԿՆԻՑ

1 Մէկ քաղցր վըսեմ խորհուրդ
Շատ հեղ կու գայ ինծի.
Մօտ եմ երկնից այս օր, այս օր,
Քան զոր երբեք էի։
 Մօտ եմ երկնից,
 Մօտ եմ երկնից,
Մօտ եմ երկնից այս օր, այս օր,
Քան զոր երբեք էի։

2 Մօտ եմ իմ Հօրըս տանն,
Ուր օթեւանք շատ կան.
Մօտ եմ մեծ աթոռին այս օր,
Մօտ՝ եւ ակի դըրան,
 Մօտ եմ երկնից,
 Մօտ եմ երկնից,
Մօտ եմ երկնից այս օր, այս օր,
Քան զոր երբեք էի։

3 Մօտ եմ գերեզմանին,
Ցաւէս ազատելու.
Մօտ՝ խաչըս ձըգելու այս օր,
Պըսակս իսկ առնելու։



 Մօտ եմ երկնից,
 Մօտ եմ երկնից,
Մօտ եմ երկնից այս օր, այս օր,
Քան զոր երբեք էի։

4 Փրկիչ իմ, մօտս եղիր
Երբ խոր ձորէն անցնիմ.
Զի մօտ եմ ես երկնից այս օր,
Քան զոր ես կը խորհիմ։
 Մօտ եմ երկնից,
 Մօտ եմ երկնից,
Մօտ եմ երկնից այս օր, այս օր,
Քան զոր երբեք էի։

Եբր. ԺԱ. 16 Թարգ. ԳԱՑԻՈՍ ՔԷՄԱԼԵԱՆ

## 287 ՊԻՏԻ ԾԱԾԿԷ ԶԻՍ

1 Երբ յուզուին մրրիկք կենաց իմ,
Վըրդովին ծով ու ցամաք,
Ապաստան պիտի փնտռեմ ես
Աստուծոյ թեւերուն տակ.
 Կը ծածկէ զիս, կը ծածկէ զիս,
 Ոչ մէկ վնաս հոն չի հասնիր ինձ.
 Ապահով զիս կը ծածկէ
 Տէրս Իր թեւոց հովանւոյն տակ։

2 Տառապանք թող յորձանքին վրայ,
Մինչ կ'ուղղեմ աչքս ի վեր ես,

Զի սիրով և ոչ ցասմամբ՝ ինձ
Կը հանեն անոնք Հօրմէս։
Կը ծածկէ զիս, և այլն։

3 Յարձակի թող թշնամեաց գունդ,
Սատանան շանթեր ցանէ.
Տէրն անանց հարուածներէն բիւր՝
Բիւր բերկրանք պիտի հանէ։
Կը ծածկէ զիս, և այլն։

4 Խաչս առած կենաց մարտին մէջ,
Մեղքիս կուրծք տալու ատեն՝
Հայրն վերէն պիտի հրաման տայ
Որ հրեշտակք շուրջըս պատեն։
Կը ծածկէ զիս, և այլն։

Սաղ. ՂԱ. 4 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 288 ԾՈՎ ԿԵՆԱՑ ԳՈՌԱՅ, ՅԻՍՈՒՍ

1 Ծով կենաց գոռայ, Յիսուս,
Դուն ուղղիչ եղիր Նաւուս,
Թաւալին մութ ալիքներ,
Ծածկելով թաքուն ժայռեր։
Կողմնացոյց եղիր, Յիսուս,
Եւ ընթացքն ուղղէ Նաւուս։

2 Մօր ձայնին կ'անսայ որդեակ,
Քու ձայնիդ՝ ալիքն վայրագ.



«Լուռ կեցէք» շեշտիդ շուտով
Հնազանդին ալիք վրդով։
Տէր ծովուց, հզօր Յիսուս,
Դուն ուղղիչ եղիր Նաւուս։

3 Երբ մօտ գամ լոյս եզերքին,
Պարզուի առջիս երկին.
Թէ Նաւուս յանկարծակի
Բուռն յորձանք մ'ալ յարձակի,
Տէր, լսեմ ձայնդ բարբառ,
«Ես ուղղիչդ եմ, մի՛ վախնար»

Մարկ. Դ. 35-48 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ

## 289 ՕՐՀՆԵԱԼ ՔՈՒՆԸ

1 Շատ համարներ սուրբ մատեանին
Մխիթարեն մեր խեղճ հոգին.
Բայց կա՞յ արդեօք հա՛տ մը այսքան
Շնորհալի, քաղցր, աննման,
Ինչպէս երգեց Սաղմոսերգուն՝
«Նա քուն կու տայ իր սիրելոյն»

2 «Քաղցր երազով ննջէ՛ խաղաղ,»
Մեր սիրելոյն կ'ըսենք յաճախ.
Բայց երազներ չար՝ վերըստին
Կը խռովեն քունն հիւանդին.
Սակայն խաղաղ կ'ըլլայ իր քուն
Երբ «Նա քուն տայ իր սիրելոյն»

3 Ջերմ ու տագնապ, երկայն գիշեր,
Խեղճ հիւանդին այժմ են մաշեր.
Բայց Անեղին աչքն անաղօտ
Ձայն կը հսկէ մինչ առաւօտ։
«Հերիք է իմ շնորհքըս քեզ,
Զի սիրելոյս քուն կու տամ ես»։

4 Երբ ես թողում այս փուճ աշխարհ
Ու սլանամ վերին գաւառ,
Եւ շուրջ մահճիս լսէք դառն լաց,
Միտքմով լսէք իմ սիրելեաց,
Որ ողբալէ դադրին իսկոյն.
«Զի նա տըւաւ քուն սիրելոյն»։

Սաղ. ՃԻԷ. 2 Թարգ. Վ. Յ. ՅԱԿՈԲՍԵԱՆ

## 290 ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՒ ԱՆՀԱՍՏԱՏ ԲԱՆԵՐ

1 Ով մարդ, հոգե՞ր, վիշտե՞ր ունիս.
Միշտ չեն մնար, չը վըրդովիս.
Ցաւ, նեղութիւն ու տառապանք,
Աղքատութիւն և դառն տանջանք
Շուտով կ'անցնին, կ'անհետանան,
Քիչ ատենէն չեն կը դառնան։

2 Ով մարդ, ունի՞ս հարստութիւն,
Մ'ապաւինիր, չէ մնայուն.
Ինչք, ըստացուածք, կալուածք ու տուն,
Ոսկի, արծաթ, գանձեր թողուն,



Շուտով կ'անցնին կ'անհետանան,
Քիչ ատենէն չեն կը դառնան։

3 Ով մարդ, ունի՞ս մեղք, չարութիւն,
Վախցիր, ողբա ծնկան վրայ դուն.
Առանց դրդէ, ապաշխարէ,
Տէր Յիսուսի շուտով դիմէ.
Քանզի դժոխքն է հաստատուն,
Անոր տանջանքն է մնայուն.

4 Ով մարդ, դուն նոր սիրտ ըստացա՞ր,
Եղա՞ր Սրբոյ Հոգւոյն տաճար.
Սիրէ զԱստուած քո և զընկեր,
Ուրախութեան երգէ երգեր,
Քանզի երկնից երանութիւնն
Է հաստատուն և մնայուն։

Հռովմ. Ը. 35-39 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 291 ԴՈՒՍՏՐ ՍԻՕՆԻ

1 Դուստր Սիօնի, լեր ուրախ,
Արդ ցնծա, Երուսաղէմ.
Տես, կու գայ քեզ Թագաւորդ,
Վեհ Իշխան խաղաղութեան.
Կրկներգ. Ովսաննա՜, Որդի Դաւթի,
Քեզ ողջո՜յն, Արքայ խոնարհ։

2 Ովսաննա՜, Որդի Դաւթի,
Լեր օրհնեալ ժողովրդեանդ.

Հաստատէ գահդ այժմ յաւէտ,
Ովսաննա՜ քեզ ի բարձունս։
Կրկ. Ովսաննա՜, Որդի Դաւթի,
Քեզ ողջոյն, Արքայ խոնարհ։

3 Ովսաննա՜, Որդի Դաւթի,
Քեզ ողջո՜յն, Արքայ խոնարհ.
Անսասան մնայ միշտ գահդ,
Որդի Հօր յաւիտենից։
Կրկ. Ովսաննա՜, Որդի Դաւթի,
Քեզ ողջո՜յն, Արքայ խոնարհ։

Ես. Կ. 1, ԿԲ. 11 — Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԱՆ

## 292 ԱՐԹՆՑԻՐ

1 «Արթնցի՛ր, կ'անցնի գիշերը,»
Լերանց վրայէն գոչեն դէտերը,
«Երուսաղէ՛մ, շուտ արթնցիր։»
Մութն լսեց այս արձագանգը,
Եւ խոր գիշերն ըզգաց հրճուանքը.
«Խաւարն կ'անցնի, ելէք, կոյսեր.
Փեսան կու գայ, ելէ՛ք,
Լոյսերը վառեցէք.
Ալէլուիա։
Օ՜ն, ընթրիքին պատրաստ եղէք,
Որ դուք փառքով հարսնիք մտնէք։»

2 Լսելով դէտին գոչումը՝
Սիրտ Սիոնի ցնծմամբ լեցուն է.



Կանգնի զուարթ ըստուերներէն,
Զի իր Տէրն, որ զինք սիրած է,
Փառքով և յաղթական եկած է.
Լոյս ծագեցաւ, իր աստղն ելաւ.
«Ողջո՜յն, ողջո՜յն քեզի,
Յիսուս Աստուածորդի.
Ալէլուիա»
Ցնծմամբ կու գանք, Տէր շնորհալի,
Ընթրիքդ վայելել ի հանդիսի։

Ես. ԾԲ. 1, 2 — Թարգ. C. C. Tracy

## 293 ՄԱՂԹԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՐ

1 Եկեղեցիդ ընդհանրական
Որ քու սիրոյդ է առարկայ,
Տէր իմ, շնորհքըդ հայրական,
Ցուցուր այսօր անոր վրայ։
Աշակերտներըդ կ'աղօթեն
Մեծ հաւատքով ամէն երկիր.
Իրենց յոյսն դատարկ չելլեն,
Դուն, ով Յիսուս, մեր մէջ կեցիր։

2 Տէր, քու բանիդ խոստումն յիշէ,
Եւ արդ հաճէ զայն կատարել.
Թող Սուրբ Հոգիդ մխիթարէ,
Սորվեցընէ ըզքեզ օրհնել։
Բաց մեր աչքերն լոյսին Փրկչիդ,
Ու մեր սրտերն դարձուր, ուղղէ.

Եւ աղօթող եկեղեցիդ
Թող երջանիկ դար վայելէ։

3 Թող տարածուի Աւետարան
Մինչեւ երկրիս ծայրերն հեռու.
Եւ ամէն տեղ լըսուի թող ձայն
Նոյն օրհնութեան եւ երգերու,
Ժողովուրդներ խիստ վայրենի
Խաչին առջեւ գան, ժողվին,
Պատիւ տան մեր անյաղթելի
Թագաւորաց Թագաւորին։

Սաղ. Զէ. 2, 3, 5

## 294 ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ Ո՞Ն Է

1 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Է միմիայն եւ անսասան.
Զի զայն հիմնեց քու Սուրբ Հոգիդ,
Առաջնորդող ճըշմարտութեան։

2 Ով Տէր, քու Սուրբ եկեղեցիդ
Զը որխայիր մինչ յաւիտեան,
Երբ հետեւող է Սուրբ Խօսքիդ,
Եւ անծանօթ է ստութեան.

3 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Քու սուրբ անուամբդ է ժողովուած,
Հոն քարոզուի խօսք Սուրբ Գրքիդ,
Մարդկանց պատուէր հոն չէ մըտած։



4 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Քաղքի անուամբ չէ որոշուած.
Այլ կատարողն ըզխօսք Փրկչիդ՝
Ան է անոր մէջ հաստատուած։

5 Տէր, մեզ պահէ յեկեղեցիդ,
Ի սուրբ փառաց ընտրեալ դասին.
Մեզ հասցունէ քու Սուրբ Հոգիդ
Այն երանեալ յաղթանակին։

Եփես. Ե. 23, 25, 27

## 295 ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄԸ

1 Եկեղեցին հիմնեալ է
Լոկ Քրիստոսի վըրայ.
Եւ յաւիտեան Տէրոջը
Սիրոյն է առարկայ.
Նոյն Տէրն որ ըստեղծեց զայն՝
Փրկել յերկնից իջաւ,
Նոյն Տէրը իր սուրբ հարսը
Արեամբ ծախու առաւ։

2 Շատ ազգերէ ընտրեալ է,
Բայց մէկ եկեղեցի.
Մէկ օրինօք փրկուած է,
Մէկ Տէր, մէկ լոյս ունի.
Պարծանքը՝ մէկ անուն է,
Սընունդը՝ մէկ սուրբ հաց,

Մէկ յոյս, մէկ սէր ունի այն,
Եւ մէկ աղբիւր կենաց։

3 Իր վիշտն ու տառապանքը
Թէեւ շատ խիստ դառն են,
Յաւէրժական սփոփանքը
Պատրաստ է վերն իրեն։
Պիտի ըլլայ նեղեալը
Հանգիստ եւ յաղթական,
Եւ, ահ, ի՜նչ փառաւոր է
Իր քաղցըր ապագան։

4 Կ՚ելլէ որոց աղօթքը.
«Ե՜րբ, ե՜րբ, Տէր սիրելի,
Պիտի անցնի գիշերը
Եւ առաւօտ ծագի։»
Օրհնեալ են այն սուրբերը,
Ըլլանք անոնց նման,
Եւ ժառանգենք անոնց հետ
Փառք յաւիտենական։

Ա. Կոր. Դ. 11 — Թարգ. C. C. Tracy

## 296 ԵՐԳ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1 Ով Տէր Փրկիչ, Հովիւ հովուաց,
Դուն որ Գըլուխ ես աշխարհաց,
Աղերսելու կու գանք քեզի,
Յաջողութիւն տուր այս հովուին



Զինք խրախուսէ եւ պաշտպանէ,
Ազատ լինի փորձութենէ,
Հակէ դառանց, հովուէ հոգիք,
Մինչեւ ցմահ լինի մարտիկ։

2 Երբ պաշտօնեայք զայս ձեռնադրեն,
Եղիր ներկայ, եւ երկինքէն
Սրբէ, օրհնէ արկար ծառայ,
Մնայ անբիծ եւ անարատ
Զինք խրախուսէ, եւ այլն.

3 Անոր խղճիւ մէջ ջանալով
Եւ Սուրբ Հոգւոյն անշէջ ջահով
Եկեղեցիք թող զարգանան,
Խաւար սրտեր ալ լուսանան։
Զինք խրախուսէ, եւ այլն.

4 Քարոզելով Աւետարան,
Որ կենարար է Սուրբ Մատեան,
Մահուան ձորէն մինչ չեն անցած՝
Հոգիք մարդկան լինին փրկուած։
Զինք խրախուսէ, եւ այլն.

5 Հովիւն եւ այս եկեղեցին
Անյաղթ սիրով զիրար գրկեն.
Լինին լոյս եւ պերճ օրինակ,
Արժանանան ի յաղթանակ։
Եկեղեցին առաջնորդէ,
Ազատ լինի փորձութենէ.

Հսկէ գառանց, սիրէ հօտը,
Մինչեւ ցմահ լինի մարտիկ։

Ա. Պետ. Ե. 1-4

## 297 ԱՒԵՏԱՐԱՆԸ ՔԱՐՈԶՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

### ԱՂՕԹՔ

1 Տէր, քաղցրութեամբ վերէն նայէ
Քու քարոզիչներուդ.
Անոնց սիրտ տուր, եւ միշտ օգնէ
Շնորհքով քու Սուրբ Հոգւոյդ։

2 Ազգաց ձայնով թող քարոզեն
Աւետարան Փրկչիդ.
Բոլոր աշխարհս քեզ դարձնեն,
Մեծնայ եկեղեցիդ։

3 Ամէն ազգաց հասկցընեն,
Թէ լոկ Յիսուս Փրկիչ
Մեղքի համար իջաւ վերէն,
Ու է մեղաց քաւիչ։

4 Ով Տէր, թէ որ հունձքեր շատ կան,
Ու կան քիչ մշակներ,
Ոյժ տուր անոնց քարոզութեան,
Ըլլան շատ պտղաբեր։

5 Փրկիչ Յիսուս, անհուն քու սէր
Ամէն մարդիկ ճանչնան.



Ու թող ամէն կռապաշտներ
Շուտով քեզի դառնան։

Եփես. Դ. 11-13

## 298 ԵՐԳ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1 Ով Տէր մեր, Սուրբ Աստուած,
Երկնից խումբէն պաշտուած,
Մեր ձայն լսէ.
Յայս տան ձեռնադրութեան
Ներկայ լեր օգնական,
Շնչովդ ու սրբութեան
Մեզ ներշնչէ։

2 Ծառայ Հոգւովդ օծէ,
Յաջողութեամբ կնքէ
Իր աշխատանքն.
Շնորհքովդ լեցուն սիրտն,
Միշտ Յիսուսի նայի.
Ու եռանդուն լինի
Իր պաշտօնքն։

3 Այս պաշտօնն ըլլայ օրհնեալ,
Սիրոյ կապով կապեալ,
Մինչ մահ տեւէ.
Շատ հոգիներ փրկուին,
Փայլի եկեղեցին,
Սիւներն հաստատ կանգնին.
Հանդէան օրհնէ։

Ա. Տիմ. Գ. 1-9

## 299 ԱԲՐԱՀԱՄԻ ՀԵՏ ԵՂԱԾ ՈՒԽՏԸ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ Է

1 Ի՜նչ լայն խոստմունք, ի՜նչ փառաւոր՝
Աբրահամի տրուած,
«Քեզի և սերունդիդ բոլոր
Պիտի ըլլամ Աստուած։»

2 Այս խօսքն սիրոյ զարմանալի
Դարէ դար կը տեւէ.
Քրիստոս, ուխտին Հրեշտակն, մեզի
Խոստմունքը կը կնքէ։

3 Մեր զաւակներն ինք կ'ընդունի
Սիրոյ բազուկներով.
Իր օրհնութեամբ երանելի
Կ'ըլլան և ապահով։

4 Հաւատարիմ է Տէր Յիսուս,
Ուխտէն մեզ չը մերժեր.
Եւ իր գրքէն զաւակներնուս
Անունը չը ջնջեր։

Ծնն. ԺԷ. 7 — Elias Riggs

## 300 ԱՂՕԹՔ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1 Ով Հայր Աստուած ողորմութեան,
Հաճէ ընել այս երախան



Քուկին շնորհաց ուխտիդ որդի,
Որ քեզ պաշտէ սիրով սրտի։

2 Որդիդ Աստուած, փրկիչ մարդկան,
Քեզ նուիրուած այս երախան
Քու արիւնովդ գնուած ըրէ,
Ժողովրդեանդ հետ խառնէ։

3 Ով Սուրբ Հոգի, սրբացուցիչ,
Որ ես միայն բնութեան մաքրիչ,
Այս երախան սրբէ, մաքրէ,
Նոր սիրտ անոր դուն պարգեւէ։

4 Ով Հայր, Որդի և Սուրբ Հոգի,
Երրորդութիւն սքանչելի,
Մենք զայս քեզի կը նուիրենք,
Զայն քուկդ ըրէ, Տէր, կը խնդրենք։

Մատթ. ԺԸ. 14 — Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 301 ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԳ

1 Տէր բազմագութ ու ողորմած,
Խնդրենք սիրոյդ բազուկներով,
Այս երախան քեզ նուիրուած՝
Առ, նորոգէ ձրի շնորհքով։

2 Մեր նախահօրը արմատէն
Ա[illegible] ալ մեղքով ծնանք.

Օտարացանք մեր Աստուծմէն,
Ու բարկութեան որդիք եղանք։

3 Բայց դուն սիրով ու գըթութեամբ
Մեղաւորաց ողորմեցար,
Կատարեցիր անգին արեամբ
Քու ուխտըդ, Տէր, որ խոստացար։

4 Մեծ խոստումներ դուն ես տուեր
Բարեկամիդ Աբրահամին,
«Բոլոր ազգեր ու լեզուներ
Քու սերունդովդ օրհնուին»։

5 Ի գործ դրիր քու խօսքըդ, Տէր,
Ի գործ դըրիր անհուն սիրով.
Մեղի հասան այս խոստումներ,
Ու մեր որդւոցը, Յիսուսով,

6 Ուստի այս երախտեան բարիքը,
Հօտիդ մէջ, ով Տէր, ընդունէ.
Մենք լոկ ջըրով մըկըրտեցինք,
Դուն քու Հոգւովդ մըկըրտէ։

7 Ցուցուր անոր ուղիղ ճամբան,
Նոր սիրտ անոր մէջ ըստեղծէ.
Թող կանչըւի որդի խոստման,
Դուն միշտ անոր առաջնորդէ։

Մարկ. Ժ. 13-16



## 302 «ԱՍԻԿԱ ԸՐԷՔ ԶԻՍ ՅԻՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

1 Շնորհացըդ խօսքը կը լսեմ.
Խոնարհ սրտով և հեզ.
Պատուէրդ պիտի, Տէր, կատարեմ,
Պիտի յիշեմ ըզքեզ։

2 Սիրով մարմինդ պարգեւեցիր,
Երկնից հաց, որ ուտեմ.
Ուխտիդ գաւաթն ալ ձեռքս տուիր.
Որ քեզ, Տէր, միշտ յիշեմ.

3 Կրնա՞մ մոռնալ Գեթսեմանի,
Կամ հոն տագնապդ տեսնել,
Արեան քրտինքըդ սոսկալի,
Ու քեզ, Տէր, չը յիշել։

4 Գառն Աստուծոյ, առ Գողգոթա
Երբ աչքըս դարձընեմ,
Ու քեզ տեսնեմ խաչիդ վըրայ,
Ինչպէս քեզ չը յիշեմ։

5 Ինծի համար կըրած ցաւերդ,
Քանի որ շունչ կ'առնեմ,
Ո՛հ, Տէր Յիսուս, քու գութդ ու սէրդ
Անշուշտ պիտի յիշեմ։

6 Եւ երբ մահկանացու ճամբաս
Ա՛լ իր վախճանն գտնէ,
Երբոր արքայութեանդ գաս՝
Դուն, ով Տէր, զիս յիշէ.
Ա Կոր. ԺԱ. 23-25 Թարգ. Elias Riggs

## 303 ՅԻՇԱՏԱԿ

1 Քու սէրդ միթէ մոռնա՞նք, Յիսուս,
Որնաս ալ չը յիշե՞նք.
Սէրն որ հասուց մեր պարտքն անյոյս
Եւ որ ջնջեց մեր մեղք.
Մոռնա՞նք քու փըշալից կեանքն ևս,
Աղօթքըդ քրտնալից,
Յօղով ցօղուած գլուխդ, որ մեզ
Պահես միշտ յուսալից.

2 Գեթսեմանիին կրնա՞նք մոռնալ,
Եւ ճիգըդ տագնապոտ,
Երբ լեռն պատեց ահեղ խաւար,
Եւ մարդ չըկար քեզ մօտ.
Կրնա՞նք մոռնալ փուշէ պսակ,
Ամօթն և ապտակներն,
Երբ դէմդ ելաւ դըժոխք փայլրագ,
Երկեր մերժեց քու սէրն.

3 Ո՛հ, քու շնորհաց քաղցր յիշատակ
Պիտ՝ քաղցրագոյն ըլլայ.



Մեր սրտերուն մինչ ի յատակ
Դէմքիդ նըկարն ցոլայ.
Մոռնալ կրնանք կենաց ցնծումն,
Մոռնալ աշխարհ համայն,
Բայց չենք մոռնար քու սէրդ անհուն
Հիմա և յաւիտեան.
Ղուկ. ԻԲ. 19 Թարգ. Ա. Ե. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 304 ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԸ

1 Փրկիչը սեղան կը կազմէ
Մեր սիրտը կըշտացընելու.
Եւ մեղաւորներն կը կանչէ
Երկինքի կերակուրն ուտելու,
Ահա սովամահ անձերով՝
Մեզի իր մարմինը կու տայ.
Մեզի համար գոհ ըլլալով՝
Իր մահը մեր կեանքը կ'ըլլայ.

2 Ուստի, եղբայրներ սիրելի,
Ուրախութիւնով մօտեցէք.
Ձեր Տէրն է որ ձեզ կը խօսի.
«Մարմինս առէք ու կերէք»
Անկեղծ ու խորին զղջումով
Այս սուրբ սեղանին մօտենանք.
Բոլոր մեր գործքերն մերժելով՝
Միայն Յիսուսի հաւատանք.

3 Ով Տէր, դուն մեր մէջ գտնուէ,
Քու ներկայութիւնդ ցուցուր.
Եւ այս քու սեղանդ օրհնէ.
Քեզմով մեր սրտերը լեցուր,
Խօսքիդ համեմատ, կ'աղաչենք,
Մեզի քու Հոգիդ պարգեւէ.
Եւ մինչ հոս մենք քեզ կը յիշենք,
Դուն ալ, ով Յիսուս, մեզ յիշէ։

Մարկ ԺԴ. 22,23 — *Elias Riggs*

## 305 ՓԱՓԱՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Սրընթաց եղջերուի նման՝
Որ ջուրերուն վտակներուն
Կը փափաքի ծարաւութեամբ,
Նոյն ալ անձամբ յոյժ կաթոգին
Քեզ կը խնդրեմ, Տէր փրկութեան,
Լսէ սրտիս հառաչանքին։

2 Տենչամ տեսոյդ սուրբ, անարատ,
Ե՞րբ գամ պիտի ու երեւնամ
Տէրոջս առջեւը գթառատ.
Երբոր կ'ըսեն, Ո՞ւր է Աստուածդ,
Գիշեր ցորեկ ինձ անընդհատ
Դառն արտասուք միայն է հաց։

3 Ո՜հ, կը ցանկամ այն օրերուն,
Որ սուրբ տաճարդ կ'երթայի



Ուրախութեամբ յոյժ պատարուն.
Եւ օրհնութիւն սաղմոսելով՝
Պահապանիդ յաւէժ անուն
Կը ցանկայի միշտ հոգիով։

4 Բայց դուն, անձն իմ, ի՞նչ կը տրտմիս՝
Շատ հոգերու մէջ ընկղմած,
Ի՞նչ չարութեան կը տագնապիս.
Յուսա ի Տէր և ա՛ռ խրախոյս.
Դեռ ժամանակ քու ձեռքդ ունիս.
Մի խռովիր երբեք անյոյս։

5 Օրհնէ զԱստուած բոլոր սրտով,
Որ քեզ կարող է բժշկել
Իր քաղցր աչքին հայեցուածքով.
Տէր, ի խորոց սրտիս կը զգամ
Սաստիկ փափաք մեծ եռանդով
Որ տեսութեամբդ ուրախանամ։

Սաղ. ԽԲ. 1 — Թարգ. *Elias Riggs*

## 306 Ի՜ՆՉ ՀԱՃՈՅ ԵՆ ՔՈՒ ՅԱՐԿԵՐ

1 Ի՜նչ հաճոյ են քու յարկեր
Վերն՝ ուսկից տեղայ լոյս, սէր.
Վարն ինչ, ուր կայ մեղք ու մահ,
Ի՜նչ յուսով լի քու սրբոց.
Սիրտս անձկայ, տենչայ, նուաղի,
Տէր, տեսնել դէմքդ շնորհալի,

Երեսդ մեզի այսօր դարձուր,
Տաճարս այս նոր՝ փառքովդ լեցուր։

2 Այս տանըս մէջ ամէն Սուրբ Օր
Գտնենք զքեզ սրտով բոլոր.
Ջերմ աղօթքներ վեր բարձրանան
Անուշահոտ խունկի նման,

3 Պաշտօնեաներդ թող այս բեմէն
Սիրոյդ պատգամն միշտ հնչակեն.
Անառակներն դառնան առ Հայր,
ԸզՏէրն գտնեն ոչխարք մոլոր։

4 Հոս ըսփոփին յուսահատներ,
Մխիթարուին աղքատ եւ ծեր.
Հոս մանուկներ մեր սիրասուն
Սորվին յարգել քու սուրբ անուն։

5 Հոս քու Որդիդ մեզի ցուցուր,
Հոս մեր սիրտերն սիրով լեցուր.
Ս. Հոգւոյն կայծմն խաղաղութեան,
Պահէ ըզմեզ միշտ միաբան։

6 Փառք ի բարձունս, երգ օրհնութեան
Մատուցանենք Երրորդութեան.
Եւ երբ գային հոս մեր ձայներ,
Ըզքեզ գովեն նոր սերունդներ։ Ամէն

Բ Մնաց. Զ. 18-21 Հեղինակ Տիկ. ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ



## 309 ԱՐՁԱԿՈՒՄ

1 Ով Տէր, դարձեալ կ՚օրհնենք քու սուրբ անուն
Սրբարանէդ մեր արձակման պահուն.
Անբաւ սիրոյդ մինչ այժմ ենք օրհնարան,
Տուր հաւատաքը քու խաղաղութեան։

2 Հիմա երբ, Տէր, վերադառնանք ի տուն,
Ընկեր ըլլայ մեզ քու խաղաղութիւն.
Մեզ զերծ պահէ մեղքէ, ճամբէ մոլոր,
Թող սրբութեամբ անցնի քու այս Սուրբ Օր։

3 Տուր այս կեանքի մէջ քու խաղաղութիւն,
Ուժ արկածին, ըսփոփ դառն ցաւերուն.
Երբ վերջանայ կեանքի պայքարն ու ժխին,
Մեր հոգիները քովդ յաւերժ հանգչին։

Յովհ. ԺԴ. 27 Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

## 310 ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԱՒԱԿԱՏԵԱՑ ՀԱՄԱՐ

1 Ով Տէր Աստուած Իսրայէլին,
Երկինքն, երկիրն ու լեցունող,
Երկնից երկինք ամենեքին
Պարունակել քեզ չեն կարող։

2 Բայց երկնային պարգեւներով
Քու տաճարներդ կը զարդարես,
Ու մեր աղօթքը լսելով՝
Մարդոց շէնքերն տաճարդ կ՚ընես։

3 Արդ, մենք այս տունը շինեցինք
Քեզի տաճար նուիրելու,
Եւ հոս սրտանց կը փափաքինք
Ներկայութիւնդ վայելելու։

4 Եւ կ'աղաչենք խոնարհ սրտով,
Մեր այս նուէրն դուն ընդունէ.
Եւ հոս քու տանդ մէջ փառքով
Առատ շնորհքըդ տարածէ.

5 Քու տանդ մէջ դարէ ի դար
Անթիւ մարդիկ խօսքերդ լսեն,
Եւ Սուրբ Հոգւովդ կենդանարար
Սրտանց քեզի դառնան։ Ամէն։

Բ Պետ. Բ.5

## 311 ԱՐՁԱԿՈՒՄ

1 Դեռ չարձակուած՝ օրհնէ մեզ, Տէր,
Տպաւորէ բանդ մեր մէջ դուն.
Վառէ սիրովդ մեր պաղ սրտեր,
Ըրէ մեր կամքը եռանդուն.
Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
Եղիր, Յիսուս, մեր լոյսն անշէջ։

2 Կ'անցնի այս օրն, ժամերն ալ իր.
Դու ամէնուն կ'առնես հաշիւ —
Դոյզն յաղթանակ շնորհանձիր,
Դըրժուած ուխտեր, անկում անթիւ.



Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
Եղիր, Յիսուս, մեր լոյսն անշէջ։

3 Պահէ խաղաղ ճամբէ մոլոր,
Մինչ ընթանանք շաւղէդ անամպ.
Քան մեր անցեալ օրերն բոլոր՝
Օրհնէ ներքին խաղաղութեամբ.
Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
Եղիր, Յիսուս, մեր լոյսն անշէջ։

4 Փա՛ռք թողութեանդ, բայց տուր յաւէտ
Ուրախութիւն և սուրբ անձկանք,
Սիրտեր սիրող ու սրբաւէտ.
Քեզ նուիրել ըլլայ մեր ջանք.
Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
Եղիր, Յիսուս, մեր լոյսն անշէջ։

5 Խեղճ, մեղաւոր, տխուր, աղքատ՝
Աչքն ամէնուն քեզ կը նայի.
Տուր գըթութիւն, շնորհք առատ,
Ո՛վ Ամենայն յամենայնի.
Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
Եղիր, Յիսուս, մեր լոյսն անշէջ։ Ամէն։

Ես. Կ.20 — Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

## 312 ԼՍԷ, ՅԻՍՈՒՍ ԿԸ ԿԱՆՉԷ

1 Կը լսուի Տէրոջը ձայնը,
«Ո՞վ կ'երթայ այսօր գործել.

Ա՛լ արտերը ճերմկած են,
Ժամանակ է այժմ հնձելու»
Ու Տէրոջը վարձքն առատ է,
Ինչ պիտի հատուցանէ.
Ո՞վ յօժար է պատասխան տալ.
«Ես ահա, Տէր, զիս ղրկէ։»

2 Թէ հեթանոսաց երկիրը
Չես կրնար դուն պտըտիլ,
Խաւարի մէջ նստողները
Փրկելու՝ ծովէն անցնիլ,
Քու տըգէտ դըրացիներըդ
Մեղմ կարեկցութեամբ փնտռէ.
Ու անոնց՝ Փրկչին մեծ սէրը
Քարոզէ և բացատրէ։

3 Թէև հրեշտակաց լեզուովը
Տէրը չը կրնաս յայտնել,
Կամ անպատմելի պարգևը
Պօղոսի պէս քարոզել,
Բայց կրնաս պատմել թէ Հայրը
Միածին Որդին տըւաւ,
Թէ Որդին անհուն սիրովը
Ամէնուն համար մեռաւ։

4 Փրկելու կորուսածները
Հրաւիրուած ես դուն օգնել.
Ընդունէ հրաւէրն, մ'ըսեր թէ
«Բան մը չեմ կրնար ընել։»



Քեզ տըրուած Տէրոջը գործը
Բերկրութեամբ միշտ կատարէ,
Կանչողին շուտ պատասխան տուր.
«Ես ահա՛, Տէր, զիս ղրկէ։»
Մատթ. Թ. 36-38

## 313 ՍԻՕՆԻ ԱՐՇԱԼՈՅՍԸ

1 Ով Սիօնի բերկրալից արշալոյսը,
Թանձր խաւարը և սուգը կ'անցնին.
Հիմա մարդոց՝ ցընծութիւնը և յոյսը
Կեանք անվախճան մեռելոց կը տրուին։

2 Ով Սիօնի բերկրալից արշալոյսը,
Հին դարերու մէջ որ գուշակուեցաւ,
Մարգարէից խօսքին պէս, ահա Կոյսը
Բեթլեհէմի մէջ Փրկիչը ծընաւ։

3 Գերութենէն կը դառնան գերիները,
Ծառայութեանը տունէն կ'ազատին.
Պատը քակուած է, և հեթանոսները
Հիմա Հրէից հետ մէկտեղ կը բերկրին։

4 Անապատին մէջ՝ շուշանը և վարդը,
Չոր երկրին մէջ կ'երևին վըտակներ.
Պատերազմներ դադարած են, և մարդը
Իր ընկերին դէմ ա՛լ կախ չը հաներ։

5 Ինչ կը լսենք. հեռաւոր կղզիները
 փառք Աստուծոյ ի բարձունս կ՚երգեն.
Մենք անոնց հետ լսել տանք մեր ձայները,
 Փառք Աստուծոյ յաւիտեանս. Ամէն.

Ես. ԾԱ. 3 Թարգ. Elias Riggs

## 314 ԵՏՔԻ ՕՐՈՒԱՆ ՓԱՌՔԸ

1 Թող Սիոնի որդիքը
 Ուրախութեամբ ցնծան.
Պիտի անցնի չարիքը,
 Բարի օրեր կու գան.
Ահա ետքի օրերը,
 Լերանց գլխուն վրայ
Սիոն, Տէրոջը լեռը,
 Պիտի խիստ բարձրանայ.

2 Ազգաց շատ բազմութիւնը
 Անոր պիտի դիմեն.
«Երթանք Տէրոջը տունը,»
 Մարդիկ պիտի ըսեն.
«Ելլենք Տէրոջը լեռը,
 Ինք զինք մեզի յայտնէ.
Աստուած իր ճամբաները
 Մեզի սորվեցընէ։»

3 Մարդիկ իրենց սուրերը
 Խոփեր պիտի շինեն,



Նիզակներուն տէգերը
 Յօտոցներու փոխեն.
Ոխով եղբարք եղբարց վրայ
 Պիտի չը յարձակին.
Պատերազմի արհեստը
 Բնաւ ալ չը սորվին։

4 Ո՛հ թէ մեր աչքն այս յոյսը
 Ի գործ դրուած տեսնէ,
Եւ Սիոնի սուրբ լոյսը
 Աշխարհ լուսաւորէ.
Յայնժամ Տէրոջ տաճարը
 Ցնծամբ երկրպագենք.
Ա՛լ զրուցաւ խաւարը,
 Անոր լուսովն քալենք.

Ես. Բ. 2-4 Թարգ. Elias Riggs

## 315 ԱՒԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

1 Պատուէր տուաւ Փրկիչն մարդկան
Բոլոր իրեն աշակերտաց,
Որ քարոզեն Աւետարան
Ամէն երկիր ամէն ազգաց։

2 Զայս պատուիրան դուն միշտ յիշէ,
Ով Քրիստոսի եկեղեցի,
Խաչեալ Փրկիչն միշտ քարոզէ
Անհաւատի, հեթանոսի։

3 Ամէն մարդիկ Փրկչին հաւատան,
Անով գտնեն յոյս, փրկութիւն.
Եւ հասկընան թէ նա միայն
Է կեանք, ճամբայ, ճշմարտութիւն.

4 Տէր, քու խօսքովդ լուսաւորէ
Ամէն մարդիկ բոլոր երկրի.
Բոլոր աշխարհ քեզ ճանչնայ
Իբրև մէկ հօտ միոյ Հովուի։

5 Քու սուրբ խոստմունքդ յաւերժական
Մեղաւորներն դարձի բերեն.
Որ բերկրանօք քեզ յաւիտեան
Վերն երկնից մէջ փառաւորեն։
Մարկ. ԺԶ. 15

## 316 ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ

### ԱՂՕԹՔ

1 Զարթիր, զարթիր, Աջ տիրական
Շարժէ ուժովդ ազգդ մարդկան.
Որ զօրութիւնդ աշխարհ տեսնէ,
Եւ յաղթութիւնդ գովաբանէ։

2 «Ես Եհովայ եմ, Տէր Աստուած,»
Գոչէ թող ձայնդ՝ հեթանոսաց.
Ձայնէդ մեհեանք թող կործանին,
Եւ պիղծ սեղանք թող տապալին։



3 Մարդու արիւն ա՛լ չը թափուի,
Ու նոյն զոհեր չըլլան մեղքի.
Որդիք մարդկան ապաւինին
Մեղաւորաց միակ Փրկչին։

4 Ցոյց զօրութիւնդ, Աջ տիրական,
Որ չարութիւնք բնաջինջ ըլլան.
Ճշմարտութեանդ լոյսն ալ թող գայ,
Որ ստութիւնն անհետ ըլլայ։

5 Տուր Սիօնին յաջող օրեր,
Ցրուած ազգերն ժողվէ, ով Տէր,
Թող մեր աչքերն տեսնեն ապշած՝
Բոլոր աշխարհ մէկ հօտ եղած։

6 Ամենակալ բարի Աստուած,
Դրկէ շնորհք բոլոր մարդկանց.
Որ ան յաղթէ դիմամարտից,
Տիրէ Քրիստոս, Տէր ամենից։
Ես. ԿԲ. 1

## 317 ԱՍՏՈՒԾՄԷ ՎԱԽՑՈՂՆԵՐՆ ՕՐՀՆԵԱԼ ԵՆ

1 Աստուած, գըթա ու մեզ օրհնէ,
Լոյսն երեսիդ մեր վրայ ծագէ.
Եւ փրկութեան ուղիղ ճամբան
Թող ամէն ազգ շուտ ճանչնայ։

2 Տէր, քեզ փառք տան ժողովուրդներ,
Ուրախանան, ցնծան ազգեր.

Զի դուն շիտակ պիտի դատես,
Առաջնորդես ազգաց, ով Տէր։

3 Երկիրն պտուղ պիտի բերէ,
Եւ մեր Աստուածն բզմեզ օրհնէ.
Եւ աշխարհիս ամէն ծայրեր
Պիտի դողան, վախնան անկէ։

Սաղ. ԿԷ. Թարգ. Elias Riggs

## 318 ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒԻԼԸ

1 Ով Տէր Աստուած արդարութեան,
Արդարութիւնդ տուր արքային.
Պիտի ընէ նա դատաստան,
Եւ իրաւունք ժողովուրդին։

2 Մարդիկ պիտի վախնան անկէ,
Արեւ, լուսին քանի որ կան.
Ազգէ ազգ ալ պիտի տեւէ
Իր զօրութեանը գաւազան։

3 Պիտի իջնէ անձրեւի պէս
Հնձած կարած խոտին վրայ.
Երկիր թրջող շաղերուն պէս
Պիտի ցօղէ գետնի վրայ։

4 Այն օրն արդարն պիտի ծաղկի,
Խաղաղութիւնն ալ միշտ տեւէ.
Տէրամբ ամէն ազգ օրհնուի,
Ինք յաւիտեան պիտի տիրէ։



5 Անուն Փրկչին փառաւորուի,
Զայն յաւիտեան մարդիկ օրհնեն.
Անոր փառքովը երկիր լեցուի
Բոլոր ազգերն ըսեն, Ամէն։

Սաղ. ՀԲ.

## 319 ՓՐԿՉԻՆ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

1 Տէր, հիմա մեր Փրկչին
Արքայութիւնը տուր,
Շուտով Տէր Յիսուսին
Աթոռը բարձրացուր.
Զի ինք է միայն արժանի
Նստիլ աթոռն տիեզերքի։

2 Անհուն արդարութեամբ
Պիտի կառավարէ,
Եւ մեծ խաղաղութեամբ
Մեր վրայ պիտի տիրէ.
Տնանկներուն պիտի խղճայ,
Եւ աղքատաց պիտի գթայ։

3 Աղօթք անոր համար
Պիտի միշտ մատուցուի,
Անունն ալ անդադար
Պիտի փառաւորուի.
Արքայութիւնն պիտի մնայ,
Մինչեւ որ ա՛լ լուսին չըլլայ։

4 Բարիք՝ նըման շաղի,
Առատ պիտի տեղայ.
Եւ շնորհք պիտի թափի
Հնձուած խոտին վըրայ.
Երկրիս ըղտուգն պիտի ելլէ,
Ու մեր Աստուածը մեզ օրհնէ։

5 Դարձեալ թող հրեշտակներն
Երկրիս վրայ երեւնան,
Եւ մահկանացուներն
Թող բարձրաձայն ցնծան,
«Փառք ի բարձունըս» թող երգեն,
Բոլոր երկիրն ըսէ, Ամէն։

Սաղ. ՀԲ. *Elias Riggs*

## 320 ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒՆ ԱՂԱՂԱԿ

1 Մեզի ողբի ձայն մը՝
Երկրի ծայրերէն,
Սուգի աղաղակ մը
Կու գայ ազգերէն.
Կ՚ըսէ, «Եղբայրներ մեր,
Մեզի շուտ եկէք.
Խիստ մեծ են ցաւերն մեր,
Մեզի օգնեցէք։»

2 «Մեղքով պինդ կապուած ենք
Ու դատապարտուած.
Մահուան մէջ նստած ենք
Յոյսէ զըրկըւած.



Մէկ անձ մը չը կայ ալ
Մեզ մխիթարող,
Ըրած աղօթքնուս ալ
Չը կայ միտք դընող։

3 Դուք որ Յիսուսին էք,
Մեր ձայնն լըսեցէք.
Ձրի դուք առած էք,
Ձրի ալ տուէք.
Ճամբան փրկութեանը
Մեզ սորվեցուցէք,
Մեղքի մեծ դարմանը
Մեզի ճանչցուցէք։

4 Անմահ հոգիները
Կրակէն հանելու՝
Բոլոր ձեր ջանքերը
Արժան է տալու։
Արծաթ և ոսկի ալ
Բընաւ մի խնայէք,
Նաև ձեր անձերը
Կամաւ զոհեցէք։»

Ես. խթ. 6, 23

## 321 «ԵՐԱՆԻ ՁԵԶԻ ՈՐ ԱՄԷՆ ՋՈՒՐԵՐՈՒ ՔՈՎ ԿԸ ՑԱՆԷՔ»

1 Առտուն քու սերմդ ցանէ,
Կէս օրն ու իրիկուն.

Աստու ձեռքով միշտ տարած է
Կենաց անշեղութիւն.

2 Անշուշտ սիրտ քու ամէ
Կանանչ ու գեղեցիկ.
Ըլլայ խոտ, հասկ, ցորեն ալ իր,
Հասուն, բերքատուանիկ։

3 Փուշ մէջ դուն չես կրնար
Սուրբ սերմը սերմանել.
Կարող է Տէրը և յօժար
Պտուղն յառաջ բերել.

4 Ուստի ցանէ յուսով
Ըզբանն ճշմարտութեան
Որ օրն հնձոց փառաց թագով
Երգես երգ ցնծութեան,
Ժող. ԺԱ. 6

## 322 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՐԳ

1 Երկրիս ամէն ծայրերը
Մեզի կ'աղաղակեն.
Մութի մէջ նստողները
Դառն արցունքով կ'ըսեն,
Տուէք մեզի ան լոյսը,
Ահա կը կորսուինք.
Ճանչնանք մեր մեծ Փրկիչը,
Որ յաւիտեան ապրինք։



2 Հնդկաստանի հովերը
Թող քաղցրաշունչ փչեն,
Եւ հաստատուն լեռները
Թող համեմներ բուրեն.
Թէպէտ և բնութիւնը
Սիրուն է և պայծառ,
Սակայն խեղճ մարդկութիւնը
Ինկած է և թշուառ։

3 Դուք որ լուսաւորուած էք
Լոյսով մը երկինքէն,
Ճշմարտութիւն սորված էք
Մեր մարդասէր Փրկչէն,
Կրնա՞ք կենաց ծրագը
Եղբայրներէն պահել.
Կրնա՞ք մարդոց որդիքը
Անյոյս մահուան մատնել։

4 Ոչ, այլ ձեր ունեցածը
Կարօտներուն տուէք
Եւ ձեր ձրի առածը
Ձրի հաղորդեցէք.
Մեծ փրկութեան լուրը
Փութով թող քարոզուի.
Մեծ փրկութեան ջուրը
Ծարաւներուն տրուի։

5 Ով դուք, երկնից հովերը,
Աւետարան տարէք.

Եւ դուք, ծովու ջուրերը
　Անոր ճամբայ ըրէք.
Շուտով երկրիս ծայրերը
　Թող բարձրաձայն ցնծան,
Կտրեն բոլոր ազգերը
　Մոլորութեան շղթան։

Դուժ · ժԽ · 9　　　Թարգ. Elias Riggs

## 323 ՊԱՏԳԱՄՆ ՅԻՍՈՒՍԻ ՍԻՐՈՅՆ

1 Կ'ուզեմ պատմել հին լուրը
　Վերին կենաց անհուն,
Տէր Յիսուսի փառացը
　Եւ իր անբաւ սիրոյն։
Պատմեմ ես այն հին լուրը,
　Զի է հաւատալի,
Կը հաստատէ իղձերըս,
　Ախորժ և բերկրալի։
Պատմեմ մինչ այն հին լուրը,
　Թող գործս ըլլայ երկինքը
Կրկնել հին պատմութիւնը
　Տէր Յիսուսի սիրոյն։

2 Պատմեմ ես այն հին լուրը,
　Է շատ զարմանալի.
Միտքէ ծնած կեղծիքը
　Այնպէս չէ հրաշալի։
Պատմեմ մինչ այն հին լուրը,
　Ինձ է շատ սիրելի.



Այս է նաև պատճառը
　Որ կը պատմեմ քեզի՝
Պատմեմ, ընդ.։

3 Պատմեմ ես այն հին լուրը,
　Յիշելն է քաղցրութիւն.
Շատ հեղ կրկնել կու տայ ինձ
　Անհուն ուրախութիւն։
Պատմեմ ես այն հին լուրը
　Անոնց որ չեն լսած,
Մեծ փրկութեան պատգամը,
　Սուրբ Գիրքն ալ չեն տեսած,
Պատմեմ, ընդ.։

4 Պատմեմ ես այն հին լուրը,
　Զի այն որ լաւ գիտէ,
Ուրիշ լսողներուն պէս,
　Նորէն լսել կ'ուզէ։
Եւ երբ երկնից փառաց մէջ
　Երգեմ նոր երգն որոց,
Ըլլայ այն հին, հին լուրը
　Զոր եմ սիրած վաղուց,
Պատմեմ, ընդ.։

Ոող. ձԽՍ. 5

## 324 ՄԵԾ ԱՒԵՏԻՍԸ

1 Յուդայի լերանց վրայովը
　Աւետիս բերող կ'եկէ.

Քաջալերական խօսքովը
Գերի Սիօնին կ'ըսէ,
«Քու Աստուածդ
Հիմա լուծըդ կը քակէ»

2 «Վա՛յ երկարեցա՞ւ գիշերըդ,
Քու ցաւերդ բազմացա՞ն.
Քաշուեցա՞ն բարեկամներըդ,
Թշնամիք զօրացա՞ն.
Քա՛ջ լեր հիմա,
Բարիքի օրեր հասան։»

3 «Քու արեւդ ահա ծագած է,
Գիշերուան խաւարն անցաւ.
Նեղութիւնդ ամբողջ անցած է,
Տէրն քու ազատիչդ եղաւ.
Փրկութիւնըդ
Լիովին կատարուեցաւ։»

Ես. ԾԲ. 7 Թարգ. Elias Riggs

## 325 ԹՈՂ ՎԱՌԻՆ ԱՂՕՏ ՃՐԱԳՆԵՐԸ

1 Կը փայլի մեր Հօրը գութը
Իր լուսոյ գահէն վերերէն.
Բայց պահելն մեզի յանձնած է
Եզերքին վրայ կանթեղներն,
Թող վառին աղօտ ճրագներ
Լոյս ղրկեն ալեաց մէջէն.



Տատանելով մարած նաւորդ մը
Դուն կրնաս փրկել կորուստէն։

2 Ո՛հ, մեղաց գիշերն պատած է,
Ալիքները կը գոռան,
Անձկանօք դիտող աչքեր կան,
Որ եզերքը լոյս տեսնան։
Թող վառին, և այլն։

3 Արդ, եղբայր, վառէ կանթեղդ,
Նաւորդներն թող հրաւիրուին.
Կը փնտռեն նաւահանգիստը,
Ո՛հ, մութին մէջ չը կորսուին.
Թող վառին, և այլն։

Մատթ. Ե. 16 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԼՋԵԱՆ

## 326 ՍԵՐՄԱՆԵԼ ԵՒ ՀՆՁԵԼ

1 Կը ցանեն իրենց սերմն արշալոյս ծագելէն,
Կը ցանեն կէս օրուան տաքութեանը ատեն,
Կը ցանեն ալ մինչեւ մթալի իրիկուն,
Կը ցանեն և ի մէջ գիշերուանը մութին.
Հունձքն ի՞նչ պիտի ըլլայ։

2 Կը ցանեն թէ՛ խօսքով թէ՛ գործքով անդադար,
Ո՛րչափ քաղցր խօսքեր ու գործքեր բարերար
Աստուծոյ օրհնութեամբը կը մխիթարեն
Մեր սրտերն աշխարհիս փորձութեանց գտած
ատեն.

Հունձքը անուշ կ'ըլլայ.

3 Կը ցանեն և ոմանք Աստուծոյ պատգամներն,
Գաւառներն, խոստումներն և բաղձանալիքներն.
Կը յայտնեն Քրիստոսի բարի լուրն փրկութեան,
Եւ սրտերը ճերմակ կ'ըլլան ուր որ երթան.
Հունձքը հարուստ կ'ըլլայ։

4 Եւ ոմանք ալ անգործ ձեռքերնին կը ծալեն,
Բայց և այնպէս իրենք ալ սերմեր կը ցանեն.
Ծուլութեան սերմերէն կը բուսնին դառնացաւեր,
Եւ հոգեր անօգուտ ու պարապ գզգզումներ.
Հունձքը տրտում կ'ըլլայ։

5 Թէ՛ մութի մէջ և թէ՛ լոյսի մէջ մենք ցանենք,
Թէ՛ տկարութիւնով թէ՛ ուժով սերմանենք,
Առանձին, բազմութեան հետ, սիրով, բարկու-
թեամբ,
Թէ՛ իմաստութիւնով, և թէ՛ անմտութեամբ,
Հունձքը ստոյգ կ'ըլլայ։
Գաղ. Զ. 7, 8

## 327 ԱՆՁԵՂՁԻՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Քաղցր Փրկիչ մը ունիմ ես երկնից մէջ,
Թէև բարեկամք են քիչուոր և տկար,
Հզօր և գթած իմ վրաս կը հսկէ ինք.
Ո՛հ թէ իմ Փրկիչըս քաղցրիկ ալ ըլլար.
Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ։



2 Հայր մը ունիմ որ ինծի պարգևած է
Տուն մը, ո՛հ, շատ քաղցր ու երանելի,
Եւ ինք զիս պիտի շուտ կանչէ իր առջևը,
Բայց ո՛ւր էր որ քեզ ալ իմ հետս տանէի.
Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ։

3 Ինձ փառաւոր և անբիծ հանդերձներ կան՝
Պատրաստ իմ աչքերս հմայլեցնելու,
Բայց երբոր զանոնք փառաց մէջ վերն հագնիմ ես,
Ո՛հ, քեզ ալ տրուէր այն ըզգեստն հագնելու։
Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ։

4 Խաղաղութիւն մը ունիմ իմ սրտիս մէջ
Զոր աշխարհասէրք բնաւ չեն վայելեր.
Անոր աղբիւրն է մի միայն իմ Փրկիչըս,
Ո՛հ թէ այս վայելքը քեզի ալ տրուէր.
Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ։

5 Տէրն երբ գտնէ քեզ, ուրիշներ փնտռէ դուն,
Զի ինք նախ ըզքեզ փնտռելու հաճեցաւ.
Անոնց համար ալ կ'ընդունուի քու աղօթքդ,
Ինչպէս իմինս քեզ համար ընդունուեցաւ։
Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ։
Յակ. Ե. 16 Թարգ. C. C. Tracy

## 328 ԵՐԳ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

1 Յիսուս Քրիստոս, քուկդ է միայն
Գործն մեր մեծ փրկութեան.
Դուն խոստացար որ յաւիտեան
Ըլլաս մեզ օգնական.
Քեզ կը խնդրենք մենք միաբան,
Լուսաւորէ դուն մե՛ր ճամբան,
Դարձուր բոլոր աշխարհն քեզի,
Որ քու անունդ փառաւորուի.
Փառաւորուի,
Անունդ փառաւորուի,

2 Դուն, ով Յիսուս, առաջ գացիր,
Եւ մեզ ճամբայ բացիր,
Խաչ, նեղութիւն, մահ կրեցիր,
Ըզմեզ երկինք տարիր.
Մենք քայլերուդ թող հետեւինք.
Մեր խաչը միշտ սիրով տանինք.
Երբեք ալ չը յուսահատինք,
Ամէնքս մինչեւ քեզի հասնինք.
Քեզի հասնինք,
Մինչեւ քեզի հասնինք.

3 Դուն ցորենի հատիկին նըման
Մըտար, Տէր, գերեզման.
Եւ օրհնեցիր աշխարհ համայն
Քու սուրբ խօսքովդ միայն.



Պըտղէ նորէն բոլոր աշխարհ
Նոր ծառաներ, փառացդ համար,
Քու գործդ անձամբ յառաջ դուն տար,
Յիսուս Քրիստոս, Տէր բարերար.
Տէր բարերար,
Քրիստոս, Տէր բարերար.

Գործ. Դ. 12

## 329 ՀԻՆ ԼՈՒՐԸ

1 Տուր ինծի այն հին, հին լուրը
Վերին անտես իրաց,
Տէր Յիսուսի սիրոյն վրայ,
Եւ իր անհուն փառաց.
Շատ պարզ պատմէ զանոնք ինծ,
Իբրեւ փոքրիկ տըղու,
Քանզի ես շատ տըկար եմ,
Անզօր իմանալու։
Տուր ինծի այն հին, հին լուրը,
Տուր ինծի այն հին, հին լուրը,
Տէր Յիսուսի սիրոյն վրայ,
Եւ իր անհուն փառաց.

2 Զայն մեղմ կերպով պատմէ ինծ,
Որ ես լաւ հասկընամ
Զարմանալի փրկանքը,
Իբրեւ մեղաց դարման.

Եւ շատ անգամ կրկնէ ինծ,
Զի կը մոռնամ դիւրաւ,
Առաւօտու ականակիտ ցող
Միջօրէին կորեաւ։
Տուր ինծ, և այլն։

3 Շուտով այն հին, հին լուրը
Հաճէ ինծի պատմել,
Քանզի իմ մեծ մեղքերս ալ
Կրնայ Յիսուս քաւել։
Կրկին կրկին այն լուրը
Պատմէ եթէ կամիս,
Որ ինծ վշտաց ատենը
Մխիթարիչ լինիս։
Տուր ինծ, և այլն։

4 Տուր ինծ այն հին, հին լուրը
Վախու պատճառ երբ կայ,
Կամ աշխարհիս սուտ փառքը
Հրապոյր երբ ինծ ըլլայ։
Եւ երբ փառաց աշխարհը
Հոգւոյս վրայ ծագէ,
Տուր ինծ այս հին, հին լուրը,
«Քրիստոս քեզ կը փրկէ։»
Տուր ինծ, և այլն։

Մարկ. Ե. 19



## 330 ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ԱՂՕԹՔ

1 Ով քաղցր Փրկիչ, հոս գալ հաճէ,
Որ շնորհք ըրիր այն հարսնիքին.
Ներկայութեամբդ, Տէր, մեզ օրհնէ,
Եղիր հոս ալ մեզ հիւր անգին։

2 Տէր, կը խնդրենք, ձիրքդ օրհնութեան
Այս երկուքին վրայ հանգչին,
Եւ բարութիւնդ անվախճան
Երջանկացնէ աստ և յերկին։

3 Տէր բարերար, առատ շնորհքով
Լեցուր անոնց բնակարան
Առատութեամբ, ողջութիւնով.
Տուր սիրտ գովիչ քոյդ բարութեան։

4 Այս կեանք է ալէկոծ մէկ ծով,
Փոթորկալից, վտանգաւոր.
Մէկտեղ ապրին միշտ սուրբ վարքով,
Մինչև հասնին երկինք անդորր։

5 Երբ մահը գայ զատէ զանոնք,
Քակէ այս կապն իր ցուրտ ձեռօք,
Թող պատկերիդ փոխուին անոնք,
Դարձեալ միանան քու սուրբ շնորհօք։

Մատթ. ԺԹ. 5, 6

## 331 ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Այս տան լոյսին, գէթ ի գանձ վերին,
Ով կենաց Աստուած, արդ կ'ուղղէ հայցուած·
Քու աջովդ պահէ զտուն ցաւէ, ահէ,
Կեանքն անոնց միշտ հոս երգ մ'ըլլայ, սաղմոս։
Խմբերգ· Ով Աստուած, յոյսէ մի պսակ հիւսէ,
Դիր անոնց ճակտին, թող բերկրին, ժպտին,
Մի դրօշակ ժպտուն թող ըլլայ այս տուն,
Քաղցր կեանքի ծորան, սուրբ սիրոյ խորան։

2 Երբ ցաւեր տիրեն, Տէր, տուր ոյժ վերէն,
Թող փարին Փրկչին, միշտ նային խաչին,
Ցաւերու լուծին տակ թող չը հիւծին,
Այս սիրուն յարկին տէրն ըլլայ Երկին։
Խմբերգ· Ով Աստուած, և այլն։

3 Տունն ըլլայ ցընծուն, սուրբ սիրոյ օծուն,
Հոն ծըլին մանկունք, յոյժ բարի զաւակունք·
Լոյսն ըլլան ազգին, վառ գոհարք անգին,
Խունկ ու բոյր սփռեն ու աշխարհն օրհնեն։
Խմբերգ· Ով Աստուած, և այլն։

Ծնն. Բ. 18 Հեղինակ ՅՈՎՀ. ՊՈՒՃԻԿԱՆԵԱՆ

## 332 ՀԱՐՍԱՆԻՔ

1 Խորհրդաւոր է այս հանդէս,
Ուր այս ամոլք պարկեշտ ու հեզ



Կու գան միմեանց ձեռք տալ յօժար,
Ուր ուխտելով անկեղծաբար,
Քաղցր ըլլայ այդ միութիւն,
Եւ խաղաղ անոնց տուն.
Օ՜ն, մաղթենք որ այր և կին
Անբաժան միշտ ապրին։

2 Անոնց գլխուն կը բոլորի
Նարօտ չքնաղ ու ծիրանի·
Սակայն պսակ Տէրոջ շնորհքին
Գեղեցկագոյն է և անգին։
Քաղցր ըլլայ, և այլն։

3 Մէկտեղ ապրիլ կը խոստանան,
Ժըպտիլ, արտմիլ միանգամայն։
Այժմ կ'ուխտեն նոր ընտանիք,
Մաղթենք անոնց կեանք երջանիկ·
Քաղցր ըլլայ, և այլն։

Եփես. Ե. 28 Հեղինակ Բ. Ե. ԼԵՔՍԼՐՃԵԱՆ

## 333 ՊՍԱԿԻ ԱՂՕԹՔ

1 Տէր, քաղցր աչքով վերէն նայէ
Հարսին ու փեսային.
Ներկայութեամբդ հոս գտնուէ,
Օրհնէք տուր պսակին։

2 Յիսուս, Դրլուխ մեր ամէնուն,
Ասոնք քեզ կ'աղաչեն,

Դու պարգեւէ յոյս, սէր անհուն,
Որ քեզ միշտ ծառայեն։

3 Երնէկ անոնց որ միանան,
Տէր, քու սուրբ հրամանով.
Արդ պըսակէ հարսն ու փեսան
Յաւիտենական սիրով։

4 Աշխատանքով կենացըս մէջ
Եկեղեցւոյդ օգնեն.
Ու վերն ալ քու լուսովդ անշէջ
Երջանկութեան վայլեն։

Յովհ. Բ. 2, 11

## 334 ԵՐԳ ՏԱՆ ՆԱՒԱԿԱՏԵԱՑ

1 Այս նոր բընակարան,
Հայր բարեգութ,
Ընտիր պարգեւ մըն է
Զաւակներուդ։

2 Ունիս տուն երկնաւոր
Մեզի պատրաստ,
Նաեւ տընակ սիրուն
Տուիր մեզ աստ։

3 Քանի վառի կըրակ,
Սէր ալ վառի.



Տունէս թող մշտահաս
Բարիք բըխի։

4 Մինչեւ այս յարկին սիրուն
Կը վայելենք,
Անհայր, անտուն հոգիք
Գութով յիշենք։

5 Յիսուս, հիւր պատուական
Բեթանիայի,
Բարեհաճէ ըլլալ
Հոս հիւր մեզի։

Սաղ. ՃԻԷ. 1 Հեղինակ C. C. Tracy

## 335 ՏՈՒՆ

1 Ոչինչ են աչքիս աշխարհի հաճոյքներ,
Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գըտներ
Հոն զիս կ'ողջունէ մի հրապոյր երկինքէն,
Զոր խիստ շատեր զուր ուրիշ տեղ կը փնտռեն.
Տուն, տուն, քաղցր իմ տուն,
Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ։

2 Զուր տեղ կը շողան ճոխութիւնք իմ չորս դին,
Տուէք, ո՛հ, ինծի ցած խըրճիթս վերըստին.
Տուէք իմ հըլու թռչուններս սիրական,
Նաեւ իմ մայրիս, ո՛հ, հանգիստն աննըման.
Տուն, տուն, քաղցր իմ տուն,
Ցածուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ։

Սաղ. ՁԴ. 10 Թարգ. Յ. Թ. ԴԱՑԱԵԱՆ

## 336 ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆԷ ԱՅՆ ՏՈՒՆԸ

1 Աստուած օրհնէ այն տունը
Երկնից լուսովն փայլուն,
Ուր որ անմեղ մանկունք կան
Դէմքով զուարթ, սիրուն.
Աստուած օրհնէ բարի մայրն
Եւ հայրը սիրելի.
Տէրն պաշտպանէ այն տունը,
Եւ չարն վանէ անտի։

2 Աստուած օրհնէ այն տունը
Ուր Ինք կը պաշտուի,
Եւ ուր աղօթք ամէն օր
Կ՚ելլէ նըման խունկի.
Աւա՜ղ, աւա՜ղ դժբաղդ տան
Ուր Տէրն է մոռցուած,
Ուր Յիսուսի անունը
Երբեք չէ յարգուած։

3 Աւա՜ղ, աւա՜ղ դժբաղդ տան,
Դառն վիշտերով տխուր,
Ուր ոչ յարմար ըզգեստ կայ,
Եւ ոչ ալ կերակուր.
Աստուած օրհնէ մեր տունը,
Այս յարկն ընտանեկան,
Եւ մեր բնակարանը
Ընէ երկնից նման։

Սաղ. ՃԺԸ. 15 Թարգ. C. C. Tracy



## 337 ՆՈՐ ՏԱՐԻ

1 Այս նոր տարուան սեմէն, Հայր իմ,
Ներս անցնելու կը վարանիմ.
Ամէն բան գոց, ծածուկ, մթին
Եւ անծանօթ ինձ կը թուին։

2 Ի՜նչ թերութեամբ անցեալն անցաւ,
Զոր լոկ յիշելն սրտիս ցաւ.
Արագ արագ կ՚անցնի ներկան,
Սարսափ կ՚ազդէ մութ ապագան։

3 Տարուէ տարի եւս աւելի
Սիրտս կը դառնայ չար, մեղսալի.
Տըգէտ եմ ես, յիմար, անզօր,
Իսկ թշնամիս՝ խիստ զօրաւոր։

4 Ով Հինաւուրց, անխախտ դու վէմ,
Հոգւոյդ քաղցրիկ ձայնն կը լսեմ
Թէ ինչպէս լոյսն քու երեսաց
Ցրուէ խաւարն, վանէ ի բաց։

5 Տըկարն ինչպէս կը զօրանայ՝
Եթէ սրտանց քեզի հաւատայ,
Եւ թէ օրհնքըդ մընայուն
Կ՚ընէ տըգէտը իմաստուն։

6 Ուստի, Հայր իմ, բռնէ ձեռքէս,
Որ հետեւիմ ո՛ւր զիս ուղղես.

Հաստատ գիտեմ ո՛չ կեանք, ո՛չ մահ,
Ո՛չ հրեշտակներ, ո՛չ չարին ահ.

7 Ո՛չ չարչարանք, ո՛չ նեղութիւն,
Ո՛չ թշնամեաց իշխանութիւն,
Ո՛չ վախ, վտանգ, սիրելեաց սէր,
Ո՛չ ապառնի ներկայ բաներ,

8 Ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն,
Եւ ո՛չ իրաց փոփոխութիւն,
Եւ ո՛չ երբեք մի արարած
Կարեն կորզել զիս քո ձեռաց։

Հռովմ. Ը. 28, 35-39    Հեղ. Տիկ. ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 338 ՏԱՐՈՒԱՆ ՎԱԽՃԱՆԻՆ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

1 Եկէք, մեր ճամբան նորոգենք,
Ճամբան ի Սիոն որ կ՚երթայ.
Յառաջ վազենք, կանգ ալ չառնենք
Մինչև որ մեր Տէրն երեւնայ։
Անոր բարի կամքը սիրով
Ջանանք անդադար կատարել,
Մինչև կարենանք ապահով
Փրկչին սուրբ հանգիստը մտնել։

2 Այս կեանքն է նման երազի,
Ո՜հ թէ երազողն արթննար.



Տարին օրուան պէս կը թռչի,
Բայցէն թեւ ունի, չը կենար.
Տարին օրուան պէս կը թռչի,
Մօտ է ահաւոր դատաստան.
Վճիռն ալ անայլայլելի,
Կա՛մ կեանք եւ կա՛մ մահ յաւիտեան։

3 Արդեօք երբոր մահ ինձ հասնի,
Կրնա՞մ ես երգել յաղթանակ.
Ըսել թէ Հաւատքս պահեցի
Եւ թէ կը մնայ ինձ պսակ.
Ո՜հ թէ երբ ձգեմ այս երկիր,
Տէրոջ քաղցր ձայնն ինձ ըսէ,
«Իմ ուրախութիւնըս մտիր,
Ու իմ աթոռիս վրայ նստէ»։

Սաղ. ԽԸ. 14    Թարգ. Elias Riggs

## 339 ՆՈՐ ՏԱՐԻ

1 Օրերըս շուտ կ՚անցնին, կ՚երթան
Ոստայնանկին կրկոցին պէս.
Արագութեամբ կ՚անհետանան
Ցօղ վաղանցիկ շոգիի պէս։

2 Ամէն վայրկեան մօտ կը բերէ
Զիս իմ կենացըս վախճանին.
Ամէն քայլ կը մօտեցնէ
Մահուան ու ցուրտ գերեզմանին։

3 Ի՛նչ շուտ անցաւ անցեալ տարին,
Թռաւ, գնաց, անհետացաւ.
Անձն իմ, արդեօք ըրի՞ր բարին,
Թէ չարութիւնքդ աւելցաւ.

4 Վա՜յ ինծ, բազում անգամ մեղայ՝
Ժամերս սպառայ անտեղ վատնելով,
Քանքարթաղոյց ծառայ եղայ՝
Կրցած բարիքըս չընելով։

5 Ով Տէր, ըրէ ողորմութիւն,
Ինծ աւելցուր համբերել օրերս,
Որ ըստանամ իմաստութիւն,
Քեզ նուիրեմ բոլոր ժամերս։

Սաղ. Ղ. 12 Հեղինակ. Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 340 ՆՈՐ ՏԱՐԻ

1 Հայր մեր, այժմ կը նուիրենք
Նոր տարին քեզի.
Ինչ որ դուն բաշխես, գիտենք
Այն է միշտ բարի.
Հաւ մինակ մը մնայուն,
Ձերծ ամէն ցաւէ,
Չենք խնդրեր. այլ քու անուն,
Հայր, փառաւորէ։

2 ՈՀ, կարօ՞ղ է միտքն մանկան
Բախտը սահմանել,
Խորհուրդով իր ապագան
Հօրմէն լաւ ընտրել։
Ցաւ կամ բարիքներդ անհուն
Հարկ է միշտ բերել,
Եւ ցնծմամբ քու սուրբ անուն,
Հայր, փառաւորել։

3 Տէր, թէ որ մեզի մնան
Այժմու պարգեւներ,
Եւ կամ երկինքէն անցան
Նոր օրհնութիւններ,
Եւ ինչ ալ այս նոր տարին
Մեզի ընծայէ,
Քու անունդ պաշտելի,
Հայր, փառաւորէ։

Բ Օր. ԼԱ. 8 Թարգ. C. C. Tracy

## 341 ԳԱՐՈՒՆ

1 Տեսէք, ծաղիկ, նոր կեանք ու սէր
Մեզի բերաւ Գարուն.
Լեռ, ձոր ու դաշտ հընչեն երգեր,
Ցընծմամբ են պատարուն.
Թռչուն, ծաղիկ, ծառ միասին
Բերած են ընծաներ.
Խեղճ սիրտ, ինչո՞ւ մնաս անբաժին,
Չունի՞ս միթէ նուէր։

Օրհնութիւն, փառք բարձրաձայն,
Այս է քեզ, Տէր, մեր ընծան.
Օրհնութիւն, փառք անդադար
Պարգեւքդ համար։

2 Շնորհաց ցօղեր, ո՛հ, կ'ողողեն
Իմ մեղապարտ հոգիս.
Ու սէր հաճի փայլել վերէն
Տխուր, աւեր սրտիս։
Մինչ իր բերքերն երկիր ձօնէ,
Թռչունն ալ՝ իր երգեր,
Խեղճ սիրտ, չունի՞ս մէկ բան գոնէ,
Գարուն քեզ չէ՞ նկեր.
Օրհնութիւն, փառք և այլն։

3 Շնչէ, Տէր, սէրդ ալ, խորունկ,
Իբրեւ շունչ հարաւին,
Որ գան յառաջ բողբոջ ու խունկ,
Ու ծով արդիւնք դիզուին։
Ու երբ ձայնէդ երկիր ցնծայ,
Ծափեն ձոր և բլուր,
Թող սիրտս ալ քեզ բերէ ընծայ
Նոր երգ մը քաղցրալուր.
Օրհնութիւն, փառք և այլն,

Գործ. ԺԴ. 16 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ



## 342 ԲԱՐԻ ՊԱՐԳԵՒՆԵՐ

1 Սրբտանք, հերկենք արտերը,
Ցանենք արդ սերմ ընտիր.
Կ'աճեցընէ զայն Հայր Աստուած
Ձեռքովը անխոտիր.
Թեղուն կ'ընէ Ան հողն ու ցանք՝
Անոնց տալով ձիւն, սառ,
Մեղմիկ հովեր, շողն արեւին,
Անձրեւը զովարար.
Բոլոր այս պարգեւները
Կ'իջնեն մեզ երկինքէն.
Արդ փա՛ռք Տէրոջ, փա՛ռք անդադար՝
Անոր սիրոյն համար։

2 Սոսկ ան է ըստեղծողը
Բոլոր արարածոց.
Ծաղկին կու տայ երանգ ու բոյր,
Աստղին ալ փայլ ու բոց.
Անոր կ'անսան կոհակն ու հով.
Ձագերն ան կը հոգայ.
Ցուցէ մեզ՝ իր որդիներուն
Կու տայ հաց առօրեայ։
Բոլոր այս պարգեւները, և այլն։

3 Արդ գոհութիւն քեզ, ով Հայր,
Պարգեւներուդ փոխան —

Ցանքի, հունձքի, առողջութեան,
Կեանքի և օրհնութեան։
Սիրով փոխան մեր ընծաներն,
Հայր, քեզ բերած ենք արդ.
Իսկ Դու մեզմէ կ'ուզես յաւէտ
Մեր սիրտը շնորհապարտ։
Բոլոր այս պարգեւները, և այլն.

Սաղ. ձխէ. Թարգ. Գ. Ց. ԿԻՒԼԵԱՆ

## 343 ՏԷՐ ԸՆԴ ՁԵԶ

1 Տէր ընդ ձեզ մինչև դիրար տեսնենք.
Խորհուրդովն առաջնորդէ ձեզ,
Իր փարախը հաւաքէ ձեզ,
Ու շնորհէ որ վերն դիրար տեսնենք։
Տէր ընդ ձեզ, Տէր ընդ ձեզ,
Մինչև վերը ժողովուինք,
Մեր Փրկիչն ալ տեսնենք,
Ու մէկտեղ անոր երկրպագենք։

2 Տէր ընդ ձեզ մինչև դիրար տեսնենք,
Իր թևոց ներքև ծածկէ ձեզ,
Մանանայ միշտ պատրաստէ ձեզ,
Ու շնորհէ որ վերն դիրար տեսնենք։
Տէր ընդ ձեզ, և այլն.

3 Տէր ընդ ձեզ մինչև դիրար տեսնենք.
Երբ վտանգ կամ վիշտ պատէ ձեզ,



Իր բազուկը պաշտպանէ ձեզ,
Ու շնորհէ որ վերն դիրար տեսնենք.
Տէր ընդ ձեզ, և այլն։

4 Տէր ընդ ձեզ մինչև դիրար տեսնենք,
Տարածէ ձեր վրայ իր սէրը,
Խափանէ մահուան խայթերը,
Ու շնորհէ որ վերն դիրար տեսնենք.
Տէր ընդ ձեզ, և այլն.

Ա. Պետ. Ե. 14

## 344 ՀՈՒՆՁՔ

1 Օրհնենք մենք Տէրն հունձքին,
Ձեռք, սիրտ, ձայն միասին
Թող բարձրանան.
Լեռ, ձոր երգեն, խնդան,
Անտառ, պուրակ թնդան,
Արտեր իրենց բերքն տան,
Գետեր ցնծան։

2 Այո, իր սուրբ անուն
Ջերմ գոհութեամբ անհուն
Արդ հռչակենք.
Երբ բարիքներ առղան,
Ու ճոխ է մեր սեղան,
Յիշենք Տէր Եհովան,
Ու զայն օրհնենք։

3 Օրհնենք մենք Տէրն հունձքին,
Ձմեռ, ամառ, ձայն միասին
Թող բարձրանան.
Արտէն ըշտեմարան
Երբոր բերենք որան,
Օրհնենք միաբերան
Տէր Եհովան։

Ծնն. Ը. 22 Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԷՍԵԱՆ

## 345 ԳԵՂԵՑԻԿ ԶԵՌՔԵՐ

1 Գեղեցի՜կ ձեռքեր փոքրիկ,
Որ Տէրոջ պատուէր գործեն.
Գեղեցի՜կ աչքեր փոքրիկ,
Վառուած լոյսով երկինքէն։

Ի՜նչ գեղեցիկ այն ձեռքեր փոքրիկ,
Որ Տէրոջ պատուէր գործեն.
Ի՜նչ գեղեցիկ այն աչքեր փոքրիկ,
Վառուած լոյսով երկինքէն։

2 Այդ բոլոր ձեռքեր փոքրիկ
Թող օգնեն Փրկչին փառքին.
Այդ բոլոր սրտեր փոքրիկ,
Անոր սիրով թող յուզուին։
Ի՜նչ գեղեցիկ, և այլն։

3 Այդ բոլոր շրթներ փոքրիկ
Միշտ Փրկչին թող աղօթեն.



Թող քալեն ոտքեր փոքրիկ
Անոր գծած շաւիղէն,
Ի՜նչ գեղեցիկ, և այլն։

4 Ի՜նչ ընել որ կարենան
Ձեր ձեռքեր Տէրոջ համար,
Զայն ըրէք դուք, զայն միայն,
Ուժով, սիրով, միշտ յօժար,
Ի՜նչ գեղեցիկ, և այլն։

Ես. ԾԲ. 7 Թարգ. Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

## 346 ՍԷՐ ՏԱՆ ՄԷՋ

1 Գեղեցիկ ամէն շէնքեր,
Երբ սէր կայ տան մէջ.
Զուարթ, սիրուն ամէն դէմքեր,
Երբ սէր կայ տան մէջ.
Հոն կայ քաղցրր միութիւն,
Ճշմարիտ խաղաղութիւն,
Իսկական յաջողութիւն,
Երբ սէր կայ տան մէջ.
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Իսկական յաջողութիւն,
Երբ սէր կայ տան մէջ։

2 Պարզ խրճիթն է հրճուալից,
Երբ սէր կայ տան մէջ.
Զերծ վնասէն յոռի կըրից,
Երբ սէր կայ տան մէջ։

Հասունցած ծաղիկներով
Տես երկիր դրախտի պէս զուլ,
Կեանք անդորր ու ապահով,
Երբ սէր կայ տան մէջ։
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Կեանք անդորր ու ապահով,
Երբ սէր կայ տան մէջ։

3 Վերն երկինք կը ծիծաղի,
Երբ սէր կայ տան մէջ.
Վարն երկիր ծիրած է մի·
Երբ սէր կայ տան մէջ.
Զով ջուրերն, անոյշ երգերն,
Եւ ճաճանչազեղ եթերն,
Տէրն ալ կը հաւնի բարձրերն,
Երբ սէր կայ տան մէջ.
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Տէրն ալ կը հաւնի բարձրերն,
Երբ սէր կայ տան մէջ.

4 Յիսուս, դու թող ինձ յայտնէ,
Յայնժամ սէր տան մէջ.
«Քուկդ եմ» իմ հոգւոյս ըսէ,
Յայնժամ սէր տան մէջ։
Թող քու լոյսդ հրաշափառ,
Արեւէն ալ շատ պայծառ,
Փարատէ մեզն ու խաւար,



Յայնժամ սէր տան մէջ.
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Փարատէ մեզն ու խաւար,
Յայնժամ սէր տան մէջ։

Ա Յ-հն. Դ. 18

## 347 ՓՈՔՐ ՁԵՌՔԵՐ

1 Ո՛հ, փոքր ձեռքերը ի՛նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.
Աղքատներուն կրնան օգնել,
Եւ թշուառներն մխիթարել.
Այս շնորհքն ինծի՛ տրուի.

2 Ո՛հ, փոքր շրթունքը ի՛նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.
Կրնան աղօթք մատուցանել
Եւ քաղցր խօսքեր արտասանել.
Այս շնորհքն ինծի՛ տրուի։

3 Ո՛հ, փոքր աչքերը ի՛նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.
Կրնան դէպ ի երկինք նայիլ,
Եւ Սուրբ Մատեանն կարդալ սորվիլ.
Այս շնորհքն ինծի տրուի.

4 Ո՛հ, փոքր ոտքերը ի՛նչ կրնան ընել
Տէրոջը հաճելի.

Շնորհքով կրնան ապաւինիլ
Յիսուսի Փրկչին, և զայն սիրել.
  Այս շնորհքն ինծի՛ տըրուի։

5 Ձեռքեր, շրթունք, սրտեր, երբ միայն
  Տէրոջը հաճելի.
Գործեր կատարելու ջանան,
Փրկչին շատ սիրելի կ՚ըլլան.
  Այս շնորհքն ինծի՛ տըրուի։
Ժող. ԺԲ. 1

## 348 ՓՈՔՐ ԲԱՆԵՐ

1 Փոքրը կաթիլները
  Ծովը կը կազմեն,
Աւազի հատերը
  Լեռն ալ կը դիզեն։
2 Փոքրը վայրկեանները
  Թէպէտ բան մը չեն,
Բայց անթիւ տարերը
  Անոնցմէ կ՚ելլեն։
3 Փոքրը յանցանքները
  Սիրտն կ՚ապականեն,
Եւ շատ մեծ մեղքերը
  Անոնցմէ կ՚ելլեն։
4 Փոքրը բարիքները
  Շատ մարդոց կ՚օգնեն,



Եւ սիրոյ խօսքերը
  Հոս երկինք կ՚ընեն։
Մատթ. ԻԵ. 21

## 349 ՏՂՈՒ ՄԸ ԱՂՕԹՔԸ

1 Պզտիկ տղու մը սորվեցուր,
  Ով Տէր, աղօթք ընել,
Եւ Սուրբ Հոգիդ ինծի զըրկէ
  Չար սիրտըս նորոգել։
2 Ինկած էակ մը ծընունդէս՝
  Քեզի դէմ մեղք ըրի,
Եւ թէ որ դուն ինծի չօգնես,
  Հոգիս կը կորսուի։
3 Բայց Տէր Յիսուս, հզօր Փրկիչ,
  Մեղքերըս սրբելու
Մեռա՛ւ, յարեաւ և համբարձաւ
  Հոգիս ազատելու։
4 Պզտիկ տղաք անոր թող գան
  Որ մեղքերնին ներուին.
Զանոնք իրեն սիրով կ՚առնէ,
  Իրմով միշտ կ՚օրհնուին։
5 Որոնք կանուխ զայն կը փնտռեն
  Անշուշտ պիտի ապրին,
Յիսուս անոնց կ՚առաջնորդէ
  Որ հետը ըլլան։
Ա Թագ. Գ. 10

## 350 ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԴՊՐՈՑ

1 Կիրակին մեղք է քունով անցընել.
Ուստի ես կանուխ կ'որոշեմ ելլել.
Ես կանոնն ալ միշտ պահելու ջանամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։
Թռչուններն առտուն խնդագին կ'ելլեն,
Երգելով անտառն կը հնչեցընեն.
Նմանող անոնց ինչո՞ւ ես չըլլամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։

2 Երբ կու գայ գարուն, կամ փայլուն ամառ,
Ծաղիկներ, պըտուղ, մէ՛կ կը շուշանար.
Անդադար ես ալ փութաջան ըլլամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։
Աղօթքով՝ շնորհք Տէրոջմէն խնդրեմ,
Ու համարս ճշտիւ եռանդով սորվիմ.
Ես բարի կանոնն բնաւ չըմոռնամ,
Կիրակի օրուան դպրոցէն չըմնամ։

Սաղ. ՃԺԸ. 24

## 351 ՓԱՅԼԻՆՔ

1 Յիսուս կը պատուիրէ մեզ
Որ լուսատու ըլլանք.
Ինչպէս ճրագ մութին մէջ,
Մենք ալ նոյնպէս լոյս տանք։



Բոլոր աշխարհ խաւար է,
Ուստի պէտք է փայլիս
Դուն՝ քու փոքր անկիւնիդ մէջ,
Ու ես ալ՝ իմինիս։

2 Յիսուս կը պատուիրէ մեզ
Փայլիլ իրեն համար.
Գիտէ ինք թէ մեր լոյսը
Աղօ՞տ է թէ պայծառ.
Վերէն ինք կը դիտէ մեզ
Թէ արդեօք կը փայլի՞ս
Դուն՝ քու փոքր անկիւնիդ մէջ,
Ու ես ալ՝ իմինիս։

3 Յիսուս կ'ուզէ որ լոյս տանք
Մեր ընկերաց համար.
Քանզի աշխարհիս մէջ կայ
Տեսակ տեսակ խաւար.
Մեղքեր, ցաւեր, վիշտեր կան,
Ուստի պէտք է փայլիս
Դուն՝ քու փոքր անկիւնիդ մէջ,
Ու ես ալ՝ իմինիս։

Մատթ. Ե. 16 Թարգ. Miss Maria West

## 352 ՏԵՍ, ՄԵՂՈՒՆ ԱՇԽԱՏԱՍԷՐ

1 Տես, մեղուն աշխատասէր
Ծաղկանց մէջ կը գործէ,

ժողվելու ալ զանց չըներ
Մեզի ամէն ընտիր ծաղկէ։

2 Տես, ի՛նչպէս փայլուն մոմով
Կը շինէ խորշեր իրեն,
Ու կը լեցընէ փութով
Իր անոյշ կերակուրէն։

3 Ես ալ օգտակար գործի
Տամ ջանքերըս անդադար,
Զի չար որոգայթ ունի
Սատանան ծոյլին համար։

4 Թող բարի ուսմունքներով
Մանկութիւնըս անցընեմ,
Եւ սրտով ու նախանձով
Մինչ Տէրոջը ծառայեմ։

Առակ. Զ. 6-8

## 353 ՅԻՍՈՒՍԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

1 Երբոր կը կարդամ պատմութիւնը սիրուն,
Թէ Յիսուս երկրիս վրայ կը քալէր,
Թէ բարի հովիւի պէս իր գառնուկներուն,
Ինք մարդոց նոյն աչքով կը նայէր.

2 Մանկունքը իր բազուկներուն մէջ կ'առնէր.
(Իր սէրը ի՜նչ քաղցր ու ձրի.)
Կը խորհիմ՝ երբ ան մանըր տղաքը կ'օրհնէր,
Ո՛հ թէ ես անոնց մէկն ըլլայի։



3 Ո՛հ թէ անոր ձեռքը գլխուս վրայ դրուէր,
Լսէի ես այն ձայնն քաղցրութեան,
Եւ ինծի ալ անոնց պէս նայէր երբ կ'ըսէր,
«Թող տղաքը որ մանկունք ինծի գան»։

4 Բայց դեռ ալ Փրկիչը իրեն կը կանչէ,
Որ իր սէրը ես ալ ժառանգեմ.
Ու թէ որ հոս զինքը խնդրեմ ի սրտէ,
Շուտով զայն պիտի վերը տեսնեմ։

Մարկ. Ժ. 13-16 Թարգ. Elias Riggs

## 354 ՓԱՌՔ ՏՈՒԷՔ

1 Դուք կ'ուզէ՞ք հրեշտակ մ'ըլլալ,
փառք, փառք, փառք տուէք.
Դուք կ'ուզէ՞ք ձեր հոգին մաքրել,
փառք, փառք, փառք տուէք։
Արտուտին պէս թեւերով,
Ու գարնան քաղցր երգերով,
Եւ ուրախ զուարթ սրտով
փառք, փառք, փառք տուէք։

2 Թէ որ ձեզ տայ աշխարհն,
փառք, փառք, փառք տուէք.
Թէ որ դուք երգէք մինակ,
փառք, փառք, փառք տուէք,
Թէ որ վիշտ, ցաւ ձեզ դառնայ,
Որ միշտ ամէնուն կ'ըլլայ,

Հոն ալ բարութիւն մը կայ.
Փառք, փառք, փառք տուէք։

3 Կայ Միջնորդ մեզի համար,
Փառք, փառք, փառք տուէք.
Իր անհուն արեան համար
Փառք, փառք, փառք տուէք։
Երբ մահուամբ երկինք ելլէք,
Դուք յայնժամ պիտի երգէք
Հրեշտակաց խումբին հետ մէկ.
Փառք, փառք, փառք տուէք։

Սաղ. Ը. 1,2 Թարգ. ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴՈՒԿԵԱՆ

## 355 ՅԻՍՈՒՍ ԶԻՍ ԿԸ ՍԻՐԷ

1 Տէր Յիսուս զիս կը սիրէ,
Իմ Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ.
Ի՛նչ գութով ինք ընդունեց
Փոքր տղաքը, և օրհնեց,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ։

2 Տէր Յիսուս զիս կը սիրէ,
Զիս իրեն կը հրաւիրէ.
Ինք տուաւ ինծ կեանք առատ,
Երբ իմ տեղըս ինք մեռաւ։



Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ.

3 Տէր Յիսուս զիս կը սիրէ,
Ապահով կ'առաջնորդէ.
Ինք է ինծ հովիւ բարի,
Իր փարախն զիս կը տանի,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ.

4 Ո՛հ, թէ ես ալ զինք սիրեմ,
Միշտ անոր ձայնին լսեմ,
Մինչև վեր փոխադրուիմ,
Եւ անոր հետ բնակիմ.
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Ո՛հ, կը սիրէ զիս,
Սուրբ Գիրքը այս կ'ըսէ։

Գաղ. Բ. 20 Թարգ. C. C. Tracy

## 356 ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՏՂԱՅՔ

1 Տէրոջ աթոռն շրջապատած
Տղայք կան բիւրաւոր,

Որոնց մեղքերը են թողուած,
Տեսքով են փառաւոր.
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած։

2 Ամբիծ, ճերմակ հանդերձներով՝
Տես ամէն մէկն հագուած,
Ու յաւիտենական լոյսով
Դրախտի մէջ բնակած.
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած։

3 Այն երկնային աշխարհն փայլուն
Որո՞ւ ձեռքով եղան,
Ու՛ր որ կայ սէր, խաղաղութիւն,
Ի՞նչ միջոցով մտան.
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած։

4 Փրկչին արիւնը թափուելով,
Անով մաքրուեցան.
Այն սուրբ աղբիւրը բացուելով՝
Ճերմակ, մաքուր եղան.
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած։

5 Փրկչին շնորհքը խնդրեցին
Որքան որ հոս կեցան,



Ու հիմա հոն կը բնակին,
Կ'օրհնեն զայն յաւիտեան.
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած։
Յայտ. է. 14

## 357 ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ

1 Ո՛վ հօտիդ բարերար Հովիւը,
Ոչխարներդ կը պահես քու քովդ,
Կը տանիս հոն զանոնք սիրովդ,
Ուր որ երջանիկ կ'ըլլան.
Զիս ալ առ, կ'աղաչեմ, ով Տէրը,
Զօրացուր իմ տկար ոտքերը,
Ու ներէ իմ անթիւ մեղքերը,
Որ ես քու գառնուկդ ըլլամ։

2 Ես քեզմէ թէ որ հեռանամ ես,
Անապատն ու լեռներն երթամ ես,
Գայլերէն շատ սխալ վախնամ ես,
Մեծ գող սխալ ունենամ.
Բայց զիս առ, կ'աղաչեմ, ով Տէրը,
Զօրացուր իմ տկար ոտքերը,
Ու ներէ իմ անթիւ մեղքերը,
Որ ես քու գառնուկդ ըլլամ։

3 Իմ ճամբաս թէև շատ երկայն է,
Բայց միշտ քու օգնութիւնդ ներկայ է.

Զիս յոգնածըս քու ձեռքդ բռնած է,
Քու թեւերդ հանգիստ կ'ըլլամ։
Զիս ալ առ, կ'աղաչեմ, ով Տէրըս,
Զօրացո՛ւր իմ տկար ոտքերըս,
Ու ների՛ իմ անթիւ մեղքերըս,
Որ ես քու գառնուկդ ըլլամ։

4 Ով Յիսուս, թող քալեմ քու քովդ,
Ո՛հ, լուա զիս քու արիւնովդ,
Իմ հոգիս տար երկինք սիրովդ,
Որ հոն ապահով ըլլամ։
Հոն կենամ ես Փրկչիդ առջեւը,
Տամ քեզի գոհութիւն, պատիւ,
Զի դուն ես սիրելի Հովիւը,
Քու քովն յաւիտեան կենամ։

Յովհ. Ժ. 27

## 358 ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

1 Լսէ իմ ձայն, ով իմ Աստուած,
Թոյլ մանկական սրտիկըս բաց,
Որ քաղցրահամ ծաղիկի նման
Ըլլամ բարեբուրեան։

2 Շնորհք տուր ինձ, ով Տէր արդար,
Եղիր ինծի միշտ հովատար,
Որ առաւօտ և իրիկուն
Օրհնեմ քու սուրբ անուն։



3 Պարկեշտ ըլլամ ամէն ատեն,
Որ ուրիշներ ալ զիս չատեն,
Սիրեմ ընկերս սրտով մը հեզ,
Սիրեմ ծնողքս և քեզ։

4 Տուր, ծնողացս ուրախութեան
Պատճառ ըլլամ ամէն վայրկեան.
Եւ քեզ ըլլամ բարի որդի,
Ժառանգըդ արժանի։

Սաղ. ԿԱ. 1

## 359 ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ՓԱՓԱՔԸ

1 Հրեշտակ մ'ըլլալ կ'ուզեմ ես,
Երկինքը բնակիլ,
Թագ մ'ունենալ գլխուս վրայ,
Եւ սուրբ քնար զարնել.
Այն տեղ Փրկչիս առջեւը
Յաղթական երգեր
Պիտի անուշ լեզուով մը
Երգեմ ցորեկ գիշեր։

2 Այն երջանիկ երկինքը
Ողբի մը ձայն չըլլար,
Եւ չարութիւն գործող
Այն տեղ ընաւ չերթար.
Բայց օրհնութիւնն ու փառքը
Մաքուր և սուրբ սրտով

Պիտի տամ ես Տէրոջը
Անհուն ցընծութիւնով։

3 Ես յանցաւոր տըղայ եմ,
Բայց Տէրը կը ներէ,
Եւ իր ձըրի շնորհքովը
Հոգիս պիտի փրկէ։
Ով սիրելի Փրկիչըս,
Երբ մեռնելու ըլլամ,
Հրեշտակներուն խումբովը
Շիտակ քու քովըդ գամ։

4 Ա՜հ, այն օրհնեալ ատեն ես
Հրեշտակ պիտի ըլլամ,
Որոնց հետ միասին ես
Փրկչիս առջին կենամ.
Փառք, օրհնութիւն, պատիւ
Անոր մատուցանեմ,
Անթիւ օրեր իր քովը
Գիշեր ցերեկ երգեմ։
Մարկ. Ժ. 16

## 360 ՏՂՈՒՆ ԱՂՕԹՔԸ

1 Ով Փրկիչ մեր, կ'աղաչենք,
Խեղճ մեղանչական մենք ենք,
Միշտ լսէ մեզ,
Միշտ սիրէ մեզ,
Քաղցըր խընամքդ կ'ուզենք,



Մեր թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նուիրենք,
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք։

2 Դուն գըթած ես, երբոր մենք
Սուրբ ճամբէդ կը մոլորինք.
Դուն դարձուր մեզ,
Եւ ուղղէ մեզ,
Որ հետեւէդ քալենք,
Մեր թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նուիրենք,
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք։

3 Տէր, շնորհէ որ, կեանքն անցած,
Քեզ տեսնենք, աթոռդ նըստած.
Հոն օրհնենք քեզ,
Եւ պատուենք քեզ,
Զի ենք քեզմով փրկուած,
Մեր թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նուիրենք,
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Միշտ երկնից մէջ սէրդ գովենք։

Ես. Խ. 11 Թարգ. I. F. Pettibone

## 361 ՈՎՍԱՆՆԱ

1 Ի՛նչ սրբաշարժ երգոց ձայներ
Կ'արձագանգեն Սաղէմի դաշտէն.
Ի՛նչ քաղցրանուագ աղաղակներ,
Որ կը գուշեն Սիօնի բլրէն։
Փառաբանութիւն երգենք,
Փառաց ձայներ հնչեցընենք.
Ովսաննա, Ովսաննա,
Ովսաննա Գառին Աստուծոյ։

2 Ահա մանկունք ցնծմամբ կ'երգեն
Ովսաննա Քրիստոս Արքային.
Փրկչին գալուստն կը հռչակեն,
Եւ փրկութիւն մեղաւորին։
Փառաբանութիւն երգենք, և այլն։

3 Մեսիա անունն ցնծում տուաւ
Ամէն Հրէի, հեթանոսի.
Զի իր արեամբ մեղքը վերցաւ,
Ուստի երգենք սէրն Յիսուսի։
Փառաբանութիւն երգենք, և այլն։

Ղուկ. Բ. 13,14

## 362 ԱՆՁՆԱՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

1 Տէր Յիսուսին ի՛նչ նուիրեմ,
Որ զինքն ինծի տուաւ.



Իմ սէրս ի՛նչպէս ցուցընեմ,
Որ ինքն իմ տեղս մեռաւ։

2 Սէրս Յիսուսին կը նուիրեմ
Մանկութենէս ի վեր.
Նուաստ ընծաս, եւ լաւ գիտեմ,
Բնաւ ինք չանարգեր։

3 Հոգիս Տէր Յիսուսին կու տամ.
Կարող է փրկելու
Ու պահելու, մինչ ես երթամ
Երեսը տեսնելու։

4 Իմ ձեռքս տամ Տէր Յիսուսին,
Բոլոր իմ խորհուրդներս,
Անոր ճշմարտութեան խօսքին
Նուիրելով ժամերս։

5 Իմ ժամանակս տամ Յիսուսին,
Իրեն հետեւելով.
Ո՛հ թէ բոլոր օրերս լեցուին
Սուրբ, օգտակար գործով։

6 Իմ ըստացուածքս նուիրեմ
Քեզ, Տէր Յիսուս, շատ չէ.
Սակայն ինչ որ ունիմ և իմ
Ընդունելով օրհնէ։

Սաղ. ճԺԶ. 12-14 Թարգ. Elias Riggs

## 363 ԵՐԲ ԻՐ ԳԱՆՁԸ

1 Երբ իր գանձը, երբ իր գանձը
Ժողվէ մեր Փրկիչը,
Իր բոլոր սիրելիները,
Իրեն սեպհական,
Պատուական քարերու պէս,
Առաւօտ աստղերուն պէս
Փայլելով՝ անոր թագը
Պիտի զարդարեն։

2 Արդարները, արդարները
Իր արքայութեան մէջ
Ժողվելով՝ իր աթոռին վրայ
Պիտի նստեցնէ։
Պատուական քարերու պէս, և այլն։

3 Մանուկները, մանուկները,
Որ զինքը սիրած են,
Պիտ՝ ըլլան իր գոհարները,
Իրեն սեպհական.
Պատուական քարերու պէս, և այլն։

Մաղ. Գ. 17 Թարգ. Elias Riggs

## 364 ՍՈՒՐԲ ՏՂԱՅՔ

1 Մութ գետէն անդին կան
Շատ տղայք փոքրիկ,



Որ մեղքէ ազատ են
Հոն միշտ երջանիկ։
Ամառուան ծաղիկներէն
Գեր ի վերոյ գեղով՝
Կը ցնծան ու միշտ կ՚երգեն
Նոր ընկալուած փառքով։

2 Հոս անոնց աչքերը
Դառն կը թափէին
Արտասուք. իսկ վերը՝
Հիմա կը զմայլին,
Հիմա քաջավարժ մատներն
Քնարները կը զարնեն,
Եւ անոնց անոյշ երգերն
Փրկիչը կը գովեն։

3 Զի անոնց ամէնը
Ինքը հոն ժողվեց.
Մոլորած ատենը՝
Ինք զանոնք փնտռեց,
Ոչ ոսկի և ոչ գոհար
Կրնար զանոնք փրկել.
Իր անգին արիւնն փրկանք
Տուաւ խնամանօք։

4 Այն տղոց բաժինը
Ինծ ալ տրուեցաւ.
Կը գովեմ Փրկիչըս,
Որ իմ տեղս մեռաւ։

Ես անոր արեամբ փրկուած
Պիտի հոն խաչս առնիմ,
Նոյն երգեմ ու հրեշտակաց
Դասուն հետ խառնուիմ։

Ղուկ. ԺԸ. 16

## 365 ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԳՈՐԾ ԵՐԿՆԻՑ ՄԷՋ

1 Երկնից մէջ պիտի գործ ունենան տղաքներ
Ընելու, մէկը թոյլ չը մնար,
Սիրտը ուր կ'ունենայ, միտքը շատ խորհուրդներ
Ու ձեռաց ըզգացմունք կայ յարմար.
Պիտի գործ ունենան,
Պիտի գործ ունենան,
Տղաքներ պիտի գործ ունենան.
Այն փայլուն երկրին մէջ,
Ուր որ լոյս կայ անշէջ,
Տղաքներ պիտի գործ ունենան։

2 Աստուծոյ իմաստուն գործերուն վրայով
Պիտի հոն նոր բաներ միշտ սորվին,
Ու երկրիս բարիներն հոն առաջ երթալով՝
Ուսուցիչ կ'ըլլան նոր հասնողին։
Պիտի գործ ունենան, և այլն։

3 Եւ ինչպէս որ մեր Հայրը իր սուրբ հրեշտակներն
Կը ղրկէ իր որդւոց օգնելու,



Կարելի է մեզի ալ ղրկէ տղաքներն՝
Իր սիրոյն պատգամներն բերելու։
Պիտի գործ ունենան, և այլն։

Ա. Կոր. Բ. 9 Թարգ. Elias Riggs

## 366 ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

1 Փառք քեզ, Հայր իմ, որ ինծ տուիր
Գիշերուան մէջ հանգիստ քունիր.
Տուիր նաև արեւ պայծառ
Որ կը ծագի ինծի համար։

2 Հայր իմ, փառք քեզ, որ դուն ունիս
Անհուն սէր և խնամք առ իս
Եւ փրկեցիր ըրեր զաշխարհ
Ինծ նըմանող տըղոց համար։

3 Օգնէ ինծ որ ես կատարեմ,
Հայր իմ, առ քեզ իմ պարտքս ամէն.
Ըլլամ ազնիւ և բարեսիրտ,
Ու ընկերներուն չըլլամ ես բիրտ։

4 Ինչ որ ընեմ, գործեմ, խաղամ,
Օգնէ ինծ որ բարի ըլլամ.
Որպէս մեծնամ, ըլլամ սիրուն,
Հայր իմ, քեզի և ամէնուն։

Սաղ. Գ. 5

## 367 ՄԵՐ ՕՐԵՐԸ ԿԱՐՃ ԵՆ

1 Տէրոջը սէրն անհուն
Իրմէ վախցողներուն՝
Կը նմանի մօր մը սիրոյն
Իր մէկ հատիկ որդւոյն։

2 Ի՜նչ կարճ են մեր օրեր՝
Նման խոտի ծաղկին.
Երբ կը փչեն սաստիկ հովեր,
Շուտով կը թառամին։

3 Ողորմութիւնքդ մեծ են,
Բնաւ վախճան չունին.
Եւ սերունդէ սերունդ՝ ամէն
Խոստմունքդ կը կատարուին։

Ես. Խ. 6-8

## 368 ԿԵՆԱՑ ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱՒԷՆԸ

1 Ով Տէր, դուն ես մեզ ապաւէն,
Յոյս և ապաւոր ամէն ատեն.
Երկիրս, աշխարհ դեռ չստեղծուած՝
Յաւիտենից դուն ես Աստուած։

2 Դուն մարդն փոշի կը դարձնես,
«Մարդոց որդիք, դարձէք,» կ՚ըսես.



Քանզի առջիդ հազար տարին
Նման է երէկուան օրին։

3 Զանոնք բոլոր անյայտ կ՚ընես,
Կ՚ըլլան շուտ մը երազի պէս.
Առտուն դալար ծաղիկ կու տան,
Բայց իրիկունը կը չորնան։

4 Մարդիկ քու ուժըդ չեն ճանչնար,
Ով Տէր, քեզմէ ալ չեն վախնար.
Մեր օրերուն թիւն սորվեցուր,
Ու երկնային հանճար մեզ տուր։

5 Ծառաներուդ թող երեւնայ
Քու գործդ, և փառքդ յայտնի ըլլայ.
Տէր, թող քու լոյսդ մեզի ծագէ,
Դուն մեր ձեռաց գործերն օրհնէ։

Սաղ. Ղ. Թարգ. Elias Riggs

## 369 «ՀՈՍ ՄՆԱՅՈՒՆ ՔԱՂԱՔ ՉՈՒՆԻՆՔ»

1 Այս աշխարհիս ունայնութեան
Խաբեց, ո՜հ, ի՜նչ մեծ բազմութիւն.
Զըլլայ մենք ալ անով խաբուինք.
Հոս մնայուն քաղաք չունինք։

2 Ագահութեան չար ծնունդներ՝
Ատելութիւն, նախանձ ու հեռ,
Մէկդի ձգենք, հեռու փախչինք.
Հոս մնայուն քաղաք չունինք։

3 Ամէն ինչ որ ունինք հոս մենք,
Անով մարդոց բարիք ընենք.
Գանձ դիզելու թող չզբաղինք.
Հոս մնայուն քաղաք չունինք.

4 Օ՜ն, ցնծումով դէպ ի երկինք
Քալենք, ուր է մեր հայրենիք,
Թէ որ հաւատք ու սէր ունինք.
Հոս մնայուն քաղաք չունինք.

5 Բարի, խոհեմ ու գործունեայ
Կեանք մը վարենք, քանի լոյս կայ.
Երբ մահը գայ, հասնինք երկինք,
Հոս մնայուն քաղաք չունինք.

Եբր. ԺԳ. 14 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 370 ԵՐԿՆԻՑ ՀԱՄԱՐ ՓԱՓԱՔ

1 Ի՞նչ է կեանքը. լոկ շոգի մը
Որ շուտով անյայտ կ՚ըլլայ,
Կամ պլպլած տկար պատրոյգ մը,
Սիրտս ինչո՞ւ անոր ցանկայ.
Բաց թեւերդ, հոգիս, թռիր,
Երջանիկ երկիրն հասիր.

2 Տես, այն փառքը մեծափայլ է,
Չես կրնար նկարագրել.
Հոն Յիսուս փրկիչդ նստած է,
Սուրբերուն Արքայն և Տէր.
Բաց թեւերդ, և այլն.



3 Մեծ փառքով իր բոլորակը
Երջանիկ հոգիք կ՚երգեն.
Ցնծումով բոլոր երկինքը
Անդադար կը լեցնեն.
Բաց թեւերդ, և այլն.

Յայտ. Դ. 15

## 371 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԵՐԳԸ

1 Քանի մը տարիէն
Մէկ օր մը պիտի գայ,
Երբ մահն ու գերեզմանն ալ
Պիտի հասնին մեր վրայ.
Այն մեծ օրուան համար,
Ով Տէր, զիս պատրաստէ,
Քու արիւնովդ զիս լուա,
Ու մեղքերէս մաքրէ.

2 Դեռ քիչ մը ջանք ալ կայ,
Եւ քիչ մը աշխատանք,
Քանի մը օր ալ վշտալից,
Եւ ա՛լ պիտի չըլլանք.
Այն քաղցր օրուան համար,
Ով Տէր, և այլն.

3 Քանի մը սուրբ օրեր
Մենք հոս պիտի վայելենք,
Եւ յաւիտենական հանգիստ

Շուտով պիտի մեռնինք.
Այն սուրբ օրուան համար,
Ով Տէր, և այլն.

4 Այն որ սիրով մեռաւ
Որ մեզ մահէն փրկէ,
Շուտով կրկին պիտի դառնայ
Ու մեզ իր քովը առնէ։
Այն մեծ օրուան համար,
Ով Տէր, և այլն։

Յոբ. Է. 1-10 Թարգ. I. F. Pettibone

## 372 ՄԵՐ ԿԱՐՃ ԿԵԱՆՔԸ Ի՞ՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵՆՔ

1 Կախուած է կեանքս բարակ թելով,
Յանկարծ կը կըտրուի շունչով.
Ո՜հ, ի՞նչպէս չը խորհիմ
Դուցէ վայրկեան մը զիս տանի
Երկինք, և կամ, է կարելի,
Անյոյս դըժոխք ձըգուիմ

2 Տէր, դիր առջիս երկնից լուսով
Այն օրն որ պիտի գաս ամպով,
Դատել բոլոր մարդիկ։
Հոն ես ներկայ ըլլամ պիտի,
Վըճիռս ալ անփոփոխ պիտի,
Թըշուառ կամ երջանիկ։



3 Ով Հայր, հոգիս դուն նորոգէ,
Անվերջ կենաց խորհուրդն ազդէ
Իմ անըզգայ սրտիս։
Անոր արժէքն ինձ ըզգացուր,
Եւ զիս փրկէ մահէն տըխուր,
Անհուն սիրովն Փրկչիս։

4 Իմ ջանքըս թող միշտ այս ըլլայ,
Եւ այս խորհուրդն առջեւս ներկայ,
Կոչումըս հաստատել։
Քու կամքդ ընել ինծի շնորհէ,
Եւ հայրական խրատիդ՝ օգնէ
Մինչ վերջը համբերել։

5 Յայնժամ, Տէր, անարժան հոգիս
Ու բարութեանդ մէջ ընդունիս.
Եւ թող թագաւորեմ
Հոն՝ ուր հաւատքըս տեսութիւն
Կ'ըլլայ, և յոյսն՝ երջանկութիւն.
Տեսնեմ քեզ և սիրեմ։

Սաղ. ԼԹ. 4, 5, 13

## 373 ՄԵՐ ՀՕՐԸ ՏՈՒՆԸ

1 Ճամբան երկար չէ այս կենաց,
Ցաւեր, հոգեր, կըսկիծ ու լաց
Կ'անցնին, ամէն բան կը փոխուի
Անամպ երկնի, խաղաղ ծովի։

Հանգէ՛, խոր գետ,
Փրփրադէզ վախ չազդեր.
Նըժդեհին հօրը տունն է
Շատ կարօտցեր։

2 Հօրենոյն երկիր, շատ օր չանցած,
Կրնամ մեկնիլ՝ խաղաղ ցընծած.
Երգ, լաց երազ են խառնըւեր.
Հոգ չէ, հոգ չէ, շատ չը տեւեր,
Հանգէ, խոր գետ, և այլն։

3 Տեսանք ալխուր աչքեր փակուած
Մեզմէ զատուող մեր սիրելեաց,
Բայց, ա՛հ, վերջին երգն ի՛նչ քաղցր էր,
«Գտնենք զիրար», շատ չը տեւեր»
Հանգէ, խոր գետ, և այլն։

4 Ըստեպ փըշոտ վայրի ճամբայ
Կոխել, անցնիլ մեզ հարկ կ'ըլլայ.
Եթէ ունինք հաւատք, յոյս, սէր՝
Երնէկ մեզի, շատ չը տեւեր։
Հանգէ, խոր գետ, և այլն։

Յովհ. ԺԴ. 2,3 Թարգ. Տիկին ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 374 ԼՈՒՍՈՅ ԴՌՆԵՐՆ

1 Անյայտ է ինծի գալն Տէրոջը,
Ո՛չ կէսօրն, և ո՛չ ատենն գիտեմ.
Իսկ գիտեմ թէ պատրաստ ըլլալու եմ
Որ ցընծմամբ յայտնութիւնն ողջունեմ։



Ցայնժամ թէ՛ աշխարհս կամ թէ՛ վերը,
Թէ՛ հոս թէ՛ սրբոց մէջ լինիմ,
Լաւ գիտեմ որ իր սէրն կը պատէ զիս,
Իր սիրոյն ու հանգիստ բընակիմ։
Եւ երբ իր քաղցր ձայնն հրաւիրէ զիս,
Առաւօտ կամ գուցէ մութ գիշերն,
Ըսելով թէ, «Փրկիչս զիս կանչած է,»
Ո՛հ, մտնեմ սուրբ քաղքին պերճ դըռներն։

2 Անյայտ է ի՛նչ կայ իմ առջեւըս,
Թէ՛ վիշտ կամ թէ՛ անդորրութիւն.
Այլ գիտեմ թէ ճամբուս ուղղութեամբ
Կայ պատրաստ երկնային օրհնութիւն.
Եւ ո՛ւր որ ճամբաս կը տանի զիս,
Թէ՛ լեռն դըժուարին թէ՛ դաշտերն,
Փրկչիս մեծ սիրոյն միշտ քալեմ ես,
Մեղմ կ'ըլլան ա՛լ ճամբուս տագնապներն,
Եւ երբ իր քաղցր ձայնն, և այլն։

3 Անյայտ է ի՛նչ գործ կը սպասէ ինձ,
Ի՛նչ ջանք ապագայ օրերուս.
Լոկ կ'ուզեմ որ եռանդ պարգեւես ինձ,
Եւ օգնես ալ տկար ձեռքերուս։
Եթէ ընդունայն լըքանիմ ես,
Եւ ցաւ չարաչար զիս նեղէ,
Տուր որ համբերեմ՝ մինչեւ որ Տէրս
Երկինքին մէջ գաղտնիքն բացատրէ.
Եւ երբ իր քաղցր ձայնն, և այլն։

Մարկ. ԺԳ. 35-37

## 375 ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

1 Ունայն աշխարհս ա՛լ կը ձգեմ,
Հիմա երկինք երթալ կ'ուզեմ.
Հոն է ամէն բան լուսաւոր,
Սուրբ, պատուական և փառաւոր.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

2 Իմ սիրելի եղբարք, մի լաք.
Ուրախ եղէք, իմ բարեկամք.
Մեղքէն ազատ եմ, ոչ թշուառ.
Եմ երջանիկ միշտ կատարեալ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

3 Խաւարն գընաց, է արշալոյս,
Ո՛հ, սուրբ քաղաք սրբոց ըղձալոյս.
Արդարութեան ծագէ արև,
Հոգիս տեսաւ դրախտն արդարև.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

4 Ո՛հ, այս ժողով է սրբազան,
Գառն է անոր գլուխ, իշխան.
Որոնց փափաքն սուրբ, ջերմեռանդ
Երգէ Տէրոջ նոր երգ զուարթ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

5 Կարդամ և ես երգ յաղթութեան,
Ըլլամ այն սուրբ հօտին անդամ,
Լուսոյ ըզգեստ հագնիմ փայլուն,
Ընկերանամ երգիչ պարուն.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն։

Ա Կոր. ԺԵ. 55-57 Թարգ. ՄԿ. Տ. ՔԻՐԷՔՃԵԱՆ



## 376 ՄԱՀՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1 Հարկ է մեռնիլ, պիտի մեռնիմ.
Դեռ չը մեռած, ով Աստուած իմ,
Խնդիրքս քեզի մատուցանեմ.
Դուն ալ լսէ, Տէր, կ'աղաչեմ.

2 Ինծի հաւատք, յոյս և սուրբ սէր
Դուն պարգևէ, խնդրեմ, ով Տէր,
Որ ուզածիդ պէս միշտ վարուիմ
Եւ երջանիկ մահուամբ մեռնիմ։

3 Մահուան ժամուս իմ քով կեցիր,
Հզօր բազուկդ գլխուս տակ դիր.
Վերջին ցաւերս թեթևցուր,
Հանգիստ, խաղաղ ինծ մահ մը տուր։

4 Հաւատքս, ով Տէր, մինչ կենդանի
Պահէ մինչև որ շունչս հատնի.
Եւ իմ հոգիս այն տեղը գայ
Ուր հաւատքի ա՛լ պէտք չկայ։

Եբր. Թ. 27 Հեղինակ Դ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

## 377 ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

1 Աշխարհ եկայ, կ'ապրիմ.
Օրերս, տարիքս կ'անցնին.
Մըրցայ հոս յոյսերով,
Խորհիմ, գործեմ, խօսիմ.
Բայց ետքը ո՞ւր։

2 Հասնիմ յաջողութեան,
Բարեաց և օրհնութեան,
Առատ զըւարճութեան,
Գրեթէ դրախտի նըման.
Բայց ետքը ո՞ւր։

3 Թէ շատ օրեր վայլեմ,
Առողջ կեանք ալ վարեմ,
Բայց վերջապէս կարճ է,
Ցաւեր պիտի գտնեմ.
Եւ ետքը ո՞ւր։

4 Կ'ելլեմ ես այն ատեն
Ողորմութեան կեանքէն.
Յոյս, փրկութիւն մէկէն
Կ'անցնին մահուան գալէն.
Իսկ ետքը ո՞ւր։

5 Ահեղ փողին ձայնէն
Ատեանն պիտի ելլեմ,



Եւ մեծ Դատաւորէն
Վըճիռս պիտի լըսեմ.
Բայց ետքը ո՞ւր։

6 Ա՛հ, ո՞ւր անկէ ետև,
Մեզ ո՞վ կրնայ պատմել.
Մէկը երկինք կ'ելլէ,
Իսկ միւսն դըժոխք կ'իջնէ.
Ես յայնժամ ո՞ւր։

Թու. ԻԳ. 10

## 378 ՄԵՌՆՈՂԻՆ ԵՐԳԸ

1 Վերջին արեւս վար կ'արտորայ,
Մօտ է ինձ իրիկուն.
Իմ ասպարէզս կը վերջանայ,
Հեռու չէ Հօրըս տուն,
Խումբեր հրեշտակաց
Թող բոլորտիքս կայնին,
Փայլուն թեւերովը թող զիս տանին
Անմահութեանըս տուն։

2 Շուտով սրբոց հըրճուանքն ու երգն
Անշուշտ պիտի լըսեմ.
Արդէն Յորդանանու եզերքն
Ոտքովըս կը կոխեմ.
Խումբեր հրեշտակաց, և այլն։

3 Ո՛հ, մտնեցայ իմ Հօրս տուն
Եւ ցնծութեամբ կ'երգեմ.
Պայծառ խումբեր ահա կու գան,
Թեւոց ձայնն կը լսեմ.
Խումբեր հրեշտակաց, և այլն.

4 Իմ Յիսուսիս յանձնեմ իմ սիրտս,
Որ ինձ կու տայ պսակ.
Ինք իր արեամբ սրբեց մեղքերս,
Կու տայ ինձ յաղթանակ։
Խումբեր հրեշտակաց, և այլն.

Բ Տիմ. Դ. 6 — Թարգ. Elias Riggs

## 379 ԳԵՏԻՆ ԵԶԵՐՔԸ

1 Արդեօք այն գետին եզերքը
Մե՞ր ոտքերն պիտի կոխեն,
Ուր սուրբերն ու հրեշտակները
Ցնծութեամբ միշտ կը քալեն.
Այո, մենք ալ ժողվինք հոն
Բոլոր հրեշտակաց ու սրբոց հետ,
Այն յստակ գետին եզերքը,
Որ վերն աթոռէն կ'ելլէ.

2 Այն յստակ գետին եզերքը
Երբ ուրախութեամբ կոխենք,
Մենք ալ հոն երկնից երգերը
Անդադար պիտի երգենք։
Այո, մենք ալ, և այլն։



3 Այն պայծառ գետին եզերքը
Երբոր աչքերնիս տեսնէ,
Յանկարծ Աստուծոյ Գառնուկը
Արցունքնիս պիտի սրբէ.
Այո, մենք ալ, և այլն։

4 Այն հանդարտ գետին եզերքը
Քաղցրութեամբ կ'առաջնորդէ
Իր հօտին բարի Հովիւը,
Եւ զանոնք հոն կ'արածէ.
Այո, մենք ալ, և այլն.

5 Այն կենաց գետին եզերքը
Վերջն է մեր պանդխտութեան.
Հոն լեցուի պիտի մեր սիրտը
Քաղցրութեամբ խաղաղութեան.
Այո, մենք ալ, և այլն.

Յայտ. ԻԲ. 1 — Թարգ. Elias Riggs

## 380 ՄԱՀՈՒԱՆ ԳԵՏԸ

1 Կը տեսնեմ գետին եզերքը,
Որուն անցնիլ շատ կը բաղձամ,
Եւ կը զգամ սրբոց քաղցր երգը
Որ հեռուէն ականջս կու գայ.
Կը տեսնեմ նոր արշալոյսը,
Երկնային լերանց ծայրերն,
Ուր չարերն անցնիլ կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յոգնածներն.

2 Արտասուաց ձորին այն կողմը՝
Սուրբ դաշտից վրայ շողշողուն
Կատարեալ երջանկութիւն կայ
Անվախճան գարուն փայլուն.
Ո՛հ, կ'ուզեմ ըլլալ երկնից մէջ՝
Հրեշտակաց անշարժ տուներն,
Ուր չարերն տանջել կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յոգնածներն.

3 Նաւ պատրաստ է մութ գետին վրայ
Միւս եզերքն զիս տանելու,
Որ անցնի նեղուած հոգիս հոն՝
Ուր չըկայ բան նեղելու։
Ո՛հ, ցնծմամբ կ'երթամ հանգիստ,
Ուր Յիսուս կայ և սուրբերն.
Հոն չարերն տանջել կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յոգնածներն.

Փիլ. Ա. 21,23 Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

## 381 ՀՈՆ ՑԱՒ ՉԿԱՅ

1 Սիրելիներս, եկէք,
Երբ մեռնելու մօտ եմ,
Երկնից վրայով ինծի երգեցէք,
Երգով թող վեր ելլեմ.
Հոն ցաւ կամ վիշտ չը կայ,
Հոն ցաւ կամ վիշտ չը կայ,
Երկինքը վեր, ամէնն է սէր,
Ա՛լ ցաւ կամ վիշտ չը կայ.



2 Երբ ճակատէս կաթին
Մահուան ցուրտ ծանր քրտինք,
Թող ցնծութեան երգեր լսուին,
Հոս կըսկսի երկինք.
Հոն ցաւ, և այլն.

3 Վախճանըս հասնելուն՝
Երեսըս դիտեցէք,
Որ վրան երկնից խաղաղութիւն,
Փառաց նշոյլ տեսնէք.
Հոն ցաւ, և այլն.

4 Թող Սիոնի երգերն
Լսեմ երբոր մեկնիմ.
Գտնեմ և երգի բարեւներն
Երբոր երկինք հասնիմ.
Հոն ցաւ, և այլն.

5 Ա՛լ չը տեսնող աչքերս
Սիրով դուք գոցեցէք,
Եւ պաղ ու անարիւն ձեռքերս
Կուրծքիս վրայ ծալլեցէք.
Հոն ցաւ, և այլն.

6 Շուրջ անկենդան մարմնոյս
Սիրելիներս գալով—
Թող հոն տիրէ վախի տեղ յոյս—
Երգեն երկնից վրայով.
Հոն ցաւ, և այլն.

Յայտ. ԻԱ. 4 Թարգ. Elias Riggs

## 382 ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԱՀԸՆ ՎԱԽՆԱԼՈՒ ՉԷ

1 Ո՛րչափ վախկոտ ու վատ կ'ըլլանք,
Երբոր մահուան կը մօտենանք.
Չէ՞ որ խայթոցը դառն մահուան
Փըշրեց Յիսուս խաչին վըրան։

2 Չէ՞ որ մահն է միակ միջոց՝
Որով ազատ կ'ըլլանք ցաւոց
Եւ այս խաւար ու խոր ձորէն,
Ուր միշտ կու լանք մեր ծնած օրէն։

3 Չէ՞ որ մահն է միջոց միակ՝
Որով կրնանք ըլլալ գիտակ
Ան սուրբ, խորին խորհուրդներուն,
Որ հոս ծածուկ են ամենուն։

4 Չէ՞ որ միայն մահով պիտի
Ապաշխարողն հաւատարիմ
Սուրբ հրեշտակաց՝ անմահութեամբ,
Երջանկութեամբ և զօրութեամբ։

5 Տէր, այս երկիրն դառն փորձանք է,
Չի այս մեզի մեծ արատ է.
Օրհնէ մեզ որ միշտ քուկդ ըլլանք.
Եւ մահը թող սկսուի մեզ կեանք։

Եբր. Բ. 14,15 Հեղինակ Դ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ



## 383 ՄԱՀ ՏԵՐՈՒՆԻ ՊԱՇՏՕՆԵԻ

1 Ով Աստուծոյ ծառայ բարի,
Հանգչէ գործքերդ շատ սիրելի.
Սիրտ աշխատաւոր քաջ, ժիր,
Տէրոջդ ուրախութիւնն մըտիր։

2 Կէս գիշերուան մէջ ձայն մ'եկաւ.
Յառնեց, ելաւ, ականջ դըրաւ.
Նետ մահացու զինք խոր խոցեց,
Ինկաւ, բայց վախ չըզգաց իր մէջ.

3 Անցան բոլոր ցաւերն մահուան
Եւ աշխատանք, վիշտ արտմութեան.
Ա՛լ վերջացաւ կենաց խիստ գործ,
Խաղաղութիւն ունի անփորձ։

4 Ով Քրիստոսի ծառայ բարի,
Նոր գործդ է փառք տալ միշտ յերկնի.
Դարուց ի դարըս յաւիտեան
Հանգիր Տէրոջդ յուրախութեան։

Սաղ. ՃԺԶ. 15 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԼԸՋԵԱՆ

## 384 ԳԵՐԵԶՄԱՆ

1 Բայց հիմա ծոցդ, ով գերեզման,
Նորէն եղիր մեր գանձարան.
Հոս տեղ մը տուր այս մարմինին,
Որ մեռած ննջէ մէջ փոշիին։

2 Ո՛չ ցաւ, ո՛չ վիշտ ու ո՛չ վախն ալ
Քու սահմաններդ կրնան մտնալ.
Ի Տէր ննջողն չզգար վայրեր,
Զայն կը հալեն սուրբ հրեշտակներ։

3 Աստուածորդին ալ հոս ննջեց,
Եւ ինք ալ գերեզմանն օրհնեց.
Հանգչէ հոս դուն, ննջեալ մարմին,
Մինչեւ ծագի առաւօտն փրկչին։

4 Ով առաւօտ փրկչին, ծագէ.
Երկիր, անոր խօսքին լսէ.
Քեզ պահ տրուած այս գանձն հանէ,
Որ իր Տէրոջն առջեւ ելլէ։

Յհն. Գ. 19

## 385 Ո՞Վ ՊԻՏԻ ԻՆՁ ՀԱՆԴԻՊԻ

1 Ո՞վ պիտի ինծ հանդիպի
Երբոր աշխարհէս ելլեմ.
Ո՞վ զիս վեր պիտի տանի,
Որ սուրբերն տեսնեմ։
Պիտի հանդիպին ինծ
Փառաւոր հրեշտակներ,
Վեր պիտի տանին զիս,
Որ սուրբերն տեսնեմ։



2 Երբ Փրկիչս զիս կանչէ
Եւ աշխարհ երկրէս ելլեմ,
Ո՞վ պիտի առաջնորդէ
Որ դրախտ մտնեմ։
Պիտ' առաջնորդեն ինծ
Փառաւոր հրեշտակներ,
Վեր պիտի տանին զիս
Որ դրախտ մտնեմ։

3 Բարեկամներէս հեռի,
Հոն ես զո՞վ պիտի սիրեմ.
Ո՞վ սիրէ զիս, ո՞վ տանի
Որ Փրկիչս տեսնեմ։
Հոն պիտի սիրեն զիս
Հրեշտակներ եւ սուրբեր,
Եւ պիտի տանին զիս
Որ Փրկիչս տեսնեմ։

Ղուկ. ԺԶ. 22

## 386 ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԲԱՐԵԿԱՄԻ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ

1 Ինչո՞ւ փակեն մեր արցունքներն
Եւ միշտ մեր | վրայ ալ | րէ, ||
Երբ իր իմաստութեամբը Տէրն
Ի | րենը | եա կան | չէ. ||
Չէ՞ որ հաւատացեալներուն
Օգուտ է | մահն ան | դամ. ||

Կեանք անվախճան և փառք կ'առնուն,
Կը | տակ ալ | անթա | ռամ ||

2 Իրենց գործն հոս աւարտեցին,
Մեղքէ ա | զատ և | զուտ, ||
Ա՛լ ցաւ կամ աշխատանք չունին,
Երկ | նից հան | գիստն մը | տան։ ||
Աստուած իրենն կանչեց իրեն,
Վիշտ չը տի | րէ մեր | վրայ· ||
Այլ մեր սրտերն թող միշտ ըսեն,
«Թող | կամքըդ, | Հայր, ըլ | լայ» ||

Յայտ է 14-17 Թարգ. Elias Riggs

## 387 ՎԵՐՋԱՊԷՍ

1 Վերջապէս գործդ աւարտած,
Տուն հասար ցաւէ դադրած.
Մութ գետէն անցար, ու վերն՝
Քեզ ողջեկ տուին հրեշտակներն.
Ո՛հ, շնորհաց խորք, ի՛նչ անուշ՝
Լուսապանծ երկիրն թըռչիլ,
Բաց դըռնէն ներս ապահով՝
Յիսուսի մօտիկ հանգչիլ։

2 Մութ ալիք մինչ ուժգնակի
Բախէին քու նաւակի,



Երգեցիր զըւարթաբար,
«Դուռը բաց է ինձ համար։»
Ո՛հ, շնորհաց, և այլն ։

3 Օր մը կարճ՝ ցնծման յերկրի
Մեղսալից պանդուխտ բերկրի·
Վերջին օրոյ թուխպով թըռուր,
Երկնային քու բնագաւառ.
Ո՛հ, շնորհաց, և այլն ։

4 Երբ թրթռուն վերջին շեշտեր,
Վերջ գտնեն գործք և վիշտեր.
Ո՛հ, ցնծմամբ պիտի կրկին
Մենք զիրար գտնենք յերկին.
Ո՛հ, շնորհաց, և այլն ։

Յայտ. ԺԴ. 15 Թարգ. Ա. Ե. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

## 388 ՎԵՐՋԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

1 Շողայ աստղն իրիկուան.
Ծովէն մի ձայն վըսեմ
Զիս կը կանչէ, բայց թող ալեաց չըլլայ
Երբ ես նաւակ մտնեմ.

2 Հանդարտ ալիքն, լի մակընթացութեամբ,
Առնէ զիս կուրծքին վրայ,
Եւ էութիւնս, որ անհունէն եկաւ,
Թող հոն դառնայ։

3 Ձայնն ազդարար վերջին,
Այնուհետեւ լռութ ըլ,
Թող հրաժեշտք իմ ականջիս խօսին
Զուարթարար։

4 Զի, թէեւ այս կեանքիս տաժանմանքներէն
Ծովն զիս հեռու տանի,
Մէգէն անդին երեւան Առաջնորդիս
Ցնծամամբ տեսնեմ դէմս։ Ամէն։

Ա Կոր. ԺԳ. 12 Թարգ. C. C. Tracy

## 389 ԳԵՐԵԶՄԱՆ

1 Տուն հանգիստ, տապան սրբոց
Բոլոր ի Տէր ննջեցելոց,
Զի հոն չարեր ա՛լ չեն տար վիշտ,
Եւ հոն յոգնածն կ՚ընէ հանգիստ։

2 Սրբոց օրհնեալ որ շուտ մըտան
Ժառանգութիւնն անմահական.
Ա՛լ չեն յոգնիր, չկայ տրտմութիւն,
Պայծառ փայլին ի փառս անհուն։

3 Արդ, մեր արցունք թող ա՛լ ցամքին
Եւ հառաչանք հեզիկ լռին.
Ուրախ սրտով արթուն սպասենք,
Որ երբ կոչուինք, նոր երգ երգենք։

Բ Կոր. Ե. 1, 2, 6-8 Թարգ. ՄԿ. Տ. ՔԻՐԻՋՃԵԱՆ



## 390 ՈՉ, ՈՉ, ԱՍ ՉԷ ՄԵՌՆԻԼԸ

1 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Երթալ մեր Աստուծոյն,
Թողուլ աս մութ աշխարհքը
Մտնել Տէրոջը փառքը,
Մեր հանգըստեանը տունն։

2 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Մեր հայրենիքն երթալ,
Կրել փառաց պսակը,
Երգել ան յաղթանակը,
Կեանք ազատ ըլլալ։

3 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Երթալ բարի հովուին,
Ձայնել անոյշ արօտը,
Եւ հոն պառկիլուր հօտը
Անվախ՝ մէջը կը հանգչին։

4 Ո՛չ, ո՛չ, աս չէ մեռնիլը.
Քեզ գալ, Փրկիչ մարդկան.
Հոն կայ սիրոյ աղբիւրը,
Անսպառ կենաց ալ ջուրը,
Հոն՝ կաթիլներ միայն։

Փիլ. Ա. 20,21 Թարգ. Elias Riggs

## 391 ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

1 Վճռուեց Տէրն որ ամէն մարդիկ,
Հարուստ, աղքատ, մեծ ու պզտիկ,
Թէ՛ արդար ըլլան, թէ՛ անօրէն,
Միասին երթան այս ատեանին։

2 Ամենքն ալ երթան ի դատաստան,
Իրենց գործոց հաշիւը տան.
Զի գայ պիտի Դատաւոր արդար՝
Դատել մարդիկ, բարի և չար։

3 Բարին և չարն պիտի զատէ,
Աջ ու ձախ կողմ պիտի դասէ.
Ամէն մարդու գործքին համեմատ
Պիտի տայ վարձ, պատիժ յարմար։

4 Քեզ կ'աղաչեմ հիմակուընէ.
Յիսուս, նոյն օրն զիս ընդունէ.
Աջ կողմիդ հետ զիս կայնեցուր,
Ընտրեալներուդ դասն ալ միացուր.

5 Որ բաղձանքիս ես հասնելով,
Եւ անուշութեամբդ ըմբոշխնելով՝
Երգ օրհնութեան այն անոյշ երգեմ,
Քեզ յաւիտեան փառաւորեմ։

Մատթ. ԻԵ. 31-46



## 392 ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՕՐԸ

1 Մեր մեղաց համար մեռնողը
Ամպերով առաջ կու գայ,
Եւ անթիւ սրբոց նոր երգը
Ամէն կողմ կը բարձրանայ.
«Տէրն օրհնեալ է,
Տէրը կը թագաւորէ։»

2 Այն ատեն երկինք, երկիրը,
Լեռ և ծով պիտի փախչին.
Եւ ահով լեցուին չարերը՝
Երբ լսեն ձայնն հրեշտակին.
«Դատաստան կայ
Ամենուն պատրաստ հիմա։»

3 Բայց ի՜նչպէս հաւատացեալները
Հոն պիտի ուրախանան,
Աշխարհէն մերժած սուրբերը
Երբ երգեն միաբերան.
«Տէրն օրհնեալ է,
Ինք իրեն մեզ կը կանչէ։»

Մատթ. ԺԶ. 27

## 393 ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՕՐԸ

1 Արդար Դատաւոր, երբոր գաս
Վերջին դատաստանն ընելու,

Երբ Հօրըդ փառքովը երեւնաս
Փրկեալ ժողովուրդդ ժողվելու,

2 Այն օրը ես ո՞ւր գտնուիմ,
Որ հիմա մահէն կը վախնամ.
Ի՞նչպէս քու աջեւըդ կայնիմ.
Ի՞նչպէս քու երեսըդ տեսնամ։

3 Օրհնեալ Տէր Յիսուս, ողորմէ.
Դուն, դուն ես աղբիւր փրկութեան.
Բոլոր իմ մեղքերըս քաւէ,
Եղիր իմ հոգւոյս ապաստան։

4 Հաւատքըս տկար է, բայց դուն,
Ով Տէր, անիկա զօրացուր.
Իմ յոյսըս ըրէ հաստատուն,
Հոգիս շնորհքովդ լեցուր։

5 Ու երբ վերջին փողը լսուի,
Շնորհէ որ արդարց հետ ելլեմ.
Աջ կողմըդ ինծի տեղ տրուի,
Եւ միշտ գովութիւնըդ երգեմ։

Յայտ. Ի. 11, 12, 15

## 394 Ո՞Վ ԵՆ ԱՍՈՆՔ

1 Այդ խումբեր ճերմակ հագուած
Ո՞վ են և ո՞ւսկից եկան,
Աստուծոյ աթոռն պատած,
Որք կ'երգեն միաբերան,



«Միանգամ մորթուած Գառնուկն,
Յաւիտենըս կենդանի,
Փառք, պատիւ և օրհնութիւն
Ընդունիլ է արժանի»

2 Հրոյին տագնապներէն,
Մեծ նեղութենէ ելած՝
Աթոռին առջև կ'երգեն
Աստուծոյ կնքով կնքուած,
Հոս իրենց Փրկչին ուժով
Մրցելով՝ յաղթող ելան,
Լուսափայլ հանդերձներով
Հոն փառաց մէջ կը կենան։

3 Ա՛լ պիտի չանօթենան,
Ոչ կրնան ալ ծարաւիլ.
Տաքութիւն անոնց վրան
Ա՛լ կարող չէ յարձակիլ.
Գառն պիտի հովուէ զանոնք,
Գառն պիտի առաջնորդէ,
Աչքերէն ամէն արցունք
Ինքն Աստուած պիտի սրբէ։

Յայտ. Է. 9-17 Թարգ. Elias Riggs

## 395 ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՀԱ Կ'ԵՐԹԱՆՔ

1 Վերերն ունինք տուն երջանիկ,
Հայրենիքն ահա կ'երթանք.
Արդէն գացին շատ սիրելիք,
Հայրենիքն ահա կ'երթանք։

Ջանանք նորէն գիրկ առնելու,
Մեր սէրը հոն նորոգելու,
Եւ մեր Փրկիչը տեսնելու,
Հայրենիքն ահա կ'երթանք։

2 Ո՜հ, ի՜նչ խաղաղ երկիր է ան,
Հայրենիքն ահա կ'երթանք.
Ուր աշխարհիս վիշտերն չըկան,
Հայրենիքն ահա կ'երթանք։
Կապեալը հոն է արձըկուած,
Յոգնածն անոյշ հանգիստ գըտած,
Եւ ցաւ ու մահ ա՛լ դադարած,
Հայրենիքն ահա կ'երթանք։

3 Կ'երթանք, ո՛հ, ի՜նչ ուրախութիւն,
Հայրենիքն ահա կ'երթանք.
Դրախտի յուսոյ ի՜նչ լուսութիւն,
Հայրենիքն ահա կ'երթանք։
Մեր Հօրը տունն մեզի տեղ կայ,
Ուստի երբ մահը մօտենայ,
Մեր աղաղակը այս ըլլայ,
Հայրենիքն ահա կ'երթանք։

Յովհ. ԺԴ. 2, 3 Թարգ. Elias Riggs

## 396 ՕՐՀՆԵԱԼ ԱՇԽԱՐՀ

1 Օրհնեալ աշխարհ մը կայ,
Երկնի վերան,



Ուր Տէրը պիտի տայ
Ընտրեալներուն.
Ուր որ պիտի կենան
Ու Տէրոջը պէս ըլլան,
Փառքի ու գոհութեան
Երգն երգելու։

2 Ամէն դէմք կը փայլի
Փառքով պատած.
Սէրն պիտի չը պակսի
Փրկչէն ծագած.
Ո՜հ, այն փառքին փայլենք,
Ու պսակը ժառանգենք,
Լուսոյ պէս հոն փայլինք՝
Միշտ ազատած։

3 Այն սուրբ աշխարհն թռչինք
Մեծ փափաքով.
Ինչո՞ւ ալ երկմըտինք՝
Չը հաւատալով.
Նմանելի կ'ըլլանք
Երբ մեղքէն ազատ մընանք,
Տէրոջը քովն երթանք
Միշտ ապահով։

4 Մեր Հօրը տանը մէջ
Խաւար չը կայ.
Լոյս կը փայլի անշէջ
Անոր վըրայ.

Ուստի շուտով ելլենք,
Եւ դէպ ի երկինք վազենք,
Ու երթալով երգենք
Ալէլուիա։

Ա Կոր. Բ. 9 — Թարգ. Elias Riggs

## 397 ԵՐԿՆԱՒՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

1 Երկիր մը կայ ուր որ ցնծում
Սուրբերն կը լեցընէ,
Եւ լի ու անվախճան խնդում
Ամէն վիշտ կ'արտաքսէ։

2 Հոն միշտ ցորեկ է, միշտ գարուն,
Զերկայ գիշեր, ձմեռ.
Ու անթառամ են և սիրուն
Դրախտին մէջ ծաղիկներ։

3 Միայն թէ նեղ գետին՝ մահուան
Ալիքը կը բաժնեն
Այն երջանիկ բնակարան
Մեր վշտալից երկրէն։

4 Այս յորդահոս ջուրէն անդին,
Հին Քանանու նման,
Կանանչ արտերը կ'երեւին,
Մէջտեղն ալ Յորդանան։

5 Մենք երկչոտներս կը սարսափինք
Այս նեղ գետէն անցնիլ.



Ահով եզերքը կը կայնինք,
Եւ կը վախնանք մեռնիլ։

6 Եթէ մեզ, Մովսէսի նման,
Փասգա ելլել տրուէր,
Ա՛լ մեզ մահուան ցուրտ Յորդանան
Պիտի չը վախցընէր։

Բ Օր. ԼԴ. 1 — Թարգ. Elias Riggs

## 398 ԳԵՂԵՑԻԿ ՍԻՕՆ

1 Ի՜նչ գեղեցիկ ու զարդարուած
Է մեր Սիօնը՝ վերն շինուած.
Ի՜նչ գեղեցիկ քաղաք սիրուն,
Որուն մէջ կայ մեր Հօրը տուն։

2 Ի՛նչ գեղեցիկ անոր դռներն,
Այն թանկագին մարգարիտներն.
Ի՛նչ գեղեցիկ անթիւ սրբոց
Մէկտեղ քալած ոսկի փողոց։

3 Ի՜նչ գեղեցիկ այն յաղթանակ.
Ամէն ճակտի վրայ կայ պսակ.
Ի՛նչ գեղեցիկ ոսկի քնարք,
Որ Աստուծոյ կ'երգեն միշտ փառք։

4 Ի՛նչ գեղեցիկ է այն աթոռն,
Ուր է նստած մեր Թագաւորն.
Ի՜նչ գեղեցիկ բնակարան,
Սրբոց հանգիստը յաւիտեան։

Յայտ. ԻԱ. 2-7 — Թարգ. Elias Riggs

## 399 ՅՈԳՆԱԾԻՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԻՍՏ

1 Քրիստոնեայ, քու հայրենիքդ
Փառաւոր հանգիստ մը կայ.
Հոն գընաց սիրած Փրկիչդ,
Եւ նորէն քեզի կու գայ.
Յոգնածին հոն հանգիստ կայ,
Կայ հանգիստ քեզի.
Յորդանան գետին միւս կողմը՝
Քանանու դաշտերուն մէջ,
Ուր կենաց ծառն կայ և ջուրը,
Կայ հանգիստ քեզի.

2 Քեզ կը պատրաստէ քու Տէրդ
Սըրբոյան բընակարան.
Քանզի կենալու օրերդ
Հոն սակաւ պիտի չըլլան։
Յոգնածին հոն հանգիստ կայ, և այլն։

3 Վիշտ կամ ցաւ այն սուրբ երկրին մէջ
Ա՛լ ըլլալ պիտի չըլլայ.
Այլ սրբոց և հրեշտակաց մէջ
Քեզ կենաց պսակ մը կայ։
Յոգնածին հոն հանգիստ կայ, և այլն։

4 Մահ, դժոխք ա՛լ յաղթուած են,
Փրկեալնե՛ր, ուրախացէք.
Սիոնի դռները բացուած են.
Ցնծութեամբ պիտի մտնէք։
Յոգնածին հոն հանգիստ կայ, և այլն։

Եբր. Դ. 9 Թարգ. Elias Riggs



## 400 «ՎԵՐԻ ԲԱՆԵՐԸ ՄՏԱԾԵՑԷՔ»

1 Ով լուսափայլ երկինք,
Արեւդ Գառնուկն է ինք.
Լուսոյ որդիք հոդ են՝
Փառաւորեալ ամէնն։
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Զոր կիրք, մեղք սիրտս ա՛լ չըբռնէ։

2 Ամէնն սիրելիներ,
Ի գործերնին լոկ սէր.
Հագած են սրբութիւն,
Ունին խաղաղութիւն.
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Պիղծ հեշտութիւն սիրտս չըբռնէ։

3 Մեղք չը մաներ հոդ ընաւ,
Ամէն բան ճիշդ կարգաւ.
Միշտ միաբան կ՚ըլլայ,
Մրմռանց ձայներ չըկայ։
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Հըպարտութիւն սիրտս չըբռնէ։

4 Ոսկեզարդ թագաւորներ
Ին՝ դրած ոսկի պսակներ.
Ունին կեանք անվախճան,
Ուրախ են յաւիտեան։
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Փառքն աշխարհի սիրտս չը բռնէ։

5 Փրկչին իմաստութեան
Ամէնքն հաղորդ կ'ըլլան.
Ծով զուարթութեան փափաք
Հոդ կը լցուի սրտաց։
Ո՛հ, իմ խորհուրդս միշտ վեր ելլէ,
Սուտ զուարթութիւն սիրտս չը բռնէ։

6 Իմ փափաքներս բոլոր
Պիտի լցուին այն օր,
Երբ հոդ ըլլամ բնակիչ
Փրկչիս շնորհքին քովիկ։
Արդ իմ խորհուրդս թող վեր ելլէ,
Զար կերպ, միտքս սիրտս ա՛լ չը բռնէ։

Կող. Գ. 1, 2 Հեղինակ ՄԿ. Տ. ԹԻՐԼԸՋԵԱՆ

## 401 ՍԻՐՈ՛ՒՆ ԱՊԱԳԱՅ

1 Կայ երկիր պանծալի և փայլուն,
Եւ կրնանք հաւատքով զայն տեսնել.
Հոն Աստուած պալատներ շողշողուն
Պատրաստեց մեզ համար պատրաստել։



Ո՛հ, սիրո՛ւն ապագայ,
Ե՞րբ պիտի մտնանք պերճ եղերքն։

2 Բարերար և սուրբ Հօր երկնային
Կ'ընծայենք գոհութեան պարգեւներն.
Զի շնորհեց իր Որդին միածին,
Մեծ յուսով ալ կ'օրհնէ մեր օրերն։
Ո՛հ, սիրո՛ւն ապագայ,
Ե՞րբ պիտի մտնանք պերճ եղերքն։

3 Պիտ'երգենք քաղցրաձայն երգ Դաւթին,
Երբ հասնինք այն եղերքն գեղեցիկ.
Սրտերնիս ա՛լ պիտի չը տրտմին,
Երբ կազմենք խումբ սրբոց երջանիկ։
Ո՛հ, սիրո՛ւն ապագայ,
Ե՞րբ պիտի մտնանք պերճ եղերքն։

4 Պիտ'հանգչինք այն եղերքն փառաւոր,
Եւ պըսակ անթառամ ժառանգենք.
Ձերբ մեղքէն, երջանիկ և անդորր,
Յաւիտեան մեր Փրկիչն ալ գովենք։
Ո՛հ, սիրո՛ւն ապագայ,
Ե՞րբ պիտի մտնանք պերճ եղերքն։

Յայտ. Է. 9-14

## 402 ԱԿՆ ՈՒՆԻՆՔ ՄԵՆՔ

1 Ակն ունինք մենք, կը սպասենք մենք
Այն լուսապայծառ օրուան,

Երբ շուքերը խանձ շուքերը,
Աշխարհէս ալիք վերնան,
Թող փութայ քաղցր արշալոյսը,
Եւ առաւօտեան մեծ լոյսը,
Թող փութայ քաղցր արշալոյսը
Խոստացեալ փայլուն օրուան։

2 Ակն ունինք մենք, կը սպասենք մենք
Յուսալից առաւօտեան աստղին,
Երբ անցնի մեղաց գիշերը,
Յաւէտ ցնծալին ալ լոյսին։
Թող փութայ, և այլն։

3 Ակն ունինք մենք, կը սպասենք մենք
Տեառն ճաճանչազեղ օրուան,
Որ լուսաւորէ աշխարհը
Եւ ցոյց տայ երկնից ճամբան։
Թող փութայ, և այլն։

Ղուկ. ԺԲ. 37

## 403 ՏԷՐՈՋՆ ՀԵՏ

1 «Տէրոջն հետ յաւիտեան,»
Ի՜նչ մխիթարութիւն.
Անոր խօսքերն ինծի կու տան
Կեանք և անմահութիւն։
Մարմնոյս մէջ բանտարկուած՝
Պանդխտութիւն կ'ընեմ.



Բայց հայրենեացս մօտեցած
Միշտ վրանս կը կանգնեմ։

2 Իմ Հօրս տունը վերն,
Հոգւոյս բնակարա՜ն.
Երբեմն անոր ոսկի դռներն
Ի՜նչ մօտ ինծ կ'երեւնան։
Բնակարա՜ն սիրուն,
Հոգւով կը հառաչեմ.
Տեսնել որբոց ժառանգութիւնն՝
Վերին Երուսաղէմ։

3 Բայց երբ իմ վրաս կ'ելլան
Երկմտութեան ամպեր,
Նոյեան աղաւնիին նման՝
Հանգիստ մը չեմ գտներ։
Դարձեալ երբ կը ցրուի
Այն մէգը գիշերուան,
Ուրախ սրտիս վրայ կը փայլի
Աղեղն խաղաղութեան։

Ա Թես. Դ. 16

## 404 ԲԵՒԼԱ ԵՐԿԻՐ

1 Հասայ Բեւլա երկիր սիրուն,
Ուր վայելեմ շատ բերկրութիւն.
Հոս չարունակ կայ լոյս պայծառ,
Եւ օդ գարնան զուարթարար։

Ո՛վ պերճ Բեուլա, ո՛վ քաղցր երկիր,
Հովերդ անոյշ, դաշտերդ ընտիր,
Ուրախ աչքերս երբ վերցընեմ,
Փառաց պալատն մօտ կը տեսնեմ.
Ո՛վ լուսափայլ բընակարան,
Ո՛վ երկնային տուն հանգըստեան։

2 Հոս պարտէզներ կան գեղեցիկ,
Ջուրերն են զով և թափանցիկ,
Եւ գունագեղ ծաղիկներէն
Անոյշ հոտեր միշտ կը բուրեն։
Ո՛վ պերճ Բեուլա, և այլն։

3 Մեղմ ղեփիւռներ ինծ կը բերեն
Անուշ ձայներ սուրբ քաղաքէն,
Երբ փրկուածներն, խումբ երկնային,
Ըղձիւ կ'երգեն երբ Գառնուկին։
Ո՛վ պերճ Բեուլա, և այլն։

4 Յիսուս է հոս ինծի ընկեր,
Կը հաղորդէ սիրոյ խօսքեր,
Զիս կը տանի կանաչ արօտ.
Իրաւ այս տեղն երկնից է մօտ։
Ո՛վ պերճ Բեուլա, և այլն։

Յայտ. ԻԲ. 1-5 Թարգ. M. P. Parmelee

## 405 ԵՐԿՆԻՑ ՆԵՐՁԱՆԻԿ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

1 Ե՞րբ պիտի մեկտեղ գանք
Եւ միշտ մընանք հոն.



Ու հանգիստ վայելենք
Եւ շատ բարիք հոն.
Աս չար աշխարհը միշտ
Միայն կու տայ մեզ վիշտ.
Հոս չենք գտներ հանգիստ
Բընաւ յաւիտեան։

2 Ե՞րբ պիտի սէրն բղխի
Իբր կենաց ջուր զուտ,
Ու ըլնաւ չերեւի
Չար կիրք ու խօսք սուտ.
Երկինքն՝ ամէն հոգի
Միայն ցնծում ունի,
Եւ ոչ ցաւ կը քաշուի
Բընաւ յաւիտեան.

3 Հոն շուտ տար մեր հոգին,
Դուն, ով Փրկիչ մեր.
Թող որդիքդ ժողովին,
Քեզ միշտ տեսնեն, Տէր.
Ուր որ անթիւ սուրբեր
Կ'երգեն ցորեկ գիշեր.
Չեն դադարիր երգերն
Բընաւ յաւիտեան.

4 Շուտ պիտի մեկտեղ գանք,
Եւ միշտ մընանք հոն.
Ու հանգիստ վայելենք
Եւ շատ բարիք հոն

Մեր սիրտն հանգչի պիտի
Ձեր ցաւերէն երկրի.
Մեր երգն ալ չը դադրի
Բընաւ յաւիտեան։

Ես. ԼԵ. 10

## 406 ՏՈՒՆ ՈՒՆԻՄ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

1 Ով տուն, որ ես վերն, ի բարձո՛ւնս
Կառուցուած գետոյն քով լուսեղէն,
Ուր ճերմակ հանդերձներ ըզգեցած՝
Փրկեալներն անդադար նըւագեն
Ի բարձունս,
Մտածմունքըս ես, տունդ ի բարձունս։

2 Հո՛ն, իմ սիրելիք, ի բարձո՛ւնս,
Որ թողած են աշխարհս այս նըսեմ,
Ի՜նչ անխառն հրճուանքով արդ կ'երգեն
Աստուծոյ պալատին մէջ վըսեմ,
Ի բարձունս,
Մտածմունքըս ես, տունդ ի բարձունս։

3 Հո՛ն է իմ փրկիչս, ի բարձո՛ւնս,
Որ խաչին վրայ մեռաւ ինծ համար,
Ես ալ ցաւ ու հոգերս հոս թողած՝
Սըլանամ այն երկիրը պայծառ,
Ի բարձունս,
Մտածմունքըս ես, տունդ ի բարձունս։



4 Օ՛ն, շուտ երթամ տունս, ի բարձո՛ւնս,
Քանզի ես կը տեսնեմ ծայրն ճամբուս.
Իմ սրտիս սիրելիքն, ի բարձո՛ւնս,
Անձկանօք կը սպասեն երթալուս,
Ի բարձունս,
Մտածմունքըս ես, տունդ ի բարձունս։

Եբր. ԺԱ. 16 Թարգ. ՍՏԵՓԱՆ Ա. ՋՈՐԻԿԵԱՆ
Բարեփոխեց Ս. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

## 407 ԵՐԿԻՆՔ

1 Երկինքը փայլուն է՝ կ'ըսենք,
Երնէկ՝ ով որ հոն կը մըտնէ.
Այն փառքը յուսով կը սպասենք.
Բայց հոն գտնուիլը ի՛նչ է։

2 Կ'ըսենք թէ ազատ է մեղքէն,
Թէ հոն չը կայ բան մը անարգ,
Ոչ վտանգ, թէ՛ ներսէն թէ՛ դուրսէն,
Բայց հոն գտնուիլը ի՛նչ փառք։

3 Կ'ըսենք թէ երկնից մէջ կայ սէր,
Երգոց անդադար արձագանգ,
Նաեւ բիւր ոսկի քընարներ,
Բայց հոն գտնուիլն ի՛նչ հրճուանք։

4 Գառնուկը իր փառքն է հագած
Վերի Սիոնին վրայ՝ կ'ըսենք,

Սրբոց մէջ աթոռն է նստած,
Բայց հոն գտնուիլն ի՛նչ սքանչելիք։

5 Փառք երկնային, կ'աղաչենք,
Հոգիդ, Տէր, մեր մէջ ներգործէ,
Որ վերջը փորձով ճանաչենք,
Թէ հոն գտնուիլը ի՛նչ է։

Ա Յովհ. Գ. 2 Թարգ. Elias Riggs

## 408 ԵՐԿՆԱՒՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ

1 Երուսաղէ՛մ տուն փառաւոր,
Անունդ ինծ սիրելի.
Ե՞րբ աշխատանքս պիտի վերնայ,
Ու ես հասնիմ քեզի։

2 Ե՞րբ, ով Տէրոջս սուրբ քաղաք,
Պալատդ մտնեմ պիտի,
Ուր չարձըկուին սուրբ ժողովներն,
Հոն է միշտ Կիրակի։

3 Հոն երջանիկ են միշտ ամէնն,
Ո՛չ մեղք և ո՛չ վիշտ կայ.
Օրհնեա՛լ քաղաք, ու չար երկրէն
Հոգիս քեզի թող գայ։

4 Ինչո՞ւ մահուան ցաւէն խորշիմ,
Ինչո՞ւ, վախնամ, դողամ,
Ժառանգութիւնս առջեւս ունիմ,
Պըսակն իմ անթառամ։



5 Երուսաղէ՛մ, տուն փառաւոր,
Քեզ սիրտս կը տենչայ.
Յայնժամ վիշտերս պիտի վերնան,
Երբ աչքըս քեզ տեսնայ։

Յայտ. ԻԱ. 1-3

## 409 ԱՆՑԱԾ Է ՑԱՒԸ

Ալէլուիա, Ալէլուիա, Ալէլուիա։

1 Անցած է ցաւ, արիւն, քրտինք,
Անցած է խաչ և նախատինք,
Անմահ լոյսով փայլի երկինք։
Ալէլուիա։

2 Անցած է մութը գիշերուան,
Անցած է շուքն ահեղ մահուան,
Փոխուած է ցաւ՝ ուրախութեան։
Ալէլուիա։

3 Մեր հոգիները մահուան շուքէն
Անմահ եղած պիտի ելլեն,
Ու յաղթական պիտի երգեն
Ալէլուիա։

4 Հիմա իսկ, Աստուծոյ սիրով,
Մեր վախերէն ազատելով,
Երգեն անմահութեան յուսով
Ալէլուիա։

Յայտ. ԻԱ. 4 Թարգ. C G. Tracy

## 410 ՏՈՒՆ ՓԱՌԱՒՈՐ

1 Ո՜վ սրբոց փառաւոր տուն,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,
Յոգնածին հանգըստեան տուն,
Տո՜ւն վերին փառաւոր.
Տուն՝ ուր սուրբեր, փրկեալներ հանգչին.
Ճերմակ հագուած աջակողմն Փրկչին.
Շրջապատած են գահն Արքային,
Ո՜հ, կ'երգեն խմբովին:
Խմբերգ. Ո՜վ սրբոց փառաւոր տուն,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,
Յոգնածին հանգըստեան տուն,
Տո՜ւն վերին փառաւոր:

2 Տո՜ւն՝ ուր գետին քով կենաց,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,
Զերծ յերկրաւոր ըղձանքմանց,
Տո՜ւն վերին փառաւոր.
Տուն՝ ուր գանձ ապաստում կայ պահեալն,
Տուն՝ ուր յաւէրժ ցաւք են դադարեալ,
Հոն խաղաղ կը բնակի փրկեալն,
Երջանիկ յաւիտեան:
Խմբերգ. Ո՜վ սրբոց, և այլն:

3 Ո՜վ փառաւոր պահուն տուն,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,



Ո՜վ տուն երգչաց սուրբ դասուն,
Տո՜ւն վերին փառաւոր.
Սուրբ օթեւան հրեշտակաց պայծառ,
Փրկելոց, օրհնելոց բնագաւառ,
Ուր կը սիրէ ցնծում անպատառ,
Տո՜ւնդ ուրախարար:
Խմբերգ. Ո՜վ սրբոց, և այլն:

4 Ո՜վ տուն յաւէտ քաղաքի,
Տո՜ւն փառաւոր, տո՜ւն փառաւոր,
Քու հաճոյքդ ի՜նչ անճառելի,
Տո՜ւն վերին փառաւոր.
Ո՜վ տուն, դու գեղեցիկ օթեւան,
Տուն՝ ուր արդարք Փրկիչն կը տեսնեն,
Կ'երկրպագեն Նորա անվախճան
Գովութեամբ յաւիտեան:
Խմբերգ. Ո՜վ սրբոց, և այլն:
Յայտ. ԻԲ. 1-5

## 411 ՄԱՅՐ ՍԻՐԵԼԻ, ԵՐՈՒՍԱՂԷՄ

1 Մայր սիրելի, Երուսաղէմ,
Քեզ ե՞րբ տեսնեմ պիտի.
Ե՞րբ բերկրալից քու լոյսդ տեսնեմ,
Ու ցաւըս դադարի.
Ո՜հ, երջանիկ հանգիստ սրբոց,
Ո՜հ, հաճելի դաշտ,

Քու մէջըդ արտասուք չը կայ,
Ո՛չ վախ, ո՛չ որ թըշուառ։

2 Քեզ չսքողեր մէկ ամպ տխուր,
Քու մէջդ գիշեր չը կայ,
Զի Աստուծոյ լուսոյն անշէջ
Ամէն հոգի շողայ։
Հոն չար կիրքերը տեղ չունին,
Նախանձ հոն չը տիրեր.
Ո՛չ սուգ, ո՛չ ցաւ, ո՛չ տաքութիւն
Կ'այրէ այն հաճոյքներ։

3 Քու պարտէզներդ են զարդարուն
Անոյշ ծաղիկներով,
Բընակիչներդ կը յագենան
Քաղցրիկ պտուղներով,
Քու ջուրերուդ քով հրեշտակներ
Կ'երգեն երգեր վըսեմ.
Աչքերս քեզ ե՞րբ տեսնեն պիտի,
Ո՜վ Մայր Երուսաղէմ։

Յայտ. ԻԱ. 22-27 Թարգ. C C. Tracy

## 412 ԴՐԱԽՏ

1 Ո՜հ, որ անճառ, որ բարեբաղդ,
Սուրբերն երբոր միանեն դրախտ,
Դաշտերն բուրեղ, երկինքն անամպ,
Եւ օդն լեցուած երգով, ցնծմամբ։
Խմբերգ. Սիրուն դրախտ, ընտիր պարտէզ,



Ուր միշտ սուրբերն անհուն հանգչին,
Սիրուն դրախտ, ո՜հ, սուրբ հայրենիս,
Ուր կը տիրէ Փրկիչս Յիսուս։

2 Անկում ահեղ, մեղք և ամօթ
Հոն յաւիտեան են անծանօթ.
Մահ և անէծք, սուր բոցեղէն
Խորտակուած են արքայ ցեղէն։
Խմբերգ. Սիրուն դրախտ, և այլն։

3 Տխրած ծալկառ, գլուխ ալեհեր,
Թափոր աթոռ, սիրտ կարեվէր,
Ու շիրիմներ չը տեսներ մարդ
Այն դրախտին մէջ լուսազարդ,
Խմբերգ. Սիրուն դրախտ, և այլն.

4 Աւազակն իսկ, չը մեռած դեռ,
Զղջմամբ գոչեց, «Յիշէ զիս, Տէր.»
Եւ Տէրն ըսաւ անմիջապէս,
«Այսօր ինձ հետ դրախտ կը մտնես։»
Խմբերգ. Սիրուն դրախտ, և այլն։

5 Ո՜հ, որ անճառ, երբ իջնէ Տէր,
Պիտի դադրին անէծք, վիշտեր,
Եւ բիւր սուրբեր, քնարներ առած,
Պիտի գովեն դրախտ փառաց։
Խմբերգ. Սիրուն դրախտ, և այլն։

Ղուկ. ԻԳ. 43 Թարգ. Յ. Թ. ՏԱՑԱԽԱՆ

## 413 ՍՈՒՐԲԵՐ ՓԱՌԱՑ ՄԷՋ

1 Բազում վըկայք հոս քեզ դաւանեցան,
Ով Տէր, և վիճակէ հանգիստ անցան.
Կու տանք անոնց համար փառք քու անուան.
Ալէլուիա։

2 Դուն ժայռ էիր անոնց, բերդ հաստատուն,
Անոնց ուղղիչն ու առաջնորդը դուն,
Լուսաւոր խաւարին անոնց եղար փայլուն.
Ալէլուիա։

3 Մենք ալ դիտենք անոնց քաջ օրինակ,
Մերն ալ ըլլայ անոնց օրհնեալ վիճակ,
Անոնց նման առնենք կենաց պըսակ.
Ալէլուիա։

4 Ո՛հ, միութիւն ընտիր, աստուածային,
Անոնք և մենք, Տէր, քու ենք, մէկ մարմին.
Մենք ճիգ ունինք, անոնք փառքով փայլին.
Ալէլուիա։

5 Մօտ է հանգիստ, մօտ է դրախտ սիրուն,
Եւ յաղթողաց սուրբեր, թուով անհուն,
Ընկերք՝ Տէրոջը յաղթական ճամբուն.
Ալէլուիա։

6 Ահա, երկրին հեռու սահմաններէն,
Սուրբեր խռնուելով ի դուռ մարգարտեղէն՝



Հօր և Որդւոյ, Հոգւոյն Սրբոյ կ'երգեն
Ալէլուիա։

Եբր. ԺԲ. 1 Թարգ. C. C. Tracy

## 414 ՆՈՐ ԵՐԳԸ

1 Մեծ բազմութիւն՝ արեամբ փրկուած,
Սիոն լեռան վըրայ կայնած,
Փրկչին երեսը կը տեսնեն,
Եւ անոր փառքն ուրախ կ'երգեն,
Այն երգը, ո՛հ, ի՜նչ քաղցր է.
Ամէն ազգէ, ամէն լեզուէ,
Արեամբ փրկեալքն իրենց
Արքային փառաբանեն միաբերան.
Միաբերան Փրկչին նոր երգ կ'երգեն,
Միաբերան Փրկչին ուրախ նոր երգ կ'երգեն։

2 Անոնք դարեր մինչև անցնին,
Անոնց սիրով պիտի լեցուին,
Եւ անսպառ երջանկութեան
Անոնց առջև միշտ նոր ըլլան,
Այն երգը, և այլն։

3 Ո՛հ, գործ անոյշ՝ այն խորութիւնն
Շնորհաց ճանչնալ՝ ու բարձրութիւնն.
Մեղքէ՝ վիշտէ ազատ լինիլ,
Փրկչին հետ յաւիտեան ապրիլ,
Այն երգը, և այլն։

4 Ո՛հ, իմ հոգիս կը փափաքի
Որ թեւ պարզէ եւ վեր թռչի.
Սիրոյ նոր երգն ես հոն երգեմ,
Փրկչիս առջեւ երկրպագեմ։
Այն երգը, և այլն։

Յայտ. ԺԴ. 1-3 Թարգ. R. M. Cole

## 415 ՓԱՌՔԻ ԵՐԳԸ

1 Երբ այս կեանքի փորձանքներն վերջանան,
Եւ հասնիմ հոն երկնային սուրբ Քանան,
Սակ իմ Փրկչիս մօտ ըլլալս ինծի համար
Փառք մը կ'արժէ դարերու անհամար։
Ո՛հ, այդ շատ մեծ փառք է ինծի,
Ո՛հ, այդ շատ մեծ փառք է ինծի
Որ զինք շնորհքովն վայելել կարենամ,
Այդ է շատ մեծ փառք, մեծ փառք ինծի համար։

2 Երբ իմ Փրկիչս անհուն իր շնորհքով
Տեղ մը տայ ինծի երկնից մէջ իրեն քով,
Հոն ըլլալ, հոն զինք տեսնել ինծի համար
Փառք մը կ'արժէ դարերու անհամար։
Ո՛հ, այդ շատ մեծ, և այլն։

3 Թող սիրելիքս երկնից մէջ քովս ըլլան,
Եւ խրախճանք շուրջս հոսի գետի նման.
Բայց իմ Փրկչիս մէկ ժպիտն ինծի համար
Փառք մը կ'արժէ դարերու անհամար։
Ո՛հ, այդ շատ մեծ, և այլն։

Ա. Յովհ. Գ. 2 Թարգ. ՍԱՄՈՒԷԼ Կ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

# ԿՑՈՒՐԴՆԵՐ

## 416 Կ'ՕՐՀՆԵՆՔ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ

Կ'օրհնենք քեզ, Աստուած,
Եւ ըզքեզ մեզ Տէր կը դաւանինք.
Քեզ երկիրը կը պաշտէ,
Երկիրը քեզ կը պաշտէ,
Հայր յաւիտենական.
Քեզի հրեշտակներն կ'աղաղակեն.
Երկինք և զօրութիւնք երկնից,
Քեզի քերովբէք, քերովբէք
Եւ սերովբէք անդադար կ'երգեն,
Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես
Դուն, Տէր Աստուած զօրաց.
Տիեզերքն է լի անհուն փառքովդ,
Տիեզերքն է լի քու փառքովդ,
Է լի վեհապանծ, անհուն փառքովդ։
Ամէն, Ամէն։

## 417 ՈՎ ԱՍՏՈՒԱԾ, ԲԱՐՁՐԱՑԻՐ ԵՐԿԻՆՔԻՆ ՎՐԱՅ

Ով Տէր Աստուած, բարձրացիր դու երկինքին վրայ.
Եւ քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ.
Իմ սիրտս պատրաստ է, ով Տէր, իմ սիրտս պատրաստ է.
Պիտի երգեմ ու սաղմոս պիտ՝ ըսեմ.
Զարթի՛ր, ով իմ փառքս, զարթի՛ր, քնար, տաւիղ.
Ես կանուխ պիտի զարթնում։
Ով Տէր, ժողովրդոց մէջ պիտի քեզ գովեմ,
Տէր, պիտի քեզ գովեմ ժողովրդոց մէջ.
Քեզ սաղմոս պիտ՝ երգեմ բոլոր ազգաց մէջ.
Զի մինչև երկինք մեծ է գթութիւնդ,
Տէր, մեծ է գթութիւնդ,
Եւ մինչեւ ամպերն ողորմութիւնդ.
Զի մինչև երկինք մեծ է գթութիւնդ,
Տէր, մեծ է գթութիւնդ,
Եւ մինչև ամպերն ճշմարտութիւնդ,
Դու, ով Աստուած, երկինքին վրայ բարձրացիր,
Եւ քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ։

---

# ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

## 418 ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

1 Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս
ծագեա։ Բղխումն ի Հօրէ, բղխեա ի հոգ-
ւոյս բան քեզ ի հաճոյս։

2 Գանձ ողորմութեան, գանձից ծածկելոյ գը-
տող զիս արա։ Դուռն ողորմութեան, դասա-
նողիս բաց, դասուց վերնոցն։

3 Երրեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ
ողորմեա։ Զարթիր, Տէր, յօգնել. զարթո
ըղթմբեալս, զուարթնոց նմանել։

4 Էդ Հայր անըսկիզբն, էակից Որդի, և միշտ
Սուրբ Հոգի. Ընկալ զիս գթած, ընկալ
ողորմած, ընկալ մարդասէր։

5 Թագաւոր փառաց, թողութեանց տուող. թող
ինձ ըղյանցանս։ Ժողովող բարեաց, ժողովեա
և զիս, ժողովս անդրանկաց։

6 Ի քէն, Տէր, հայցեմ ի մարդասիրէդ ինձ բը-
ժըշկութիւն։ Լեր կենաց մեռելոյս, լոյս խա-
ւարելոյս, լուծանող ցաւոյս։

7 Խորհրդոց գիտող, խառնակս շնորհեա խորհուրդ լուսաւոր։ Ծնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս առաւելա, ծագեա լոյս փառաց։

8 Կենարար Փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա զգլորեալս։ Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեա սիրով։

9 Ձօնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա։ Ղամբարանն լուսոյ, ղեկավար ճարտար, ղօղեալս ամրացո։

10 Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց ճեպել ի յերկինս։ Միածինըդ Հօր, մուծ զիս յառագաստ մաքուր հարսանեացդ։

11 Յորժամ գաս փառօք յահագին աւուրն, յիշեա զիս, Քրիստոս։ Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, Նորոգ զարդարեա։

12 Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն։ Ողորմեա, Տէր, ոգւոյս փրկութեամբ, որ վասն իմ ի սուգ։

13 Չար մըշակողին, չար սերմանց նորին չորացո զշառաւիղն։ Պարգեւիչ բարեաց, պարգեւեա իմոց պարտեաց թողութիւն։

14 Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ արտասուս, ջնջել ըզյանցանս։ Ռեհանըդ քաղցր, ռամ հոգւոյս տուր, ռահ ցոյց ինձ լուսոյ։



15 Սէր անուն Յիսուս, սիրով քով ձմլեա սիրտ իմ քարեղէն։ Վառըն գըթութեան, վասն ողորմութեան վերըստին կեցո։

16 Տենչալոյդ անալեամբ տուր ինձ յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս։ Րաբունդ երկնաւոր, րաշխեա զաշակերտս բաժնից երկնայնոց։

17 Ցօղ արեան քո, Տէր, ցողեա ի հոգիս, ցընծացէ անձն իմ։ Ւիւծեալս մեղօք, ւիւծեալ աղաչեմ ւիւսել ինձ բարիս։

18 Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել փորձութեանց մեղաց։ Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս քեզ երգել ըզփառս։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

## 419 ԼՈՅՍ, ԱՐԱՐԻՉ ԼՈՒՍՈՅ

1 Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինաց օրհնեալդ,
ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի։

2 Լոյս, ի լուսոյ ծագումն, արեգակն արդար, անճառ ծընունդ Հօր՝ Որդի, յառաջ քան զարեւ անուն քո գոլեալ ընդ Հօր,
ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի։

3 Լոյս, ի Հօրէ բղխումն, աղբիւր բարութեան, Հոգիդ Սուրբ Աստուծոյ, մանկունք եկե-ղեցւոյ ընդ հրեշտակս ըզքեզ բարեբանեն։
Ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի։

4 Լոյս, Երրեակ և Մի անբաժանելի սուրբ Եր-րորդութիւն, ըզքեզ ընդ երկնայնոցն երկ-րածինքըս միշտ փառաւորեմք։
Ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի։

## 420 ԼՈՒՍԱՒՈՐԵԱ

Լուսաւորեա, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, զարդարեա զամուրըս քո, և փառք Տեա-ռըն ի վերայ քո ծագեսցի։

Օրհներգութեամբ, սաղմոսիւք քեզ վայելէ, Աստուած, օրհնութիւն ի Սիովնէ. և քեզ մա-տուսցին աղօթք յԵրուսաղէմ։

Գովեա, Երուսաղէմ, ըզՏէր, և օրհնեա զԱստ-ուած քո, Նոր ժողովուրդ, դըշխոյ դուստր Սիովնի։

## 421 ՏԱՐԱԾԵԱԼ

1 Տարածեալ ձեռք ընդ ձեռաց,
Ոտք ընդ ոտից ընթանալեաց,



Փայտ ընդ փայտի գտաւըն պտղոյ,
Կենանք ընդ մահու փոխարկելով.
Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուողն օրինաց,
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց,
Բաց ի միոյն յաւազակաց։

2 Բաղէից արեգականն
Ըզտիւն արար գիշերանման.
Զբատուերըն քող արկ մերկութեան,
Զի մի՛ տեսցէ ակն անարժան.
Ի մէջօրեայն նըսեմացաւ,
Յորժամ Ադամ մեղօք մեռաւ.
Ի յիններորդն ի լոյս դարձաւ,
Յորժամ մահուամբ մահըն լուծաւ։

3 Ճողէր արտօսր ցաւագին
Մայր Տեառն, որ կայր մերձ առ խաչին,
Յորժամ լըսէր ըղծարաւին
Բարբառելոյ իւր Միածնին.
Եռուն քացախ խառնեալ լեղի
Այնմ՝ որ բըխեաց գետ յԵդեմի,
Եւ ի վիմէն վըտակ բարի
Արբոյց առհմին դասնացուցի։

4 Խածեալ յերրորդ ժամու օձին
Ըզմիտս նախնոյ մօրն Եւայի,
Ի վեցն անկեալ մարդն առաջին

Հաւանական բանիւ նորին.
Ի նոյն ժամու Տէրն ի խաչին,
Զի քաւեսցէ ըղձեղս նոցին.
Եւ յորժամ եւ Ադամըն հին,
Եդ զաւազակն ի մէջ դրախտին.

5 Փարելի բարբառ ընդ իմ
Էլի, Էլի առ Հայր գոչէր.
Զհոգին կամաւ Հօր աւանդէր,
Զհոգիս մարդկան նոյն ընծայէր.
Երկիր հիմամբք սասանեցաւ
Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ.
Վէմք ի յինքեանց պատառեցան
Եւ գերեզմանք մահու բացան.

6 Թաղի ի սքանչելեացս
Աստուած մարմնով վասն իմ խաչեալ.
Մեռեալ բնութեամբըս մեռանի,
Աստուած անմահ խոստովանի.
Կրկնավըտակ կայլին աղբերք
Եկեղեցի իւր հաստատի.
Զըրով մաքրի, զարիւնն ըմպէ,
ԶՈրդի ընդ Հօր փառաւորէ.

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

## 422 ՆՈՐԱՍՏԵՂԾԵԱԼ

1 Նորաստեղծեալ Բանն յանէից
Իսկըզբանէ զերկինս երկնից,



Եւ զերկնայքն զօրս անմարմնոց,
Իմանալեացըն զըւարթնոց,
Եւ ըզգալի տարերց քառից,
Հակառակաց միաբանից,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի.

2 Երեքօրըեան մի տէրութիւն,
Միով բնութեամբ Աստուածութիւն,
Լոյսն որ անեղ արարչական
Ասաց լինել լոյս եղական.
Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ կիւրակէին,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի.

3 Բարեւորէն բացատրեսցուք,
Զծածկեալ խորհուրդըն ծանիցուք.
Զի լոյսն անտես իմանալի,
Մաքուր հոգւոց տեսանելի,
Ի նոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.
Եկայք, փրկեալք, ընդ զըւարթնոյն
Տուք օրհնութիւն Յարուցելոյն.

4 Սէրըդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար.
Նովին մարմնովըն խաչեցար,
Ի գերեզման մահու եղար.

Այսօր յարեար տասնածարար,
Ի հրեշտակաց քարոզեցար.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն Յարուցելոյն։

5 Երեւեցար խնկաբերիցն
Ողջոյն կենացն ուրախալից.
Եւ ի լերինն Գալիլեա
Առաքելոց մետասանից.
Արժանացո զմեզ ընդ նոսին
Զքեզ տեսանել յօրըն վերջին.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն Յարուցելոյն։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

## 423 ՍԻՈՎՆԻ ՈՐԴԻՔ

Սիովնի որդիք, զարթիք,
Հարսին լուսոյ տուք աւետիք,
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ,
Գայ պըսակէ ըզքեզ փառօք,
Եւ ընդ առաջ պճնեալ զարդուք,
Երգեա երգ նոր՝ Յարուցելոյն,
Ննջեցելոց կենաց պտղոյն։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ



## 424 ՆՈՐՈԳՈՂ

1 Նորոգող տիեզերաց,
Որ զգեցուցեր մեզ լոյս փառաց
Արկար ըզքեւ ի զինուորաց
Քղամիդ կարմիր նախատանաց,
Մերկեա յինէն ըզքուրձ մեղաց
Ըզպատմուճան արեամբ ներկած.
Եւ ըզգեցո զուրախալին
Ըզպատմուճանն իմ զառաջին։

2 Երկնաւոր Թագաւորիդ
Ի ձեռն իջեալ խաղ տանէին.
Ծածկեալ ըզգլուխդ կըռփէին
Եւ եղեգամբ հարկանէին.
Եւ զիմ անկեալ մինչ ի գետին
Ի հնազանդել կամաց չարին՝
Մի՛ թողուցուս խաղալ սոցին,
Այլ կանգնեցես զիս վերըստին։

3 Բամբեալ բոլորըդ քո մարմին
Յետ վըճռոյ դատաւորին
Սաստիկ էառ զհարուած գանին
Վասըն գանից նախատեղծին.
Զիս, որ յաւէտ մինչեւ ցըգլուխ
Յաւօք նեղիմ անհընարին,
Առողջացո դարձեալ կրկին,
Որպէս շնորհօք յառաջնին։

4 Սրբափայլ պճնեալ զարդուն,
Զոր զգեցուցեր Ահարոնին,
Փոխան պսակ ի փշոց եդին
Մըշակք այգւոյն Իսրայելի·
Ըզփուշ մեղաց հանցես յինէն
Զոր յիս եհար իմ թշնամին·
Եւ ողջացո զխայթուած վիրին,
Զի ամէն մեղացըն ջնջեսցին։
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Էջ

Ա. — Պաշտամունք . . . . . . . 1-47

Փառաբանութիւն
Տէրունական Օր
Աղօթք
Առաւօտ
Իրիկուն
Ընտանեկան պաշտամունք

Բ. — Սուրբ Գիրք . . . . . . . 48-55

Գ. — Աստուած . . . . . . . . 56-80

Դ. — Յիսուս Քրիստոս . . . . . . 81-146

Մարդեղութիւնը
Չարչարանքը և Մահը
Յարութիւնը
Թագաւորութիւնը
Սէրը
Ողորմութիւնը
Շնորհքը
Բարութիւնը
Պատուականութիւնը

Երգ

*Բարեկամ*
*Բժիշկ*
*Բարի Հովիւը*
*Գլուխ Եկեղեցւոյ*

Ե. — Սուրբ Հոգի . . . . . . . 147-154

Զ. — Աւետարանին Հրաւէրը եւ Յորդորը 155-178

Է. — Քրիստոնէական Կեանք . . . 179-290

*Ապաշխարութիւն եւ Նուիրում*
*Հաւատք եւ Վստահութիւն*
*Սէր եւ Երախտագիտութիւն*
*Ուրախութիւն եւ Խաղաղութիւն*
*Սրբութեան Տենչանք*
*Եղբայրական Սէր*
*Աշխատութիւն եւ Ծառայութիւն*
*Փորձութիւն եւ Պայքար*
*Պանդխտութիւն եւ Հանգիստ*
*Մխիթարութիւն եւ Քաջալերութիւն*

Ը. — Եկեղեցի . . . . . . . . . 291-312

*Պաշտօնէութիւն*
*Ձեռնադրութիւն*
*Մկրտութիւն*
*Հաղորդութիւն*



Երգ

*Սրբարան*
*Նուիրում*
*Արձակում*

Թ. — Աւետարանչութիւն — Քրիստոսի Թագաւորութիւնը . . . . . . 313-330

Ժ. — Մասնաւոր Պարագաներ . . . 331-344

*Հարսանիք*
*Ընտանիք եւ Տան Նուիրում*
*Նոր Տարի*
*Տարեւոյն Եղանակները*
*Բաժանում*

ԺԱ. — Մանկանց Երգեր . . . . . 345-367

ԺԲ. — Կեանքի Կարճութիւնը . . . 368-373

ԺԳ. — Մահ եւ Յարութիւն . . . . 374-391

ԺԴ. — Դատաստան . . . . . . . 392-394

ԺԵ. — Երկնային Փառք . . . . . 395-415

ԺԶ. — Յաւելուած . . . . . . . 416-424

*Կցուրդներ*
*Շարականներ*

# ՑԱՆԿ

## ԵՐԳՈՑ ԱՌԱՋԻՆ ՏՈՂԵՐՈՒ


| | Երգ |
|---|---|
| Ազատ ամէն խիստ հովերէ | 23 |
| Ալ մօտ ըլլամ, ով Տէր | 79 |
| Ակն ունինք մենք, կը սպասենք մենք | 40 |
| Ահա Աստուած գթած | 16 |
| Ահա կայնած դրանդ առջին | 16 |
| Ահա կեդրոն ծովէն կ'անցնի | 89 |
| Ահա մեղքի մանուկ ծնաւ | 81 |
| Ահա տեսէք Գառն Աստուծոյ | 91 |
| Աղօթքն է խօսք շատ զօրաւոր | 90 |
| Ամէն երկիրներ, Տէրոջմով ցնծացէք | [illegible] |
| Այգիիդ, Տէր, այցելու լեր | 15 |
| Այդ խումբեր ճերմակ հագուած | 39 |
| Այլ ապաւէն ես չեմ ունիր | 102 |
| Այնպէս անուշ անուն չըկայ | 85 |
| Այո, լոյս ես, Տէր սիրելի | 19 |
| Այս ամպ լափն, դէպ ի գահդ վերին | 331 |
| Այս աշխարհիս ունայնութիւն | 36 |
| Այս առաւօտն օրհնեալ | 1 |
| Այս է այն օրն զոր Տէրն օրհնեց | 15 |
| Այս Նոր բնակարան | 334 |





| | Երգ |
|---|---|
| Այս Նոր տարուան սեմէն, Հայր իմ | 337 |
| Այս օրն անցաւ գնաց | 42 |
| Անհուն սիրոյն ի Գողգոթա | 90 |
| Անյայտ է ինծի գալն Տէրոջը | 374 |
| Անյայտին յոյս, ով Յիսուս | 194 |
| Անոր, որ մեր մեղաց համար | 136 |
| Անցած է ցաւ, արիւն, փրթինք | 409 |
| Աշխարհ եկայ, կ'այրիմ | 377 |
| Ապահով Տէրն մեզ պահեց | 13 |
| Առաւօտ լուսոյ | 418 |
| Ա՛ռ, Տէր, կեանքս, ըլլայ թող ան | 225 |
| Առաւօտն քու սերմդ ցանէ | 321 |
| Աստղ, լուսին, պայծառ արև | 77 |
| [illegible]ող, լուսին, պայծառ արև | 80 |
| [illegible]ուած անհուն, երկնից երկինքն | 307 |
| [illegible]տուած, գթա ու մեզ օրհնէ | 317 |
| Աստուած իմ, երբ հոգիս նայի | 72 |
| Աստուած մեր բերդ է հաստատուն | 57 |
| Աստուած ողորմած, ինծի ողորմէ | 198 |
| Աստուած ողորմի մեզի | 61 |
| Աստուած, Տէր մեր, ի՛նչ փառաւոր | 66 |
| Աստուած օրհնէ այն տունը | 336 |
| Արդար Դատաւոր, երբոր գաս | 393 |
| Արդեօք այն գետին եզերքը | 379 |
| Արև, անձրև ինչ կը դրկէ | 210 |

| | Երգ |
|---|---|
| «Արթնցիր, կ'անցնի գիշերը | 292 |
| Արփայն սիրոյ է իմ Հովիւ | 145 |
| Բազում վկայք հոս քեզ դաւանեցան | 414 |
| Բաց դուռ մը կայ, որուն մէջէն | 157 |
| Բացուին այսօր երկնից կամարք | 14[illegible] |
| Բաց հիմա ծոցդ, ով գերեզման | 3[illegible] |
| Բեթղեհէմի դաշտին վրայ | 8[illegible] |
| Գաղտնի խմաստութեամբ Աստուած | 28[illegible] |
| Գեթսեմանի պարտէզն մտէք | 8[illegible] |
| Գեղեցիկ ամէն շէնքեր | 346 |
| Գեղեցի՛կ ձեռքեր փոքրիկ | 345 |
| Գիշերային դաշտից վրայ | 82 |
| Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի | [illegible] |
| Գործ կայ ինձ յանձնուած | [illegible] |
| Գործ հաճելի հոգւոյս է, Տէր | [illegible] |
| Դէմք մը կայ վեհ ու մէկ հատիկ | 132 |
| Դեռ չարձակուած՝ օրհնէ մեզ, Տէր | 311 |
| Դիտելու մէկ կէտ մը կայ | 19 |
| Դու Հովիւս ես, բարեգութ Տէր | 1[illegible] |
| Դու յաղթած կամ վհատա՞ծ ես | 24[illegible] |
| Դուստր Սիոնի, լեր ուրախ | 291 |
| Դուք կ'ուզէ՞ք հրեշտակ մ'ըլլալ | 354 |



| | Երգ |
|---|---|
| Եթէ աշխարհ է գեղեցիկ | 196 |
| Ել, հոգիս, թեւերդ լայն բաց | 264 |
| Եկ, տրտմեալք դու, երբ ցաւ քեզ պատած է | 174 |
| Եկեղեցիդ ընդհանրական | 293 |
| Եկեղեցին հիմնեալ է | 295 |
| Եկէք ինծի, բոլոր յոգնած և բեռնաւորածներ | 173 |
| Եկէք, հոս եկէք, ա՛լ հանգչելու տեղն է | 41 |
| Եկէք, մեր ճամբան նորոգենք | 338 |
| Եկէք, Տէրն սիրողներ | 239 |
| Եկէք ցնծանք Տէրոջն առջին | 68 |
| Եհովա, առաջնորդէ զիս | 31 |
| Եղբայր ենք մենք, մէկ Հօր որդիք | 238 |
| Եղո՛ւկ եմ ես, ով Տէր, աղքատ | 182 |
| Եղո՛ւկ ինծի, ինչ էր ըրի | 181 |
| Ես կը լսեմ ձայնդ, ով Յիսուս | 200 |
| ...ո սիրեմ առանձնանալ | 38 |
| ...ու խաղաղ հանգիստ կ'ըլլամ | 201 |
| ...պանդուխտ եմ, նաև օտար եմ | 262 |
| ...անելի այն օրն է, Տէր | 232 |
| Երբ ան խաչին ես կը նայիմ | 99 |
| Երբ այս կեանքի փորձանքներն վերջանան | 415 |
| Երբ գամ կայնիմ խաչին մօտիկ | 94 |
| Երբ իր գանձը, երբ իր գանձը | 363 |
| Երբ խաղաղութիւն իբրեւ գետ կը յորդէ | 233 |
| Երբ հաւատքով կարող ըլլամ | 204 |

| | Երգ |
|---|---|
| Երբ յուզուին մրրիկք կենաց իմ | 287 |
| Երբոր կը կարդամ պատմութիւնը սիրուն | 353 |
| Ե՞րբ պիտի մէկտեղ գանք | 405 |
| Երգէ, ո՛վ հոգիս, օրհներգ մը անոր | 214 |
| Երթանք, հերկենք արտերը | 342 |
| Երախտապարտ ինչո՞վ մաքրէ | 51 |
| Երկինք կ'օծուի շողով այգուն | 109 |
| Երկինք յայտնի կը քարոզեն | 64 |
| Երկինքը փայլուն է՝ կ'ըսենք | 407 |
| Երկիր մը կայ ուր որ ցնծում | 397 |
| Երկնից Աստուածն որ կը պաշտենք | 74 |
| Երկնից մէջ պիտի գործ ունենան աղաքներ | 365 |
| Երկրիս ամէն ծայրերը | 322 |
| Երուսաղէ՛մ, տուն փառաւոր | 408 |
| Երջանիկ անոնք են որ Փրկչին կը լսեն | 230 |
| Երջանիկ փարախ, երջանիկ արօտ | 144 |
| Զարթիր, զարթիր, Աջ տիրական | 316 |
| Զարթիր, հոգիս, ուրախ երգով | 119 |
| Ըմպելիքէ կենանք հեռի | 257 |
| Թաղէ քու ցաւերդ | 284 |
| Թափառական հոգիս | 170 |
| Թեւերդ, Տէր իմ, թող ըլլան | 217 |



| | Երգ |
|---|---|
| Թէեւ նուաղեալ՝ մեր ճամբան մենք կ'երթանք | 212 |
| Թէ որ Աստուած տունն չը շինէ | 46 |
| Թէ որ գթես, ով Տէր Յիսուս | 117 |
| Թող իմ արտասունքս ա՛լ դադարին | 228 |
| Թող Սիոնի որդիքը | 314 |
| Թող քու Սուրբ Խօսքդ, Տէր իմ Փրկիչ | 54 |
| Ժամն աղօթքի, ժամն աղօթքի | 22 |
| Իբր պանդուխտ աշխարհ կը թափառիմ | 261 |
| Իմ աղաղակս, ով Տէր, լսէ | 150 |
| Իմ կեանքս է Քրիստոս | 270 |
| Իմ պարծանքս և իմ փառքս | 101 |
| Իմ Տէրս ինծ կ'առաջնորդէ | 208 |
| Իմ տունս է յերկին, հոս չը կայ ինծ հանգիստ | 268 |
| Իմ տունս է երկինք, հոս չը կայ ինծ հանգիստ | 269 |
| Իմ քովս կեցիր, գիշերն կը մօտենայ | 44 |
| Իննըսուն և ինը կար ապահով | 143 |
| Ինծմէ բարձրագոյն սուրբ վէմին հաստատքի | 219 |
| Ինծ Տէրը եղաւ հովիւ կառավար | 141 |
| Ի՜նչ անվախճան է, Տէր, քու սէրն | 36 |
| Ի՜նչ գեղեցիկ ու զարդարուած | 398 |
| Ի՜նչ գեշ էր իմ վիճակս | 139 |
| Ի՞նչ են այս մեծ բազմութիւններ | 163 |
| Ի՞նչ է կեանքը. լոկ շոգի մը | 370 |

| | Երգ |
|---|---|
| Ի՛նչ լոյս խառնմունք, ի՛նչ փառաւոր | 299 |
| Ի՛նչ հաճոյ են քու յարկեր | 306 |
| Ի՛նչ սրտաշարժ այն քաղցր երգեր | 37 |
| Ի՛նչ սրտաշարժ երգոց ձայներ | 361 |
| Ի՛նչ քաղցր է, Տէր, ապաւինել | 211 |
| Ինչո՞ւ դուք ըսէք թէ դեռ կանուխ է | 185 |
| Ինչո՞ւ վազեն մեր արցունքներն | 386 |
| Ի՛նչպէս բարեկամ է Տէրը | 28 |
| Ինչպէս որ եմ, մեղքով լեցուած | 205 |
| Իջիր, Արքայ հզօր | 6 |
| | |
| Լալը չը փրկեր զիս | 184 |
| Լաւ բարեկամ մը կայ վերերն | 137 |
| Լեզուովս սիրով Աստուած գովեմ | 71 |
| Լոյս, Արարիչ լուսոյ | 419 |
| Լոյս բարերար, տխրող մէգին մէջէն | 202 |
| Լո՛ւռ գիշեր, սո՛ւրբ գիշեր | 83 |
| Լուսաւորեա | 420 |
| Լսած եմ ես Փրկչի մը սէրն | 122 |
| Լսէ իմ ձայն, ով իմ Աստուած | 358 |
| Լսեցէք սիրոյ բարբառը | 98 |
| | |
| Խաղաղ էր ծովն Գալիլեայի | 253 |
| Խաղաղութիւն ըլլայ քեզի | 278 |
| «Խաղաղութի՛ւն, լման խաղաղութի՛ւն» | 221 |



| | Երգ |
|---|---|
| Խորհրդաւոր է այս հանդէս | 332 |
| Խորութի՛ւն ողորմութեան | 191 |
| Խօսէ ինծ, Տէր, խօսիմ և ես | 33 |
| Խօսք տուած է Աստուած, փրկութիւնն է ձրի | 110 |
| | |
| Ծաղկաւէտ դաշտին վրայ | 250 |
| Ծով կենաց դառնայ, Յիսուս | 288 |
| | |
| Կախուած է կեանքս բարակ թելով | 372 |
| Կա՞յ երբեք ընտիր հովիւ մը | 221 |
| Կայ երկիր պանծալի և փայլուն | 401 |
| Կանաչաւէտ բլուր մը կայ | 100 |
| Կարօտ եմ, Տէր, մեծ զօրութեան | 186 |
| Կ'երգեմ անճառ քոյդ զօրութիւն | 59 |
| Կերպով մը անշուշտ պիտի Տէրը հոգայ | 280 |
| Կէս համոզուած ես հաւատալու | 172 |
| Կը լսեմ Տէրոջը ձայնը | 312 |
| Կը ճամբորդենք տունն երկնային | 158 |
| Կը սպասեմ գետին եզերքը | 380 |
| Կը ցանեն իրենց սերմն արշալոյս ծագելէն | 326 |
| Կը փայլի մեր Հօրը գութը | 325 |
| Կ'ուզեմ պատմել հին լուրը | 323 |
| Կիրակին մեզ է քունով անցընել | 350 |
| Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի Փրկիչ եկաւ | 8 |
| Կ'օրհնենք քեզ, Աստուած, և ըզքեզ մեզ Տէր կը դաւանինք | 416 |

Երգ

Հայր ամենուս է Տէր Աստուած 73
Հայր բարեխնամ ազգի մարդկան 47
Հայր, ճամբադ ինծ սորվեցուր 258
Հայր մեր, այժմ կը նուիրենք 340
Հաստատ Բեւլա երկիր սիրուն 404
Հարկ է մեռնիլ, սիրտի մեռնիմ 376
Հացդ ձգէ ջրոց երեսը 243
Հաւատքս քեզ կը նայի 203
Հնարաւո՞ր է որ ըլլայ 116
Հնչեցուցէք փողերն 155
Հոգդ Տէրոջը վրայ ձգէ 276
Հոգդ Տէրոջը վրայ ձգէ 277
Հոգին հոգւոյս կ՚ըսէ 171
Հրեշտակ մ՚ըլլալ կ՚ուզեմ 359
Հրեշտակն յերկնից կ՚իջնայ 106
Հրեշտակներ, քարն վեր առէք 105

Ձիթենադարդ սա լեռ ու ձոր 134

Ճամբան երկար չէ այս կենաց 373
Ճամբաս դուն, Տէր, ընտրէ 206

Մայր սիրելի Երուսաղէմ 411
Մեղքի ողբի ձայն մը 320
Մեծ բարեմութեան՝ արեամբ փրկուած 413



Երգ

Մենք երկնից ճամբան գտած ենք 267
Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը 48
Մենք ցնծումով, ցնծումով մինչ վազենք 266
Մեղաւոր, լսէ այս ձայնը 156
Մեր մեղաց համար մեռնողը 392
Մէկ ժամ մը կայ, մէկ կէտ մը կայ 177
Մէկ քաղցր վսեմ խորհուրդ 286
Մէկը տեսայ փայտէն կախուած 104
Մի անցնիր ինծմէ, Փրկիչս 192
Մի՛ դանդաղիր, ով իմ հոգիս 272
Միթէ Յիսո՞ւս լոկ խաչն տանի 240
Մի թողուր զիս, ով Աստուածս 30
Մինչ երգենք Փրկչին մեծ սէրը 120
Մոլար ոչխար էի 187
Մութ գետէն անդին կան 364

Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հզօր 88
Յարուցեալ է Տէր այսօր 107
Յաւիտենական կեանք 56
Յիսուս, աշխարհը իմ ձգած 249
Յիսուս, դուն ես մեր Առաջնորդ 146
Յիսուս, դուն մեր մխիթարէ 275
Յիսուս կը պատուիրէ մեզ 351
Յիսուս կ՚ըսէ այսօր 159
Յիսուս, մինչ հոգիս պահէ 103

| | Երգ |
|---|---|
| Յիսուս յայտնեց ինձ սէր անհուն | 124 |
| Յիսուս, Փրկիչ մեղաւորաց | 121 |
| Յիսուս, փրկիչ ու բարեկամ | 138 |
| Յիսուս քաւիչ եղաւ մեղաց | 115 |
| Յիսուս, քու կեանքդ անգին | 245 |
| Յիսուսը ես տեսնել կ'ուզեմ | 130 |
| Յիսուս Քրիստոս, տեսայ քուկին | 93 |
| Յիսուս Քրիստոս, քուկդ է միայն | 328 |
| Յիսուսի եկ, Յիսուսի եկ | 178 |
| Յուդայի լերանց վրայով | 324 |
| Յօժար ծառայութեամբ, ով Տէր | 248 |
| | |
| Նեղեալ հոգւոյս դուն օգնական | 274 |
| Նորաստեղծեալ | 422 |
| Նորոգող տիեզերաց | 424 |
| | |
| Շատ համարներ սուրբ մատեանին | 289 |
| Շատ հեղ համբան առաջս կ'ելլէր | 128 |
| Շնորհաց աթոռն փնտռող | 25 |
| Շնորհացդ խօսքը կը լսեմ | 302 |
| Շնորհք, ձայն սիրելի | 127 |
| Շողայ աստղն իրիկուան | 388 |
| Շուտով օրերս կ'անցնին կ'երթան | 263 |
| Շուրջս կենաց յուղեալ ծովուն | 273 |





| | Երգ |
|---|---|
| Ո՜հ, թէ կարող ես ըլլայի | 133 |
| Ո՜հ, թէ սուրբ ըլլամ ես | 234 |
| Ո՜հ, ինձ դարձեալ երգէ զանոնք | 49 |
| Ո՜հ, մերթ ստուերներն ի՜նչ խոր են | 254 |
| Ո՜հ, մի գիշերիր, մի անսաս փորձիչին | 256 |
| Ո՜հ, նայէ ինձ և լսէ զիս | 43 |
| Ո՜հ, ո՞ւր մնաց արդեօք այսօր | 169 |
| Ո՜հ, պայծառ ու գեղեցիկ օր տէրունի | 14 |
| Ո՜հ, փոքր ձեռքերը ի՞նչ կրնան ընել | 347 |
| Ո՜հ, որ անճառ, որ բարերարդ | 412 |
| Ողորմէ ինձ, ողորմէ ինձ | 126 |
| Ողջո՜յն մեծ էմմանուէլին | 135 |
| Ո՛չ, ո՛չ, այս չէ մեռնիլը | 390 |
| Ոչինչ են աչքիս աշխարհի հաճոյքներ | 335 |
| Ով անձս, շուտ ապաշխարէ | 189 |
| Ով Աստուծոյ ծառայ բարի | 383 |
| Ով Արարիչ հզօր | 58 |
| Ո՛վ դուն Սուրբ Գիրք երկնային | 53 |
| Ով Եհովա Աստուած, մեր Հայր | 308 |
| Ո՛վ զարմանալի սէր Աստուածային | 168 |
| Ո՛վ լուսափայլ երկինք | 400 |
| Ով խաչեալ Փրկիչ Քրիստոս | 96 |
| Ով Հայր Աստուած ողորմութեան | 309 |
| Ով Հայր մեր երկնաւոր | 21 |
| Ով Հայր մեր որ յերկինս ես | 20 |

| | Երգ |
|---|---|
| Ով Հայր, օրը հազար անգամ | 252 |
| Ով Հոգւոյս սիրող Քրիստոս | 118 |
| Ո՛վ հօտին բարերար Հովիւը | 357 |
| Ո՛վ մարդ, հոգե՞ր, վիշտե՞ր ունիս | 290 |
| Ով մեղաւոր ահաբեկած | 165 |
| Ով մեղաւոր մարդ, խեղճ, թշուառ | 166 |
| Ով մեր Հայրը երկնաւոր | 19 |
| Ով Յիսուս, հոգիս սպասէ | 103 |
| Ո՞վ պիտի ինձ հանգիստ | 385 |
| Ով Սիոնի բերկրալից արշալոյսը | 313 |
| Ով սուրբ Գլուխ, ինչո՞ւ ես | 92 |
| Ով Սուրբ Հայր, ինձ ցուցուցեր ես | 27 |
| Ով Սուրբ Հոգի, իջիր արդ դուն իմ մէջ | 153 |
| Ով Սուրբ Հոգի, լոյս երկնային | 148 |
| Ով սրբոց փառաւոր տուն | 410 |
| Ով վարդապետ, Յիսուս, իմ Տէր | 176 |
| Ով տառապանաց աշխարհը | 251 |
| Ով Տէր Աստուած արդարութեան | 318 |
| Ով Տէր Աստուած, բարձրացիր դու երկինքին վրայ | 417 |
| Ով Տէր Աստուած Իսրայէլին | 310 |
| Ով Տէր գթած, որ կը լսես | 180 |
| Ով Տէր, դարձեալ կ'օրհնենք քու սուրբ անուն | 309 |
| Ով Տէր, դուն ես մեր ապաւէն | 368 |
| Ո՛վ Տէր, դուն զիս միշտ կը քննես | 65 |
| Ով Տէր, լսէ ձայնն աղօթքիս | 188 |





| | Երգ |
|---|---|
| Ով Տէր, մեզի պատուիրեցիր | 231 |
| Ով Տէր մեր, Սուրբ Աստուած | 298 |
| Ով Տէր, միշտ հոգիս պահէ | 103 |
| Ով Տէր Յիսուս, դուն խոստացար | 151 |
| Ով Տէր Յիսուս, քեզ կը սիրեմ | 224 |
| Ով Տէր Փրկիչ, Հովիւ հովուաց | 296 |
| Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ | 294 |
| Ով տուն, որ ես վերն, ի բարձունս | 406 |
| Ով փառաւորեալ Արքայ երկնաւոր | 69 |
| Ով Փրկիչ մեր, կ'աղաչենք | 360 |
| Ով Փրկիչս, օրն իջած է | 39 |
| Ով քաղցր Փրկիչ, հոս գալ հաճէ | 330 |
| Ո՛վ Քրիստոսի օրհնեալ ծառան | 259 |
| Որչափ արիւն որ թափուեցաւ | 112 |
| Ո՛րչափ վախկոտ ու վատ կ'ըլլանք | 382 |
| Ո՛րչափ քաղցր է այն ժամը | 95 |
| Ո՛րչափ օրհնեալ է այն կապանք | 237 |
| Ո՛րքան հաստատուն է հիմն ձեր հաւատքին | 213 |
| Ունայն աշխարհս ա՛լ կը ձգեմ | 375 |
| Ունայնութիւն ունայնութեանց | 223 |
| Ո՞ւր կայ հանգստութիւն | 265 |
| Չէ՛ աստ, քանզի յարեաւ | 108 |
| Չի կայ, Տէր, ցաւ մ'այնքան չնչին | 34 |

| | Երգ |
|---|---|
| Պատուէր տուաւ Փրկիչն մարդկան | 315 |
| Պիտի երգեմ, Տէր, սէրդ ու գութ | 75 |
| Պիտի երգեմ քեզի | 78 |
| Պզտիկ տղու մը սորվեցուր | 349 |
| Սրտանց կու տամ փառք քեզ, ով Տէր | 35 |
| Սիօնի Որդիք | 423 |
| Սիրելիներս, եկէք | 381 |
| Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան | 10 |
| Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր | 7 |
| Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր, Հայր Աստուած մեր | 12 |
| Սուրբ օրն էր վախճանին | 18 |
| Սրընթաց եղջերուի նման | 305 |
| Վաղուան համար չեմ աղօթեր | 45 |
| Վերեւն ունինք տուն երջանիկ | 395 |
| Վեր նայէ վեր, սիրելի հայր | 279 |
| Վերն անսահման երկնակամար | 62 |
| Վերջապէս գործդ աւարտած | 387 |
| Վերջին արեւս վար կ'արտորայ | 378 |
| Վկայութիւնդ զարմանալի | 52 |
| Վճռեց Տէրն որ ամէն մարդիկ | 391 |
| Տարածեալ | 421 |
| Տես, մեղուն աշխատասէր | 352 |





| | Երգ |
|---|---|
| Տերեւ, ծաղիկ, նոր կեանք ու սէր | 341 |
| Տէր, այցելութեամբդ երկիրը | 29 |
| Տէր Աստուած մեր ապաւէնը | 282 |
| Տէր բազմագութ ու ողորմած | 301 |
| Տէր գթութեան, ինձ ողորմէ | 55 |
| Տէր, դուն համայն բնութեան իշխան | 63 |
| Տէր ընդ ձեզ մինչեւ զիրար տեսնենք | 343 |
| Տէր իմ, Փրկիչ, եկուր | 235 |
| Տէր իմ, քեզ կը սիրեմ | 226 |
| Տէր, ինչպէս որ կ'ուզես | 207 |
| Տէր, ինծի առաջնորդէ | 215 |
| Տէր, հիմա մեր Փրկչին | 319 |
| Տէր, հովուի պէս խնամէ մեզ | 140 |
| Տէր, ձայնդ կը լսեմ | 199 |
| Տէր Յիսուս զիս կը սիրէ | 355 |
| Տէր Յիսուս Էմմանուէլ | 113 |
| Տէր Յիսուսի երանիներէն | 114 |
| Տէր Յիսուսի բազկաց մէջ | 209 |
| Տէր Յիսուսին ի՞նչ նուիրեմ | 362 |
| Տէր, ուրախ կ'ըլլամ մէջս ես | 216 |
| Տէր, վար նայէ աչքով գթած | 149 |
| Տէր, քաղցր աչքով վերէն նայէ | 333 |
| Տէր, քաղցրութեամբ վերէն նայէ | 297 |
| Տէր, քու ոտից առջին | 129 |
| Տէրը դուռը կը զարնէ | 197 |

Էջ

Տէրն կը տիրէ, երկիր ցնծայ 6
Տէրն օրհնեցէք, զի է բարի 7
Տէրոջ աթոռն շրջապատած 35
Տէրոջ անհեղ գահուն առջև 1
Տէրոջը ձայնը լսեցի 17
Տէրոջըս սուրբ գործին մէջ 24
Տէրոջը սէրն անհուն 36
«Տէրոջն հետ յաւիտեան» 46
Տըխուր ողբով մ'ըսեր ինծի 24
Տիեզերքը նորոգող 15
Տուող եկ, առնող եկ 16
Տուն հաճելի, տապան սրբոց 38
Տուր ինձ այն հին, հին լուրը 32
Տուր ինձ հաւատոյ թեւերը 23
Տուէք Աստուծոյ, ազգեր մարդկային 6
Տրտմած անձնս երբ կորանամ 27

Փառաւորեալ Աստուածորդի 12
Փառք և պատիւ ու զօրութիւն 1
Փառք և պատիւ ու զօրութիւն
Փառք ի բարձունս
Փառք ի բարձունս Աստուծոյ
Փա՜ռք Յիսուսի, փառք, փառք անհուն 22
Փառք քեզ, Հայր իմ, որ ինձ տուիր 30
Փ[illegible] մէջ անհուն[illegible] 2


ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ[illegible]

0014222

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0014222